I
3540

Printed in Turkey

2104

# ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ

Պատկերազարդեալ

## ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

Նարեկայ վանից վանականի
և հոգելից հռետորի :

Քաղեալ ընտրանաւ 'ի գրոց նր̃ ,
կարգեալ ըստ աւուրց եօթնեկի ,
և ըստ պէսպէս պիտոյից հայցուա-
ծոց :

Յաւելեալ յայսմ երկ̃ տպագրութեան և
զԱղանչս տօնից Տէրունականաց , զՄեղեդիս
և զՏաղս 'ի նորին ոճոյ քաղեալ :

Յամի Տն̃ 1804.

'Ի Թուականութեան Հայոց . ՌՄԾԳ :



'Ի ՎԵՆԵՏԻԿ :

'Ի վանս սրբոյն Ղազարու :

3540 Կ.Հ
243
77-Ա
10186-57

Printed in Turkey



## Սրբոյն գրիգորի նարեկայ վանից վանա- կանի եւ հոգեկիր հռետորի

Աղօթք 'ի խորհրդաւորս որ երկրորդումն․ եւ յա- տարածումն հօր եւ հոգւոյ զմածինն 'ի շարաշարան մարմնոյն․ Ընդ նմին եւ թաղմանց անցին երկնոյն, յերջանկութեան խնամոց երկնագործութեան․

### ԲԱՆ · ԽԳ ·

ԱՍՏՈՒԱԾ ԲԱՐԵՐԱՐ ՀԶՕՐ ԱՆ

*Ծնունդ միայ հարազատ ան- թարգմանելի․ արարիչ ընդանրին եղելոց, քո թա- գաւոր․ Լոյս 'ի խաւարի սրտից մթացե- լոց․ Ը՛ մեզ լումամբ, եւ ընդ առաքչին խսկուն․ մերայնոյն զքոյինդ ծանու- ցանող հրաշապէս․ հայր քո օրհնեալ երկնաւոր անձառ՝ որ առաքեաց զքեզ 'ի մերուստ, ում փառակիցդ ես արար- չութ․ այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գեղոյ, մինչեւ զքեզ իսկ*

մասանեաց մարդկան ։ Իսկ դու կարօղ գոլով՝ ի վեր քան զվիշտս զտնտեսութե̃ աւարտել խորհուրդ՝ համաձայնեալ ը̃ պարտեցելումն զմահուն ճաշակել բաժակ՝ անթերի մարդկութ̃, և անպատկառ ամօթութե̃ ։ Այս հոգիդ որ կենդանարար՝ ոպ̃ քո, և հօր քոյ իսկակից, և համապատիւ էութ̃ ծնողիդ և ծնեցելոյդ. մի երրորդութե̃ կատարեալ՝ ի դիմաց երից անորոշելի հատուածոց. անսկզբեն, և անժամանակ. բնաւին բարերար. համայն կենդանարար. բոլորից խաղաղարար. ստեղծիչ գոյից. և յօրինիչ ամենից. անքակութ̃ և միով բնութ̃ փառաւորեալ ։ Իսկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր մին յէութեն վո̃ մահապարտիս յանցանաց մատոյց զմիայնակ ծնունդդ յանքննելին ծոցոյն՝ ոչ անխնայեալ յորդիդ 'ի համապատիւդ և 'ի սիրելիդ. այլ կամաւ նուիրեաց մահու չարչարողացն զինու, զը̃ մարդարէութե̃ն զաքարիայ. վա̃ զի զարթնուլ սրոյն 'ի վր̃ հովուին, և հարկանել նոյն ինքն հօտապետին, և ցրուել ոչխարացն հօտին, ոպ̃ օրինակն նուիրք նախադրին, և ուխտադրութե̃ խորանին, և նուիրուած̃ արեան սպանդին, և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին՝ զփրկութ̃ թշուառացելոյս 'ի կամաց կե-

ցուց.

ցուցցէիդ յառաջագոյն նկարագրելս ։ Ի՛ս
այդ հիմ տրտմիս անձն իմ կործանեալ
ոչ յաստուածածուստ հնարաւորութեանց,
այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտու-
թեանց, կ՚ընդդէմ զիս խռովես՝ յուսահա-
տութեամբ ստամբակական զմիտս հար-
եալ ․ յուսամ յոյժ, խոստովանիլ նմա ․
և նա հոգայ մ՚ քոյ՝ դառնութեան սաղ-
մոսին, և այլ մարգարէի կենսախրա-
խոյսն բանի ․ Իսկ յեղանակ խնամոր-
կելոյ հաստողին 'ի վեր է քան զսահման
կշռութե մտաց հրեշտակաց և երկրակա-
նաց ․ և թէ բիւրս կրկնեսցի՝ ոչ լինի
չափեալ ․ քանզի անբովանդակելոյն և
բարերարելն է անճառելի ։ Ի՛ս զի ամն
օրհնեալ զամն օրհնաբանեալ յերրոր-
դական համագոյութեն առաքեաց ․ իսկ
նա 'ի հաճութի կամաց առաքչին մե-
ռաւ ․ և միւսն աշաւոր 'ի յերկուցն հա-
ւանութի մեծաջան բաղձանօք մաղթէ ։
Իսկ համբարձեալ միակամութե ցուցակ
առ 'ի զնոյն բարի ներգործել, ոչ հա-
գին կենդանւոյն, և բանն բանակա-
նին, պայծառութի փառացն, և կերպա-
րան էութեն ․ առ կեանսն փոյթ ․ առ
ողորմութին սթափ ․ առ ձեռնկալութեն
պատրաստ ․ առ փրկութեն կազմ ․ առ
առատութեն յորդ ․ առ յաճախութեն
զեղուն ․ առ անբաւութեն լի ․ առ ան-

 նուա-

նահապետութեան փարթամ. առ երկայնմտու-թեան ձուկս. առ անհասութեան բարձրեալ. մի երրորդութիւն կատարեալ՝ ի յանձանց ե-րից օրհնեալ յաւիտեանս, ամէն։

՛Սրբոյն հոգւոյն, Աղաչեմ առ հայր ։ յանցանք զղջացելոյ, 'ի փրկ մանկանէ, և որդւոյ ան-առակէ, մաղթելով զատաւորն արդեանց մեծին, ցուցնել պարգեւս, որ 'ի մէջ սեղան անձանց զօրս պատարագել ։

## ԲԱՆ Բ. ԽԼ.

Եւ արդ՝ զի՞նչ գայ աւել ամաչեցե-լոյս յերեսաց մեծիդ ահաւորութեան, բայց եթէ համբառնալ. և հող 'ի բե-րան եղեալ լռել 'ի սրտի ըստ մարգա-րէութեանն խրատու, ահա 'ի բարւոյն կործանեալ 'ի յոյս | ուկ եթէ զփականս շարժողութեան շրթանցս բացից բանա-ւորեցից՝ խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնակական եղերերգութեան լալեաց բազմութեան խէթ մնացս յառա-ջադրէ։ Եւ արդ՝ ողբակից մեծ մեղա-ւորին անօրինեցելոյ կամաւ առ 'ի մահ՝ զնորին գուշակմանն երկրորդեցից և ես ըն-նմին. մեղայ տէր՝ մեղայ, և անօրէնու-թեանց իմոց ինձէն վկայեմ։ Հիւսեալ ընդ նմին զբանս յիսներորդի սաղմոսին, ան-

թիւս

Թիւս գրեմ զպարտուցս սակ անձինս
մեղանաց՝ քան զՀիւղ երկրի հողմահոս
փոշւոյ ը՟ օդս ՟ամ տարածեցելոյ ։ Մե-
ղայ յերկինս եւ առաջի քո ․ ընդ անա-
ռակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի
գթոյդ վերստին դարձեալ Թախանձ
արկանեմ ․ զողորմելին ձայն աղերսա-
նաց արտօսրածին ողբովք գուժման 'ի
տխուր դիմս մատուցեալ առաջի քոյ
տարածանեմ ․ հայր գթութեց ՟ամ բա-
րերից , չեմ արժանի կոչիլ , եւ ոչ բնա-
ւին առ այս անուանիլ , ոչ միայն որդի ,
այլ եւ անպիտան ապաբան վարձկան ։
Ընկալ զսովեալս տարագրական պար-
տապան վնասուց ․ եւ զցաւ քաղցոյս
ըկանաց նեղոյս նուաղեցելոյս կենաց
քո հացիւդ բժշկեսցես ։ Եւ ը՟ առաջ
քո ողորմութ՟դ 'ի սկզբնաւորս ապա-
ւինու ․ զգեցո գթած եւ անոխակալ
անօրինեալս մեղապարտի զնախակա-
պուստ հանդերձին ծածկոյթ ։ Նուան-
դակորոյս ձեռաց աղաւեղեալ մեղօք
զկնիք մատանւոյն համարձակուե ան-
նաւաստ կամօք մատուսցես ․ զգարշա-
պարացս Թշուառութ՟ի մերկուե ոտիցս
պատասպարու՟թ աւետարանական ամրա-
վերարկու օգնիցս կօշկաց 'ի յօձին Թիւ-
նից միջա ամրացուսցես ։ Ո զուարակդ
պարարակդ եզինդ երկնային , որ է միա-



ծին

ծին որդիդ քո օրհնեալ խնկապէս մար-
դասիրութիւն կարօտելոյս բարեաց նը-
ւիրեալ . որ մատուցեալ միշտ՝ և անպա-
կաս մնայ 'ի լուսն , յարակայ զենեալ
'ի սպանդարանի անթիւ սեղանոց անըս-
պառութեան , բոլոր յամենեսին , և բնաւ
յամենայն , եւթեան յերկինս . և խնկութիւն
'ի ստորինս . աննուաճազ մարդկութիւն , և
անթերի աստուածութիւն . փրկեալ և բաշխի 'ի
մասունս անհատս , զի զհամայնն հա
ւաքեսցէ առ 'ի նոյն մարմին խորհրդոյ
գլխոյ . քեզ փառք ընդ նմին հայր ողոր-
մութեան . ամէն ։

Յորին հաճոյի , Աղերս առ որդին , ծաղկելոյ
ներբողեան պարծոյ , և ժառանգութեան յանդգնածոյ ,
ընդ բժշկութեան բորոտին , և լուսաւորութեան խաւ-
արին . և ծնողութեան պոռնկին ։

## ԲԱ՛Ն . Ժ .

Արդ՝ աղաչեմ զխնամակալդ վը-
տանգաւորաց տաժանելեաց կրից
թաղծութեանց հոգւոց մխտացելոց ։ Մ՝ի
յաւելուր հեծութեան ցաւ . մի խոցեր
զվիրաւորեալս . մի դատապարտեր ըզ-
պատժեալս . մի տանջեր զչարչարեալս .
մի դաներ զհարուածեալս . մի գլորեր
զանկեալս . մի կործաներ զդայթագ-
ղեալս .

գեալս · մի՛ մերժեր զհեռացեալս · մի՛ տարագրեր զհալածեալս · մի՛ ամաչեցուցաներ զպատկառեալս · մի՛ կշտամբեր զհարթուցեալս · մի՛ խորտակեր զբեկեալս · մի՛ խռովեցուցաներ զամբոխեալս · մի՛ ալեկոծեր զլքացեալս · մի՛ սասանեցուցաներ զգզոդեալս · մի՛ չփոթեր զմրրկեալս · մի՛ կեղեքեր զգիշատեալս · մի՛ ջախջախեր զբեկեալս · մի՛ գոշեր զմորմոքեալս · մի՛ հուրացուցաներ զխաւարեալս · մի՛ զարհուրեցուցաներ զապշեալս · մի՛ խորովեր զխարշատեալս · մի՛ մահացուցաներ զհիւանդս ։ Մի՛ բեռանց ծանրութեան մատներ զտկարս · մի՛ անուր յաւելուր կարկամեալ թիկանցս · մի՛ կրկնակի ողբումն դառն հեծութեանս ։ Մի՛ ուժգնապէս մաբեացիս առ հողս, մի՛ սաստկապէս առ մոխիրս · մի՛ անաչառապէս առ ստեղծուածս · մի՛ ահարկու ես առ փոշիս ։ Մի՛ ընդ հարկանիր խստութեամբ մեծդ՝ ես փոքուս · լոյսդ՝ ես ստորնականիս · բնութեամբ բարիդ՝ ես ՚ի բնէ չարիս, ողկոյզդ որհնութեան՝ ես պտղոյս անիծից · քաղցրութիւնդ իւկապէս՝ ես համայն դառնութեան · փառաւորեալդ անփոփոխ՝ ես ամենեքին անարգիս · կենացդ նշխար՝ ընդ կաւոյս զանգուածոյ · տէրդ տերանց՝ ես տղմիս երկրայնոյ · աննուաղ լինելդ՝ ես չքաւոր

տալկիս. անկապուտ ձոխութիւն՝ է ան-
սպառապար տառապեցոյս. անկարօտ բա-
րութիւն՝ է ամենաթշուառ աղքատիս։
Վասնզի ամէք հասեալ յառաւօտ, և ՚ի
ծագման լուսոյն խիթայ մթանալ, և
կմ ընթերակաց կենաց, մահանալ.
կամ ազատութե, և պարտաւորիլ. կմ
շնորհաց, և դատապարտիլ. կմ փրկու-
թե, և մատնիլ. կմ նորոգման, և եղ-
ծանիլ. կամ որհնութե, և տարագրիլ.
կամ բժշկութե, և վիրաւորիլ. կամ
լիութե, և նուաղիլ. կամ յաճախութե
հացի, և քաղցնուլ. կամ գետոց հոսա-
նաց, և ցամաքիլ. կամ մայրենի գթոց,
և նենգիլ. կամ խնամոց ածեան ա-
ջոյդ, և զղուփիլ։ Ու արդ՝ է ախտացե-
լոյն սաստկապէս մարմնոյն բորոտութե
հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ.
տէր եթէ կամիս կարող ես զիս սրբել։
Ընդ աչացուցն նեղելոյ մշտադիշերն
խարխափանօք մեծակական ձայնիւ հա-
ռաչեմ. ո՛չ որդի անուանեմ դաւթի,
այլ ծնունդ երդ ամյ դաւանեմ. ո՛չ միայն
ռաբբի կոչեմ, որ վարդապետացն է
պատիւ, կարծողական զիսկն գիտելոյ.
այլ տր երկնի և երկրի հաւատամ։ Ո՛չ
ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութե,
ով բարեգութ ած մերձաւոր, այլ ՚ի
բացեայ գոլով միջոցաւ մեծաւ ակնու-
նիմ

նիմ զօրել քոյ բանիւդ առ իմ բժշկութիւն ։ Ոչ թէ ինչ խաւարոյ կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեան կարծիս նշանակ, 'ի մէջ արկանեմ կամեցողիս և ողորմութեան · այլ կամիս ոչ բարեգութ · և կարես ոչ չարարիչ · սոսկ բանիւդ · և բժշկեցայց ։ Ընդ հարիւրապետին հաւատոց և ես լծակցեմ, ոչ մինչ անձուկ միայն բացակայութեան հեռի լինելով խարան 'ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեանդ առ յաջութեն և բժշկութեան · այլ 'ի վերինն երկնի թաղմելով, և 'ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութեան ոչ ունիմ հատուցանել ։ Շնորհեա՛ ինձ, ով պատակնիք բանիդ քո վճարեալ առ պատնկին (?) ընդունելութեան հնդից հարիւրոց դենարաց պարտուց ջնարհաբաշխութեան · տօթարութեանց և տր երանութեանց · որ յաձախն լինելոյ թաղումն փառաւորիս, և 'ի շատն մատուցանել, նովին չափ սիրիս, և յառաւելն ողորմիլ, կրկին բարգաւաճիս · և յայնժամ բարիս՝ իրաւամբք դալլիս · և տալի տր փոխոյ՝ հաւասարորդ ճանաչիս · և որ զօրէին ունիս, ընդ մերումս կշռես · և անճառելեաց ձրից մերայնովքս վճարիս · և ը՟ երկրաւորիս զանկախճանն պարտ փարկանիս · և մեծապքեալ քո զմերն՝ վեհս գոհա֊

քանիս · և 'ի սակաւուն տունչուե̄ գոյգն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս ։ Առա՛ և ինձ զնոյն գթութի ունողիս գգործս անհամար պարտուց · զի և 'ի Հաւս ե-րախտեաց քումդ սարգևաց նորին իսկ սակավ սերելն կարգեցի · և քեզ փառք յա՛մի, ամէն ։

'Յորմէն հայցողէ · Լ՛ շէրս սա որդին · որոյ շօ-րութեն՝ անհնարինս տէրութե̄ Տերոյ՝ հնարաւոր են պարգեւել նոցա հնարս փրկուե̄, որպէս նո-րեն սա գծել պէտրոսի, և դասուն ։

## ԲԱ՛Ն · ԾԳ ·

Բա՛ն Ա՛ծ · անուն ահաւոր · մեծուե̄ տեսակ · անքննին բարձրութեան պատկեր · անսահման զօրութի · կեր-պարան փրկութե̄ լուսոյ · պաշտպան կենաց · դուռն արքայութե̄՝ վերնում հանդերձանն · ձանապարհ հանգա-տուե̄ · ապաւինուէ̄ նորոգ և անտխրա-կան երանուե̄ · ամե̄նակալ ինքնիշխա-նուեի բոլոր էականուե̄ · օրհնուե̄ կոչումն · աւետեաց ձայն · բերկրուե̄ բարբառ · անմահութե̄ դեղ · որդի ան-ձառ ո՛յ միոյ · Որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է · որ ինձ անհաս է, քեզ սահմանեալ է · որ ինձ անանցն է, քեզ

Հայա

հպաւոր է․ որ եղկելւոյս ինձ ծածկե-
ցեալն է, քումդ երանութն մերձաւոր է․
որ ինձ անհարկելին է, քեզ կատարեալ
է․ որ ինձ անկշռելին է, քումդ անձա-
ռութ չափեալ է․ որ ինձ յուսահատու-
թեն է, քեզ սփոփանաց է․ որ ինձ
անբժշկականն է, քեզ անվտանգելին
է․ որ ինձ հեծութեն է, քեզ խնդութե
է․ որ ինձ ծանունք են, քեզ թեթեւա-
գոյնք են․ որ ինձ եղծեալն է, քումդ
զօրեղութե գրեցեալ է․ որ ինձ կորու-
սեալն է, քեզ ըմբռնեալ է․ որ ինձ ան-
ձառն է, քեզ համարեալ է․ որ ինձ
մռայլն է, քեզ ճառագայթ է․ որ ինձ
անթիւն է, որհնեալդ քում ձեռին բո-
վանդակեալ է․ որ ինձ սոսկալին է,
քեզ հեշտալի է․ որ ինձ փախչելին է,
քեզ վանելի է․ որ ինձ անմատոյցն է,
քեզ դիւրահերքելի է․ որ ինձ մահա-
բերն է, քումդ էականութե զօրութե ըն
ոչ գոյսն համարեալ է։ Այլ դու ողոր-
մած ած բոլորից տր յս քս, եւ այսմ զօ-
րեա առ. ելից հնար՝ եթէ գթասցիս վս
անուան փառաց մեծութե հօր քո որհ-
նելոյ, վս կամաց գթութե հոգւոյդ քո
սբյ։ Տես 'ի տաժանաւորս կրեց յանդի-
մանական յայտնունի, եւ 'ի խորոց սրտիս
ինքնամատոյց դատախազունի։ Լսեա
'ի բնութեա ամենապատաղ խակունի, եւ

պարգ-

պարգևեա՛լ բժշկութիւն վիրացս, և հնարաւորութիւն կորստեանս . զերծումն բազմամասնեայ մահուս, և շաւիղ կենաց ապականելոյս . նորոգումն եղծմանս, և մուտք յուսոյ ամբարշտելոյս ։ Եթէ ես զանձնմանն ինձ կամս ցուցի, որչափ առաւել դու զբնաւորականդ քո զընտանի բարերարութիւնդ . Եթէ 'ի փշոց պտուղ ընծայեցաւ քաղցրութիւն, որչափ առաւել 'ի ծառոյդ կենաց ճաշակ անմահութեան . Եթէ ես լմոյ աղբերաց ողորմութեա՛ն մաղթեցի, դու քոյոյս զկամըդ ոչ կրկին մատուսցես հզօր յանձնառուա՛դ առատութեա՛ն ։ Արդ՝ տես 'ի քոյդ մեծութիւն բարձրեալ, նայեցեալ 'ի յիմս փոքրկութիւն ։ Ընկա՛լ զսակաւ խոստովանութիւնս յանհամար մեղացս, որ զբնաւն համայն տեսանես ։ Եւ՛ ոչ զմիմին դ թել ոչ գրեցեր, և զաւաղոյս փոքու սասանել մի՛ համարեսցես ։ Եւ իբրև զդաւթին՝ ը մեղայն ասել իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հեծութիւն զնոյն գործեսցես երկայնմտութիւն . որ տաս ամենեցուն առատապէս անաչառութ՝ ոչ յաղթող բարի բաշխմամս, և ոչ նախատես զյետնեալ սորուկս՝ ոչ ողորմած և ամենաստեղծ . ստացի՛ր վերստին, և մի՛ կորուսաներ զդուժեալս արեամբ քո, և զբուծեալս

ատեամբ քո գթած․ զի քո է փրկութի, և 'ի քէն է քաւութի, և քեզ վայելէ փառք յամ̃ի յաւիտեանս, ամէն։

'Կրկին հոխողէ, Աղօթք առ ս̃բ հոգին, որ ասի 'ի ժամ պատարագին, առ արժանաւորս մատուցանել և անդատապարտ ճաշակել շահաւոր շնորհաւորքն։

## ԲԱ՛Ն․ ԻԳ․

Ամենակալ բարերար մարդասէր ա̃ծ բոլորից․ յօրինող երևութից և աներևութից․ փրկող և հաստատող խնամող և խաղաղարար հօր հզօր հոգի․ հայցեմք բազկատարած մաղթանաց գոչմամբ հեծութե՛ յանդիմանս եղեալ քեզ ահաւորիդ․ մատչիմք մեծաւ դողութ՛ սաստիկ երկիւղիւ՛ մատուցանել նախ զբանականս զայս սպասաւորութ քում անզննելի զօրութեանդ, իբր աթոռակցի փառակցի և արարչակցի հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութե՛ խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ եմմանուելի՛ զքեզ առաքչի փրկչի և կենդանատուի, և արարչի ամ̃ի։ 'Ի ձեռն քոյ ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութե՛ միասնական ա̃ծութեանդ․ յորոց մի և դու ճանաչիս անհաս․

Եւ,

Քև, և 'ի ձեռն քո առաջինքն նահա-
պետական տոհմին շառաւիղք՝ տեսա-
նողք անուանակոչեալք զանցեալցն և
զգալոցն, զեղելոցն և զո՛չ գոյացելոցն
անստուերաբար բալբառով բանի մե-
րապատմեցին ։ Այլ ո՛յ քարոզեալ ըղ-
քեզ մոլեկանի, որ 'ի գնալն քո 'ի մէ-
ջոյն անպարագիր զօրուն՝ ահեղ շրջար-
կութեամբ տածողականու թևապար-
փակ պաշտպանողօրէն գթասիրեալ 'ի
ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ-
ծանուցեր ։ Յոր կերպարան օրինակու-
թեն նախ քան զկառուցանել զլոյծդ մա-
ծուցած մերձնում վարագուրիդ՝ յօրինե-
ցեր կարող տիրապէս զբովանդակ բնու-
թիս ամենից բնաւից բոլորից գոյից ամ
էից յանէից ։ Քև ստեղծանին 'ի նորո-
գութի յարուեն ամ եղեալքս առ 'ի քէն
յայնմ ժամանակի, որ է օր վերջին
այսմ կենցաղի, և օր առաջին երկրին
կենդանեաց ։ Քեզ հնազանդեցաւ
միութ կամացն՝ որդ հօրն իւրում, ազգա-
կիցն քո էակիցն հօր անդրանիկն որդի.
մերոյս կերպիւ զքեզ աւետարանեաց
Ճշմարիտ ած հաւասար և համագոյ հօր
իւր հզօրի . և զառ 'ի քեզ հայհոյութին
անքաւելի քարոզեաց . և իւր զածամար-
տիցն զքո հետևելոցն չարաբանական
բերանս կարկեաց . և զխուրն շնորհեաց

արդարն և անարատն . գտիչն մեր . որ վն մեղաց մերոց մատնեցաւ . և յարեաւ վն զմեզ արդարացուցանելոյ ։ Սմա փառք 'ի ձեռն քո , և քեզ բարեբանութին ընդ հօր ամենակալի յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Դարձեալ կրկնեսցի 'ի նոյն կարգ բանի , մինչև փառաւորութին լուսոյ հրաշապէս յայտնեսցի աղբեալ . աւետարանել միրոտին զկրկին խաղաղութին ։

Ողջունեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յԱմ անձնէ զփառաւորեալ արարչութիւն անեղծ և անստեղծ անժամանակ հօրդոյդ գթածի , որ բարեխօսդ ես վն մեր յանմահութ հեծութիւնս առ ողորմածդ հայր . որ զՔբան պահես , և զմեղուցեալսն մաքրես , և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ հօր ։ Արդ աղաչեմ զմեզ յԱմ անմաքուր գործոց , որ ոչ է հաճոյ քումդ բնակութե . և մի՛ շիջցին առ 'ի մէնջ լուսոյդ շնորհացդ փայլմունք 'ի տեսականացս աչաց խմաստից . վն զի զքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից , և ընտիր վարուց խնկելոց ։ Այլ քանզի մինդ յերրորդութէդ պատարագի , և միսդ ընդունի



10186-57

հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի խորոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես ըզմեզ օթևանս պատուականս ա̃մ պատրաստութե̃՝ 'ի վայելչուե̃ ճաշակման երկնաւոր գառինդ. առանց պատժոց դատապարտութե̃ ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութե̃։ Այլ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ գայթագղութիս մեր, ո՜վ մարդասէրն կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յա̃մի քոյդ քարոզեսցի դթութի̃, ո՜վ որդւոյդ ա̃յ հօր քաղցրութի̃. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութի̃ն, և զպոռնիկն յառաջեցոյց յերկնային արքայութի̃ն արդարոցն երանութե̃։ Այո՜ այո՜ և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկա՛լ ը̃ նոսին իբր մարդասիրութե̃ կարօտեալ մեծիդ՝ շնորհօք քո ապրեալ՝ զարեամբ քո̃ի ստացեալս։ Ո՜ ի յայսմ ա̃մի յա̃մի ծանիցի քո ա̃ծութի̃դ ը̃ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութի̃ զօրութե̃. զի քո է գթութի̃, և կարողութի̃, և մարդասիրութի̃, զօրութի̃ և փառք յաւիտեանս յաւիտենից, ամէն։

՚Լորէն հովուէ, Ախշէրս առ որդին, ճողբմածք օգնութե երկնային շնորհացն. ( որոյ յիշատակ է Յերկուշաբթի. )

## ԲԱՆ. ԶԱ.

Լ՚Ի ամաձնին մայլթանաց ահա և զվկրնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից զաղերս հայցուածոց, որ մի իմ դուշէն առանց յուելոյ համապազորդեան արդահատութեամբ մաքուր բերանոց՝ ընկալ բարեդութ : Որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ, անկիրթք չարեաց, հաստեալք յամենիչխան հրամանաց նիդ. զորունք հզօրք՝ ակնարկութե բարձրելոյդ. Որք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք, և անպարտելիք. և ըստ ընթացից առաւութե մնայ արադունք: Որք և պատղակորոյս անկոյ թզէնուոյն եռամեանն դատարկութ, որ զընաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն, զանցեալն Է ներկայիս և ընդ ապառնույն



յա-

յամայր յամրութեան յերկարաձգելոյ՝ յայգի Տեառն արմատացելոյ սեռն սաղարթիւն պաճուճելոյ, զգեցեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութես, սոքա բարեխօսք հանդերձեալք այլև խնամակալք ։ Որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրիցս կարեկցելով, բարեմասնութեան մեր սպասեն. և յաւիտենականն կենդանութեան փրկութեն մեր աղօթեն՝ զայս բան ասելով. զգործս ձեռաց քոց մի անտես առներ ։ Վասնզի արդարև մեր են այս աղաչանք 'ի բարերարեդ այ վն մեր կարգեալ առ նա. զի նք բանիւ են ստեղծեալ, և մեք ձեռօք ներգործեալ. որք և գալոց են ը միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հատուցման. Ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս. յահաւորն ատենի յայտնիչք իրաւամբք զմատակարարութին որ առ մեզ ։ Որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն նուաստ ձայնի. ողորմեա դու ստեղծեր, մի կորուսաներ ։ Արդ ը գոհաբանութեն ձայնիցն խնդրուածոց անմահականացն վեհից և 'ի մեր հեծութիս հոտոտեսցիս բնաւից արարիչ. որ յաղթես դթութեդ քո վերնոցն և ստորնայնոցս, քանզի քո է բարերարելդ առ մեզ և առ նոսին.

Արդ՝

Որդ վն բարեզարդութե անախտակա-
նացն, հրաշատեսիլ հրակերպիցն, ան-
շաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւ-
թիցն, հոգեղինացն, և անվանելեացն,
ամենաձեցուն առաւելութբ 'ի բարձրն
ընտրականութի գերափայլ յաձախ գի-
տութբ, անցուրտ ջերմութբ ջեռուցա-
նօղք՝ լինքնաբուն տապոյն մծսիրութե
զն ինքեանց զմերս սառնասէր սրտիցս
անբորբոք շիջուցմն, այրել անաղօտ 'ի
մեծախորհուրդ սրբում սեղանիս, որ
'ի խորանիս, առանց նիրհելոյ և դան-
դաղանաց սպասել հրամանաց երանա-
կանաց կեցուցիչ կամաց ամենաստեղ-
ծիդ. քրովբէօրէն առաքինութբ յմծ
միացեալք անբաժանելի. որք երկնա-
ւոր պետութիք են մեծք, և զինուորութիք
անբիծք ահաւորք. երկնաւորիդ այ ա-
զատազնեայ պաշտօնեայք, 'ի յամպոյդ
լուսոյ ցօղք նշուլից: Որովք և ինձ մե-
ղաւորիս հողեղինի մարդասիրեսցես ա-
ղորմել յո աղաչանօք խմոյն հրեշտակի,
դարձուցանելով զիս տր 'ի բարիդ քո
հետս լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ
պաշտպանութե, զոր հաւատացեր նմին
տեսչութե, զընկալեալն 'ի քէն 'ի կեն-
ցաղ աստեացս ուրախութբ սրտիւ յիս
բերկրեալ, անմեղադրելի առ 'ի քէն
օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարթութբ

քեզ արքայ բարձրուն փառաց անհա-
սից 'ի խրախճանս կենդանախումբս
բերկրեցելոցն պարուց մատուցեալ ըն-
ծայեցուսցէ՝ գովեալ ողորմած ։ Եւ
քեզ անքննին ը͞ն հօր անհասին՝ թուանկ-
ցու͞ք հոգւոյդ անճառելի՝ վայելէ փառք
պատի՛ւ և երկրպագութ͞ի յաւիտեանս
յաւիտենից . ամէն ։



՚Նորին հանդէպ, Ոգէ անձին շնչացելոյ, և ա-
ղերս առ ած՝ յընդունելութեան աղօթից, և ՚ի փո-
խատրութիւն կենաց և փրկութեան, գովմամբ բարեբա-
րոյ պետանողական փառաւն ։ ( որոց յիշատակ է
Յերեքշաբաթի ։ )

## ԻՄՆ․ Ի․

ԵԼ, որդ՝ քանզի առ բարձրեալն
ած յօդաւորական շրթամբք
կարդաս, որ գործովք միայն
գրաւի, և ոչ ստեղծարանութեամբ կաշա-
ռի․ որ յեդխպտոս միշտ ունիս զարտադ-
զդարձն․ զի՞նչ օրինակ առ այս քեզ
նմանագոյն և յարմարական ստանօր
եղից անձն իմ պարտաւոր ։ Պատժա-
կիցս կործանեցելոյն սոդոմայ․ ըմբերա-
նեալ դատախազս նինուէի․ անարի
բարբարոսս քան զախիլինն հարաւային․
վատթարագոյնս քան զքանան․ յամա-
ռեցեալս քան զամաղէկ․ անբժշկականս
քաղաք գրօշելոց․ նշմար մնացեալ
ապստամբութե հինն իսրայելի․ յիշա-
տակարան պահեալ ուխտադրժութեն

յուզայ ։ Աշտամբեալս գեր քան զծուլ․ տարամերժեալս քան զծայդան․ խորթաբարոյս քան զգալիլեա․ աններելիս քան զանհաւանն կափառնայում․ պարսաւեցեալս իբր զքորաղին․ բամբասեցեալս ՟Է բեթսայիդայ․ անպարկեշտ ծաղկեալ ալիքս եփրեմի ։ Լ․ղու աղանիս միշտ յիմարութ՟ք այլ ո՛չ հանդարտութ՟բ․ 'ի կորեանց առիւծուց անձնական օձս եղեռնայլին․ կերպս ձո՛ոց քարբից՝ լցեալ ժանտութ՟բ․ պատկերս վերջին հարուածոյն երուսաղեմի , ըստ բանին տեառնն՝ և տեսանողացն ձայնի ։ Տաղաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն․ խորտակեալ դրացս վասահարան , և կրկին ծրդեալ չինո՛ւածս խօսուն․ թողեալ ժառանգութիս յարմարական․ մոռացեալ տունս ՟Ծ տակերտ՝ ՟Է բանից նախագրեցելոցն՝ մովսէսի դաւթայ և երեմիայի ։ Զարկս բանական՝ ունօղս բորոտուէ․ հարուածեալ խրատու քերմանն՝ օրինի՛ կաղդուրեալ , օծեալ կաւուն՝ ողոքական հեծութ՟ն․ անձարակ դտեալ յելս հնարից , քակտեալ վերստին ձեռամբ չինողին․ արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ հրամանաւ հզօրին 'ի տեղի անոր․ հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ մի՛ առանց խնայելոյ ։ Ծածկեալ

դրամն յերկրի չարեօք ըստ աւանդակա-
ցոյս ժխտողին, որ յաւետարանին ցու-
ցանի։ Ո՛Վ դու ած՝ ածդ հոգւոց և
ամ մարմնոց՝ որ դաւանելոյ ածաշնոր-
հին, երկայնամիտ և բազումողորմ, որ
ա՛րյն յոգնանուն ձայնին, շնորհեա կատա-
րել 'ի քոյդ հաճուն օրհնեալդ կամաց՝
զոկղընաւորեալ մատեան մաղթանաց
այսր ողբերգութե։ Եւ է ըղձոլ սեր-
մանել բանիս 'ի Նախնեաց չուս աստի-
ճանայօթեանցս պատրաստութեան,
'ի կատարածն ժամանելոյ հաւաքման
հնձոցն՝ դարձայց բերկրեցայց լրութե
քաւութե պտղոյն երանութե որայիցն
բարութե։ Մի՛ տացես ինձ արդանդ
սրտի անորդի իբր խորայելի, և ստինս
աչաց ցամաքեալս ոչ ամենադութ։
Իւր բանական մաղթողիս հե՛գոր և ո-
ղորմած՝ նախ քան երկնի՝ և երկրին երկ-
րի, և նա ցորենոյ և գինւոյ և ձիթոյ,
և նոքա խորայելի։ Եւ երկնաւորացն
աղերս որ առ քեզ՝ յոգւոյս աղդեսցէ,
քան թէ տարերաց ապականացուաց։
Դու ստեղծիչ և ես կաւ. բայց տարա-
կուսելոյս 'ի մուտս մաղթանաց այսր
հեծութե կամս քաղցրութե զօրանալ առ-
տեն, զի մի 'ի բանալ վերնայինն երկնի
անընտիր պտղալ կրթութե փայելման
լուսոյ՝ իբր զնիւթ մոմոյ սպառեցայց

ըն-

ջնջեալ 'ի միջոյ ։ Ո՜վ զրկելոյս , ըստ մաղթանաց գուշման ասողին , և ո՛չ ժթալկացելոյս, և կեանք մաշելոյս՝ մտացս խղճի՛ն , այլ ո՛չ տաժանմամբ կրից՝ աշխատութեամբ զքեզ խնդրելոյ ․ առ զաւանդ մաղթանացս , և տո՛ւր զողորմութիւն քո շնորհացդ ․ ընկա՛լ ըզփոքրս 'ի տկարէս , և շնորհեա՛ զմեծդ առ 'ի հզօրէդ ․ զօրացո՛ զբանս զղջման , առաքե՛լ 'ի մեզ հոգի 'ի բարձանց մեծաշունչ պատգամօքս 'ի սմա եդելոյս ։ Պարգևեա՛ բարերար՝ զառակն եսայեայ լուսաւորե՛լ առ ճշմարտութի՛ն ․ մատուցանելով մահու արժանոյս , ք̃ պղնձոյս գոյի անարգս ձայնի՛ զոսկի քո շնորհի ․ ք̃ անզարդութե՛ երկաթոյս սևութե՛ դունոյս պղինձ պձնելի , ցոյցք առաքինութե՛ հրաշէկ լիբանանու ։ Ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ եղկելո՛յս՝ չերկնչել 'ի քէն անձառ և ահաւոր ։ Ո՛ւ եղէց անպտուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր ապաջան սերմանօղ անբերրի երկրի ։ Ո՛ւ լիցի ինձ երկնել և ո՛չ ծնանել ․ ողբալ և ո՛չ արտասուե՛լ ․ խորհել և ո՛չ հառաչել ․ ամպել և ո՛չ անձրևել ․ ընթանալ և ո՛չ հասանել ․ ինձ ձայնել և քեզ ո՛չլսել ․ պաղատիլ և անտես մնալ ․ կողկողիլ և ո՛չ ողորմել , աղաչել և ոչ ինչ օգտել ․ զոհել և ոչ ձենձերել ․ զքեզ տե-

սա-

սանել և դատարկ ելանել։ Տուր ինձ նախ քան զկարդալս իմում առ քեզ միայնդ հզօր. մի զանվճար տանջանացն տոյժս՝ ըստ թուով աւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ՝ հատուցաներ։ Կեցո՛ զիս գթած. լո՛ւր ինձ ողորմած. մարդասիրեա՛ ներող. խնայեա՛ երկայնամիտ. պաշտպանեա՛ ապաւէն. բարերարեա՛ հզօր. ազատեա՛ ամենակալ. կենագործեա՛ նորոգօղ. վերականգնեա՛ ահաւոր. լուսաւորեա՛ երկնային. բժշկեա՛ հնարաւոր. քաւեա՛ անքննելի. պարգեւատրեա՛ առատ. շնորհազարդեա՛ աննախանձ. հաշտեա՛ անախտակիր. ընկա՛լ անոխակալ. սրբեա՛ 'ի պարտուց օրհնեալ։ Եթէ յառեցից զաչս իմ նայեցեալ 'ի հայեցուածս երկուց վտանգից յաւուր թշուառութեան, զքոյդ տեսից փրկութիւն յոյս և խնամակալ. եթէ նկատեալ դիտեցից 'ի վեր յամենադրաւ ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան քաղցրութեամբ ինձ պատահեսցէ։ Տո՛ւր ինձ տէր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման մաքրութեան ոգիս լուսով ամբարձեալ 'ի յերկնաւորացն երջանկաց՝ պարգեւօք սիրոյ քոյ եկեալ հասեալ։ Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կցորդ ժամանեցուսցես. զանակնկալն բարի՝ չարիս 'ի յուսահատութենն աւուր

շնոր-

շնորհեցեր։ Բա՛ւ լիցի քեզ բարերա-
նեալ՝ որ փրկութիւնդ ես ամի, եթէ ախտա-
ցեալս քո ոչխարի գաղան գժնդակ տա-
ցես ուղեկից. մեղօք մեռելոյս՝ անմահ
կեանք, կործանելոյս պարտեօք՝ փրկու-
թի։ Որդեօք մոռացելս զբարերարելդ՝
ակնկալութի. անտեսեցեր զգթասի-
րելդ՝ խնամօղ. այլայլեցեր զմարդա-
սիրելդ՝ անփոփոխ. նհանջեցեր զկե-
նագործելդ՝ անվախճան. թողուցուս
զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ. աղա-
ւաղեցեր զքաղցրութիւնդ՝ բարեշնորհ
ծաղիկ. անպատուեցեր զնիւթ պան-
ծանաց քումդ ճոխութե. յեղանակեցեր
զփառս հերաց քումդ բարձրութե. ոչ
պահեցեր զվայելչական զարդ պայծա-
ռութե քումդ պատկերի։ Եթէ ողորմա-
ծացն է երանութի՝ այլ դու բնաւ իսկ
արքայութի լցեալ փափաքմամբ՝ ոչ զբո-
լորն պարգևեցես փրկութի. ոչ մատու-
ցանիցես դեղ վիրացս. ոչ սպեղանիս
խոցուածոյս. ոչ դարման տկարութես.
ոչ ծագեցես լոյս՝ ի խաւարի յուսացե-
լոյս՝ ի քո զօրութիւնդ կենաց պարգևող-
տիեզերաց։ Որ միայնդ ունիս փառս ինք-
նութեամբ իսկութեամբ և յարակայ
մշտնջենաւորութեամբ. վկայեալ՝ ի
բնաւից. օրհնել և փառաւորել յերկս
յաւիտեանս, և անդր քան զպայման

սահ.

սահմանի իմանալեացն յաւիտենից ·
ամէն ։

Նորին հանգոյն, Պատրաստեալ ողբ անձին զղջացե-
լոյ, մարգարէական բարբառովն ։

## ԲԱՆ · ԻԳ ·

Իսկ արդ՝ ընդէ՞ր ոչ 'ի վերագրե-
ցեալն սաղմոս նախաձառական և
յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից,
քանզի զի՞նչ վայելուչ իցէ կերակրոյն,
եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ. և
կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ
'ի միտ առնուցում ։ Քանզի նզովեմ
զիս ինքն 'ի նոսին, և ոչ իմանամ. լուա-
ցեալ լինիմ, և ոչ պայծառանամ. արեւու
ծագեալ, և ոչ լուսաւորիմ. մեղր ճա-
շակեմ, և ոչ քաղցրանամ. ռետնի՞
լնանիմ, և ոչ բժշկիմ. միշտ կանխեմ
'ի նոյն, և դատարկ երևիմ. հանա-
պազ ձաղիմ, և ոչ երբէք խրատիմ. ո-
ղոքիմ դարձեալ, և ոչ զգաստանամ ։
Արդարև մեղք և անօրէնութիւնք իմ յիս,
և ես մաշիմ 'ի նոսին ըստ մարգարէին որ
'ի գլխոց պարտաւորացն բանի, և տէ-
րունական առակին հին տըկոյն և նոր
գինւոյն ։ Զի թէ սատակին անօրէնք
և մեղաւորք 'ի միասին ըստ Եսայեայ
ձայ-

ձայնիւն , ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի։ Քանզի ասեմ զսաղմոսն , թէ հատուցանէ այնոցիկ որ առաւել առնեն զամբարտաւանութի. և կցորդեմ սմին զընթերցուածն , թէ օր տն 'ի վր հպարտից և ամբարտաւանից. ասեմ թէ ստար եղէն մեղաւորք 'ի մօրէ , և որ ինչ կարգ սորին ցուցանէ. յարեմ առ սմին , թէ կործանեսցին անօրէնք երկրի , և ամբարշտն բարձցի յերկրէ , և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ : Որք ինձ կարդասցէք առ ձայնն , թէ զորօրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ , այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն : Լացէք առ սաղմոսն , թէ արկցես 'ի վր նոցա կայծակունս հրոյ : Նշխարս պատմեցէք 'ի բանս ածեան վձռին՝ մարգարէին ազդեցեալ , թէ ոչ կամիցիք լսել ինձ , սուր կերիցէ զձեզ : Կոծեցարուք առ սաղմոսն , թէ մահ հոլովեսցէ զնա : Ի վր արտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւն իմ յարմարեցէք , յորժամ բարձրեալն ՟Է խորայելի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին , թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում : Բաղ կարդացէք թշուառացելոյս , յորժամ այլ մարգարէ զնոյն գիցէ : վայ նոցա , զի վադեցին կինև : Բարբառ փողեցէք 'ի

սիրա

սիրտ մեղկեալ նոր աղաղակի , յորժամ տեսանողն ա՛մ տմաչեցուցեալ զիս կըշտամբեսցէ ընդ ապարասան տանն յակովբայ . տեսէք արհամարհօղք՝ զարմացարուք և եղծարուք : Այլ դարձուցես և ամփոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց 'ի սարսուցելոյս յերեսաց մեծիդ . և խնամովք աջոյդ բարեբաշխութեան առ իս ժամանեալ , օծումն կենաց պարգևատրեասցես քոյ աղաչողիս : Եւ քեզ փառք յերկինս 'ի բարձունս , և 'ի մահացուաց յերկիր 'ի խոնարհ . 'ի սահմանս բոլոր ազանց , և յամ յաւիտեանս . ամէն :

'Սորին հօխողի , Առ մեծատառութիւն մեղաւորի զանցնէ , մարգարէական բարբառովն , զի անլուծ ընելոյ օրինաց , և յամառելոյ 'ի մեղս :

## ԲԱՆ . ԿԴ .

Եւ արդ առ ամ բան՝ յամի ուղիղ ես՝ ամծ . իրաւամբք դատիս . արդարութբ կշռես . Ճշմարտութբ չափես . օրհնութբ հետևիս . բարուք ընթանաս . ստուգութն սիրես . յստակութն կամիս . լուսաւորութն համբուրես . փորձիս յանդիմանես . երկայնմտութբ քննես : Մէ

ունիս նենգութ՟, և ոչ փառաւորութ՟ այլ ա֊
մենևին հեզութ՟ի, հանդարտութ՟ի, և ո֊
ղորմութ՟ի ։ Արդարացար վերին իմաս֊
տութ՟ի անայլայլական հօրդ հանճարոյ
կրկին վկայեալ անզեղջ գովեստիւ յոր֊
դեգրեցելոյն շնորհօք, ըստ բանին սրբու֊
թե՟, որ աւետարանաւն կենաց 'ի քէն
ընկալաք ․ որ ոչ 'ի կոծելն ողբացի, և
ոչ 'ի փողելն կաքաւեցի ։ Ասացեր անօ֊
րինիս, թէ մի անօրինիր, և ես 'ի նոյն
չարիսն պնդեցայ ․ մեղաւորիս, թէ մի
ամբառնար եղջիւր 'ի բարձունս, և ես
զընդդէմն քեզ գործեցի, և ոչ զգացի
երբեք զառածեալս՝ թէ 'ի ձեռին քո են
եղջիւրք արքայութ՟ հպարտից ամբառ֊
ձելոյ, խոնարհեցուցանել և բարձրա֊
ցուցանել ըստ ամբակումայ դաւթի և
զաքարիայ ։ Օրհնութ՟ի ինձ կամեցար
ողորմած, և ես անիծեալս մեծ տա֊
րագրութ՟ խոտորեցայ յարժանին ինձ
մասն ։ Սիրեցի բարկութ՟, և ոչ բարու֊
թ՟ի ․ շօշափեցի ըստ գրոյն զխաւար և ոչ
զլոյս ․ կենդանի ձայնիդ քո գթած ա֊
պառուամս պատասխանեցի ։ Որդ՟ն
անմահ ասացեր բանիւ եսայեայ, և
զհուրն անշէջ, և զկշտամբութ՟ին ան֊
վախճան, և զտեղին յաւիտենից, և զօ֊
րինակ նմին սոսկալի, և ես ոչ իմացայ
ըստ սաղմոսողին, և ոչ մտաւեցի, այլ 'ի

մռայլ մտաւորական կուրութ͞ն գնացի ։
Ձայնէր մարգարէիցն , թէ զօրհնութ͞ն
ստացի , որ զօրէնս դնէ ․ և ես համա֊
ռօտել զնոյն փութացայ ։ Արձան հոգե֊
ւոր վիմի գրեալ մատամբ քո տ͞ր յ͞ս ք͞ս
զգաւիթ խորովքն բանիւք կանգնեցեր ,
տնելոյն ինքեան ընտրութ͞բ առ սոյն ,
թէ պահեցի զօրէնս քո յամ ժամ յաւի֊
տեան , անդրադարձութեամբ բանին
միջնորդեալ զկրկին հաստատութն , թէ
և յաւիտեանս յաւիտենից ։ Ընդ որս և
զսորին նմանիս մասին պարծանաց՝ առ
իմն խրախոյս , և ոչ զկծեցայ ․ Ճեպե֊
ցայ 'ի տունս բանհաղոր , և ոչ էյ ։ 'Ի
յերկուս հետս երկմտութե կրկին կաղա֊
ցի կասեալ 'ի բարեաց՝ ըստ երգիծանե֊
լոյն հեղինա ։ Անխիմ զմոլեկա իւրովքն
օրինակօք եկեալ 'ի մռալոյ , և զտասս
մարգարէիցն գրեալ 'ի յոգի , և զմա֊
տեանս առաքելոյն ը͞ն մնացս մատն յե֊
ռեալ , և զնորդ հասարակաց կտակաւն
աւետեաց յարուցեալ 'ի թաղմանէ ան֊
ծին ննջեցելովք , և անհաւատարդոյն
քան զհնդեւսին եղեռնայրակցութ͞ն այնր
մեծատան ․ որ է առակ իմն յարմարա֊
կան նմանեալ զգայականացն մասանց
անողորմիցն յղփացելոց ։ Մնացի իբրև
զսաւ դարբնաց անտառ՝ յամառեալ քա֊
րացեալ սրտիւ , ո͞յ օրինակն է բեկա֊

կայ, և ոչ ապաշխարեցի ։ ՍԱԼ աղդեա՛
վերստին առ սոյն կերպարան չքեալ
հրկլին ողորմուն բարի, ահաւոր, մար-
դասէր, խնամակալ, կենդանի, սբ,
լուսաւոր, և անվախճան թագաւոր զօ-
րութ՟ք պանծալի խաչիդ խորհրդոյ 'ի
կարծրացեալս մեղօք անբեր անդաս-
տան երկկամանցս յիմարութե՟, և անպ-
տուղ սրտիս լքութեան ։ Ո ի առեալ
նպաստ օժանդակուե՟ 'ի գթուե՟ կամաց
ամենակալիդ, որոտացէ բղխեսցէ հո-
գիս ընծայեալ աչաց վշտադնեցելոյս
վտակս արտասուաց արբուցանողաց ինձ
'ի փրկութի, և 'ի մաքրուե, և քեզ 'ի
հաճութի ընդունելուե, ամենապար-
գև տրդ բոլորից փառաւորեալդ յաւի-
տենից ։ ամէն ։

՝Նորին հոգւոյն ։ Յաղագս՝ թէ երկրորդ մերոյ մար-
գարէք և սէր՝ բարեխօս ։ այլ երկնից ինչքն է ...

## ԲԱՆ. Ի.

Եւ քանզի համբարձեալ զընթացս
բանիս 'ի փոքունց աստի երկրա-
նոց չհամարելոց ը՟ գոյս՝ եղելոց՝ 'ի մե-
ծագունիցն տեսակս, ասացից զտօնելի
հանդէս իրաւանց ահաւորիդ անաչա-
ռութե՟ ։ Որ զի թէ մերձաւորագոյնք ի-
ցեն

ցեն մեր իբրեւ զնախածանօթ հայրապե-
տութիւն . եւ կմ մաքրագոյնք ոմն մար-
գարէսն . կամ ամբծագոյնք իբրեւ զա-
ռաքեալսն . կմ ընտրելագոյնք ոմն մար-
տիրոսսն . եթէ ոչ դու մարդասիրեսցես
աննուազ բարիդ , եւ անփոփոխ խնամա-
կալութիւդ , եւ անպակաս ողորմութիւդ
ընդունայն է ինձ փրկութիւն առ 'ի նո-
ցանէ : Ոի թէ առ նոյն ինքն աբրա-
համ ձայն արձակիցեմ , իբր ողորմագին
առաւել ընչեղին ինձ վարդապետէ , 'ի
տապոյ անտի պապակեալ՝ կաթիլ մի
ջրոյ ոչ բաւականանայ . քանզի եւ նա
փակեալ է ընդ կարեօք հասարակաց
անհնարութե : Իսկ եթէ առ մովսէս , եւ
նա դդածեալ է տկարութբ , որ ոչ զօ-
րեաց առնն փրկութե , որ զհայթայթա-
նաց կրկուածն 'ի պահպանութեն աւուր
ժողովելի : Իսկ եթէ առ ահարոն , եւ
նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի :
Իսկ եթէ առ դաւիթ , 'ի մէջ բարեացն
առաւելութե ստգտեալ է եւ նա : Իսկ
եթէ առ նոյ եւ յոբ եւ դանիէլ , զայս ե-
զեկիէլ մարգարէ մեկնեաց յանուանէ
իսկ յիշատակեալ զնս , եւ զոյն ընդ նո-
սին իբր 'ի դիմաց մեր ազդեալ . կենդա
նի եմ ես ասէ տէր , եթէ ոչ ապրեցու-
ցեն զուստերս եւ զդստերս իւրեանց 'ի
բարկութենէն որ հասանիցէ , բայց եթէ

 ինք-

Ինքեանք միայն տպրեսցին ։ Իսկ եթէ առ պետրոս վեհին հաւատոյ, 'ի բուժխնամոց լուսն մի խնթացեալ, և նա Ը կրկուք իմն գրաւեցաւ ։ Ողողում ասել զբաղմանցն գումարութի, խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք իցեն ։ Ընդ որս և յոլասու ումն մարգարէի 'ի մէջ մծառաքն սպասաւորութե մարդկորէնն գայթագղուի մնայ յոլովից անթարգմանելի, թէ և 'ի դէմս իմն մի կնաւէ ձևակերպեսցի ։ Նաքանզի չափեալ սահմանեցաւ զօրութի փրկութե մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ, և զօրացեալք ամենակալիդ ․ կոչեցեալք պաշտպանողիդ, և քաւեցեալք հնարաւորիդ ․ շնորհեալք ազատեցուցչիդ, և բժշկեալք անախտականիդ ․ կենագործեալք անապականիդ, և լուսաւորեալք նորոգողիդ ․ այսուհետև դիտացեալ զակն որքանութեց հողածին բնութե, որք մխիթարեն օրինակաւնն մանաբար հարազատապէս վհատութե յուսահատելոյ, ահա առ քեզ դիմեցից որդի այ կենդանւոյ քո օրհնեալ յմի ։ Մանաւանդ զի զաւակն ազգակից այսմ մաղթանաց սատանոր յիշեալ զվերադրելոյդ բան վերստին արդարացուցանել ․ բարի է ը իմաստնոյ ումեմն երջանկիան.

անկանել 'ի ձեռս ա՟ն, և մի՛ 'ի ձեռս
մարդկան . զի ո՟պ մեծութի՟ նր, և ողոր-
մութի՟ նորին ։ Եւ այս քան թէ և զդա-
թին իմն դժարգրեր, որ զերեքմասնեան
հարուածն ա՟ծեան առաջի եդեալ,
ընտրեաց ինքնին կամաւորաբար զդա-
տակնիք մահուն սատակման իբր զկեն-
դանի քնի հաւատոցն յանձնխութ՟՝ քան
զերկուսն ես այլ փոքրկունս, որք տան-
ջեն, և ո՛չ ողորմին ։ Սակայն և իմս օ-
րինակութ՟ի բանիս պատկերի ճարակե-
ցելոյ հնարս կենացկորուսելոյ անձին
ո՛չ այլայլեալ յարմարուէ ։ Ոի ո՛չ եթէ
զփրկեալսն նո՛ւաստացուցանեմ 'ի մա-
տենի այսր ողջերգութ՟, առանց որոց
ո՛չ է մաղթել առ ա՟ր, այլ զփրկողին ա-
նուն պատկեմ, և զշնորհ նորին առ ա-
մենեսին բարեհաչակեմ . և զանուին
բարձունսն 'ի թուխչս վարուց խոստովա-
նիմ՝ բանիս պայմանաւ, յաւէտ կարօ-
տեալ ողորմութեն դեղոյ ։ Ահա դու
կեանք . դու փրկութի՟ . դու բժշկութի՟ .
դու անմահութի՟ . դու երանութի՟ . դու
լուսաւորութի՟ . արա ինձ անդորր 'ի մե-
ղացս աշխատութեց . զի և քեզ լիցի հան-
գիստ 'ի մշտադատս հեծութեց ձանձ-
րացուցիչս թախանձանաց . որ ո՛չ այլ
ինչ, քան թէ փրկութ՟ մարդկան պա-
րարիս, օրհնեալ յաւիտեանս, ամէն ։

Սուրբն Հոփոզէ · Բնաւ պաշտպանաց առ Ճե-
նոյս ածածինն ։ ( որոյ յիշատակ է 'ի Չորեք-
շաբաթէ ։ )

## ԲԱՆ · Զ ·

ԵՒ արդ՝ ՚ի վե՛ր այսքանեաց յուսա-հատութեանց, և ահարկու սրտաբեկութեանց պակուցանողական սաստկութեանց ՚ի ծայրին բարկութեանց տագնապեալ հոգւով թախծութեան խայտառ, աղաչեմ զքեզ ՚ո՛վ ածածին, հրեշտակ ՚ի մարդկանէ · մարմնատեսիլ քերովբէ · երկնաւոր արքայուհի · անխառն իբր զօդ · մաքուր ո՛պ լոյս · անշաղախ ըստ նմանութե՛ պատկերի արուսեկին բարձրուէ · գերազանց քան զհնակութ՛ն անկոխելին սրբութեանց · երանաւոր խոստմանն տեղի · եդեմ՝ շնչական · ծառ կենացն անմահից, բոցեղէն սրով պարունակեալ · ՚ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ · հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ · բնակութիւն որդւոյն յարդարեալ

և տաղաւարեալ ։ Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ . որդի քո ծննդեամբ , և տէր ալխարչութե ։ Ընդ անաղտ մաքրութեդ և անբիծ բարի . է անարատ սրբութեդ և խնամակալ բարեխօս ։ Ընկալ զմաղթանս այսր աղերսանաց քում ծառանողիս , և մատո ընծայեալ է ամէն խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի 'ի քոյդ պաղատանս ։ Հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց , առնիդ կենաց պտղոյն որհնութե . զի 'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ , և 'ի մաքրական քո ծնելունդ ապաւինեալ՝ և լուսաւորեալ կեցից քովի որդւոյ քոյ և տն ։ Օժանդակեա թևոցդ ազօթիւք խոստովանեալ մայրդ կենդանեաց՝ և ելցին իմ յերկրես հոլով՝ առանց ըլկմանց հետևել 'ի կեանս օթեվանացդ պատրաստութե . զի թևթևացի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութե ։ Արասցես տօն ինձ բերկրութե զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն եւայի ։ Բարեխօսեա խնդրեա աղաչեա զի տն անձառելի մաքրութեդ և ահա զրանիդ հաւատամ զընդունելութի ։ Արտասուօք օգնեա վտանգեցելոյս գովէալդ 'ի կանայս . ծնունդ խոնարհեցո առ իմ հաշտութի ծնօղդ այ . է

իմում

իմում Թշուառին հոգւոյ խաղաղն բարձ-
րելոյն . ձեռն տուր անկելոյս տաճար
երկնային ։ Փառաւորեա՛ զորդիդ քո 'ի
քեզ ա՟ծօրէն ինձ հրաշագործել քաւու-
թի , և ողորմուն աղախին ա՟յ և մայր ։
Բարձրասցի պատիւ քո ինև , և ցուցցի
փրկութի իմ քև՝ եթէ զիս գացես տիրա-
մայր . թէ ինձ ողորմեսցիս որբուհի .
թէ զկորուսեալս չահեսցիս անարատ .
թէ զհարթուցեալս յանձանձեսցես եր-
ջանիկ . թէ զամաչեցեալս յառաջ մա-
տուսցես բարեշնորհ . թէ յուսահատե-
լոյս ինձ միջնորդեսցես միշտ ո՟բ կոյս .
թէ զմերժեալս ընտանեցուսցես մեծա-
րեալդ ա՟յ . թէ յիս ցուցցես զգթածու՟թի
լուծիչդ անիծից . թէ զծփեալս հաս-
տատեսցես հանգիստ . թէ 'ի խռովու-
թեցս յուզմանց փոխեսցես զիս խաղա-
ղարար . թէ վրիպելոյս ինձ հնարաւո-
րեսցես գովեալ . թէ վէր իմ մացես 'ի
հանդէս՝ մահու նհանջից . թէ զդառ-
նութիս իմ անուշեսցես քաղցրու՟թի . թէ
զբաժանմանն իմ խարաց քակտեսցես՝
հաշտութի . թէ զանմաքրութիս իմ բարձ-
ցես՝ եղծման ընդոտնիչ . թէ զմատ-
նեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս .
թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրու-
թիւն . թէ զխորտակեալս կազդուրես-
ցես՝ դեղ կենաց . թէ 'ի կործանեալս

յիս

յիս անհնարկեսցես հոգեկից. թէ ողոր-
մութ̃ի ինձ պատահեսցես կտակ նուէ-
րեալ. օրհնեալդ միայն 'ի շրթունս ան-
բիծս կեզուաց երջանկաց: Ահա կա-
թիլ մի կաթլին քումդ կուսութե̃ն յանձն
իմ անձրևեալ կենաց ինձ զորէ, մայրդ
բարձրելոյ տ̃ն քո արարչին երկնի, և
բնաւին երկրի. զոր անճառապէս ծնար
բովանդակ մարմնովն և համայն ա̃ծու-
թ̃բն: Որ փառաւորեալն է ընդ հօր և
հոգւոյն ն̃րյ էութ̃ե, և անքննութ̃ե մե-
րոյին բնութ̃բ միացելով ա̃մ և յամե-
նայնում մի յերրորդութե̃ն. նմա փառք
յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Սբ̃յն Գրիգորի Նարեկացւոյ, Ներբողեան առ սբ̃
Ա̃ծածինն.

Գումարք խմբից դասուց երջան-
կացն պատուաւորեն բիւրաբե-
ղուն բանիւք գովեստի զսկզբնալոյսն
կենաց գոյից 'ի կիցս բանից ըղձանա-
նութ̃ենց. և ոչ փողովք տաւղօք և քնա-
րիւք զգայականս սրտի շարժեալ զզո-
ծի՝ զգերաղանցեալն 'ի լոյս անմատոյց
ուրախութ̃ե վերադրուատեն: Նա զան-
ճառ արարչութե̃ն հրաշագործ ամենաս-
տեղծն տ̃րուն օրհնելով՝ պատճառ փա-
ռաբանութե̃ն խնկութ̃ե հաստչին զհա-
տուա

տօ՛նածօղս առնուն փոյթի . ո՞չ և ճշմա-
րիտն բան ցուցանէ , 'ի ստեղծանելն
ինձ զայս ա̃ծ , բոյլք զօրաց դասուց եր-
ջանկացն օրհնեցին զիս մեծաձայն , և
ա̃ծ հրեշտակք իմ գովեցին զիս ։ Նու-
արդ՝ եթէ հրափայլ և երագընթացն
փառաբանչօք վերնաթուիչ պատգամա-
ւորօք հոգիանիւթ և անեղծական կեն-
դանեօքն նա օրհնաբանի . որ թէպէտ
և նք̃ վեհք են բնակութ̃բ կայից սո-
րիցս , և նշոյլ երկրորդ լուսոյ առաջ-
նոյն . այլ սակայն յոյժ անտեսաբար
տպաւորու̃թ առ բնութ̃ի բարի բանին
բարձրելոյ բարեզարդաբար բերկրանօք
բերին . և որ գոհաբանի առ 'ի նոցանէ
'նք ա̃ծութին՝ լայնածիգ հեռաւորութ̃բ ,
և ընդարձակ միջոցաւ յաւէտ անջրպետս
նշուլիւքն ծածկի 'ի նոցունց ։ Ապա
զայն որ զանհասն հրեշինաց 'ի հողեղէն
յարկն պարունակեաց . և զանձառն 'ի
սերովբէից զգալի մարմնոյ յօդիւն պա-
տեաց . և զկերպակրիչն դասուց հրեշ-
տակաց կաթնաստուն ստեամբքն գրկե-
ցոյց , ո՞ր երգ պատկանագիր 'ի ձայն գո-
վեստից օրհնէ՛ պատուեսցէ ։ Օ մարմ-
նաւորանն անտեսին՝ և զձեմարանն մե-
ծին . զտաղաւարն տիրական՝ և զխո-
րանն ա̃ծական . զխառնարանն ճաշակ-
մանն՝ անապական խրախճանութեան .

զօրբա-

զորբարանն մաքրութե՛ և զընդունակ
զգաստութե՛. զնպատակն կուսութե՛ և
զօրինակն երանութե՛. զհարսնարանն
անլուծանելի՝ անժամանակականն փե-
սայի. զբնակարանն հաճութե՛ կամաց
անեղն ա՛ծութե՛ ։ Օ այսքան փառազարդ-
շնորհաց զընդունակն և ո՛չ նոքին ա՛ծու-
թե՛ն օրհնաւաք հրեշտակացն պարք՝ ո՛չ
պարտն է պատուել ժպրհին, թո՛ղ թէ
մարդ երկրային 'ի կշիռս չափոյ բերա-
նոյ հողաղանդուա՞ծս հիւթոյ մնեղի
մարմնոյ. քանզի անճառութե՛ անհասա-
կանաւ վեհագոյն ամենեցուն փակեալ
գտանի. և ո՛չ զօրեն երկնայինք զառա-
ջին անհաս տնօրէնութե՛ն զանքննին ծնող
արժանապէս վերաքարոզել ։ Քանզի
թէ ըստ առաքելական ձայնին պօղոսի,
մարդն անձնացեալ ո՛չ յումեքէ սրտամի,
այս որ զլրութի՛ բանին էութե՛ ա՛ծու-
թե՛ն յղացեալ կրեաց 'ի մարմնի՝ զի արդ-
զննեսցէ շարժութեամբ չըթանց լեզու-
մարմնեղէն զնա ձայնաչէլ ։

Օ ի թէ գասք պետութե՛ց անմահից
վեհից վերնոյ բնակութե՛ն եկեղեցեաւք
'ի յայս խորհուրդ խորին յառեցան . ա-
պա յայտ է, թէ մեծ է առ նոսա հիա-
ցումն սքանչելի ահեղս գործոյ, քան
զհասումն երկրաւորացս բանից պատ-
մութե՛ ։ Բայց սակայն երգեսցէ բանս

որ-

ոչքան զորեսցէ 'ի բաղձմանաց սրտի փափագման՝ նմին ընծայ օրհնառաք փառաց տեսչութե՟. նա զի՝ թէ երկինք փառացն այ՟ լինին պատմաբանք. և յանդրէն դարձ տարագրելոյ տոհմին յուդայի ժողովք ժողովրդոց տեսին զփառս անեղին. ապա այժմ յերևել բանին 'ի մարմնի, և լինել մարմին ադամեան կերպիւ, հարկ է յոյժ ճահողապէս՝ ոչ միայն անմարմնոցն, այլ և զգայնոցս արժանաբար ըղձականութ՟ հնչել զձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհնութեանց:

Քանզի խոնարհ այս երկիր եղեալ տիրակիր, գտաւ լծակից ընդ ածակիր երկնին վերին. վ՟ որոյ և խրախուսեալ հոգևորական հրճուանօք երկուսյն դասուց 'ի մի խումբ պարու, տօնս տարեկանս փրկչին փայլման կատարեն, ըղձայական սեռս եղականաց, և անմարմին դասք հրեշտակաց. յերևելիս տեսականաց, և յիմանալիսն ծածկեցելոց: Ընդ որս և մեք կցորդք կարգեալ այսօր եկեղեցի դուստր վերինն յարկի երկնայինն առագաստի, պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնանոյդ ձայն սրբասաց:

Ով ամենանբ արարչընկալ տիրուհի և ածածին. որ զանտանելին երկնի բարձ-

րու

րութիւն , և երկրի լայնութիւն ․ ծաւալու խո-
րութիւն , և անդնդոց անհատութիւն ․ զի
քեն մարմնացեալն խոկումն էութեան յո-
րովայն անձուկ ՚որդ քում սենեկի կրել
զօրեցեր ։ Ո՛ւ որ հայեցեալ երջանկին
յորայ՝ պատուաբանեաց 'ի ձև առա-
կայ ․ զանբաւութին մեծին սքանչացոյց
յումեմն դիմաց տեսեալ , եթէ չու-
նիմ զնա ․ և զայլմէ՝ թէ չէ ընդ ինև
Որում երգակցեալ վեհին յովհաննու
'ի բանն յայտնութեան ասէ հիացմամբ ․
փախեաւ երկին և երկիր 'ի մի տասա-
նուն 'ի դիմաց էին , և տեղի ոչ գտաւ ․
քանզի արդարև յաւէտ անձկութիւն ամ-
փոփին 'ի բերումն բովանդակութեան
արարչական բանին հանդստեան ։
Իսկ դու ընտրեալ 'ի զարմէ և 'ի զանդ-
ուծակէ մաքուր զաւակէ ՚որ ածածին ․
տարար զնա 'ի քեզ ախորժ հանդըս-
տեամբ կամացն հաճութեան , եղեալ
երկիր անձնական բանական բուսոյն ․
և զգայական անդաստան հենացն հա-
ցի ․ և վառարան բորբոքման անշէջ
կայծական ․ և վայր դալարաբեր հայ-
րական ծոցածին ծաղկին ․ և ծառ երկ-
նաղէշ անթարշամ խնծորին ․ և գոր-
ծարան գոյութեան լուսատու մարգա-
րտին ․ և լեառն արձանանունակ երկրալիր
վիմին ․ և այգ արփիախրկիզին աստեղն

առաւ

առաւօտին . և յարկ դիտապետին բա-
նական հօտին . և արքայարան լուսա-
կերտ անմահ Թագաւորին . և մայր
կաթնամատոյց բնաւից ստեղծողին . և
հարսն սրբուհի հօրն ք՛ի ։ Մնդամ և ու-
րախ լեր ձայնիւ երգոյս օրհնութեան
քումդ երանուե բանագովութ՛ . խորո-
խայլիր և ձայնիւ ողջունի դաբրիելեան
աւետեացն բերկրեալդ ՚ի կանայս . բնա-
կարան արժանաւոր բանին խոնարհու-
թեան . անկասաղարթ մարմնոյ ածու-
թեն խառնարան . եղարան օծելութ՛
քՇական անուանադրութեան . որ նախ
քան զծնանիլ բանին առ ՚ի քէն անթե-
րի լրականութ՛ հրեշտակական թևոցն
սքողմամբ ցանդ՝ արկեալ պահէիր ա-
նաղտ անքծութ՛ ։ Դու որ հաճեալ
հաւանութ՛ երրորդական փառք ածու-
թեն , ճանապարհ արար հանգստեան .
քանզի հոգին ՚սբ եկն ՚ի քեզ յօրինօղն
անախտ սրբութեան . և բարձրելոյն
հօրն զօրութի մօրդ հովանացաւ , որդ-
ւոյն պատրաստեալ զքեզ ընդունակ ։
Նու որ բնակեցաւն էակիցն հօր բարձ-
րելոյ՝ էր անժամանակ . և որ յոդաւոր
մարմնով ՚ի քէն ծնաւ՝ սկիզբն ունի էու-
թե նախ քան զարուսեակ . ուստի և
զյոդաւոր մարմինն միակ՝ խառնեաց ը
ածական բնութեն իւր անքակ . և սեպ-

հա

հականեաց զաթոռն հօր իւրոյ դաւթի յաւիտեան , թագաւորեալ տանս աշխարհի , և երկրիս քաղաքի · արկեալ սոյա ուղ ճանապարհի զփայտակերտն գործի՝ հանել 'ի կամարն երկնից տաճարի · և կանգնեաց զխորանն կործանեալ ադամեան մարմնոյն 'ի նորոգումն շինութեան քնական ուխտին դաշնաւորութեան :

Որդ՝ այսպիսեաց բազմաթիւ և բարձրագոյն բարեաց ընդունակ և մատակարար միայն դու մաքուր կուսութ̃ էին խնկարան տիրուհի օրհնեալ դու ածածին · քանզի իբրև զճնշումն խառնումն խնկոց կնդրկի և զմռսի ընդ տաշխին և կասիայի բուրբոքեալ հրով մաքրութն , բարդեցեր զծուխ բուրման անուշահոտ սրբութն 'ի հոտոտելիս այ , և հօր հաճոյթն · վարուք մաքրեալ · բարութբ լցեալ · հեզութբ արձանացեալ · առաքինութբ կատարեալ · քաղցրութբ աղբերացեալ դու ածամայր :

Խնդա և ուրախ լեր յարկ անճառ ծնելոյդ 'ի քէն անեղդ այ · որ 'ի նմին յորդւոյն քո խնամոց հրաշազարդ փառօք ամբարձար 'ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս · և թևօք թեթևութե հոգւոյն սլացեալ յիմանալիսն վերաչուեցեր 'ի կայանս հանգչել ·

 Աստի

Սուտի և զանհասանելին իշխանականն իմացման՝ զանկապտելին զգայուն սրտի նկատման՝ վայելս անաւեսիցն անձնապէս հոգիագրկեալ՝ զանեղծին փառաց Ճոխութիւն քեզ սեպհականեցեր Տր̃
ա̃ծածին :

Ներբողեալ ես մաքուրդ փայլումն կրօղ արարչին առաքինութե̃ն · որ սքանչելապուճեստ հրաշիւք ներգործեալ քև 'ի մեզ զփափկանումն մեծ արգասեաց փառացն Ը փոքունյեզանակեցեր · քանզի զանհայրն մանուկ մայրդ սրբեալդ գերագգոնեցեր · և ըմբռնեալ բարձողաց ձեռացդ բազկօք զանպարագիրն էակ մարդացեալ՝ 'ի համբոյր հոլելոյ մատուցման շրթանցդ ողջագուրեցեր · որում զտաք մեք ժառանգակիցք արքայ հայր զԱծ առձոյնել 'ի ձեռն քումի-
միջնորդութե̃ն Տր̃ ա̃ծամայր :

Բարեհամբաւեալ ես մաքրութե̃ն շաւիղ նախընթաց կուսից · որ զլրութե̃ անօղն գոյից կարօտաբար կաթամբ լցուցեր , և աչաց մարդկութե̃ զանտեսն 'ի մարմնի երևութ նկատել · վն̃ որոյ զա̃մ բերան գոհութե̃ առաջար քեզ օրհնաբանս անձկով տարփման Տր̃ ա̃ծածին :

Աչրանեալ ես դու 'ի լեզուս անբիծս ընտրական շրթանց ծաղկեալ յեսսեայ պտղոյն մեր կենաց · որ 'ի դրունք խառ_

նութե՟ քաւից յեղանակեալ տարերաց
անկցորդ մնացեր 'ի մասնէ հողածնե-
լոցս հասարակացո՛չ բերող ծանրութե՟
բնակակիր համաստեղծս կարեաց, այլ
քրովբէօրէն հրաբերան բղխող նշուլից.
Աւասի երագ ընթացիւք հեռոց հեռա-
ցեալ 'ի վայրն անմատոյց յարփւոյն վերին
ընծայեցար 'ըս ա՟ծամայր .

Խորախացի՛ր յաւէտ հրձուա՛նօք բերկ-
րեալդ 'ի կանայս . որ դժուարընդել
դաստիարակաւն խաչի վարժեալ կըր-
թեցար . որդւոյ քո կցորդակցութե՟
միատեւակն ժուժկալութե՟ կրելով զե-
րաշխէպ վշտաց ծնիցելոյդ 'ի քէն ա՟ն
մշտաչարչարն մեռելութ՟ անձնատուր
տօթով խարուկեալ . իբրեւ զորոջ անա-
րատ քահանայական նուիրմամբ 'ի վե՟
սիրոյ սեղանոյդ մատեար տօրաբոյս եւ
ստեւադիսակ դեղձնաբարձ մաքուր պա-
տարագ . 'ի ձգնաւորական վարս ողջա-
կիզեալ, քան թէ 'ի սրոյ հանդէս խող-
խողեալ: Ո՛վ այսօրիկ 'ի նուէր քոյ զեն-
ման հրեշտակացն պարք պաշտպանեալ
ընդ առաքելոցն գումար դասակցեալ
զմիայն արժանիդ պատուեալ գովէին
'ըս ա՟ծածին :

Խորախացի՛ր համայն տարփանօք բերկ-
րեալդ 'ի կանայս . որ 'ի կոյս եւ յանա-
րօր արդանդէ բան բեղնաւորեցեր՝ ցա-

ւոյ

ւոյ անիծից արմատ օրհնուէ ․ հօրն ա-
դամայ որդի բերկրութե ։ Ա՟ծ որոյ
շնորհս ունելով քեզ օրհնեալքս՝ ՚ի յոր-
դիդ քո փրկիչ աշխարհի , երանեմք
քեզ ս՟բ ա՟ծածին ։

Խրախացի՛ր անբաւ բերկրանօք հարսն
լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճու-
ճեալ ․ որ յօրէնս երկրայինս աղցաւոր
կրից՝ զերկնայինն ածեալ մատուցեր ,
և զաննմանն նմանեաց մնաղանգուճած
աղգի մարդկունես ՚ի չափ հասակի գե-
ղոյ գեղեցիկ զտեղն վայելուչ ՚ի լիբա-
նանէ մեզ պարգևեցեր ։ Աստի զպատ-
կեր նախահօրն ՚ի քէն ստացեալ՝ նորոգ-
հաստատեալ , գոհաբանեմք զՔո տի-
րամայրդ ։

Խրախացի՛ր յողջոյն նախընծայ երկ-
նային աւետաւորին , տաճար որբա-
փայլ ․ որ լուսով ա՟ծականաւ ուռճա-
ցեալ լցար ․ և երկրաւոր մարմնով երկ-
նայնոյն ա[թ]ոռ կազմեցար ․ և արեգակ-
նապէս հոլովմամբ առ արուսեակն ե-
րագ ընթացար ։ Ա՟ծ որոյ բացեալ զգե-
րան պտուտւոյն ամլածին որդւոյն , օրհ-
նէր զօրհնեալդ ՚ի կանայս ս՟բ ա՟ծա-
ծին ։ Նաև դու լցեր զտունն զաքա-
րիայ բարբառոյն գոհութե , յօրինակ
հանրական եկեղեցւոյ , որ է քո միշտ
օրհնաբան ․ զի երանեն ահա յայնմհե-

տէ քեզ ամ ազգք ըստ բանի ածազգա-
ցիկ քում դաւանութե ․ սկզբնարար
կուսից անարատութե ․ ՚ի բերկրեալ
լեզուս շրթանց զուարթնոց միշտ բա-
րեբանեալ ոք ածածին ։ Վասնզի որդ-
եկեղեցի դասուց անդրանկաց զ՚ի քէն
մարմինն ՚ի բանէն անանջատ համապա-
տիւ հօր փառաւորէ յերկս սրբասացս ․
առ որ հպաւոր քո գոլով ահաւոր խորհր-
դոյդ տեսող՝ զանճառն ուրախութի յա-
ւէտ վայելես ։ Ո ի զոր նք թեւաքողե-
լով դիմաց ծածկութի ՚ի բացուստ
անկնարկէն, դու յաւէտ համարձակնմին
կաթնածիր մայր յուցեալ ծանուցար ․
և ՚ի մէջ դաստակաց ձեռաց ոմ զմա-
նուկ զծերն հին աւուրց դգուեանոք ըն-
կալար ․ եղեալ կառք անձնաւոր կայից
բազմելոյն յաթոռ քրովբէից ․ Ո՛ զի
ոչ ընդ քեզ միայն, այլ և ՚ի քեզ ․ ոչ
միայն փարեցաւ բազմեալ, այլ և բնա-
կեցաւ տաղաւարեալ ․ ոչ միայն միացաւ
՚ի զանգուած մարմնոյ, այլ և մարդա-
ցաւ՝ առեալ զկերպարան ՚ի քէն սկսե-
լոյ ․ ոչ միայն մի զօդեցաւ քն յերկուց
գոյութեց, այլ և ընկղմեցաւ յանապա-
կան անօսր էութին մարմնոյն վերբե-
րումն ․ ոչ միայն միջնորդաւ անձինն ը
հողոյ միաւորեցաւ զիմանալ տեսակօք,
այլ եռաման խառնեալ էութք միաւո-

րե-

րեցաւ անշփոթելի ։ Մ՛ի որդի մերում
բնութիւն յաթոռ հօրն իւր աջոյ յերկնա-
ւորացն միշտ պաշտպանեցաւ ։

Ցնծա որոյ և մեք երկրաւորքս զմատու-
կարարդ և զսպասաւոր մեծս խորհրդոյ
երանեմք ըղձական երգօք՝ զանժամա-
նակն էուէ երջանիկդ ծնող ․ որ զամե ,
և ամենեցուն պաակեալն հոգեշունչ
երգօք 'ի քեզ ընկալար ․ ոչ 'ի մասնէ ,
այլ 'ի լրումէ ․ ոչ հատմամբ , այլ հա-
տատութ̃բ ․ ոչ բաժանաբար , այլ ամ-
բողջապէս ․ ոչ փոփոխմամբ , այլ փո-
խատրութ̃բ ․ ոչ 'ի ծիրս սահմանի տեղ-
ւոյ , այլ 'ի սենեակ լայնատարր ոգւոյ ։
Քանզի զբերողն 'ի կշիռ ձեռին զերկիր
և զերկինս տարար յարգանդի ․ և ոչ
միայն 'ի տես նկատման աչաց նայեցար
'ի նա , այլ և շօշափմամբ ձեռացդ ծա-
նեար ․ ոչ միայն ողջունեալ զանհունն
շրթանց , այլ և ըմբռնեալ ․ ոչ միայն
զննեալ զհասարակաշէն խորան մար-
դացեալ բանին , այլ և անուանեալ
կոչմամբ յո՛ զբո̃ն ոյ̃ ․ ոչ միայն ստեամբք
սնուցեր զանժամանակն ըստ աւուրց ,
այլ և ամենայն հասակի զնոյն ընծայե-
ցեր ։ Զոր խոստովանի հանրական ե-
կեղեցի զծնեալդ 'ի քէն ա̃ծ ճշմարիտ՝
ընդ նախեղակ գոյակն միացեալ 'ի տե-
սութէ իմաստից բնութե մեր փակեալ ․

Յորոյ տիպն ապացուցի խաբօղն յակոբ ըմբռնեալ զմարտուցեալն ը̅ իւր ողնդապ՝ս. և զանխուլ խորհրդով զա̃ծատեսն անուն ընկալաւ։ Այսպէս և որ 'ի քէն ծնեալդ մարմին 'ի յարգանդ սրբոյդ սենեկի ընդ ա̃ծ խառնեցաւ. և խաբեալ զեդովմ՝ մարդկան թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացաւ. վ̃ն ոչ տեսօղ ա̃յ՝ այլ Ճշմարիտ ա̃ծ անուանեալ, զամենեսեան յիշէլ անուն փոխադրեաց։ Վասն որոյ լի բերանով զպաշտպանդ փրկութեան այսմ մեծս խորհրդոյ երանեմք զտիրուհիդ 'մեր ա̃ծածին։

Որոյ տեսչութ̃ն ա̃յ նախագիծ 'ի ծովէ քարն պատուական հրափայլ և սպիտակ մարգարտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ. Քանզի արդարև դու ես ակն պատուական 'ի յաշխարհի ծովէ ընտրութ̃ն. որ զա̃ծային հրոյն տարար կերպարան։ Ով որքան մեծ է 'ի քեզ աւարտեալ խորհուրդ սրբուհի. զի թէ առանց մարգարէից հոգեկիր յղացմամբ իսրայէլի ծնօղք ասացան. ապա դու որ զբանն ա̃ծ անձնաւոր հայրենի բնութեանն հպաւոր 'ի սենեկի քում մաքրականի մարմնապէս բացածանուցեր, զո՞րպիսի արժանապատիւ փոխութ̃իս ոչ ընդունիցիս։ Ով

հոր.

շնորհաշուք գեղով արփաւոր ծածկու-
թիւն յանմատոյց գեղեցկութեան պաճոյճ
փաղփաղեալ. ո՜վ համեստ հեզութեամբ,
խոնարհ անբծութեամբ, կերպասիւք լու-
սոյ 'ի հոգւոյն պարասքօղեցեալ. ո՜վ
զարդուք երկնայնովք ոսկեղօծ սրբու-
թեամբ, արծաթափայլ մաքրութեամբ, ակա-
նակապ պսակ քեզ փառաց զբարձրելոյն
հովանի 'ի գլուխ ընկալեալ. ո՜վ քա-
ռեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր
ուլանցն յեռամամբ, Աստուծոյ հոգւոյ և մար-
մնոյ խառնմամբ, 'ի մի էութիւն երիցն
հիւսմամբ 'ի յորդւոյն լանջք որք քո
շնորհօք առլցեալ.

Օրհնեալդ միայն 'ի կանայս շրթամբք
քահանայուհւոյ՝ մարգարէին յոհան-
նու. փառաւոր և 'ի դասուց համա-
ղարմ նմանացեղից ցանկալի երգօք
ներբողականս տաւղօք: Ո՜վ թէ բա-
նական մարդոյ գոյութիւն ստանէր Աստուծոյ 'ի
սկզբանն ստեղծաւ. և այսր աղագաւ
ստեղծողին զշնորհս կալաւ. ապա ես
առաւել քեզ պարտական եմք երկրպա-
գութեամբ ունել շնորհ տիրամօրդ, որ Աստուծոյ 'ի
ծառայի կերպարան ստեղծման եղեր
պատճառ. առ որ 'ի լրումն աւարտման մար-
գարէական կտակն հասանիւր. այն զոր
ասէ, եղիցի 'ի վերայ առն ձեռն քո, և աջ քո
'ի վերայ որդւոյ մարդոյ 'ի քեզ խրախուսելոյ.

Ուժ և կարողութիւն և բազուկն հօր միա-ծնին ՚ի քեզ հանգուցեալ, և զինն որ-դիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Նմանն նկարագիր և կերպարանն հօր գոյութե ՚ի քեզ բնա-կելովն, սրբութի և արդարութի լրման աշխարհի ընծեռեաց։ Դա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք ո՛վ մեծածին։

՚Ի մարդկային զարմէ հրեշտակ երկ-նային. յեղծականաց սեռիցս անմահ սերովբէ. ՚ի հողային նիւթոյ ոսկի սո-փերայ. ՚ի ծաղկին բերմանց շնորհա-լոյս մարգարիտ. ՚ի յեսսեանն բուսոյ քաղցրապտուղ ծաղիկ. ՚ի հաւուց նախնեացն ձիր օրհնութե. ցօղոյն հան-դարտ ամպ անձրևաձիր. արևուն ծագման ակն արփիափայլ. մերկացե-լոյ այգոյն սաստ առաւօտի. գիշերային մթոյն խօսնակ բերկրանաց. օրինի ստուերին տառ ճշմարտաձառ։ Սակս որոյ իբր զնիւթ գործնեայ այսքանեաց բարեաց օրհնեալ ես դու ՚ի կանայս. նախաստեղծին մերկացելոյ փառք ան-կապտելի. վշտացելոյ անխծապարտ մօրն սփոփիչ քաւութե. որդւոց նոցին խա-ղուէ խաղաղութե ձայնատու։ Իսկ արդ՝ որ բան բաղդատելով զանհամեմատ քո մեծութիւդ լինի կարող դերահաչա-կել.

կէլ · արարչին մայր · անհասին ծնող ·
անբաւին գրկարան · ամենակալին յան-
ձանձիչ · փառազարդօղին զգեցուցիչ ·
վերօրհնելւոյն գրգիչ ։ Ո՛հա յաղագս
այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի յիրաւի
տացուք քեզ երանի մայրդ յոհ ։
Ո՛ննխրհելի գխտամամբ տեսակ լուսալից
աչօք նկատեալ · կտակ մակագիծ ա-
նեղծ պայմանաւ արձան հաստատեալ ·
սահմանն յարակայ մեծութեան կցորդու-
թեան · երկուց միութեան անայլայլականի
կայս պատկանակիր · վեհին պատկեր
կերպին կշռորդեալ · թեթև պարզու-
հիւթին բաղկացեալ · տառ տարբերա-
կան տողին ձևացեալ · տումար տենչա-
լի անախալ գրոշմեալ · մատեան մեծու-
թեան շնորհին նկարեալ · նամակ ընտրու-
թեան բանիւք բարդեցեալ · արձան անձ-
նական իմաստիւք զօդեալ · կնիք մա-
տանւոյ տրամբ կերպագրեալ ։ Ո՛ գեստ
լուսանխիւթ երկնից արքային · օթոց
արքութեան անմահ բնակողին · յարկ
վայելչութ անեղ շինողին · աւթ մարդ-
կութ բանի աներղին · գործի մարմնութ
վեհին բնութեան · պատճառ պատշաճից
անպատկառ ձգնութեանց · օրինակ ուղ-
ղութեան անայլայլակ վրիպութ · անպա-
կաս աճելութ լրման թերութ · խոկուհի
երկնային կենդանեաց գաւառին · մա-

նա-

նակից շնորհընկալ հայրական գթութէն . անպարտակիրն ազգակցութէ երկնից վերստին . անժամանակն արգանտի ծանուցող ծննդեան ։

Դու զհօրն լուսոյ զորդի հարազատ 'ի ստորինս կոյս աշխարհի մայրենի կաթամբ ջամբեալ դիեցուցեր . և ոչ թեւովք խնամական պահպանութ զպարունակողն պարփակեցեր ։ Դու զկենդաղոյս ընթացք ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր . և ըստ նմանութէ աքազման օդային թռչնոյ 'ի յանցաւորաց աստի փոխեցար . և 'ի մէջ դասուց հրեշտակաց ունող այ յայտնեալ ծանուցար ։ Դու լուսարփի ամպով առ 'ի նոցանէ պատուեալ համբարձար . և հաղեղէն հաստուա՛ծ 'ի քրովբէից աղի հանգուցար . և 'ի կանանց ազանցն կերպից արուսեկին տեսակաւ տեսար . և զննելի բնութէ մարդկայնոյ յանձառաշնորհ խորհուրդ ծածկեցար . և 'ի ստեղծողէն քո և համայնից հպատակօրէն յեռով պաշտեցար . և հաստողին ծաղկաց աշխարհի մայրօրինակ անուամբ ձայնեցար . և մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովեցար . և ամ անբծաց ընտրութէ պսակ սրբութէ դու դաւանեցար . և երբեք զհանդարտ երինջ անարատ արարչաւանդ ընծայն մատու-

տուցար . և իբր յաւանակ կամաց ան֊
բաւին ածուէն հետևեցար . և 'ի խո֊
րոց ծովէ աշխարհի շուշանական շաւղօք
ամբարձար . և իբր 'ի գժնեայ փշոց
խստուէց յաշխարհիս զբաղմանց ծաղ֊
կեցար . և իբր 'ի գառն արմատոց երկ֊
րի քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար .
և երրորդութեն անաէս թաքնութեան
խորհրդակից սիրոյ կոչեցար . և ծա֊
ծուկ հաւաքման բանին իբր լուսատու
ձորձով պատեցար . և անքակ էին որու֊
թե սահման սկսման վերակարգեցար .
և 'ի սրբասնեալ միջոց քո ստեանց զան֊
կէտն 'ի տաշխին ծրար թագուցեր . և
'ի կուսական քում բարունակէ զանմա֊
հարարն ողկոյզ հասուցեր . և միջնորդ
կենաց երկոցունց սքանչելապէս համար
ձակեցար . և համօղիչ 'ի խաղաղութե
մերկածուփ շարժմանց կացուցար . և
խրախակից վերնոյն բարձրուէ անկաս֊
տելի անուամբ պատուեցար :

Արդ յայսքանս և 'ի սոյնպիսիս , և յես
ընտրելական երգս բանահիւսից գերա֊
հռչակեալ ես վսեմական փառուց նախ
ընթաց և յառաջաշաւիղ 'ով ածածին :
Ո՛ զի որ երևեալն 'ի քէն միածին
անդրանիկ բնութեն հօր սկիզբն ասի
հետևման խաչունակ մահակիր Ճգանց ,
այսպէս երանեալդ և բարեբանեալդ

գերօրինակ ցուցման տեսակի ա՟ծակրօն
կարգաց ծաղեցաք ։ Եւ զանմատոյց
հուրն կիզանող անապական ծասքմամբ
ծախեցաք . եւ զարադեալն ՚ի թևս օ-
դային ՚ի քառընթաց կենդանիս տե-
սաք . եւ զանկցորդն տեսականաց ՚ի
մարդկային կերպ նկատեցաք . եւ զգո-
վեալ բարձօղն մեղուց իբր զդառն ճա-
շակ ընկալաք . եւ զատելոյն ՚ի չարա-
գործաց ոչ իմ ճշմարտի երկրպագե-
ցաք . եւ զանծանօթն հօր որդւոյ ազ-
գակցապէս օրհնաբանեցաք . եւ զմուր-
հակ պարտուց անխծիցն ՚ի յաւազանին
ջուր ընկղմեցաք . եւ զանտեսն աչաց
հրեշտակաց տղայական աչօք զգուե-
ցաք . եւ զանսահման բանին բնութե՟
՚ի հասարակածին տխպհամբուրեցաք .
եւ զաղամն նոր հոգեղէն ՚ի չափ հա-
սակի առաջնոյն տեսաք . եւ զարեգակն
արդարութե՟ կենցաղակից մեր կցորդ-
ատացաք . եւ զանժամանակ բանին
էութի՟ սկսեալ ՚ի դաւթայ պատմեցաք .
եւ զանհամեմատ մարդոյ պատկերի
մեզնմանատիպ գործով գրեցաք ։ Արդ
այսքանեաց որբացնական մասանցս ձա-
ռեցելոյ դա. միայնակ պ՟տձու , անարատ
կուսից՝ նպատակ կրօնից՝ տիրամայր ՚ի
ա՟ծածին ։ Քանզի թէ չէր ՚ի քէն ա-
ռեալ ուղեշն երկնային , ոչ էր պտղա-
բե-

բերեալ զանձնաշակերտն 'ի շրթանցն մեր
հաղորդութի. և թէ չէր երևեալ հօրն
արդարութի 'ի յերկնից, չև էր սկսեալ
ճշմարտութին 'ի յերկրէ. և թէ չէր յղա-
ցեալ յանփորձականդ քում արգանդի,
ոչ էր մարմնացեալ. և թէ չէր յայտ-
նեալ մերով բնութբս, ոչ էր շօշափեալ
և ըմբռնեալ անհասն իմաստից. և թէ
չէր կրեալ 'ի գիրկ բարձողաց հողեղէն
բազկաց, ոչ էր ծանուցեալ. և թէ չէր
համբուրեալ երկրաւոր շրթամբք, ոչ
էր ճառեցեալ. և թէ չէր հետևեալ 'ի
մարդկան ընթացս, ոչ էր քարոզեալ
էակն 'ի յէից. և թէ չէր թափեալ
իւղն անապական 'ի վէհագունէն, ոչ
էր զմեզ օծեալ. և թէ չէր խառնեալ
զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. և
թէ չէր խրախուսեալ մարդն 'ի յերկ-
նայնումն, ոչ ևս էր սրբեալ. և թէ չէր
խոնարհեալ բարձրն 'ի յընտանի մա-
ռայն, ոչ էր վերացեալ 'ի ստորնայնոցս
առեցեալն: Բայց մարմնացաւ, որքան
մարդացաւ. նոյն և յայտնեցաւ, ըստ
որում՝ ծանուցաւ. աւետարանեցաւ,
ուստի փառաւորեցաւ. իսկ մաքրեցաւ,
ոչ երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որ և
վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, ոչ
ճառեցաւ. իսկ տնանկացաւ, որով ճո-
խացաւ. իսկ հնազանդեցաւ, որով

պաշտեցաւ . իսկ երկրպագեցաւ , որով խոյեցաւ . իսկ կենդանացաւ , որով թաղեցաւ . իսկ պատուեցաւ , որով պատժեցաւ . իսկ ամաչեցոյց , որով պատկառեաց . իսկ բերկրեցոյց , որով տրտմեցաւ . իսկ զգեցոյց , որով մերկացաւ . իսկ ողջացոյց , որով բեւեռեցաւ . իսկ կանգնեցաւ , որով վտանգեցաւ . և սլացաւ որպէս վերնային . թռեաւ որպէս հոգեղէն . ծածկեցաւ որպէս զանքնին . փախեաւ որպէս զանհաս . ՚ի յամպս երկնից եդ զգնացս . գումեցաւ որպէս միածին . բոսորաքուղխ կայլակօք ներկեաւ . անկից վիրացն խոցով հարցաքննեցաւ . ՚ի վեհից անմահ հրեշտակացն հաւատացաւ . յաղթող մրցմանն և մարտի փառաւորեցաւ . գատաւոր արդարակշիռ յամ ազգաց վերապատմեցաւ ։ Քանզի ՚ի քէն հիմնադրեաց զսկիզբն մարդեղութն անեղն իսկութիւն . և յընտրեալ անպատում շնորհել զայս ամ անփոխանորդելի պարգեւական ձիրս ընկալաք ։ Եւ քեւ ամ այս պատրաստուն բարեբաստութեան բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ ։ Եւ զամ փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և ներքնոց ծածուկ խորհրդոց բազմադիմեսա պայծառ յօրինման նոր աքարածոյ ան-

ձառ.

ձառ շինուածոյ 'ոք եկեղեցւոյ , 'ի քէն ծնիցելոյ կերպիս մերոյ և բարձրացելոյ անուանն յոր ծնկովք կրկնելովք մատուցանեմք ։ Ուստի և քեզ բերկրեցելոյդ զամօրականն օրհնաբանութի բանիս երկրորդեմք ։

Օրհնեալ ես դու 'ի կանայս , գլուխ նոցին պանծանաց , և պայծառ պսակ ։ Պսակ կուսութե մաքուր հարսնութե . պսակ ընտրութե անփոփոխ գովութե . պսակ աներծութե լուսոյ նմանութե . պսակ շնորհանորոգ էին ծնելութե . պսակ երանական բանին հօր մայրութե . պսակ 'ոք պանծանաց կենացն բարձրութե . պսակ պայծառափառ վարուց իմաստութե . պսակ տիրապատուաստ երկնահանճարն գիտութե . պսակ պետանական եկեղեցւոյ գեղեցկութե . պսակ պաշտելութե սխրալի նորոյ զարդարման . պսակ յոգնանկար յարփից եօթանց փայլատակման . պսակ առաջնորդական վերնոցն ազգակցութե . պսակ անբծութե շաւղացն արդարութե ։

Արդ՝ ամենեցուն վերակարգելով թուհոցս այսոցիկ բնակարան բաղձալի , և երանելի , և ընդունարան ընտրական կամաց անքաւին՝ զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդքս ստորասահեղծականն ադամայ . որոց անհամար և ան-

թիւ

թի՛ւ աղանց ամրական և պահպանա-
կան պարիսպ կառուցար։ Քանզի յար-
ժամահայց և յամենադող քոյ բարեխօ-
սութիւնդ միշտ ապաւինեալ. Մնամք 'ի
հաստատութե, խնամեալք և հանգու-
ցեալք ընդ հովանեաւ պաշտպանութե
ամուր պատուարի որք անծածնիդ։ Պա-
տուար պնդայօրէն 'ի զանազան մաք-
րաղարդ ախանց յարմարեալ. պատուար
հրապարակ անմատոյց ընդդիմողացն
հինից. պատուար բոցանշոյլ անհուպ
և անհաս մատուցման դժնեայ դժրո-
ղաց. պատուար ամենահրաշ քան եղե-
կիելի, որ աղխեալ զմուտ քո՝ ձգցբա-
պատում գրեաց. պատուար շրջապա-
րիսպ քան դաւթայ, որոյ հիմն անշար-
ժութե 'ի բարձրելոյն հաստատեցաւ.
պատուար ամրակուռ քաղաքին վեր-
նոյ քան սիօնի, որում զհանուրս բնա-
կիչս արարեր։ Քանզի զքեզ ծնար 'ի
մարմնի, և զծնունդս մարմնաւոր սխալի
որդիս արարեր վերնումն հօրն։ Ա-
րոյ աղաղաւ օրհնեցաւ արդարդ քոյ
կուսութի 'ի շրթունս նոցին, և խոստո-
վանեցար յամենեցունց մարմնարան և
տաճար հօր իսկակցին։ Որով արդարա-
պէս 'ի քեզ ընծայեալ զբան պատմո-
ղին, եղեր մեր օգնական և տուն ա-
պաւինի յուղխից հեղեղացյ յաւուր անձ-

 կու-

կութեն . մաքրութի՛ կուսից և սկզբնաշա-
ւիղ դասուց երջանկաց . մայր հիմնա-
դրութեն հաստատութեն եկեղեցւոյ , և
ծնող անարատ բանին այ : Օ քեզ յա-
ւէտ օրհնութի՛ք միշտ պսակեմք 'ի նուի-
րեալ տեղիս սրբութեն քում տաճարի ,
և 'ի թևս պահպանութեն լայնատարած
քումդ մաղթանաց ապաւինելով , զձեռս
մեր 'ի սմա տարածեմք . և աներկբայ
յուսով հաւատամք ասելով : Արդ աղա-
չեմք ընկալ զերգաբան օրհնութի մե-
րումս լեզուի . և հաճեալ տացես սմ
զձիրս շնորհաց սիովնի և բեթղեհէմի :
Ուստի արժանացուք ընդունել մասն
փրկութե յաւուր գալստեան մեծի յայտ-
նութեն փառաց անեղծի , փրկչին անմա-
հի , քումդ միածնի , միոյն այ , ամն յի :
Եւ իբր զպատճառ սկզբնաշաւիղ այս-
քանեաց բարեաց 'ի սոյն կամարի գե-
ղապանծելոյ զքեզ պատուեսցուք՝ անժա-
մանակ էին բարձրացեալ ծնող :

Նորին վերտառին 'ի վր գրոյ անուանն խաչոյ :

Գերազանց չափոյ կշռման երկրային
ընութե և քրովբէականն նախադասութե
եղեալ վեհական , սրբուհի պայծառ
առագաստ փրկչին քո . և նորուն խակ
տեսաւորիչ վն մեր . ծունր կրկնեսցի

արժանապատիւ քումդ պատկերի․ հայ-
ցեա՛ վ՛ս մեր առ ծնեալդ 'ի քէն ա՛ծ 'ի
մարմնի ։

Բոպէից յոգնաթիւ մասանց բերկրու-
թե․ ազգաց և ազանց արմատդ օրհ-
նութեան․ 'ի ծագմանէ փառացն երկ-
նայնոյ աննստուէր նշոյլ տարփալի շո-
ղեալ 'ի ստորինս տեղի․ անորիշ հրա-
մամբ մերձաւոր անմատոյց լուսոյ՝ ան
ճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ՝ 'ի
մահու պարտեացն զերծս զատ քեզ ա-
պաստան ծառայքս քումդ որդւոյ ։

'Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր մա-
րուցն՝ երկնայնոցն կրօնից եղեր հպա-
ւոր․ մարիամ առիթ տեսութե նոյին
զանզննին որդւոյն կերպարան ։ Աստի
տեսին զանկէտն սկսեալ, և երանե-
ցին զարմատդ և զպատճառ․ յորմէ և
մեք հայցեմք զնորոգութիւն կենաց
և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուու-
թիւն ։

Գլխաւորեալ այսօր 'ի քեզ զիմանալին
փարթամ մեծութե․ որ սլացեալ հա-
սեր 'ի բարձունս երկնից․ իբր անըն-
դունակ ապականութե և մահու լուծ-
ման՝ մարմին․ յորմէ պատկառեաց ա-
մօթով պարտիքն մահու․ և ցուցար
բնակիչ արժանապատիւ կենդանեաց
երկրին՝ ը՛նդ կենակից 'որդ տիրամայր․

ար-

արդարահատեամ միշտ զողորմութիւն որոց պանդխտիմք 'ի վերհս ներքին ։

Սնող հրճուանաց անթիւ խրախուսեց ա՟ծային անկէտն խոստմանց 'ի բուրաստանս անդաստանաց տիրական տնկոյն ․ որոյ ստեղունք շառաւիղացն երկրային հնարից գերազանց ․ անդր մուծցես զքո գաւառողքս 'ոք տիրուհի մայրդ յոյ ։

Բոտեմք 'ի քէն աղերսիւ բանի , որ ես քաղցրալուր գրաւ աշխարհի ․ միայն երանեալ և բարեբանեալ , հօրն հաճոյ հոմանաւորեալ ․ որդւոյն ծնող ․ հոգւոյն վերընդունող ․ երրորդութեան փառացն տարող ․ վերանկարեամ զառյաւաղանէն անախտ արգանդէ զկարդացեալս անուն 'ի գիր մատենի վերնում դպրոցիդ ։ Սու զերգագրուի սակաւամանեաց այոր գովեստի արժան հաստատեամ միշտ անկորուստ որբոյդ առաջի ․ ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ , և զգայական շնչոյս զպատկեր բանիս ։ Զի իբր 'ի գոյից երկուց զուգելոց 'ի մի խառնութիւն միոյ կենդանւոյ ․ միշտ փառաւորեսցիս դու սովին օրհնութեամբ , ընդ անեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութեամբ ։ Սերևս 'ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լիցի մեզ անդատապարտ համարձակութիւն յատենի մեծ և ահաւոր

'ի դատաւորին ։ Այլ գտցուք արժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոյն հաստատութեամբ հանդիպիլ և անդանօր ընծայիւք բանից քում երանութեան. փառաւորել ընդ քեզ և ընդ քոյոյն յանդիման դիմաց պաշտելի և սոսկելի քում աստուածափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեանդ զէութի անքակ և անքննելի 'ի երրորդութեան 'ի միում աստուածութեան և արարչութեան ։ Որում վայելչական պատիւ. և գովեստ անդադար երգոց այժմ և միշտ և յաւիտենանս յաւիտենից. ամէն ։

Լորէն հոխոչէ տաղեալ, Մ'ատն ներբողէ համօրէն սբց առաքելոց. (որոց յիշատակ է 'ի Հինգշաբաթի :)

ՍՐԲ' այսու քարգաւաճական քարեբաստութի՛ 'ի բեւրուց բերկրալից բանից հրաշանշան և հաճոյական խորին հանդիսին անտխուր հրճուանօք տօնեալք : Ով Թէպէտ նոքեցիք կափուցմամբ երկրաստեղծ աչաց, ընծայեալ ամենունակ և յոքնրմբռնող նախածին ծոցոյ մօրն որովայնի հողածին զարմի, այլ կենսատուր բարբառոյ ներման ձերոյ քոյս արդ ևս ցուցանի յանհատ և յանհամեմատ Թիւս ամբարեալ արգասատրուէ : Վենդանիք 'ի մահու. անմահք 'ի մարմնի. անեղծք 'ի ստեղծման. միանջենաւորք 'ի սկսման. յոյի քանի՝ և հոգւոյ՝ և հօր նորա առաքեալք : Կաճառակիցք կրօնից փրկչին. զուգաշաւիղք պարադրողին. հանգունատիպք երևելոյն. հօրն ընդմիածնին փառք և աշակերտք. անսկիզբն և անժամանակ էութենն ազգ և ընտանիք. ով ամ յումենէ առեալ՝ ումանց



իմաս

իմաստասիրեաց ։ Ա՛րժանապատիւ փա-
ռօք առաքեալք 'ի ծածուկ ծոցոյ սու-
րիջելոյն . և 'ի ձեռն ձեռնադրութե՛ն ձե-
րոյ մարգարէք ագաբոս և տիմոթէոս .
'ի ձէնջ աւետարանիչք՝ անուանեալն
պատուար բարձու վիմին աշակերտ սըր-
բասնունդ պատանին մարկոս . անուա-
նակիրն յարութե՛ սպասմօղն համբարձման
անտիոքացի համբաւն ղուկաս , բժշկա-
պետն անձանց՝ քան թէ մարմնոց . ձեօք
և 'ի ձէնջ հովիւք և վարդապետք ։
Խրթնածածուկ բարբառոց լեզուք .
օտարացեղ ձայնից յայտնութիւնք . ա-
ներևութից բացերևմունք ։ Ընդարձա-
կեալք 'ի զօրութիւս , և առատացեալք
յայցելութիւս . 'ի հանճար , 'ի պատա-
խանիս , 'ի համարձակութիւս , 'ի պատ-
շաճաւոր դարձուածս բանից . յաջո-
ղուածս երկաքանչիւրոց . եղծման՝ ոչ
սափիրայն , և նորոգութե՝ ոչ տաբի-
թայն ։ Անուշութե՛ բուրմունք հոտոց .
ձայնատուք վէհք ահեղ որոտման , բա-
ներեգէս 'ի տ՜նէ անուն ձեր . ի՜ այսմ
զօրացեալք , և քաջացեալք . անչխաս
ոտից դարշապարօք խրախուսեալք և
անդայթակղելիք . Նշուլիւք փայլման
լուսոյ առաջնորդեալք 'ի ճրագէն կե-
նաց՝ ընթացից ձերոց գործարան . շնոր-
հաշուիղք և լուսատեսիլք . յերկրային

տոհմէ

տոհմէ աննմանք . աջողական աջով ա̃ննադրեալք . Նորոգմամբ նշանականք . ախտից և մահու վշտաց տխրութե̃ 'ի հրամանէ էին յաղթականք . անպարտելիք և զօրաւորագոյնք . ք̃ երկնային զօրուն զուգականք : Ո՛ւտք հետոց ձերոց 'ի փառս յերջանիկ վայրացն սահման . հարսանեաց պալուցն կցորդ՝ 'ի կենդանեաց կայիցն խորան : Ա՛մենակալ ձեռինն օրհնեցեալք 'ի գովեցեալ աւուրն համբարձման . խումբ համարոյ պատկանաւոր . խորհրդական Թիւք երկոտասան . առենապետք դատաստանի 'ի սոսկալի աւուր Նորոգման : Ո՛րդ՝ այսքանեօք խնկելի և նուիրելի՝ և այլ ևս սխրալի և զարմանալի մասամբք երանեալք , և բարեբանեալք . լուսանշիլք , և ոչ հողանիւթք . հոգեգումարք , և ոչ մարմնագունդք . յաղթականք , և ոչ պարտելիք . երկնահեցաղք , և ոչ երկրասնունդք . անապականք , և ոչ մահացուք . սրովբէամաքուրք , և ոչ երկրամերձք : Ո՛ր Թէպէտ ստուգապէս մարդք 'ի ստորնայնոցս , այլ հրեշտակք հաւասարապէս , բացակայք յերկրային կրից : Ո՛խոյնում գլխոյն յմի երկոտասան յօդուածք անդամոց . կենդանարար կամաց բաղձրելոյն հաճոյական յիշատակարանք . քանզի որք մարմնով


են ,

են , լինել տեղի ա̃յ ոչ կարեն . և դուք
ոչ էք մարմնով, այլ հոգւով. եթէ իցէք
ունօղք ա̃յ հոգւոյն . և տարատրոհին
ու 'ի միմեանց շնչաւոր մարդն և անձ-
նաւոր . ապա հոգեւպէս քան թէ մարմ-
նաւոր ընտրութեան ձերոյ կենցաղ :
Աշանագիրք կերպատարագք , այլազան
զարմի միաթիւ չարի երկակի հնգիցն և
երկուց վարողացն և յարմարողաց երկնի
և երկրի . և ամաց շարժութե̃ և հաս-
տատութե̃ , ըստ քերթողացն Ճահա-
գրութե̃ : Քանզի նուիրական է ամ̃ 'ի սա-
ցունց , որպէս ուխտր կատարեալ արու .
և այլ գործական , իբրև զուգարակ լծա-
ձիգ արքայական կասող ցորենոյ . յըմբ-
շամարտս մարդադատիչ իբրև առիւծք
հզօրք : Եւ այսպիսեաւ թուով յար-
մարեալ մինչև 'ի կատարեալ թիւն եր-
կոտասան : Եւ գրութի երկրի ձևակա-
նութե̃ երկոտասան . և տեսակ աւուրց
տունջեան երկոտասան . և գլխաւոր
թիւք անդամոց մարմնոյ երկոտասան :
Ըստ այսմ վակասին Նբ. քառամանեակ
երկոտասան . կայլակք ազաբերաց և որք
սրբինն զայն զօրաղեալք երկոտասան .
Ավկայական արձանք գետածինք վերա-
ցեալք յորդանխայ ծոցոյն երկոտասան .
և զոր հեղխա կառույց նաւատակ 'ի կոր-
ծանեալ հիմն սեղանոյն երկոտասան .

այս

սյս երկոտասան թի՛ւ խորհրդական
որբազան անուա՛ն ձերոյ յիշատակարան՝
կոչմամբ վկայեալ վերակարգելոց ։
Նուս և ՚ի սոյն յարեալ համբարձից յի-
մանալեացն անհասութե՛ զպտղածին
ձիւղ երգոյ տառխ զպսակօղ և զնորո-
գօղ անուա՛ն էութե՛ ամենազօր ՚որ եր-
րորդութե՛ն . քանզի ՚ի սողօբայս երից
քառագրաց յորջորջեալ կոչմամբ ծա-
նուցեալն մեզ ՚որութե՛ն միափառ և հա-
մապատիւ՛ որք անպարագիրք և անմայ-
րափակ հայր որդի հոգի ՚ի մի շար գա-
սեալ զթիւն պատուեալ և օրհնաբա-
նեալ երիցն ազգակցաց երկոտասան վե-
րանկարէ ։ Ահա և յայտոսիկ ցանկալիք ,
և վեհագունաւն վկայելիք , և անձա-
ռելեաւն վերագրելիք . ընտանիք նոյ ,
և սրբոյ քաղաքակիցք . չինուա՛ծք իմա-
նալեաց անքակ տաղաւարք . արարչու-
թեանք , և ախորժելի բնակարանք ։
Իսկ յեօթանասանիցն ձառ փոխարկեալ
զգեմս բանից յաւէտ ըղձական և ա-
խորժելի խորհուրդ ցուցանի . քանզի
զայսքանեաց բազմագումար դասուց
ընտրելոց ո՞ր բան զօրեսցէ ՚ի նիւթ ներ-
բողինի . վ՟ն զի յամենայնքն գրուէ ա-
ւետարանական պատմաբանութե՟ն , մինչ
զկնի մաքրակենցաղ և տիրաքարոզ ձա-
նապարհորդութե՟ն առ առաքօղն ձեպեալ
հա-

հասին և յանդիման ա՟ն պատկերին ,
զուարթ բերկրանօք զզօրուի անուան
կոչողին յինքեան պատմէին . զմերժումն
ախտիցն , և զհալածումն այսոցն . յայն֊
ժամ աւետարանեաց նոցա մեծագոյն
յուսոյ տեսութին . խնդացէք ասէ ընդ
գրելոյ անուան ձերոյ յերկինս : Ո՞վ
փափագելի մեծի և աներկեան երա֊
նութեն . քանզի որ գրեաց զն՟ս ա՟ծ՝ նոյն
և վկայեաց : Ի յսու պարգևօք անուա֊
նակոչեալ ժառանգք և որդիք ՚որ ար֊
քայութեն . ո՛վ ա՟ծազգեացք ա՟մ գոյին
կատարեալք . իսկապէս շնորհին պա֊
տարագեալք . ապէնիաղ պարգևօք լցե֊
եալք . եօթանասնեկի երկակի լեզուաց
այլասեռն ձայնից 'ի մի տեսակ զուգա֊
շուրթն խօսակցուէ համահաւաքիչք .
բաժանելոց յօքնակի ազգաց անսասա֊
նելի շաղկապք սիրոյ . դասք և դասա֊
պետք վայելչական սպասուց . տիեզերաց
երկրի դաստաւորք . գումարք թագա֊
ժառանգք կայսերաց . ինքնակալ պե֊
տութիք իշխանականք . գունդք գեղեց֊
կագեղք . նախարարք աղանց պատուե֊
լոց . եկեղեցիք ընտրելոց երկնից բնա֊
կութեն . կամձառակիցք և կցորդք դա֊
սակցութեցն վեհից . կոյսք կայունք
և անխախտելիք անմահին փառաց .
կցորդք հանդիսի իմաստութեան հան֊

ձա֊

ձայրոյ ․ կամք և յարձակմունք ակնար-
կութեան վերնոյն ․ շարք աստեղանիշք
եկեղեցւոյ հարսնունն ․ արհեստական
ձեռք պսակաց զարդու սիւնին ։ Յօթա-
նասուն բոյսք արմաւենեաց 'ի նշան ան-
ուանն յաղխմայ ․ և միանգամայն գրե-
լովք զամ 'ի սոյն կարգ բանիս պատկա-
նագրունն , զնկար անկուածոյ ձառխ
գրուածի պայծառապէս պձնազարդե-
ցից ։ Օր բանն ած յայ անժամանակ
խոկութեամբ ծնեալ՝ միայնակ անձառն
յանքննին ծոցոյ , որ և 'ի կնոջէ կուսե-
մաքրելոյ՝ և յանարատէ սրբուհւոյ անդ-
րանիկ և անհարազատ ․ 'ի մօրէ յա-
տուկ , անհաղորդ կամաց հօր երկրա-
ւորի ․ ած բն տեսականին , և մարդ բն
պարզունն միաւորական խառնունեն ․ ոչ
սոսկ և ոչ վայրապար ․ այլ մեծի խրա-
կարգութեն նշխար՝ զձեղ սրբագունդ-
գասբ առաքելոց վերակոչեաց՝ ոչ ընտ-
րութեն միայն վկայեալ , այլ և պատշա-
ճականաւ թուով զանձանաց պայծա-
ռացուցեալ ․ կարգ և կնիք տասանց եօ-
թանց խորհրդականաց , ըստ ժամանա-
կաց յեղյեղուն շարժունն դարուց ․ իսկ
զերկուսն յեօթանասնիցն թիւ յարակ-
ցեալ՝ նշանակ ապառնեացն և ներկայիս
զերկնաւորացն և զստորնայնոյս ․ ըղ-
մարմնոյ և զհոգւոյ ․ զտապանակիք

տա-

տախտակացն • զերկեակ դրսուն երկնից • զերկուց լուսատու աչաց, և զլուսաւորչացն երկնայնոց, զեդեմայ և ըղձերս եկեղեցւոյ • զնոյն օրինաց և զնորոյս աւանդուն: Իւ արդ՝ այսքանեաց խորհրդոց նկարագիրք և պատկերք • ոչ առաքեալք միայն, այլ և նահատակք • ոչ խոստովանողք միայն, այլ և վկայք • ոչ չարչարեալք միայն, այլ և կատարեալք • ոչ մաքուրք միայն, այլ և մարտիրոսք • ոչ ընծայեալք միայն, այլ և յարգեալք • ոչ մատուցեալք միայն, այլ և նորոգիչք • ոչ պատուճեալք միայն, այլ և պատարագեալք • ոչ մարմնաբար միայն ծախեցեալք, այլ խնկապէս բուրմամբ վերնոյն խնկեալք • քանզի հոտ անոյշ քնի, և հոտ նորին հաճուն զգովելալ դաս իմաստունն պօղոս քարոզեաց: Ցանկալիք և երևելիք • գովելիք և պատկառելիք • խնկելիք և պսակելիք • Ծնացուածք զարմին տանն յակոբայ • զաւակք անհաղորդք չարեացն սոդոմայ • ժառանգք հաւատոյ նախնոյն աբրահամու • զի թէ ոչ տն զօրուեց թողեալ էր զձեզ զաւակ ընտրութեն նորոյս սիոնի, լինէր հանդունակից ստուերականն սինայի • այլ համբարձաւ բարձրացաւ էին փառօք յերկրի ՚ի ձեռն բանէ, որ թափեցաւ անկէտն ՚ի վերուստ յիւր գթութէն.

Նորին Հովուի տօնեալ՝ 'ի Չարչարանս և 'ի Խաչելութեան տէ. (որոյ յաւելեալն է յեղափոխ.)

# ԲԱՆ. ԼԶ.

Ի քանզի անթիւք են յաճախեցեալ՝ և գերազանցումն միշտ առաւելեալ փրկանաւորդ արգասիք շնորհաց առ պարտուցս իմոց առաւելութի, չարչարանացդ հանդէս և յանձնառութի։ Զափդ ամփոփիչ՝ ամենից հոգւոց գոյից արարիչ՝ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկութի իմ ընդդիմումն կամաց քոց՝ լքցես։ Զընթացողականդ ըմակյութի երկոցունց ոտիցդ կեցուցանողդ՝ յանարգելութեն պատճառ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագունի թշուառացելոյս դրաւականեսցես գթածաբար։ Աչ գօսանալ ձեռաց կափողացն հրամայեցեր՝ օրհնեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ առժամայն չորացուցեր, զի և զաւխ ներելոյդ օրհնական

կան

կանխաւ աւետարանեսցես ։ Ո՛չ գանդ-
ղայն ապիրատութեան զխոստովանեալս
ա͞ծ՝ սպառնացար , որ զարուսեակն
մթացուցեր , զի մահացելոյս անձին
բարուն հանգստեամբ հանդերձ գոր-
ծեսցես ։ Ո՛չ զհայհոյչայն հնարաւոր
չարաբանութի̃ կապտեցեր , որ զլուսնին
պատկեր երանգաւ արեան գունեցեր ,
զի զանհամօրձակ լեզուս 'ի գովեստ
քեզ զօրացուսցես ։ Ո՛չ նախատողացն
մոլեգնութեան սաստեցեր , որ զտարերս
սասանեցեր , զի զթշուառացեալս գլուխ
գթութեամբ օծմամբ խնդեսցես ։ Ո՛չ 'ի
մոլորեցուցիչն կարդալ զքեզ ա͞ծասպա-
նիցն՝ զոգոռած ծնօտիցն բաժանեցեր
քակտեալ 'ի միմեանց , որ զկարծրուն
վիմացն հերձեր , զի զանուանակս բա-
րեաց հօգիս 'ի բերմանէ ընդունայնու-
թեան ողորմութբ հանդարտեցուսցես ։
Ո՛չ զպահապանացն սուրս ընդերաց իւ-
րեանց մատուցեր , որ զորովայն օձին
սահեցման հողոյ մատնեցեր , զի զտա-
ռապեալս մարմնոյ ոսկերս իբր 'ի գան-
ձարանի պահեալ , կենաց յարութե ար-
ժանացուսցես ։ Ո՛չ 'ի կնքելն զշիրմին
փականս՝ կենդանակիր քոյ գերեզմա-
նին՝ անդրէն յորսայսեալս զնոսին յան-
դունդս երկրի սուզեցեր , զի 'ի տապա-
նակի անձինս՝ զնշխար լուսոյդ հան-

դուս

գուսցես ։ Մի՛ 'ի համբաւէն զքեզ կո-
րուսեալ, և երբ զերկրաւոր մարմին
գողացեալ, համայնաջինջ և ամենա-
պատ զսերմ ծննդոցն կրճատեցեր, զի
զիս զանարժանս յիշատակի ընտրութե
բարեաց՝ անկորուստ և անվնասելի ընդ-
փրկեցելոցն հաղորդեսցես ։ Մի՛ յարծա-
թոյն կրկնակապէն կաշառածութի,
որ 'ի գանձարանէ հօր քում նուիրաց՝
քեզ գրաւ մատնութե և անարգութե
մանաւորեցին՝ զուրացողացն մոլեգնե-
լոց ըն հլին հարուածոց համեօյն մոլա-
բու 'ի յարձան քարի յեղանակեցեր, զի
զիս զմոլորեալս 'ի հաստատութեց՝ և Է՛
իշխանութեամբ մահու վտանգեալս՝
արեամբ քո փրկեալ 'ի հաստատուն վի-
մին կառուցես . օրհնեալ կրկին, օրհ-
նեալ վերստին, յա՛մի միշտ օրհնաբա-
նեալ՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

՝Նորին հոգւոյն, Պարզեալ 'ի չարչարանս խաչի ։

## ԲԱ՛Ն . ԼԱ .

Որդ՝ այդ գումարտակ վերադասե-
ցեալ բարեշնորհութե քոյդ պար-
գևաց առ իմս երախտիս, ո՜վ ամենա-
գութ բարերար գովեալ և ամենազօր,
թէև սակաւք շարադրեցան աստանօր
եդ.

Եդեալ, այլ արքայազունք են, և իշխանականք ինքնակալուեց, որդիք գօրութեանց. ծնունդք վեհից. մեծափառք, ՝լուսանորոգք, և հրաշապատիւք: Յաղթողական վերամբարձուք դրօշիւք հռչակեալք, ը̅ գլխոյ գլխոց պսակապաձոյձ գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիս օրհնաբանողաց, համբոյրս հեղս երջանիկս և խաղաղականս՝ ամ̅այն հարազատութեց՝ այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով. զարթո̅ր զզօրութիս քո, և եկ կեցուցանել զմեզ. ոչ յոյժ զօրէն հալածել զմեզ, և զանյուսութեն կարկուտ հալել և փախուցանել, քան թէ նախամարտիկն զննուորութի երկնային պարուն՝ զգիշերավարն խաւարասէր ակզբնաներհակ՝ բարւոյն ա̅յ: Քանզի և զենաւն այսքանեաց ձրից՝ որ 'ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ, տկարիս՝ թշնամւոյս՝ և ապախտաւոր ծառայիս, անձառ է ասել. իսկ եթէ համարձակեսցի ոք՝ զօրել խօսել, զակաւս 'ի բազմացն՝ քան թէ զխկութի համանգամայնից առայժմուսն՝ զառաջին նիւթն յիշելով յումէ հաստեցաւն, իբր զտկար ոք նկուն՝ 'ի զօրութէ մեծէ հերքեալ պարտեսցի:

Նայլ թէպէտ և այսպէս գրեցի, և

դարձեալ զնոյն վկայեմ առ լծերի խա-
կութի հողոյս՝ և կատարելութի հաս-
տողից , և առ բարւոյն իմ չարժանու-
թի . սակայն ամենալոյս աննախանձ և
բազմազեղուն գոլեալ արարչունեդ զօ-
րեղուն՝ վանեալ են կարծրութիք ար-
տաբերութե սրտի բանսարկածին . որ
քարին առակաւ՝ յուսահատն վհատու-
թե սպառմամբ խոպանացման աղբե-
րացս երկուց , որ 'ի զգայականս եդե-
մայ բղխել պատրաստեաց տնկօղն , զի
առոգեալ ծաղկեացի նովաւ՝ որ 'ի յիս
բարեգործուե կենսատունկն դրախտ ,
ահա մի ցամաքութե արտասուացս՝ ա-
ղանդահնար պատրանօք՝ չարաչար խո-
րամանկեացէ վերստին հանել 'ի փափ-
կութե նախնում վիճակին : Իսկ յոր-
ժամ կայցէ ինձ՝ համբարձեալ հրա-
շիւք արուեստից՝ 'ի մէջ աստուածոց
հաշտարանացն խաղաղութե , բարձեալ
ընդ ինքեան զշնորհացն կտակ , առ որ
ինձ չնաստակարութիք խարդախութեց՝
և կարճմտութիք սրտնեղութեց , իբր
ընդ վիմեղէն լերին պնդութե բաղխե-
ցեալ ցնդելին ջրոյ օրինակաւ սակաւու-
հեղեալ , և կամ հողոյ՝ խորտակմամբ
փշրեալ : Նոր՝ չև իմ կշտամբանքս՝ ո՟
ձայնին յոքայ 'ի մարդկանէ իցեն , այլ
յամենատես աչաց վերին հրամանից՝

մնեալ է խղճիս տագնապ երկիւղիս, սոսկմամբ սասանեալ յոմ կարծեաց, ապաւինիմ և արդ անձամբ բեկելով 'ի յոյսդ հաստատուն կենդանի անեղծ. զի ողորմութիւն նայեցեալ 'ի յիս՝ իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բարերարուն երկնայնոյդ յանդիման նղեալ՝ ապաձեռն անթոշակութեամբ, ղքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թարթափմամբ աչաց ընդմիջեալ զհեծուն կրից անտեսես: Ա երագս յինէն աղաչեմ զքեզ, խաչի՛դ լուսոյ զխեղդ վտանկիս. հոգարկութիւն տրտմութենդ՝ զտարակուսելի տխրութիս. փշանիւթ պսակաւն զբողբոջ մեղացս. զարկուածով գանին՝ զհարուած մահուս. ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս. թշնամանօք թքոյն՝ զանդոսնելի դարշուիս. լեղւոյն ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութիւն: Ո՛հ քո են այս ամ բարունք անբովանդակելիք՝ այ միոյ միածին որդի. առ որովք զչարունիս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ՝ խմանալեացս պաղատանօք: Տէր 'ի խոստովանութիւն զղջման պարտութե ամաչեցելոյս, և տուր ողորմութիւն որդւոյս սատակման մահուն

մահուն անմահի . զի 'ի բազմութենէ ի-
մոյս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին
աճեցմամբ առաւելութբ՝ քո ողորմու-
թեանդ աւետարանեսցի , հռչակեալ
հնչմամբ ահաւորուե յերկնի և յերկրի ։
Եւ քեզ է հօր հոգւովդ սրբով՝ փառք
յաւիտեանս . ամէն ։

Սորին հանգոյն , Պատրաստեալ 'ի [illegible] չար-
չարանս տէր ։

## ԲԱՆ · ԺԵ ·

Եւ քանզի որ է օրհնաբանեալ և
լուսանորոգ՝ կշռութեան երկուց
ընտրութեց՝ արարածոցս սասանութեց՝
յեղանակելոյ յայլ իմն էութի երկնակեն-
ցաղ անփոխադրելի , ամբարձելոցն խո-
նարհուե , և կործանելոցս վերբերու-
թե՝ սարսափելի ուրբաթու մեծի պա-
տեքիս . յորում եկն եհաս ժամ բարե-
պատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի
հեծութե՝ զուարձախառն երկիւղիւ ,
ահա ըղձալի համարիմ ասել աստանօր
'ի քոյոց այտի՝ զոր է իմ կրեցեր՝ ած
բոլորից ։ Կացեր յատենի քում ստեղ-
ծուածոյն իմոյս վերպիւ . ոչ խօսեցար
տուչիւք բանի . ոչ բարբառեցար հա-
տիւք լեզուի . ոչ ձայն արձակեցեր սա-

սանձիչդ երկրի . ոչ մռնչեցեր ամենազդեցիկ փողդ մեծութեն . ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր , և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր . ոչ մատնեցեր ամօթոյ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու . ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր , և ոչ յապտակելն դժուարեցար . ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր , և ոչ ընդ կափելն երբեք խռովեցար . ոչ ընդ կատակելն սրտմտեցար , և ոչ ը̃ խաղ արկանելն երեսս փոխեցեր : Մ՝երկացուցին զզգեստ պատմուճանին իբրև 'ի տկարէ , և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ : Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ , ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեն . Ճաշակեաց վհատութե̃ , և արդեւ անդրէն տարակուսանօք . առին մոլեգնաբար , և դարձեալ մատուցին անպատկառապէս : Կոանիճ հարուածոց յետին անարգութե 'ի մէջ խառնիճաղանճն ամբոխի դատապարտեցին . ծունր կրկնեցին նախատանաց , և պսակ եդին արհամարհութե : Ոչ ետուն հանգիստ կենդանարարիդ , եթէ ոչ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին . ընկալար իբր երկայնամիտ . առեր իբրև զհեզ . բարձեր ոմ̃ համբերող . ըստանձնեալ իբր ըղ-

պարտական զփայտն վշտաց ։ Ո՞չ զծա-
ղիկ շուշանաց հովտաց ուսով բերեալ
զզէնն կենաց ․ զի յարհաւրաց գիշերայ-
նոց՝ զխուրակերտս դահաւորակս մարմնե-
ղէն գոյութեն՝ պահպանեսցէ ՚ի դատա-
պարտութեն վայրի՝ իբր ՚ի խրախճան
խնճոյից ։ Հանին արտաքս իբրև զող-
ջակեզ ․ կախեցին իբրև զխոյն սաբե-
կայ ծղեալ զեղջերացն ․ տարածեցին
՚ի սեղան խաչին իբր զպատարագ ․ բևե-
ռեցին ո՞չ չարագործ ․ պնդեցին իբր
զապառաժ ․ զխաղաղունդ երկնաւոր
իբր զաւազակ , զանկապուտ մեծունդ
իբր զտառապեալ , զոռ ՚ի քրովբէից
պաշտեցեալդ իբր զքամահեալ , զահ-
մանդ կենաց իբր զարժանաւոր սատակ-
ման մահու , զաւետարանիս Նկարիչ
իբր զհայհոյիչ օրինին , զտէր և զկատա-
րումն մարգարէից իբր զհամառօտիչ
գրեցելոցն , զճառագայթդ փառաց՝ և
զկնիք անքննին խորհրդոցդ հօր իբր
զներհակ ծնողիդ կամաց , զօրհնեալդ
իսկապէս իբր զտարագրեալ , զկապող
օրինին լուծիչդ իբր զայր ՚ի նզովս
դրեալ , զհուրդ ծախիչ իբր զհերքեալ
իմն կալանաւոր ․ զահաւորդ երկնի և
երկրի իբր զհաւասարի պատժաւոր ,
զ՚ի լոյս անմատոյց ծածկեալդ իբր զհո-
ղածին ըմբռնեալ ։ Ով քաղցրութիւդ և

երկայնամիտ բարերարութեիդ ողորմա-
ծիդ գթութեն, որ մն ապախտաւոր և
անօրինեալ ծառայիս տրդ բոլորից զայս
ամ կամաւորապէս և հաւանողական
հաճութբ տարեալ՝ մարմնոյդ միութբ
'ի քեզ ընկալար. և մինչև 'ի քնարան
չիրմին տապանի անպակաս 'ի լրութե
ամբողջ նոյնութեն ած անքննելին զնոյն
կրեալ նախատոխնս անձառ համբերութե՝
յարեար կենդանի ինքնիշխան բարձ-
րութբ լուսոյ՝ աննուաղ մարմնով, և ան-
թերի ածութբ։ Օրհնեալ փառօք, գո-
վեալ գթութբ, բարեբանեալ միշտ ո-
ղորմութբ յաւիտեանս յաւիտենից.
ամէն։

Լուրէն հոնոշէ, Կոարջեալ աղօթք 'ի չարչարանս
գնէ, ճաշնանօք ըէ մէ ընդունայն լէցէն աղդեանք
ծրնագործութե նը 'ի մեղ։

ԵՐԵԿ. ԺԲ.

Եւ արդ՝ անկեալ յերեսս հողանիւթ
կերպիս 'ի վայր խոնարհեալ
ծնրադրական երկրպագութբ՝ զբարե-
գործիդ ողորմածութեն զկենդանարար
սուրբ համբուրեմ, զայս օրինակ մաղթա-
նաց մեծիդ ընծայեցուցեալ։ Նշանեմ
զքեզ միայն խնամակալ մարդասէր,
գթած,

գթած , կեցուցիչ , հզօր , այցելու ,
պաշտպան . մի ունայնացի վաստակն
աշխատութե՟ փրկականդ կրից մարմնացե-
լոյդ վ՟ս իմ ո՟յ . մի սուրբ եղիցի քրտանցն
կաթուած խառնեցեալ արեամբ՝ ի մատ-
նուե՟ն աւուր գիշերին . մի լիցի ստուե-
րացեալ լուսոյդ երախտիս , զոր ձրի և
առանց փրկանաց թշուառացելումս
ինձ պարգևեցեր : Մ՛ի ջնջեսցին շնոր-
հացդ աւետիս , զոր կողից քոց կայլակք
նորոգեցին . մի անշահ եղիցին կրիցդ
պտուղք , զոր կարօտութե՟ իմում մա-
տուցեր . մի պարծեսցի բանսարկուն
վանեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել ,
Ո՛հա յաղթեսցես կամօք քո՝ ըղձից չա-
րին . վերստին ապշեսցի միանգամ
զարհուրեալն . կրկին պարտեսցի իս-
պառ դատեցեալն : Մ՛ի անխայեր զա-
զատարարդ քո բան , որ զստեղծեալս
քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ
դարձուցանէ : Օ՛ անճառն արարեր բա-
րերարու՟ն յանակնկալ ժամուն յուսա-
հատուե՟ , յորժամ բնաւ իսկ կորեալ
և օտարացեալ էր կենդանութե՟ն շաւ-
ժողութն . մեռար անմահդ , և զմա-
հացեալս նորոգեցեր : Եթէ զկանոն
համաձևութե՟ն օրինին փոխեցեր , արդ
զդիւրինն և զհեշտականն , և զևս հնա-
րաւորն մի արգելցես՝ սկզընաձիր ողոր-

 մա

մածութեն , քաղցրութիւն օրհնեալ և եր-
կայնամիտ թագաւոր ։ Ազդեա՛ բանիւդ
ամենազօրաւ , որ զգոյութիւն լուսոյն
ստեղծեր 'ի նախնումն աւուր , և զաղ-
ջաղջին փոփոխեալ գտայց 'ի լաւ անդր ։
Եւ փոխանակ զի ես ոչ խնդրեցի հեռա-
ւեալ լուսոյդ , դու եկեսցես ինձ յայց ճա-
ռագայթ ծագման հայրենի կերպիդ ,
և կոչեցայց առաջի քոյ ծառայս [illegible]
պարտ ողորմեալ շնորհեալ առ 'ի քէն ։
Ո՛չ է ժամանակ յերկարաձգութեն առ
'ի զպարտսն հատուցանել . ահա շնոր-
հեա՛ ինձ տառապելոյս զերեսս քո լոյսդ
'ի խաւարի սրտից վհատելոց ։ Արգե՛լ
և կնքեա՛ զընթացմունս ելիցն , որ միշտ
զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ
տեսուչէ . պահեա՛ ինձ զշնորհ ամենա-
պայծառ գանձուցդ մնացականաց , ո-
րով պատուականն գտեալ՝ քո անուանե-
ցայց , պաշտպանեալ 'ի քէն անսահման
բարի ։ Ահա ողորմեա՛ ինձ գթած . ա-
ղաչեմ զքեզ՝ ողորմեա՛ ինձ հզօր , կրկին
ողորմեա՛ ։ Մի՛ փոխարկեր երկուսն ցա-
ւոց Է չարեաց իմոց բարիդ ամենեւին .
մի՛ բառնար 'ի վտանգելոյս զառ 'ի քէն
պարգևեալդ շնորհ . մի՛ կապտեր զփչումն
ամենօրհնեալդ հոգւոյ . մի՛ լուծաներ
զխնկեալ զկնիք արքունական պատկե-
րիդ . Մի՛ յայտնեսցին փուշք մեղանացս
'ի

՚ի սրբութիւն մտացս . մի՛ խղճէր զկամ մի-
ութեն զընդ քեզ սիրոյն պնդութեն . մի՛
մերժեսցես զարուեստ զօրութեն լեզ-
ուոյս յարմարուն . մի՛ պակասեցուցա-
ներ զաջողուած աջոյս առ ՚ի զլուսոյդ
մատուցնս բաշխել . Մ՛ի դրեր ՚ի դպրութ
կենաց մատենից զմահուն պարտիս .
մի՛ պահէր . մի՛ խնձ համարիր . մի՛ յիշե-
ցուցաներ . մի՛ ամաչեցուցաներ . մի՛ նա-
խատեր . մի՛ ատն հարկաներ . մի՛ արձա-
նացուցաներ զմեղկութեցն . մի՛ ամբարեր
զկորստեանցն . մի իբր ըստդ տեալ իմն
ամբաստաներ : Մ՛ի յարուցեր ընդ իս
զծառն անխծից . մի՛ արձակեր ՚ի յիս
զապարթ չնասուցն . մի՛ ընծիւղեր
զծաղիկ մեղացս . մի՛ բերցես ընդառաջ
զնամնակ պարտուցս . մի՛ արտաքսերեր
զեւթն պաղոյն : Մ՛ի թուեցես զ՚ի
ձիւզո երկրաստեղծ մատանցդ զգիւտս
գործոյս . մի՛ մատուցես քան ընդդէմ
աչեղ , զանօրէնութիւն իմ յիշատակել .
մի՛ մատնեսցես խմոցս կամաց զաւանդս
հոգւոյս վարել ՚ի գերութե , Մ՛ի ա-
տեն զիս փառաւորեր , զի անտանօր
գատապարտեսցես . մի՛ նուաստութե
այսր անցաւորի զյաւիտենական բա-
րիան տուժեր . մի՛ ՚ի սակաւուս այսմ
ժամանակի զանվախճանելի զփառսն
չափեր . մի՛ ընդ հուլանիս վշտաց հեծու-

թե

թէ զանախտական զկեանսդ գրաւեր
մի՛ ը՟ ստուերի այսր մթութե՛ զանձա-
ւելով լոյս փոխանակեր ։ Մի՛ զերասա-
նակ մնացս լքցես ըստ արտուղի հետս
հետևել ․ մի՛ զկամուրձ կենցաղոյս
գրեսցես ինձ հանգստեան բաւակա-
նութի ․ մի՛ զհովիտ հանձարոյս ըստուե-
րական պահեր , 'ի հանդերձեալսն ինձ
հրապարակել ։ Եթէ ամբարես զա-
ւանց համարոյ գործոյս իմ չարիս , մե-
ռայց կենդանւոյն ․ եթէ շտեմարանես
'ի սրտի , սատանին կիզեալ անբոց այ-
րեցայց ․ Եթէ քննեսցես զանօրէնութիս ,
սոսանց յանդիման քեզ լինելոյ խապա-
հալեցայց ․ եթէ ընկալցիս ինձ թողցես
զմեղսն , 'ի նոսին վատնեալ մաշեցայց ։
Ակնարկեմ միշտ զօրեղ ամենակալող՛
փախնուլ չարութեցս որ յիս ․ զի բարից-
քս եկեալ փոխանորդեսցէ ։ Հրամայեա՛
գթած , խնամակալ , գովեալ , լոյս ան-
շիջանելի զօրութ՟ անսահմանելեաւ , զի
նոր հաստատեսցի գոյութի բնութես
մարմնեղէն յարկի անդամոցս ․ յորում
հանգուցեալ անլքանելի , բնակեսցես
բաղմեալ ախորժ տենչանօք միութ՟ հոգ-
ւոյս իմ ընդ քեզ ․ զապականութի մե-
ղացս մերժեալ խապաւ՛ յանարատութի
զիս պատրաստեսցես ամենակեցոյց թա-
գաւոր անմահ տր՟ յս՟ քս՟ ․ օրհնեալ յա-
ւիտեանս ․ ամէն ։

Ներսէս Շնորհալի. Բանք ՚ի տօնական ամ̃ սրբոց,
(որոց ՚ի շաբաթն օր է յիշատակն ։)

# ԲԱՆ. ՀԲ.

ԵՒ քանզի երջանիկքն , և փառաւորեալք ՚որցն պարք , յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին , և յաճախագոյնս հաստատեցան . փոքունս սպանեցան , և մեծագոյն վամամբ նշուլից հոգւոյն մաքրութ լուսաւորեցան ։ Յորոց մինն զզանկուածոյն յայտնէ զհաստատակատեղծն ակարութի . իսկ միւսն զգերազանցն քան զբնութեն օրէնս՝ վարս և առաքինութիւնս հրեշտակականս ։ Այլ արդ՝ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան բերանոյ ա̃ծութեան հօրն քոյ , ընտրեալքն տունեալքն , խնկեալքն և բարեբանեալքն , իբրև զանդամն քոյ պաշտեցեալք , և իբրև զօթևանս հոգւոյն սրբոյ յարդարեալք , յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի . այլ ամենևին անկեղծութի , և լուսաւոր արդարութի . և

որ-

որքան մարթ է՝ զմարդն ա՟յ՝ ա՟յ նմանե-
ցուցանել : Նորեաք պարզք եւ անպատկա-
ռելիք · կրօնք բարձունք եւ անխոնար-
հելիք · կեանք զգաստք եւ անստգտա-
նելիք · պաշտօն առ ա՟ծ կարծր եւ ան-
փոխարկելի · ընթացք արիականք եւ ան-
կասելիք · ճշմարտութիւն միատարր եւ
անցնդելի · գիմագրաւութի՟ն զօրեղ եւ
անհերքելի · տեսաւորութի՟ն պայծառ
եւ անապշելի · իմաստասիրութի՟ն վերնա-
կան եւ անկոխելի · պատկեր մաքուր եւ
անաղարտելի : Օ որոց կերպարանս եւ
զյիշատակս անո՟ւանցն աղաչել՝ ա՟ծ իսկ
վարդապետեաց · եւ նոքօք հաճութի՟ն 'ի
մէջ խռովութեան՝ արարչիդ բան լու-
սաւորեաց :

'Նորին հոգւոյն, Հայցուածոյ փրկութե՟ան անձին,
բարեխօսութե՟ամբ ա՟մ սրբոց :

## ԲԱ՟Ն · ՁԲ ·

Տէր ա՟ծ բարերար բազմապարգեւ
Թագաւոր, կենաց պատսպարան,
լուսոյ կերպարան, լայնատարր հանգս-
տարան · որ յաղագս մեղուցելոյս ե-
կեալ մարմնացար · գործեցեր զանպա-
տումն, եւ հանդերձեցեր զհրաշալիսն,
մինչեւ կատարեցեր զառեցեալն ընդ. ա-
մե-

մենալիր ա՟ծութեդ ։ Որդ՝ վն առաքե-
լոցն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ
ձեռնադրելոց , և հոգւովդ սրբով օծե-
լոց , զորոց զգովեստն արժանաւորու-
թե՟ իմում կարի առ ՚ի փառս քո ո՟ր ա՟մ՝
յայլում բանի պաշտեցի , և ինձ ողոր-
մեացիս յիշատակաւ սրբոյ նոցին ընտրու-
թե՟ ։ Տուիր ինձ եղիցի նոքօք և համ-
դերձեսցեն յերանութ՟ին փափաքելի .
ձայն բարի հոլոմ՟ութե՟ նոցին ՚ի յողջոյն
ինձ կենաց քաղցր լուիցի ։ Վասն կա-
լոյց ՚ի յանեղծութե՟ փրկութե՟ տօնեցեալ
յուսոյն , ընդ առաջնորդացն կենաց ,
սկզբնաշնորհիցն պատուոյս , փառաւո-
րեալն դասուց , գետոցն բանականաց ,
աւետարանչացն բարձանց , իշխանացն
պանծալեաց , լուսապայծառ թագւի՟
պճնելոցն , ՚ի զարդ անկապուտ զօրու-
թե՟ շնորհին պայծառացելոց , իւղովն
զուարթութեան տիրական լուսոյն կա-
տարելոց ։ Ընդ աշակերտաց մեծիդ
հրամանի բարձրեալդ ա՟յ ք՟ի , և մար-
տիրոսացն ընտրելոց նահատակութե՟ ,
որք մահացու և վշտաչարչարն մարմնով
վտանգաւոր և ամենակիրն անդամօք ,
երկրաւորական և հողազանգուածն
բնութե՟ մարտուցեալ ընդ տարր գոյից
ա՟մ նիւթից պատկեցան , բարձրացան
և կենդանացան հոգեպէս . արիաբար
ե-

ելեալք 'ի յերկրէ ըստ մարգարէին.
վկայք ճշմարիտք ամենափորձն մահու.
իմանալեացն անտեսիցն և ծածկելոց
աներկբայ բարեացն յուսով տեսելոցն
աստէն նկատիչք: Աշակերտք առաքե-
լոցն և չարչարակիցք նոցին. որ հաւա-
սարեալ գործովք ընդ նոսին, կատա-
րեալ լրմամբ անպակասելեաւ պարէն
'ի խորախճանս անկէտն երանութեան.
Որոց հաճոյական և ընդունական մաղ-
թանօք, արիւնընծայ վաստականուէր
քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ
ընկա՛լ զիս նորոգ ըստ նոսին մասին ա-
նեղծ փրկութե 'ի քեզ արժանացեալ
Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ
արեամբ նկրկելոցն, և ճգնաւորացն
սբց հարցն միանձանց՝ և քեզ հետևե-
լոցն՝ որդի այ, անպարտելի քաջութբ
և անպատիր գգաստութբ ընդ գժնեայ
դառոզլի մարմնոյս բռնութն արիապէս
մարտուցեալ՝ սովիմբ վանեցին զան-
մարմինն թելիար. և մշտամարտ հան-
դիսիւ յասպարիսի կենցաղոյս առանց
զղուանաց ծանրաբեռնութն 'ի լայնա-
ծաւալ ծփանաց ծիս ծովու տապանա-
կաւ մարմնոյս թանձրութն զթեթևու-
թն հոգւոյն թռուցեալ 'ի նաւահան-
գիստն կենաց հասին. և իբր սիրողք
վերնում վիճակին առանց յանանցն մտա-

ծու-

ծութն, զթագն յաղթութն համարձակապէս պայծառ ճոխութբ պճնեալ խնկապէս 'ի գլուխ կապեցին ։ Ո՛ն նոցին արժանաւոր մաղթանաց և նուէրական հայցուածոց՝ և զիս զմեղաւորս 'ի պատժականաց ընկալ ընդ նոսին ։ Իւ ահա խառնեալ զանմաքուրս բան ընդ նախապրեալ երջանկացն փառաւորական աղերսարկուի, որ մն իմ գոչեն քեզ 'ի հաճութի, և ես ը նոսին խըր դառնուն եղեալ ընդ քաղցու, կիմ տատասկ ընդ ողորկուն. ապեղութի ընդ վայելչութն, և տիղմ ընդ գեղեցկուն մարգարտի. կամ հող ընդ յստակութի ոսկւոյ. և կամ քարինս անարգս ընդ պայծառութն արծաթոյ. բացասուն ընդ ճշմարտութն. կամ աւազ խիչ ատամնաւոր ընդ կակղութն զանդուածոյ հացի ։ Ա՛րդ՝ լո՛ւր հզօր հնարաւոր գոլեալ զնոցայն մն իմ, և զիմս ընդ նոսին 'ի նոցին գոլեստ, 'ի փրկութիւն իմ, և 'ի փառս քո ամենազդութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքննին, անճառ, անեղծ, և անստեղծ ։ Քո են պարգևք. քո են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի ։ Ո՛չ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ.

ցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ.
ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես
ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլորիչ,
այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհ-
նիչ. ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ
ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ:
Ո՛չ եղծանես, այլ գրես. ոչ սասանես,
այլ հաստատես. ոչ ոտն հարկանես, այլ
սփոփես. ոչ պատճառս յոգնես մահու,
այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամս
շարժեալ սատակման, այլ 'ի փրկութ՟ի
ողորմութ՟ե: Ո՛չ մոռանաս զայցելութ՟ի.
ոչ լքանես զծառի. ոչ արգելուս զգթու-
թ՟ի. ոչ բերես վճիռ կորստեան, այլ
կտակ ազատութ՟ե: Ո՛չ թշնամանիս յա-
ւատութ՟եց. ոչ բամբասիս 'ի շնորհաց.
ոչ հայհոյիս 'ի պարգեւաց. ոչ նախատիս
'ի ձրի ձրից. ոչ անգոսնիս յերկայնմտու-
թ՟եց. ոչ եպերիս 'ի ներութ՟եց. ոչ բան-
սարկիս 'ի բարութ՟եց. ոչ անպատուիս
'ի քաղցրութ՟եց. ոչ բամբասիս 'ի հեզութ՟եց:
Ո՛չ առաքին այսոցիկ տրտնջմունք,
այլ անլռելի գոհաբանութ՟իք: Բա՛րձ
զմեղս իմ հզօր. լո՛յծ զանէծս իմ օրհ-
նեալ. քաւեա՛ զպարտիս իմ ողորմած.
ջնջեա՛ զյանցանս իմ գթած. մատո՛
մատն այցելութ՟ե, եւ անդստին իսկ կա-
տարեցայց: Ո՛րինչ քեզ մը քան զսոսին
դիւրագոյն, եւ կամ զի՛նչ ինձ պարտա-

ւորիս կարևորագոյն ։ Ո՛չ կենդանա-
գրեան բարեխնամ քոյինաստեղծ պատ-
կերիս փչումն կրկին 'ի շունչ նորոգման
լուսաւորումն մաքրական շնորհի զամե-
նամերձ ողի պաշտպանեալ ։ Մ՛ի ա-
ծեր ողորմած ինձ որ տարաժամ 'ի հա-
մառօտս երբի անթօշակ ապաձեռնութե
ընդ անկատար ուղին հետևել ․ մի՛ մա
տուցաներ բաժակ դառնութե՛ 'ի ժամ
ծարաւու ․ մի՛ փակեր գթած իմ հան-
գէպ զյաջողուած հոգևոր օգտիս ․ և
մի՛ իբր յանկարծադէպ հինից ապա-
տակ գիշեր մահուն ինձ պատահեսցէ ․
մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն
զարմատս հատեալ ցամաքեցուսցէ ․ և
մի՛ լուսնական դիպուածք հասեալ
գաղտնեօք վնասեսցեն ․ մի՛ պահեսցի
ինձ սառն մեղացս ․ և մի՛ հոսանք ուղ-
խից կենցաղոյս զիս ողողեսցեն ։ Մ՛ի
հանդիստն մահ բերիցէ ․ և մի՛ ննջումն
'ի սատակումն յառաջեսցէ ․ մի՛ քունն
ինձ կորուստ լիցի ․ և մի՛ նիրհումն ա-
պականութե՛ գործեսցէ ․ մի՛ վախճանն
անյարմար 'ի վ՟ր իմ արշաւեսցէ ․ և մի՛
չնչոյս վերարձակումն ըմբռնեալ 'ի խռ-
նարհ լքցի ։ Դու ես տ՟ր ․ դու գթած ․
դու բարերար ․ դու երկայնամիտ ․ դու
ամենակարող ․ առ ք՟մ բան անհասանե
անձառ զօրաւոր ， քաւել՝ փրկել՝ կենա-

գործել՝ լուսաւորել՝ վերստին հաստա-
տել՝ 'ի ժանեաց կերչաց գազանաց, և
կամ՝ յատամանց վիշապաց 'ի կեանս
կոչել. 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկ-
րութեան ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց
մեղաց ընդ արդարս երջանկաց փառօք
բազմեցուցանել։ Միայն ոգի քեզ
անկանելաւ յուսով սպասէ կարօտեալ
քում շնորհաց. եթէ երկնայինք, և
եթէ երկրաւորք. եթէ անկածն մե-
ղօք, և եթէ ամբարձեալն արդարու-
թ̅բ. եթէ ծ̃ր, և եթէ ծառայ. եթէ
տիկին, և եթէ աղախին. և 'ի ձեռին
քո է շունչ կենդանական բոլորեցուն.
և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք
յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Նորին հեղինակի • Աղօթք [illegible] ։

# ԲԱՆ • ՁԴ •

Արքայ երկնաւոր • թագաւոր բարձ-
րեալ • որ բոլորից • ամենից
անկնկալելի • ստեղծօղ տեսա-
կանաց • հաստիչ իմանալեաց • պա-
ճառ եղանութեանց • կազմիչ հանդերձե-
լոց • տուիչ լուսոյ • առիթ առաւօտու •
պատրաստիչ փաղորդայնի • երևեցուցիչ
երեկորի • տուրիչ խաւարի • արուես-
տաւոր բարեհնար • իմաստուն գործո-
նեայ • քաւարան օրհնեալ • հալիչ մե-
ղանաց • հալածիչ ցաւոց • քակտիչ դառ-
նութեանց • պահպանարան հանգստեան •
հնարք նիրհման • յարմարիչ քնոյ ,
պարգևիչ ննջման • շնչոյ յարակարգու-
թի • զգայուն տեւողուի • ցրիչ ցնորից •
յեղանակիչ անրջոց • փոխարկութիւն
զարհուրմանց • այլայլուի տխրութեանց •
խափանիչ խիթմանց • ընդարձակիչ
կարծեաց • համադրութի ծփմանց • ա-
հագնուի խարդախմանց • հարուածիչ

դիւաց · փախուցիչ ախտից · ընկղմիչ դայթագղութեց ։ Պաշտպանեա՛ երկնաստեղծ ձեռամբդ · զօրացո՛ բարձրացեալ քո աջովդ · ամփոփեա՛ ամենակալ թեւօք · ծածկեա՛ ա̃ծեան լինամօքդ · ամրացո՛ վերակացութբ վերնայնոցդ · շուրջանակի պարսպեա՛ գումարտակօքդ անմահից · 'ի յամենասուտ պարփակեա՛ կցորդութբ հրեշտակացդ ։ Անեա՛ զընդդիմամարտն իմ զինաւորութբ զուարթնոցդ · պատսպարեա՛ զսասանեալս ա̃ծածնիդ մաղթանօք · զբանակս անդրանկացդ բարեկարգեա՛ լինձ պահապան ։ Բա՛ց ընդ աչաց դիմաց և զմտաց իմ տեսանելիս · զգա՛ստ արա ը̃ ոգւոցս և զծանրաբեռն կրից դանդաղութի · վերացո՛ ա̃ր 'ի զգայութեցս զմածեալս յիմարութի · բա՛րձ միայն բարեգործ զպատրուճակիս թանձրութի ։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ զողորմութի քո ծագեա՛ · ընդ ելից արեւուն՝ արդարութե արեգակնդ 'ի յանձկութիւն սրտիս մտցէ · Ճառագայթ քո փառացդ 'ի յիմաստից խորհրդանոց ջահեսցի · խաչիդ ա̃նագրութի ը̃ շունչս և ը̃ մարմինս համասփիռ տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին · զի դու ես ա̃ծ անքննին , առ ա-

մե-

մենաւորին քաւական , և յամենում բովան-
դակ , օրհնեալ յաւիտեանս . ամէն ։

Նորին հեղինակի . Աղօթք 'ի հաղորդութեան տէրուն-
եան մարմնոյ եւ արեան ։

## ԲԱՆ . ԿԶ .

Արեգակն արդար · ճառագայթ օ-
րհնեալ · լուսոյ կերպարան · փա-
փաք անձկութե · բարձրեալ անքննին ·
զօրեղ անպատում · բարւոյ բերկրութի ·
լուսոյ տեսութի · գովեալ երկնաւոր ·
թագաւոր փառաց · քո արարիչ · խոս-
տովանեալ կեանք ։ Եւ արդ՝ զթերութի
վրիպանաց բազմասխալ ձայնի եղկե-
լոյս ամենազօր բանիւ լցեալ մատու-
ցես յաղերս հաճութե հօր քում բարձ-
րելոյ ։ Որ վն իմ 'ի փորձ եկիր անիծից ,
կերպարանեալ զիմ նմանութի ամենեւին՝
կենաց օրհնութի , վերնոց և ներքնոց
բարեխնամող տեսուչ համայնից ։ Օ ի
թէ յանձն առներ մեռանիլ վն իմ , ած
և տէր բոլորեցուն , որչափ հաճեսցիս
առաւել և այժմ վտանգաւորս կրից կա-
րեկցել , ընդ իմ պարտաւորիս միշտ ա-
ղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ
'ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր ։
Եւ վն արեանդ պատուականի միջ-

մատուցելոյ 'ի հաճութիւն կամաց ա-
ռաքչիդ բարձցին վտանգք մեղուցեալ
դատապարտելոյս. թողցին պարտիքն.
ապաքինեսցի ամօթն. մոռասցին պատ-
կառանքն. բարեգործեսցին դատակ-
նիքն. սատակեսցին որդունքն. վերաս-
ցի լալն. հանգարտեսցէ կրճուճն ատա-
մանցն. սպառեսցին ողբքն. հատցին
արտասուքն. մերժեսցի սուգն. հալա-
ծեսցի խաւարն. վատնեսցի հուրն սաստ-
կութեան. հերքեսցին տանջանարանքն
բազմօրինակք: Եկեսցեն գթութիւնք կա-
մողիդ և պարգևողիդ կենաց ամենից.
ծագեսցի լոյսդ. արագեսցէ փրկութիւնդ.
հասցէ օգնութիւնդ. ժամանեսցէ այցելու-
թիւնդ. կանխեսցէ ցօղդ ողորմութեան. յա-
ռաջեսցէ, արբուսցէ զանդաստանս
պասքեալ անկեալ ոսկերացս թշուա-
ռութեան 'ի վիհն մահու. Ծաղկեցուսցէ
պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր ա-
րեան կենարարիդ՝ զերկիրս խնամեալ
աւուրն լուսոյ. որ անծախապէս միշտ
պատարագի յիշատակ կենաց փրկութեան
հոգւոց ննջեցելոց: Ոի ամբի մահա-
ցեալ հոգիս մարմնովս 'մեղաց շնորհօք
քո գթած 'ի քեզ զօրացեալ՝ քեւ նորո-
գեցայց, զատեալ 'ի մեղաց անմահ
կենդանութեան 'ի յարութեան արդարոց
հօր քում օրհնեցեալ: Ընդ որում քեզ
փառք.

փառք. և հոգւոյդ սրբոյ բարեբանու-
թեան վայելչական գոհութիւն այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յորժամ հանգչի. Միաբանութիւն անուանց Քն, և հայցուածք օգնել՝ որոց աղօթենն առաջնա:

## ԲԱՆ. Գ.

Տէր իմ տէր. տուիչ պարգևաց. ինք-
նաբուն բարի. ամենից տիրող
հաւասարապէս. միայն արարիչ ըղձնաւս
յոչէից. փառաւորեալ. անքննին. ա-
հեղ. ահարկու. սոսկալի. հզօր. սաս-
տիկ. անտանելի. անմերձենալի. ա-
նըմբռնելի. անիմանալի. անճառելի.
անտեսանելի. անզննելի. անշօշափե-
լի. անորոնելի. անսկիզբն. անժամա-
նակ: Անշամանդաղ գիտութիւն. ան-
երկևան տեսութեան. ճշմարիտ էակա-
նութեան. բարձր և խոնարհ. օրհնաբանեալ
գոյութեան. անստուեր ծագումն. ամենա-
փայլ ճառագայթ. խոստովանեալ լոյս.
անտարակոյս վստահութեան. անտարտամ
հանդիստ. անյեղլի կնիք. անսահմա-
նելի տեսիլ. վկայեալ անուն. ճաշակ
քաղցրութեան բաժակ բերկրութեան. հաս-
տիչ հոգւոց հաց. օտար մթութեանց սէր.
աներկբայ խոստումն. ծածկոյթ ցան-

կոյլ․ զգեստ անկապուտ․ օթոց բաղձալի․ զարդ փառաց․ ձեռնկալու մեծ․ ապաւէն գովեալ․ աննուաղելի շնորհ․ անպակասելի գանձ․ անապական անձրեւ․ արփիացնցուղ ցօղ․ ամենատեղաց դեղ․ ձրի բժշկութին․ կրկնաձիր առողջութին․ վեհագոյն խրախոյս․ անպատիր կոչումն․ համօրէն աւետիս․ տորկամեծար թագաւոր․ աղքատասէր պաշտպան․ մշտահարուստ տուիչ․ անխափան դիմեցումն․ աննահանջելի հրաման․ անհամառօտ յոյս․ երկար տեսողութին․ անզղջական տուր․ ամենաբաշխ աջ․ արդարակշիռ ձեռն․ անաչառատես ակն։ Մխիթարուն ձայն․ ախոփանաց լուր․ բերկրուն բերումն․ անուն կենդանի․ նախախնամող մատն․ անդայթագղելի ելք․ անխարդախ ընթացք․ կենդանարար կամք․ աննենգելի խրատ․ աննախանձ պատիւ․ լայնական հնարք․ անձկական պայման․ անդատանելի հետք․ աներեւոյթ շաւիղ․ անչափագիր պատկեր․ որքանուն անսահման․ աննմանական տիպ․ անզուգական գութ, ողորմուն բազմազեղ․ խոնարհուն տօնելի․ համբոյր փրկական։ Նւ եւ քան զայս ազգմունք վայելչականք ածութեդ նուիրելիք, օրհնեալ․ գովեալ․ բարեբանեալ․ քա-

րո-

բողեալ. աւետարանեալ. հռչակեալ. հնչեցեալ. պատմեալ. անխափանելի կամօք աղաչեալ, և որինչ առ մեզ բերին առ 'ի քէն հոտմունք քաղցրունք, զոր հանդերձելոցն Ճառլոյ լուսաբանեն կերպաւորութիւք. որով զուարթ ցուցանիս 'ի փրկութեանն իմ երանութեան, իբր 'ի պարարտութէ խմբէ ախորժ տենչանօք լցեալ. զի ոչ իմիք ինչ սնոտիապատուաստ փառաւորիս երգով. այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս մեծիդ փրկմանց : Եւ քանզի առ ամ̃ հասակ անկեցեալ յերկրի ազգ. բանականաց այն պատուէր նկարագրական նորոգ մատենի ողբոց նուագի. որ զամենեցունց ունի զկրից պատահմանց նշաւակեալ յիւրում պատկերի, իբր կցորդ մեծ գիտակական կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահոլով տիեզերակայս քրիստոնէից. առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արբունն, առ որ 'ի կատարած աւուրն կալեալ՝ սակաւաձեան ծերութեան. առ պարտաւորս և արդարս. առ ինքնարգոյ բարձրայօնն՝ և սխալեալ անձնադատ գտեալն. առ բարիսն և եզեռնագործս. առ նկունս և առ արիս. առ ստրուկս և ներքոյանկեալս, առ սեպուհս և գերծիկս, միջակայնոց և

պայա-

պայազատաց . չինականաց և տոհմականաց . արուաց և իգաց . հրամայողաց և հնազանդելոց, գերելոց և նուաստից . վեհից և փոքունց . պատուականաց և ռամկաց . ձիավարժից և սոսկականաց . քաղաքականաց և գեղջկաց . արքայից գառողուե՛ց ՚ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց . միայնացելոց` վերնականացն խօսակցաց . մաքրականաց տիրանուէր զգաստուե՛ց , քահանայական երջանկակրօն ընտրութե՛ց . այցելուե՛ց բարեզգեստից դիտողութե՛ց . աթոռակալութե՛ց նախագահից . սրբանուէր տեսողութե՛ց : Որոց` ոմանց աղերս աղաչանաց . և ոմանց` խրատ բարեաց , առ դէմս աղօթից այսու մատենի՛ս մատակարարեցի՛ ձեռնարկեալ հոգւոյդ զօրութի՛ . կարգել ինձ մաղթանս բազմադիմիս . և ամենեցուն սոցին խնդրուածս գթութե՛ մեծիդ յանգիման լինել սովաւ հանապազ : Եւ արասցես զայն ընթերցողայն ՚ի սիրայատակս բժշկութի՛ հոգւոց , և մաքրութի՛ յանցանաց . թողութի՛ պարտուց , և արձակուրդ մեղաց կապանաց : Եղիցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն . և պարգևեալ տացի ՚ի ձեռն սորին ապաշաւ ըղձից : Շնորհեսցի ի՛ր և ինձ ընդ նոսին` առ ՚ի քէն զղջումն կամաց .

մաց . և նոցա խմոլս ձայնիւ շունչս բա֊
րեհամբոյրս . նուիրեսցի միշտ իմ այսու
մատենիւ պաղատանք նոցին . և բա֊
նիւս այսու հեծութիւք նոցին ընդ իմ
խնկեսցին : Ընդ համբոյր Ճաշակման
այսր ողբերգութեան շնորհ լուսոյ քոյ
մտեալ բնակեսցէ . եթէ ելցեն ինձ բա֊
րեպաշտք ընծայիւ սովաւ , ընկալ
կենդանեօքն միշտ քոյ գթած և զիս ընդ
նոսին . եթէ ախտս ինչ սրբանուէրս
կաթուածոց աչաց սովիմբ բերիցի , ե֊
ղիցի 'ի քէն խնամակալ և յիս անձրևեալ.
եթէ գրեսցի և 'ի փրկութիւն կարդեսցի
հաղորդելոցն յայս գիրս կենաց , որաս֊
ցես կամաւ քո օրհնեալ և ինձ համա֊
րեալ : Եթէ հեծութիւս ածահաճոյս
'ի ձեռն այսր բանի 'ի գաղտնեաց ու֊
րուք յառաջ եկեսցէ , օգտեցայց քև
բարձրեալ և ես ընդ նմին . եթէ ձեռն
մաքուր խնկով հանդերձեալ առ քեզ
համբարձցի , հասցէ միասցի ընդ իմս
ձայնի և աղաչողացն աղէրս յառաջ մա֊
տուցեալ : Եթէ պաղատանս բազմա֊
գիմս ը իմս երկնեսցի՝ լիցի և ինձ քև
և միշտ սուրբն կրկին նուիրեալ : Եթէ
յարդեսցի այս անձին բանի պատարագ
քեզ 'ի հաճոյ . նախայլոցն ընդ իս քև
ընծայեսցի : Եթէ 'ի տխրանաց ինչ
ձանձրութէ ոք նուաղեսցի , կանգնես֊

գի

ցի վերստին հաստարանաւ այս հառաչանաց 'ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վստահութե՛ մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան դարձեալ կառուցի ։ Եթէ յուսոյն ձգարան սուսերբն յանցանաց հատեալ կորեսցի, կցեսցի դարձեալ միւսանգամ կամօք ամենակալըդբարուօք պատուհասեալ ։ Եթէ վտանգմահու անձնական ցաւոց զոք պաշարեսցէ, գտցէ փրկութի սովաւ առ 'ի յոյս կենացյաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի 'ի սիրտ խոցեցի, քաղցրութ քո սովաւ ապրեալ ողջացի ։ Եթէ անբաւելի կորստեամբ պարտեաց յանդունդս ոք խորոց իցէ ընդլուզեալ, եկեսցէ 'ի լոյս կարթի՛ այս հնարից քեւ պատսպարեալ. եթէ թմբրութ խաբից խաւարին գործոց իցէ ոք չնասեալ, զօրասցի անդրէն վ՟ քոյ՝ միայն ապաւէն, 'ի քեզ ապաստան եղեալ ։ Եթէ պահպանակն վստահութե՛ զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնորդի՛ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատութե՛. եթէ ամայի 'ի զգուշութե՛ պահողացն ոք դեգերեսցի ; սպասեսցէ սովիմբ առ 'ի նոյն դարձ նորոգողին ։ Եթէ սարսուռ դիւային ջերման դողութ ինչ զոք խռովեսցէ, սթա-

փեա

փեսցի 'ի սոյն յայսնշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ . Եթէ անօրէնութե մոլորիկ խորտակիչ հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստատուածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս , հանդարտեսցի անդրէն զեկաւ այս թեւոց 'ի քեզ պատկանեալ : Եւ արասցես լինել դեղ կենաց՝ առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց զայս կարգեալ սահման ողբոց մատենիս սկզբնեցելոյ յանուն քո բարձրեալ . զսկսեալս իմ դու կատարեա . եղիցի հոգիս քո խառնեալ 'ի սա . շունչ զօրութն մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիս . զի դու տաս զօրութի վհատեալ սրտից . և ընդունիս փառս յամենեցունց . ամէն :

'Նորին հաջողէ . Աստուածաբանական օրհնութե ան-ուան մեծնէ :

## ԲԱՆ. ՁԹ.

Ած և տր . կեանք և արարիչ . ողորմած . գթած . լոյս . երկայնամիտ . անոխակալ . մարդասէր . ամենագութ . պարգեւատու . փրկիչ . օրհնեալ . գովեալ . բարեբանեալ . Դարան ամրուն . պատսպարան վստահութն .

թէ․ առանց նենգութեան բարի․ առանց խաւարի ճառագայթ․ քաւիչ մեղաց․ ողջացուցիչ վիրաց․ անհասանելեաց հնարք․ անմատչելեաց հպաւոր․ անյուսութեան ելք․ անուն քո խոստովանեալ այ որդի․ և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի, և ընդ քեզ երկրպագելւոյ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս․ ամէն։

Նորին հանգոյն, Խոստովանութիւն աղերսախոսութե մեղաւորի առ բազմագթութին երախտիս երկայնմտութեան այ։

## ԲԱՆ․ Ե․

Եւ արդ՝ ես երկրածինս մարդ, կենցաղականաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և յիմարութեան պատրողականաւ գինեաւս յիմարեալ․ որ ամբիստեմ, և ոչ միով լինիք ճշմարտեմ։ Քանզի որո՞վք դիմօք վերագրեցելովք՝ նշանակօք աղարտեցելովք յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ, ո՞վ իրաւադատ, ահաւոր, անճառ, անպատում, հզօր, ած բոլորից։ Քանզի դասեալ աստատին՝ ի սոյն զապերախտութեան մեղուցեալ անձինս առ քումդ երախտիս․ ցուցից զիրաւունս

քո

քո միշտ զօրացեալ , և զանխլաւութիւն
իմ յաւէտ պարտաւորեալ ։ Որ արարեր
զիս 'ի քո պատկեր պանծալի 'ի ձեռն
վեհիդ տպաւորութե՛ , զտկարս օժան-
դակելով · զարդարեցեր բանիւ՛ · փայ-
լեցուցեր փչմամբ · մտօք ճոխացուցեր ·
իմաստիւք աճեցուցեր · հանճարով հաս-
տատեցեր · 'ի շնչականացն որոշեցեր ·
հոգւով իմանալեաւ խառնեցեր · իշխա-
նականին գոյիւ՛ պճնեցեր · ծնար հայ-
րաբար · սնուցեր դայեկապէս · տածեր
ստացողապէս · տնկեցեր զամբարիշտս
'ի քումդ գաւթի · ջրովն կենաց ոռոգե-
ցեր · աւազանին ցօղով մաքրեցեր · կե-
նացն վտակաւ արմատացուցեր · հա-
ցիւ՛դ երկնայնով ջամբեցեր · ա՟ծային
արեամբդ արբուցեր · անհպիցն և ան-
հասանելեայն ընտանեցուցեր · զաշս
երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր · լու-
սովդ փառաց վերածածկեցեր · զհոգա-
նիւթ մտաւորս անմաքուր ձեռացս 'ի
քեզ մատուցեր · զմօխիրս անարգ մա-
հացու իբր զնշոյլ լուսոյ յարդեցեր ·
զհայր քո հզօր ահաւոր որհնեալ՝ մար-
դասիրապէս և անարժանիս իմոյ անձին
կոչեցեր ։ Ոչ կիզեր զերանս լցեալ
նանրութի՟ 'ի ժառանգակիցն կարգալ
դքեզ · ոչ կշտամբեցեր զյանդգնեալս
'ի քո կցորդութիւն · ոչ ստուերացուցեր
զտե-

զտեսիլ աչացս 'ի քում ակնարկութ՛ի ·
ո՛չ արդելանաւ կապանաց ը՟ մահապար-
տայն տարադրեցեր ։ Ո՛չ խորտակեցեր
զդաստակ բազկիս , որ անմաքրապէս
տա քեզ համբառնայր · ո՛չ մանրեցեր
զոստս իմոց մատանցս ,'ի շօշափելն ըղ-
բանդ կենաց · ո՛չ պատեցին զինեւ մա-
ռախուղք 'ի ձօնելն զքեզ ահաւոր · ո՛չ
փշրեցեր զպարս ատամանցս յըմբոշխ-
նելն զքեզ անսահմանելի · ո՛չ գնացեր
բարկութ՟բ խոտորնակ խոտորնակի ընդ
քեզ հետեւօղս իբրեւ ը՟ վրիպեալ տուն՟
խոլայելի · ո՛չ խայտառակեցեր 'ի հար-
նարանիդ զանարժանս քում պարեր-
գութե՟ · ո՛չ 'ի գձուձ հանդերձին տեսիլ
զանօրինեալս յանդիմանեցեր · ո՛չ կա-
պանօք ձեռացս և ոտիցս յարտաքին խա-
ւարն հալածեցեր ։ Այս ա՟մ մասունս
բարեաց և զներելոյդ երկայնմտութ՟ի
ընկալեալ 'ի քէն բարերար՝ օրհնեալ և
յա՟մի միշտ երկայնամիտ , փոխադրեցի
վնասակարս պարտեաց անթիւս և բազ-
մօրինակ անօրէնութ՟ս մարմնականաց ,
և անձնականաց ամենակէր բազմա-
ծուփ խորհրդոց յուզմանց երկրաքար-
շութեց ։ Այսոսիկ քեզ ա՟ծ իմ և տ՟ր ը՟
այսքանեաց բարեաց փոխաբերեցի ·
զայս քեզ ինձէն հատուցի չարիս ըստ
մոլխեան յանդիմանութե՟ն առակի մա-

Է ռա.

ռացեալ զիմաստութի, և սիրողս յիմարու-
թե, զայսոյ բարեաց երախտաւորաց կա-
ճառս ընդունայնութե գնացիք չարա-
չար ունայնացուցի․ զայս լուսաւորութի
շնորհաց անճառից 'ի բարձրելոյն խնա-
մոց բարդեցեալ միրիոն խելագարու-
թե ընդեցի․ Նա թերևս բազում ան-
դամ ծանուցար կարկառմամբ ձեռին
քոյ այցելութե ձգել զիս առ քեզ՝ ոչ
հաւանեցայ ըստ մարգարէին, որ զիս
բայէլ ամբարտաւանութե․ և թերևս
խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյա-
նալ, և ոչ է այսմ սահմանաւ ուխտի
փակեցայ․ այլ դարձեալ զնոյն նիւթե-
ցի չարիս․ անդստին յոճն առաջին մա-
նեայ, փչոցն մեղաց հերկեցի զանդաս-
տան սրտիս յորոմանն որդնատրութ․
Ու իս եղանեն առածք ինձ արբեալ որ
մարգարէին, քանզի մնացեր յինէն խա-
ղողոյ, և ես ընդ այնորիկ փուշ շառա-
ւիղեցի․ գործայ յանխորժ դառնութի
պտղոյ այգին սատարայեալ․ բուռն հա-
րի զանհաստատ հողմոյ, որովք միշտ
տատանեալ այսր անդր տարաբերիմ․
ըստ ձայնին երանելւոյն յոբայ՝ է ճանա-
պարհ իմն անդարձ գնացի․ 'ի մէ աւա-
դոյ շինուածս յիմարութե կառուցի։
Այնաստարր հետոմք խաբեցայ կենացն
անձկալեաց հասանել․ փակեցի ինձէն

ղեկյցն ուղեւորութի . բայցի կամաւ ըղ-
կորստեան խորխորատն ։ Այլի զպատու-
հան լսելեացս իմոց առ . բանից կենաց
ընդունելութի . կափուցի զաչաց հոգ-
ւոյս հայեցուածս՝ առ 'ի զկենացդ դեղ-
նկատել ։ Ո՛չ ընդոստեայ 'ի թմբրութեց
լքմանէ մնացի 'ի պատրաստ փոյթ ա-
հաւորութե . ո՛չ զգաստացայ 'ի բողոք-
դուժի հրափողձայնեան աւուրն ընտրու-
թե . ո՛չ երբեք զարթեայ 'ի նիրհման
քնոյն մահացուի , որ 'ի կորուստն կա-
րապետէ ։ Ո՛չ ետու հանգիստ քոյ հոգ-
ւոյդ 'ի մարմնեղէնս տաղաւարի . ո՛չ ե՛
քնուն շնչոյս խառնեցի զմասն շնորհաց
քումդ պարգեւի . իմոյս ձեռօք կործեցի
կորուստ ըստ առակողին , զհոգիս կեն-
դանի մահացուցանել ։ Այլ զի՞նչ է ինձ
սակաւս և նուաղագոյնս յօդել սահ-
մանս կսկծելիս չափաբերականս . մինչ
անցեալ է զը քանակութի , և վրիպեալ
ըստ բժշկութի ։ Որդ՝ քո է ընձեռել
կեանս հոգւոյ մեռելոյս , և անոխակա-
լութբ մատչել առ այցելութի դատա-
պարտելոյս՝ որդի այ կենդանւոյ . քեզ
փառք յաւիտ , ամէն ։

Ն.

²Սուրբն հոգւով · Յիշատակաւն բաղձաղեղ խնա-
մոցն մեզ տո մարդկէկ, յաւէտ տո տնօրէնութե ·
մաղթելով զնոյնս և 'ի մեզ բարեգործել ·

## ՃԱՌ · ԺԶ ·

Եւ արդ՝ ո՛ր զօրութեց · մեծութի աշեղ · անտարակոյս տեսաւորութե · կամք ամենընդարձակ · առատութի անպարապ · ո՞վք զօրեսցէ տեսանել հանդիսին պարերգութե 'ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարութե · որ ցանկ դեգերիս պատրաստել պատճառս հնարից իմում փրկութե ։ Եւ զոր մեծն է գրեցից՝ պատմել յապաքնիսն · քանզի ոչ անուանեցար հրեշտակաւք, և որ ըզպետութիս նոցունց հաստատեցեր · այլ և զերկինս զամպարօք նոցին զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբեք սիրել զնա · այլ առեր 'ի պատիւ մեծաց գովեստից առաջին դասեալ զմարդասիրութին ։ Ո՛ր որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անձաւ 'ի խորհուրդս սոսկալիս · զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր զնովին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակարարութեց · իսկ զստորնայինն ծնունդս մահկանացուաց տիրական և աստուածական պաշտելի անուամբ

պերճացուցեր , անցեալ վերստին ընտ-
թաճման կշռուն չափոյ ։ Լայնեցեր քեզ
կտակս գրոց ճառից անբաւից զանա-
պակ ծորմանն ծայրագունին վերնում
բարուէն . եւս եւ 'ի մարդանալդ քո մեդ-
յեուշն , ումանց մն ընքեանց , եւ կիսոյ
մն այլոյ՝ զեղեր առատուն զտուրս կե-
նաց . արուեստ բազմօրինակս . սքան-
չելիս մծագործս . Նշանս ճշմարտատե-
սիլս . ոչ զի թէ անդամալուծին պա-
կասելոյն 'ի հաւատոյն , հոգաբարձոյն
առաջարկութե զցոյցս յուսոյն՝ գթա-
ցեալ ողորմեցար . եւ ծրչափ զօրեացն ա-
ռաւել բան քո ամենակար առ ախտա-
լից մարմնոյս մաքրութն աղտաղակեղիս
ծաւաչման ։ Քանզի արդարեւ մեծ են
չափք հրաշից՝ քան զանմաքրեալս հողի
'ոք հասանել . զլուծացեալս պատկեր՝ ան-
տիրելի աղտոյ ներգործել . Նա զի եւ
երկրորդս առաւելութե յաւազանին
շնորհ յաձախեալ զփառս հայրենի
բարձրացուցանել ։ Դու ես տր , որ
որքես զմեզ . ոչ ընտրեցելոյն քոյ նա-
խատպաւորեցեր մաղձեալ . դու ես որ
'ի մեղս եւ յանօրէնութիս վերակացու-
եղեր տոհմին յակոբայ , մինչ յեդ խաղտաց-
ւոցն երկրի ընդ խաւարն հեթանոսաց
ընտանենային ։ Դու ես , որ օրէնսդէտ
առնես զմեզ զաւորսն 'ի ճանապարհի ,

ընտ

ըստ բանի երգողին դաւթայ․ դու ես
որ փախստրես զքարեղէն սրտից կարծ-
րութի՛ 'ի լոյծ կակղութ մարմնոյ գոյու-
թեն բանի ընդունելութե։ Դու ես որ
բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանա-
պարհ մի՛ երկնչել 'ի քէն զտովանդակ
կենացն սահման․ դու ես, որ տաս զեր-
կիւղ քո 'ի միտս խստութ առ քեզ ուշ
ունել հաւատովք ՚մն մարգարէիցն ձայ-
նի։ Օրհնեալ քո շնորհացդ զաշխար-
հատուեղծ բերանոյդ զմեծեղէն անձրև-
ացդ զկեցուցանողդ կաթուած մատու
լսելեաց դրանց բացարան․ որով զօծին
խորամանկութ բանսարկուին թիւնից
թարձցես և բժշկեսցես։ Ամենակալդ
ձեռօք զխոնականացս շարժողական
գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութի ձայ-
նի․ որ տաս բնաւից ընտրութի բանի․
զի դաստիարակեալ զպատշաճականն,
մի յանդգնաբար խօսելով իբր զնախ-
նին՝ լքայց 'ի յուսոյդ, և անբանութե
մատնեցայց վնեալ յորսողէն։ Յուսա-
ւորեա՛ վերստին զխաւարեցեալ հոգւոյս
այս կենդանաբաշխ աջոյդ կարկառ-
մամբ․ զի մի՛ համարձակութեն զրկեալ
լարատեր շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ
դրուանին տորտածանկեցայց։ Բարձ
զանօրէնութիս իմ՝ ամր․ և ընկեա՛ 'ի խորս
ծովու․ որ է փոքր առակ մեծութեան

 քումդ

ջուրց անքաւութեան , ըստ մարգարէին զիմս ընկղմել չարութիւն ։ Կանգնեա կործանեալս անձինս նշան փրկութեան . զի մի յուսահատութեան կոթող կառուցեալ , զծածկեցելոցն բողոքեսցէ ։ Բայց հզօր և գթած զբժշկարանիդ կենաց փարգապետարան , զի զառ 'ի ներքոյն մշակութեան կորուսչին սերմանց՝ մանկաղակամացդ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես ։ Պէտ եղեալ հետևել առ քեզ բոլորիցդ ամ պետրոսեան օրինակութեան 'ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզայ . մատո ժամանեա զաջդ կենցուցիչ յօգնականութիւն ինձ տատանեցելոյս ։ Ընդ քանանուհւոյն ձայնի 'ի խորոց սրտիս պաղատիմ , տոչեցելոյս սատականաստաս կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս ապրուստ կերակրոյ փշրանաց հացի 'ի բաղմազեղդ քո սեղանոյ մասնաւորեսցես ։ Արա փրկութիւն իւթոյ խորանիս որդւոյս դառնութեան . որ եկեր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս ։ Զի քո է մեծութիւն , յաղթութիւն , և զօրութիւն . և դու ես քաւութիւն և բժշկութիւն , նորոգութիւն և երանութիւն . և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս . ամէն ։

Նորին հոգւոյն. Ընդ նոքօք և զմեզ 'ի յիշատակ երանաւէտ յերկնագործութեան, որ մեծ եղև քան զամ-բարձումն. Յաղթելով՝ շնորհօք քաւութեան 'ի նոյն և մեզ վայելել:

## ԲԱՆ. ԽԹ.

Եւ արդ մի՛ տիրեսցեն անօրէնութիւնք քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում ա͞ծ բոլորից լուսոյ: Մի՛ կապտեսցէ դոռոզն ապստամբ զշարդ փչմանդ շնորհի 'ի քո ստեղծեալս կերպէ: Մի՛ թագաւորեսցէ մեղքն խափանեալ մարմնոյս մահացուի առ 'ի դրաւել զիս 'ի նոյն: Զի՛ք իմ թագաւոր առ իշխել շնչոյս բաց 'ի քէն քո. որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութեան: Որ բառնաս զկարիս մեղաց ամենակատարդ բանիւ: Որ արեամբդ քո ստացար և մարմնովդ կերակրեցեր: Որ կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի: Որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ դրելով հօր քո մատուցեր ժառանգակցապէս: Որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր. ստեղծիչ ամենից և կեանք: Դու ես ա͞ծ ա͞մ հոգ-

ւոյ, որ մեծացուցեր զայս տուրս շնոր-
հաց քան զամ գործոյ քո հրաշս. ո՛չ
զերկինս իւրովքն զարդուք և հրեշտա-
կացն պայծառութեամբք. ո՛չ զերկիրս և
զմարդկութիւն, և որ առ սոսա են զար-
մանութիւնք. ո՛չ զսահման լուսնոյն ծո-
վու, և որ 'ի նմա են եղելութիւնք. ո՛չ
զանդունդս աղխիւքն հանդերձ, և որ
'ի նմա են անբաւութիւնք. ո՛չ բարձրացոյր
յօրինմամբ այսքանեօք մեհիւք որչափ
առ իմս կարեկցութիւն. յասելն քո 'ն-
մարգարէին՝ քաղցրութեանց յուսոյ բարու-
թիւն. ո՞վ է ած իբրև զիս կարող թողուլ
մեղս զմեղս և ջնջել զանօրէնութիւնս.
Ահա արդ լինեալ են բանքքո ողոր-
մած, և խոստովանեալ բարերարութիւնք.
փառաւորեալ խորք խորհրդոյդ, և
երկրպագեալ զեղմունք շնորհացդ.
Արդ արդ ոչոք բաւէ յեկեղս թարգմա-
նել խօսիւք նիւթական լեզուի 'ի մա-
սանց այտի քումդ գթութեանցդ՝ զոր առ իս
ցուցեր յօրինիչ. քանզի և մեծ իսկ է
զօրութիւն զհնացեալն անդրէն նորոգել
ըստ առաջնումն պայծառութեան, քան յան-
գոյից ստեղծագործել. Չէ զի ո՛չ է քո
տկարութիւն, որ զօրութիւն ես ամի. առ-
որ բան քո միայն ազդեալ զլրուն գոր-
ծոյն զխաւարէ. Ահա յարիցես փա-
ռաւոր լինել բարեգործ 'ի ստացուածս

այս

այս կրկին անյուսալի փրկութեանս ․ զի իրաւամբք ուխտի բարձրացի , հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան աւետեաց քո ձայն 'ի բաւելոյդ շնորհ ծանուցեալ , ողորմութեան լուսովդ ուղերձեալ , քան 'ի Ճանապարհ ստեղծանելոյն ։ Ո՛վ առ մինն արարիչ միայն Ճանաչիս ․ իսկ առ միւսն առաջնով կոչմամբն՝ և երախտաւոր ։ Ընդ կերպացուցանելոյն և քաւիչ ․ ընդ նորոգելոյն և բարերար ․ ընդ հաստելոյն և ողորմած ․ ընդ կազմելոյն և հնարաւոր ․ ընդ յօրինելոյն և հեղ ․ ընդ նկարելոյն՝ ամենազօր ․ ընդ առաջնորդելոյն , և լոյս ․ ընդ տածելոյն՝ հովիւ ․ ընդ դարմանելոյն , խնամիչ ․ ընդ ողջ պահելոյն՝ բժիշկ ․ ընդ ձեռնկալութեան՝ զօրավար ․ ընդ անպարտութեան՝ Թագաւոր ․ ընդ արարչութեան՝ քաղցր ․ ընդ ամենատուր պարգևացն՝ առատ ․ ընդ միշտ անսալոյն՝ նեղող ․ ընդ ոչ բարկանալոյն՝ անոխակալ ․ ընդ կարեացս վշտակցելոյ՝ ծածկագէտ ․ ընդ յանձանձելոյ գթոցն՝ ապաւէն ․ ընդ գերունակ գոլովոյն՝ ա͞ծ ․ ընդ անսպառ բարութեան՝ օրհնեալ յա͞ւ ։ Արդ որպէս ստեղծեր մինչ ոչն իսկ էի , և ծանուցար ինձ գոյացուցիչ ․ և այժմ զհոգի մաղթաղիս մարմնոյս տաղաւարաւ յարդարեա՛ անդրէն վերստին յանարատութեան մաքուր

որբու-

սրբութեն նախնի լինելութեն. զի բազ-
մասցի առաւել անձեցուն եղեալ յաճախ
տուչութի անսահմանելի քոյդ սքանչե-
լեաց նորոգ ներկայիս՝ քան զանցելոց
հնոյն ստուերականաց: Այլ ըս ճառե-
լոյս զթիւս մեղաց որքան մտացս թեւ
ընթանայ զանբերելին յիշատակել.
արդարացայց յանուն քո Հզօր. և 'ի
պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և
դու թողցես զամբարշտութիս բազում
մեղանաց խոստովանելոյս. Հզօր ծած-
կատես ամենափրկիչ. զի մի ծայրագոյն
լրութե աւետեաց դարձեալ նախնումն
կարօտացայց՝ երանելով սաղմոսին
զշնորհօք փրկեալսն մկրտութեն, և
փչովք մեղաց յոգի խոցոտեալ՝ ձեռն քո
մխեսցի յիս առաւելապէս այժմէն վերա-
տին, ծանրս առնելով զձեռն պար-
տեացս՝ քան զքաղցրութի պարգեւացդ.
այլ աղատեմ զիս օրհնաբանեալ հոգ-
ւովդ սրբով, աղաչեմ զքեզ Տր Ամի,
յորինաց մեղացս և մահու: Բայց լի-
ցի, թէ անկցի ըս տկարութե սահմանա-
ճշմարտութեդ ծածուկն իբրև զդրոյն
օրինակ. քանզի ուր քաւութի է թագա-
ւորեալ, վտարեալ են մեղք. և 'ի խորա-
խոյս կենդանի բանիդ ոչ է յուսահա-
տութի. և ամբարձեալ քոյոցդ շնորհաց՝
հալածեալ են պարտիքն. և մերձ գո-
լով

լով ձեռնինդ քո՝ ո՛չ ըստ անհնարութեն , այլ ամենեքին լուսաւորութի . բովանդա_կապէս զօրութի . անպարտելի կարողու_թի : Դու ես փրկութի . կենդանութի . նո_րոգութի . ողորմութի . միանդամայն և քաղցրութի . արքայութի . անեղծութի ; և

փառք յաւիտեանս ամէն ։

Նորին հանգոյն . Բանք յերախտաւորս և 'ի ներբո_ղութեն այս առ Աղանչականս . յաւէտ առ Տիրա_գործաւէ , որ և չէնարար պատարագաւ՝ հեղորդս ղԲեղէար արար , Տրաանեան մարմնոյն ծաղկամաքի ։

# ԲԱՆ . ԾԲ .

Օրհնեալ տիրաբար 'ի քումդ էու_թե . անսահմանելի և անփո_խադրելի . նսկապէս բարի . պաշտօն խնկելի , և երջանկութի խոստովանելի ամ երկրի . երկայն յուսոյ ամենապատ_րաստ անեսութի . գթած ողորմած . որ ո՛չ պահես ոխս բաղմութե ամաց մեղա_նաց քթթել մի ական . որ հրաշաւորս դարմանալիս գեր քան զամ ազգս նախ_նեայն անսահման առաւելութբ կրկին ը միոյ հանձեցար հեղուլ զողորմութե դերնահոս վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութենս նորում . և զան_տուստ զմուտս լուսարանի պատուհա_

նին

նին անձկութե նշուլիցն աղօթականաց ,
չափով գիտութեցն է սողոմոնի ; և իւր
իսկ նմին , և ինձ ընդ նորին՝ բացեր
ընդարձակեցեր թշուառացելոյս. զա-
ռագաստն անջրպետարան ելլիցն ողոր-
մութե հրի պարգևացն ածականաց · զոր
է մէջ իմն մասնաւորոք աւետաւոր յի-
շատակաց , և 'ի հնումն զայսր տպաւո-
րութի օրինակաւ նկարագրեր՝ զդարձա-
րուքն առ իս , և ես դառնամ առ ձեզ ·
և յորժամ դարձցիս և հառաչեցես՝
յայնժամ կեցցես ։ Նա զի և զաղ-
ջամղջին սեւոյ գունոյն փոխարկել 'ի
ձեան պայծառութի . և զարանցն ա-
րեամբ ներկելոյն յեղանակել 'ի պա-
տահումն զեղման՝ ըստ եսայեայ և զա-
քարիայ · և 'ի մէջ բարկութեն դար-
ձեալ զոյգ զողորմութի ։ Նանզի անապա-
տանալ քաղաքացն իսրայէլի , և դար-
ձեալ բնակիլ . և Ճանապարհացն ամայի
լինել 'ի չգոյէ մարդկան , և անդրէն
հետևիլ . և լքանիլ 'ի սուրբ ոգւոյ , և
դարձեալ զօրանալ ձեռամբ . և գնալ
այ 'ի տեղի իւր զայլրացմամբ , և դառ-
նալ ողորմութբ . է ներողութե զիլոյն . և
'ի մէջ սատրիցն սպառնալեացն կրկին
պաշտպանութի . և 'ի սրտին խռովութե
յուզումն խնամոց դթութե ։ Նայ մաք-
գարէիցն ձայն լսելի , որ զօրհնեալդ

քոյ

քոյ դաշտաւեան զաղատաւորդ հրաման կանխաւ ազդելին ։ Նաեւ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկանել զն անբաւութն ․ փոքունք են եւ նուազունք օրինակք եւ նմանութք , հինք եւ ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութի , եւ խաչիդ փրկագործութի ։ Որ յամ վայրի կառուցեր զխորանն զկայութն արեան քո ուխտի , որք մածաբարբառ մինչ աղաղակեն՝ քան ըզդատակնիք մահուն հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի , կեանս կրկինս եւ անմահականս՝ շնորհաց , մկրտութն , յարուն , նորոգութն , առ քեզ ընտանութն ․ ը հոգւոյդ որդ միութն , քաւուն , ազատուն , լուսաւորութն ․ մշտնջենաւոր մաքրութն ․ իսկապէս երանութն ․ ը վերնայնոցն կցորդուն ․ անկապուտ փառաց ․ ՚ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք ։ Նաեւ զոր ահաւորն է ասել , կարգեմ աստանօր՝ յիշատակ եդեալ մեծիդ երախտեաց ․ մծ իսկ ըննել ընտրութն շնորհին , եւ ը հաստաղիդ մնանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ , եւ ը լուսոյդ կենաց խառնութբ ․ զոր կատարումն երջանիկ խոստմանն ը պօղոսի բանին ոչ ունէր օրէնն ։ Նաեւ դու փրկութն եկեր հայրենիդ քո հարա-

տու-

տուէ ։ արարեր և կատարեցեր զյուսոյն յերկարաձգունի · որ առ քեզ պաշտեալ անհամառօտելի, քաւիչ ամի ։ Եւ քեզ փառք ընդ Հօր քում՚ի գովեստ բարեբանութեն Հոգւոյդ քո սրբոյ յաւիտեանս յաւիտենից · ամէն ։

Նորին հանգէ · Բանս յաղագս կորուսեալ արդարոց ըղձականէ ։ Մխիթարական և սփոփանք և եղկութե անձին ։

## ԲԱՆ · Լ ։

Եւ զի մի զփրկութեն վստահութի իսպառ կորեցից · և ապաշէն եղեալ մատնեցայց այսքանեաց աներևութից ը դիմամարտից · որք ոչ այլ ինչ են, քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք · զոր վերագրեալքդ սահմանեցին, զորքանուն պատկերին ձեռոյ եղեալ աՀարկուս, ցուցից առ ամին բազմաբոյլ բռնութե մարտկացդ · զորեղ ախոյեանն ամենակալին ամենայաղթօղս և անպարտելիս՝ թէև կործելիս կիրս՝ և դժուարակութ պտուղս ծառոց անհասանելեաց, և անկոխ Ճանապարհաց երկք և տաժանմունք ։ Քանզի զայն ամ գունդս չարութե բանսարկուին զօրաց սակաւ մի արտօսր կաթուածոց

ծոց աչաց՝ իբր զձձիս զեռունս բազմո֊
տանիս խխայթից երկրի տկար խլրտմանց՝
անկեալ՝ ի վ͞ր ծորումն ձիթոյ, կամ
դոյզն դեղ ինչ սատակչական ցամաքե֊
ցուցանէ. և դոյզն մի հառաչումն որտի
հեծութեան եկեալ՝ ի յոգւոյ՝ իբր շնչումն
հարաւային ջերմութեան խառնեալ յար֊
եւու ; զսառնամանեաց սաստկութի հա֊
լէ. քանզի ա͞յ միումդ նմանութեան հեշ֊
տածինք են. և ա͞յ միւսումդ դիմագրու֊
թեան դիւրամեռք : Այլ ես ոչ երբէք
կասեցից դատել զդատապարտեալս բա֊
նից կսկծմամբ . պարսել զպարտու֊
թեանս՝ իբր զվնասակար անփրկանաւոր
անհամօղելի . վ͞զի զոմանս սատակեալ
՛ի յիմոց նեղչացն , ոմանց զօրութի տամ
կենդանանալ առ հոգւոյս կորուստ :
Ձունկս դառնոստեան : որ զզարշութի
անսառակ վարուց ծաղկեցի . բարունակս
ապականաբեր և մահաղկուղեան , որ
զկորստեան գինին երկնեցի . քանանու
զաւակս և ոչ յուդայի՝ ա͞յ ասից մեծին
դանիէլի : Որդիս գեհենին , և ոչ ար֊
քայութե . ժառանգս դժոխոց , և ոչ
փառացն փափաքելեաց . նիւթս տան֊
ջանացն , և ոչ հանգստեան : Ապե֊
րախտս առ երախտաւորդ . ապաշնորհս
առ բազմապարգեւդ . միշտ մեղուցեալս
առ երկայնամիտդ . դառնացուցիչս

քաղ֊

քաղցրութն բարերարին ։ Ուստի այս չար և վատ ըստ անհրունեան յանդիմանութենն . իմաստունս զչարիս գործել ըստ եսայեայ նախատասյութենն . ժիրս առ ժանդագործութինս զազրութն ։ Փոյթս առ 'ի բարկացուցանել զո̃րն . մշտաշարժս առ գիւտս սատանայականս , հանապազորդեան վիշտս ստայողին ։ Թոյլս առ բարեայն թուիչս . ծոյլս առ երանութիւն ընտրութն . դանդաղս առ դիտմունս խոստացելոցն . անարիս առ կարիս սպտանեայն և օգտակարացն . պաշտօնեայս տիրադրուժ երախտամոռաց ։ Վա՜յ անձինս մեղաւորի , զի զարարիչն իմ բարկացուցի . վա՜յ որդւոյս կորստեան . որ զկենդանութենն ձիր մոռացայ . վա՜յ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց , որ ո՛չ գոյ հատուցանել ։ Վա՜յ բեռնակրիս ծանրութն մեղաց դժնէից . որ չունիմ դառնալ առ հանգստարարն . վա՜յ վնասակարիս տերունեան պարտուցն , որ չիք հնար յանդիման լինել հզօրին ։ Վա՜յ եղեգնախռիւ կիզանողականս նիւթոյ , որ տօչորելոց եմ 'ի գեհենին . վա՜յ ինձ առ այս յիշատակ , զի նետք բարկութենն ա̃յ սլրեցելովք են գործեալ . վա՜յ յիմարութեանս , որ ո՛չ մտաւեցի զծածկեցելոցն յայտնութե հանդէս ։ Վա՜յ ամբարշտիս ,

զի միշտ անդադար սատայնս չարեաց կկեցի · վա՜յ զմարմինս պարարողի կերա_կուր որդանցն անմահից՝ կտտողացն Թիւնաւորայ՝ զխա՜րդ համբերեցից · վա՜յ ինձ առ արբումն մահուն բաժակի · որպէս զյաւիտենականն տուժեցայց · վա՜յ ինձ առ ելս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս , ե՞րբ դատաւորին Ճշմարտի յանդիմանեցայց · վա՜յ ինձ առ նուաղութի՛ իւղոյն լապտերաց · զի ա_նարծարծելի է աղօտանալն · վա՜յ ինձ առ ձեպ տագնապի ահին պակուցման · յորժամ առագաստին մուտն փակես_ցի · վա՜յ ինձ առ ձայնին ահաւորութի գողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին վճռաւ կնքե_լոյն , Թէ ոչ գիտեմ զքեզ ։

Նորին հանդողէ · Բանք զղջմանէ՝ ամբաստանու_թէ , և սպառնանօք անձին ։

## ԲԱ՛Ն · ԻԱ ։

Ա՛ւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կացի եր_բէք 'ի յոտս մարդոյ · և ոչ սիրտ բանա_կանի ստացայ ըստ գրոյն · և քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոցդ · և ոչ Է բարւոք ուղղին ընԹացայ · ընդէր ոչ

զխոտորնական հետոցն խաւարայնոց
զգէսն ցուցից 'ի սահման կարգի այսր
ընթերցուածոյ ։ Եւ որս առեալ յար-
մարեալ առ սոյն զկերպարան տեսակի
քանից երեւաց, ըստ մերազգոյնդ նշա-
նակելոյ՝ անփոխադրելի պահելով, խոս-
տովանեցայց մերստին դարձեալ աստա-
նօր զմնացեալ չարութեանցն զգիծս.
զոր յաջորդաւեդ է իմանալի ։ Օտար
ժանգադործս արժանապատիժ. ածե-
ցուն արարի գնացիւք անաստուածութե̄
զդունդն բելիարայ ։ Կաքաւս կայթից
և ցոյցս վազից խաղալկացն դիւաց դաշ-
չելեաց Ճարտար խաբողաց ծուլութ̄ս
իմով յօրհեցի ։ Գանս դաղանիս և
խոցուածս անյայտս 'ի կործանեցելոցն
դաշնանց ընկալայ ։ Մէ հերքեցի զվա-
նեալսն խաչիւն քոյ, քան թէ անդրէն
առաւել կրկին իսկ զօրացուցի ։ Մի-
մոյ հիգոյս անօրէնութե̄ անունդ յիս
հայհոյի 'ի մէջ այսականաց. ոմ մ̄ իս-
րայէլի 'ի մէջ հեթանոսաց ։ Հարուածս
հարուածոյ՝ մնասակարս աղականու-
թեց ժանդոյ, և թրթրոյ, և այլոց կեր-
չաց վատնողաց զծաղիկ հոգւոյս՝ ըստ
նըյն յաւելեալ հրաշական ողջոցն, որ 'ի
ցոյցս երկրի մ̄ իսրայէլի յառակս հինից
և չարաց հոգւոց յիս ինքն անկեցի.
ստեղծանել զնե պատրաստեցայ, քան
թէ

թէ սատակել ։ Ի խուրս կուտեալ համա-
քեցի անձին իմում մարտիկս մահա-
ջէնս ։ Արտամբերս ինձ գրգռեցուցի ան-
րաւս և անպատկառելիս . ներհակս ինձ
զօրացուցի՝ ապառումն և անկուռելիս .
դառինս ինձ առի մասունս ընդ քաղց-
րաւենեացն Ճաշակաց ։ Ըստ ստացողն
միշտ նենգաւորս , և առ բանսարկուն
յաւէտ հաւատարիմս . անաղ աղէտիս ,
վիշտ վտանգիս , խաւար ամօթոյս .
մութ պատկառանացս , զիա՞րդ և առ-
քանիս յանդիմանութեն համարձակե-
ցայց ։ Մեծ է ձայնս գուժի , և անբե-
րելի բողոքս աղաղակի . քանզի թէ
զհոգիս եր զիմ տեսանել ազեղս և նո-
ճաղս , և ամենևին ներդևեալս ցաւուք
հեծութեանն 'ի վերջինս վարեալ վա-
րանումն , և միջնատեալ աղտեղեալ գո-
նով զաղբուն՝ իբր զպաշտօնատար մե-
հենի . վն զի նոյն է ապա տանել ձու-
լեալ պատկերի , և մեղաց ախտի ։ Արդ՝
ես գնացի ընդ այս Ճանապարհ կորու-
տեան հետոց խաւարի . ետու զբաժինն
քո ցանկալի յանապատ անկոխ , ըստ
մարգարէին՝ որ առ քահանայն իս-
րայելի ամբաստանութեն ։ Եւ զիա՞րդ
ասացից անձին իմում մարդ՝ գրեալս ը̃
անմարգիս . և ի՞բր անուանեցայց բա-
նական՝ անբանիցն յիմարութեան կցոր-
դեալ .

դեալ · և ոչ կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյսս որ ի յիս · և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստից դրունս փակեալ ։ Կամ որո՞վք ցուցայց տպաւորունի նկարագրութեն անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալ · նու և ո՛չ շարժողական , և կի՛ շնչական ունիմ անուանել , թո՛ղ թէ հոգեկան , կամ մտաց ընդունական ։ Անպիտանս 'ի թի՛ւս անօթոց · անարգս 'ի քարինս որմոց · արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց · վատթարս 'ի յազգս հրաւիրելոց · արհաւրօք մահու պակուցեալս · անխորախուսելի 'ի բոլորեցուն ցաւովք և տանջանօքն երուսաղեմի՝ ըստ երեմիայի բանին խորտակեցեալ ։ Պակասեալ աւուրցս 'ի հեծութէ , և ընխթայք ամացս 'ի հառաչմանէ՝ ըստ նուագարանաց երգողին · իբր ասու՛ի 'ի ցեցոյ՝ և փայտ 'ի յորդանէ ըստ իմաստնոյն բանի 'ի խիթմանէ սրտիս հալեցայ · իբր զօտայն սարդից մաշեցայ ըստ սաղմոսողին , և խոտան գտայ · իբր զամպ առաւօտեան՝ և զցօղ վաղորդայնի ըստ մարգարէութեն ձայնի սպառեցայ ։ Այլ ո՞չ 'ի մարդ ոք ունիմ զյոյս , եթէ անիծեալ 'ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ · այլ 'ի քեզ տէր իմ ոգեսէր · որ ընկղմեալ 'ի քոյդ գթութեանց բարեաց անբաւից , և

'ի

'ի բեւեռելոյն ժամու 'ի խաչին մաղթե-
ցեր մեծ ողորմութ. առ Հայր քո բարձ-
րեալ՝ քո չարչարողացն ։ Նոյդ՝ շնորհեա
ինձ յոյս քաւութ. կենանք և ապաւէն . և
'ի տուր շնչոյս թշուառականից զոգիդ քո
բարի . և քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով
զօրութի , յաղթութի , մեծութի , և փառք
յաւիտեանս , ամէն ։

Նորէն հոխողէ ։ Պատրաստեալ ամբաստանութե և
ստփանանց անձին ողջացելոյ ։

## ԲԱՆ . ԻԲ .

Դարձեալ այլաբանեցից 'ի նոյն չար-
ունակ բարդեալ զկշտամբանաց
եղանակ գոլովեալ անձինս . ածեալ
մատուցեալ կրկին կացուցեալ նովին
պատկերաւ 'ի նոյն պայմանի . թերևս
գրեսցէ ինձ ամենագէտն զայս յանդի-
մանութե դատակնիք կնքեցուցանո-
ղական բանի ճշմարիտ խոստովանութ
համայնից գործոց գաղտնութեց չարեաց։
Այլ ոմն ձիս խօսնական կարծրերախ
սանձակոտոր արձակերասան . յովա-
նակս անհամբոյր վայրենական և անկր-
թական . երինջս աւազական անուղղա-
կան և անվարժական ։ Արդս մոլեգ-
նական տարապրական և կորստական .

մանուկս մեղանչական անխրատական
և վարատական . անտէսս մաՀապար֊
տական տարտամական և անգործա֊
կան . բանականս անասնական դաշա֊
նական և անմաքրական ։ Զիթենիս ա֊
մայակտն անպտղական և կործանական.
մարմինս Հոգւոյս իմ թախծողական
դատողական և տանջողական . խոցեալս
անբժշկական անխնամական և անկանգ֊
նական ։ Անկի շարս կայսերական՝ արգ֊
վանական և անգտական . ծառայս
սխալական փախստական և թշուա՜ռա֊
կան ։ Ահա ես ինքն ինձէն կամաւորա֊
պէս անձնամատն և մարմնակործան,
Հոգեկորոյս և միշտ մատախաբ, կամա֊
կոր իսկ, և սրտաբեկ . ուշամնաց և
Հանձնորաղրաւ . գգոյալիկ և խմա֊
տասպառ . յոյլրատատես և եղեռնա֊
լո՛ւր . ես ստուստ և անգուստ բնա֊
ւիւք բորբոքմամբք մաՀաբեր երկամբք
վնասեալ, ո՛չ միով իւիք տեսուք՝ ի գործ
ընտրուէ քեղ պիտանացուս տո՛ւր բոլո֊
րից ։ Որպէս զորովայնին, որ երկնեալն
զիս . աշխարհեմ զստինսն՝ որ դիեցուցին ։
Ընդէ՞ր ոչ մաՀձ մակարդեալ ընդ կա֊
թինն ձգեցի . և զիա՞րդ ոչ դառնութի
ինձ ընդ քաղցրութե ջամբեալ մատու֊
ցաւ ։ Ո ի եթէ ես ինձէն անձին խմում
դժնեայ դառնախառն Համբարձայ այս֊

քա

քանեօք բանիւք . և ունիմ տակաւին
զսուրբ բարկութենս անխոնարհելի . ով
ոք 'ի յերկրածնաց աստի զիս օգնեաց :
Ո՜ն խոստովանեցից . զբնաւ էութիւ
դատեալ աւաժեցից . զհամօրէն զխնա-
սակարայն զդունդ դանեցից . զխոցո-
ղայն զխնամօրութեց դատախազեցից .
զդայտկանայն զլխաւորութիւ կշտամ-
բեցից : Մ՝եղայ ամին , յամի ողորմեա՛
գթած . ոչ նոր ինչ գտեր յիս զկանոնա-
նացս պարտեաց մատախուզ . այլ նոյն
եմ յաւէտնոլին պատահմամբ պարտա-
ւորութե անկցելի ծործով սխալեալ ա-
ռաջի քոյ անփոփոխելի . և դու միայն
ինկապէս գթած որչնեալ մարդասէր ,
Ը աջմէ խմոյս փրկութե կանխեալ նե-
րութե անայլայլելի : Ո՞րդ՝ մատն խնա-
մակալ հզօր երկնաւոր բարի՝ ամենից
հաստիչ յոչէից , զբանից զօրութե ի-
մաստից կայծակն 'ի գործի ազգման
լեզունիս շարժութե , առիթ մաքրութե ,
յամենասուտ զգայականաց գոյաւորու-
թեց յիս մասնաւորելոց՝ քո ձեռակեր-
տից . սորօք առ 'ի քէն եղելովք և բժշկե-
լովք կրկին հանդերձանօք , անպակաս
ձայնիւ , անհատ բարբառով քեզ վերըն-
ծայեալ գոհաբանութի 'ի փառս մեծու-
թե հօրդ քոյ ամ մերոյ յաւիտեանս ,
ամէն :

Սուրբն հոգւոյն · Կատարեալ ամենապատուութիւն և ապաստանք անձին ըղձացելոյ, մաղթանօք յաւատէ ։

# ԲԱ՛Ն · ԻԲ.

Եւ արդ՝ զորս յայտնեցից · և յո՛ղադս ո՞յց նշանակեցից · և մ՞ո ո՛ր ախտեաց ճառեցից · և զո՛րքան ծածկեալս մերկացուցից · և կամ մ՞ի որո՛ց խոստովանեցայց ։ Զներկայի՞ս զոր արդէն ունիմ, թէ՛ զանցելոյն, զոր մթերեցի · զապագայի՛ցն, յորոց կասկածեմ, թէ զբազմատաչ շարժուէցն, յորոց գլորեցայ · զփո՛քրն ինձ համարեալ՝ որ է ո՞յ մեծ գրեցեալ, թէ զա՛նկերպագրելի՛ն չյիշատակելի · զնուա՛զն որ է առաւել, թէ զթեթևագոյնսն, որ են ծանունք ։ Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց · զաղդրունս հեշտականա՛ցն, թէ զծայրակատար վնասակարութե՛ցն · զաներևութի՞ցն, թէ զտեսականացն · զառձեռն հպաւորութիւն, թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութի ։ Զլայնականն դիւրին խածմո՛ւնս, թէ՛ զերկարաւորն նետաձգութի · զխորութենն զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ · զյոքնագլուխն պտուղ-

կու-

կութի՛ւն, թէ զառողջութիւնն անբժշկու-
թի. զպարարումն չարին մարմնովս, թէ
զսովին բարւոյն հոգւովս. զխնամոցն
հանդիսանալ յոչ ախորժելիսն իմ, թէ
զբռնադատութեն տուամբ ձգելն 'ի նոյն
մոլեգնութի. զառ 'ի մահն մեղաց, թէ
զընդունայնութեն կարծեաց ։ Արդարեւ
այդ կամաւ խելագար զերծեալ 'ի ձոր-
ձոյ՝ զառակմանցս տեսիլ յանդիմանե-
ցի՝ զընդդէմն գործեալ իմաստնոյն,
որ՝ թէ հանճարեղքն վերարկեսցեն զա-
մօթս իւրեանց ։ Օտարացեալս 'ի կրօ-
նից. հեռացեալս 'ի կարգաց. 'ի սրբու-
թե անսուրբ. 'ի կուսութե անմաքուր.
յարդարութե ամբարիշտ. 'ի բարեպաշ-
տութե [illegible]. բերանովս մերձ
առ ստացողն, եւ հեռի երկիկամամբք.
շրթամբքս պատուամատոյց ըստ մարգա-
րէին, այլ ոչ եթէ սրտիւս ։ Եւ եթէ
պարտ է զքստմնելիսն ասել ստանօր.
չար քան զտանջանսն յանդգնութիւն.
իբր զուր լինն պաշտօնատարս իմ. 'ի
միտս անկայունս երկեակ ճանապարհաւ-
մահու վարանեալս ։ Ջանամ եւ ոչինչ
օգտիմ. պնդիմ եւ ոչ հասանեմ. փու-
թամ եւ ոչ ժամանեմ. անձկամ եւ ոչ
տեսանեմ. փափաքեմ եւ ոչ հանդի-
պիմ. կարօտիմ եւ ոչ պատահիմ. ու-
նիմ զի՛մ երկրի, եւ եմ պատգամաւոր

ա-

աղօթանուէր ի̄մ աշխարհի ։ Այլ
թող զբազումս զայսոսիկ բարեբար , և
մի՛ ունիցիս ․ դիւրինք են քեզ զսոսին
եղծանել ․ քան ինձ տաժանաւորս ա-
ջոլնկարել ․ վ̄ այնորիկ գրեցի առանց
խնայելոյ ․ զի դու սաստապէս ընթեռ-
ցես օրհնեալ ։ Որ վ̄ մեր մեղաւորացս
երկայնամիտ անուանեցար ըստ մաղթա-
նաց բանի հեծութե սրտի եղկի երջան-
կի ․ յոյժ նեղեալ անձն , և ձանձրա-
ցեալ ոգի բանին յիշատակաւ , որ զսոյն
սատամբ ․ յի̄մ կրից մահացուցանողաց
վտանգեալ , անկեալ ՚ի վիհ դառնութե
մեղաց՝ անդնդականաց ապականութեց ․
քանզի չհաստատամ , թէ լսես իսկ ինձ
ըստ յուսոյ ձայնին ։ Արդ՝ ես ինձէն
ինքնադատով անձնադատ գերի կամա-
ւորապէս միան եղեալ բնութես՝ արդե-
լի փակեցի կնքեցի առ յինէն յի̄մ մա-
սանց զկենացն հնար ․ զի ՚ի փրկութե
մեղօք կապելոյս կրկին մեծացցի գո-
վեալ ։ Եւ քանզի ՚ի մարգարէէն բար-
ւոք խրատեալ փորձ գտցուք , մաղթել
ը̄ նմին հոգւով քո երգեալ յուսով հա-
տանով ՚ի քեզ ապաստանեալ ․ առէք
ը̄ ձեզ բանս , ասէ ովսէէ ․ և դարձա-
րուք առ տ̄ր ա̄ծ ձեր ․ և ասացէք ցնա ․
կարող ես թողուլ զմեղս ․ զի ընդունի-
ցի՛ք զբարիս , և վայելեսցեն ՚ի բարու-
ան-

անձինք ձեր ։ Ո՛հ ա՜մծ խօսեցաւ, և ո՞վ է որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ հաւատասցէ ։ Արդ՝ այսօրինակ վճիռ պաշտելի. նուիրեալ պայման. սահման նոյնադոյ. կենաց աւետիս. կէտ տէրունի. դուռն բարութեան. սփոփանաց հրաւէր. ճշգրիտ պատկեր. աննստգիւտ գանձ. անմոռաց յիշատակ ։ Այսու աւ սոյն և ես հաւատ ընկալեալ՝ ստուգաւ վկայեմ ամէն ընդ մարգարէին. կարօղ ես յա՜մի թողուլ զմեղանս բազմաբեղունս. և ևս զօրասցիս կրկին բարձրացեալ առ ամենաթշուառ կործանեալ հոգիս ։ Զա՜մի իշխես, ա՜մի բանես. ա՜մ ուրեք հասանես. ամենից բունուեց յաղթես. զա՜մ կարծրութիւն փշրես. զա՜մ ընդդիմահար վանես. զա՜մ խստութիւն վատանես. զա՜մ սրացեալ ընդոտնես. զա՜մ դառինս անուշես. զա՜մ դժուարամուքելիս քաղցրացուցանես. զա՜մ զպարտս շնորհես. զա՜մ յանցանս թողուս ։ Կարօղ ես զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենարուեստ՝ զամենեցուն զմեղս ընկղմել՝ և չքացուցանել բառնալ՝ ի միջոյ իբր զձաձանչ փոքու կայծական՝ սահմանեալ՝ ի չափ ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ՝ ի տիեզերատարած ծովու ։ Արդ՝ բանիւ՛ մաղթանաց վերծանողացն այսմ

մա

մատենի ողորմելում մն խաչի և չարչարա-
նաց մահու որդւոյ քո, հայր գթութ :
Սկիզբըն առաքողի ողբերգութե՛ն ձայնի
այսմ արտօսրածին նուագի, որ զայս
դեղ փրկութե կենաց մեզ յարմարեցոյց,
եղիցի բժշկեալ յանուն քո հզօր : Որ
հետոյ ելից խոստովանութե մեզ նկատե-
ցոյց այսու պայմանաւ պատշաճակա-
նաւ, լիցի անարատ յիւրոցն պարտեաց :
Որ զհպարտութե՛ն թևս հարթել մեզ
վարդապետեաց ՚ի սոյն կանոնի կենաց
պատգամի, եղիցի զերծեալ ՚ի չար կա-
պանաց մահու արկածից սկզբնականաց՝
վերջնոյ՝ և միջնոյ, երրորդութբդ բա-
րեգործեալ ՚ի նորոգումն լուսաւորութե :
ընդ որում և մեք գտցուք երջանիկ
գտեալ ընդ սմին :

Նորին հանողի · Պարզեալ ամբաստանութիւն և ոտգտանս Դեղատուի ղանչէ, խոստովանութիւն բազմապատիկ յանցանաց :

## ԲԱՆ · ԽԵ :

Եւ արդ՝ յոյս բարեաց տնկեալ ՚ի
սրտի անձին իմ կործանելոյ, և
գտեալն հաւատոյ պնդեալ զերկեւ-
մանցդ երկակի մասունս զկրկնապատ
խորհրդոցդ զցանկականիդ գործարան :
Խոստովան լեր բարերարին ա̃յ, զմնացդ՝
իբրև

իբրեւ զգործոց . զխորհրդոցդ՝ իբրեւ զլուսեց . զանտեսիցն՝ իբրեւ զյայտնեցելոց . զորտիդ ծածկութեց՝ իբրեւ ըզբարբառումն ձայնից . զակնարկութեցն՝ իբրեւ զարդիւնականաց մեղանաց . զաղդել չըլթանցդ՝ իբրեւ ՚ի գլուխ ելելոց չարեաց . զոտիցդ հետոց՝ իբրեւ ըզպատուհիրանաւն ոյլագողոց . զձեռացդ ձգումն առ ցասումն՝ իբրեւ ՚ի հեղումն արեան գործողի . զծխծաղելն բնաւին՝ իբրեւ զկամաւորական լքումն շնորհի . զերգմնականն՝ որ թէ ՚ի հանդէպս թէ ՚ի տարագէտս՝ իբր զգործակցուն խաբողին . զամբարտաւանութին իբր զհին կործանիչ նախաստեղծին բարձրուն . զսրտին նեղուն իբրեւ զթերուն հաւատոց . զմեղկութին իբրեւ զպարտուն զօրաւորին ընդդութե . զտրտունջն առ վտանգս կրիցն իբր զուրացուն ուխտին , որ առ ՏՐն . զապարտասանութին իբր զթուն իմն անդթութեն . զամբարհաւածութին իբր ոչէիւք առ վեհսն գոռոզութի . զհպարտութին իբր զկամաւոր հարազատ դատողին չարեաց : Զակամայիցն ըստ կամաւորացն . զբռնացելոցն ըստ հաւանականացն . զեկամտիցն ընդ բնաւորականացն . զանօրէնութիւն ըստ ապածութեն . զփոքունսն ըստ սաստկագունիցն . զնուաղունսն ընդ յոլովիցն :

Զան

Զանձաւոյն իմոց իբր զձաւելեաց
ցխոտղին · զանդրելոց մնասուցն իբր
զնկարելոց տեսղին 'ի յորձան մագ-
նետախս վիմի · զթեթեւագունիցն ա-
խտիր մնաց իբր զստուար ծանրունի բե-
ռանց · զխնդիր չափոյ ծածկելոցն իբր
զճշդում պահանջումն սատերն սակի 'ի
բերանոյ կիտին կորիւնի չորեքդրա-
մեան կշռութն · զանդնդականացն գոր-
ծոց իբր 'ի յականջս իմ արագ ժամանե-
լոց ։ Զայսոսիկ յաճախեմ կուտեմ
կրկին յանձնառութիւ վերստին պատ-
մեալ աստանօր մեծաւ հեծութբ զչեոցն
իբրեւ զեղելոց · ընծայեալ իմ զպարտու-
թի վանեցեալ անձինդ · զի ընկալցիս
'ի փոխատուէն զշնորհօք թողուն պար-
տուց մեղաւորին , զոր իրն արդարա-
ցոյց · եւ հրաշափառապէս հաջակեաց
ամենապատիկ ներբողին կրկնեալ զգօ-
վեստ զղջմանն , քան զպարսաւանս մե-
ղացն ։ Բարդեմ եւ դիզեմ անձինդ մե-
ղապարտի բամբասանս յոքունս , զբոյսն
խոհերս բազմամամնեայս՝ անձն իմ
կշտամբեալ յոքնախաթանդ բանիւ ։ զդ-
չարութին , զանօրէնութին , զվրիպու-
թին , զաւ 'ի մարտին հանդիսէ փա-
խուստ · զպարտութին , զմոլեգնութին ,
զամբարշտութին , զապշութին , զթմբրու-
թին , զքունն արթնական , զաւ 'ի յըն-

թացն

թացուն զնիրհումն, զխորհուրդն ստա-
րութ, զլանիցն նանրութ, զզազրութն
հաճութ, զյամենայն 'ի նմին, զփափու-
քելն ամ̃ ատելեայն, զաներկիւղութին,
զանսաստութին, զանհարթութն, զթե-
րութին, զթիւրութին, զլուծութին,
զձիգութն, զանկապ արձակումն. Օծի-
ծաղականսն, զվրնջողականսն, զկու-
տակերգականսն, զգայթագղականսն,
զպատրողականսն. զանդեպ քաջու-
թիւն, զանյարմար մարտն, զառանց
օրինի արիութիւն, զխեղդմունս հող-
ւոյն, զտոտանողականսն զերկչոտու-
թիս, զբազմաստեղնեան ձիւղսն զրա-
հետականս, զմնդպատկառ փարաք-
մունսն, զդժոութիւն, զդժգմնութիւն,
զանդատ ատելութիւն, զմարմանչ-
մունսն գիւրըմբռնողականս, զփո-
քունյն զանկշռութիս, զխոստմանցն
դրժողութիս, զուխտիցն մոռացութիս,
զնմանեացն այլակերպութի, զկեղ-
ծեացն քողարկութիս, զփառամոլութն
մորսութի, զյանիցն յաւակնութի, զա-
պիրատութիւն, զինքնասիրութիւն, զնա-
խադահիցն տենչութ, զհատուցանելն
եղեռնականացն, զնոցինն զանչափ
աղձատանսն, զվայրապար բերմունսն,
զընթացակցութիւն խորամանկութե բան-
սարկութին, զբանին սերմնակաթութ,

զվա-

զվաճառումն կենացն ԺԲ գնոց սատակմանն , զկորուստ աւանդիցն , զհայրենեացն ծախս , զկապարանն ձգողական . զվիրկով լծոյ երնջոց անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւն , զյարաթաթաւտղմաբնակութիւն , զկռումն լաւացն , զընթադրութիւն անկարծիցն , զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական ։ Օնարոգ մտացն , զօտար խորհրդոցն , զանկայուն կամացն , զհաշման հաւատքին , զէութի չնչոյն , զեւս քան զսահման կանոնացն դրուծ , զիշխանականին զամենասփիւռ բացարձակութի . և զոր չէ ճառելի , և կի՛ր գրելի , և կի՛ր պատմելի , և կի՛ր յերեաս դիմաց բերելի ։ Այս արդ՝ զի՞արդ բժշկեսցիս անձն իմ եղկելի 'ի յոյսքանեաց տխգաց խոցոտեալ , բարձեալ թողեալ այր մի տարագիր անողջանալի ըստ մարդարէին . քանզի մի 'ի վերագրելոցդ բաւականապէս զօրէ սատակման , թո՛ղ թէ այսքան դասք սպանողաց գժնէից գահաձաց շուրջ պաշարողաց ։ Մանաւանդ զի ո՛չ այսու եւեթ նմանադրութ՛ կշռի տարացոյց տառանեցելոյս . այլ զոր օրինակ անթիւ բազմութի կայտառաց կարճաց խայթողականաց 'ի ստորին մասունս ծայրից սանոյն զորհասական թոյնս բերելոց , և յամեն մաշկեղէն արկեալ ամփոփէ զէլիցն շա-

ւիղ կապարանին շրջափակութե՜ , ցու-
ցանի արտաքուստ բարիոք , իսկ 'ի ներ-
քուստ համբարք չարի , և պահեստ
կորստեան , և կոյտ կսկծման , և գոր-
ծոնեայք սատակման , և մշակք մահու ։
Որդ՝ այսոքիկ են ամբարեալքն քո անօ-
րէնութե՜ն տաժանեաց թշուառաքիրտն
թոշակք՝ անձն պարտական կրկին սա-
տակման ․ որ կամաւորաբար ընկալար
'ի քեզ , զոր թշնամին սերմանեաց 'ի վն̃
ցորենոյն յագարակի Տ՜ի ․ ով այր ան-
միքուր ամբարիշտ և ծոյլ , բնաւին ա-
տեցեալ , սիրողդ մոայդ ախորժմամբ
զլցեալսն ամ՚անառակութե՜ ․ և զոր ա-
ռաքեալ ցուցանէ զթիւս բանիցն սար-
սափելեացն կշտամբողաց ․ աստուստ
սկսեալ մինչև 'ի կատար կանոնի այնր
պայմանի ․ և որ հասեալ են ասէ յո̃յ
իրաւանցն վերայ ․ եթէ որք զայսպի-
սիսն գործեն , և կամ կամակից են , ար-
ժանի են մահու ։ Որդ՝ ես ինձէն զիս
ինքն պարտ վարկայ կրկին հատուցման
կորստեան սատակման 'ի մահ դատա-
պարտութե՜ ։ Ով անխայեա՜ յիս ողորմու-
թե՜ , բարեգութ , կենդանի , հզօր ,
կամարար , կարող , հնարաւոր , օրհ-
նեալ յաւիտեանս , ամէն ։

՚Նորին հանգոյն · Սրգրանոյ անձին, յաղագս տօ-
նծայէն պարգևաց աղաշնորհ լինելոյ :

## ԲԱՆ · ԽՕ :

Որդ՝ վրիպեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ դժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ · արածօղս զերամակս զազիրս վայրագասունս խողից արօտականաց գարշունեն մեղաց · նախատ վարձկանութեց : Հովիւս տածողական զհօրանս ուլուցն ամայաբնակաց 'ի վրանս հովուացն՝ ընդ երգոյն երգոց առխս առակին · որ ոչ իսկ ծանեայ զիս երբեք գիտել, թէ յո՞վ և յո՞յր պատկեր, և վա՞ն ո՞յր գոյացայ : Ահա 'ի յոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց ըստ ձևոյ հրեշտակի կառուցար իբր 'ի Թախիչ Թևոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայել : Ո՛վ յիմար, զիա՞րդ քեզէն կորացար յերկիր, զատեալս միշտ հոգացեալ դիպուածս · ընդ ցիռս անապատականս համարեցար : Իբր զձրագ բազմաբերանեան 'ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ գլխոյդ բոլորուն · զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի՛ օտարասցիս զա̃ծ

տե-

տեսանել, և ըմնացականացն իմաստասիրել. բանականութեն յարգանօք կրկին ձօխացար. զի զյաղթանակ բարեմասնութեն, որ առ քեզ եղեն, անարգել լեզուաւ խօսեցիս ։ Չեւինդ համամամբ յարմարութեան մատանցդ շառաւեղօք զգործնականացն տնօրինել զտնտեսութի, իբր կցորդ համայեղութ՟ ամենաբաշխ աջոյն տյ՟, ած՟ կոչեցար ։ Նորից հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ 'ի քեզ է՟ նոյին 'ի նոյն և պատշաճական մասունս չափոց ազդողականաց հինգ զգայութեց. զի մի և երևելիդ նիւթականութի քումդ տեսութե մնայդ դիտմամբ անդատ եղիցի. զի ոմանք ստուարք են և զօրաւորք. և այլք փոքունք են և պիտանիք. կեսք կարծրակերպք և ազդողականք. են և գողտրականք և պատուականագոյնք. դարձեալ կարևորք և պատկառելիք ։ Իսկ Թարգմանութիք սոցին տեսութե 'ի քեզ են նկարեալ իբր յարձանի անջնջականի անձն իմ եղկելի. ում զի և տարր ժամանակաց և շարունակ հետևման աւուրցն առ պսակ ամին. իբր կանոնաւրէիք սահմանեալ մասամբքդ անսխալ և անայլայլելի պահեսցի ։ Դարձեալ այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապե 'ի մի առ եկեղեցի,

քև խորհրդածի . իբր զի առանց բնաւից զուգամամանութեն կապակցել ընդ հաւանականաւ զվէհն ը̄ փոքուն, մնացեալ է հաստատածոյն անարատութի յանուն քնի ժողովելոցն . ոչ 'ի հատուածս և 'ի նուաղութի միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոցս 'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմուե մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութի պատկերին յանարգ փոփոխութի ։ Այլ արդ՝ այսպիսեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակերտութբ եղական պատկեր ոյ՝ կշտամբեալ խոսյաւ ոգի իմ դերի ։ Այլ թէպէտ յառաջին նմանութէն կողոպտեալ գտար պատուիրանին յանցաւորութբ 'ի դրախտին կենաց . այլ աւազանին լուսազարդ շնորհին զհոգւոյն փչումն առեալ, և նմանութի ես կերպարանին ։ Այլ արդ՝ ընդէր կորուսեր ըզփառսն երկնաւորս՝ իբր նախաստեղծն երբեմն զվիճակն երկրաւոր յադին դարաստանի ։ Ընդէր փակեցեր քեզէն քեզ զերկինն, և զվերելիցն դուռն աղխեցեր ։ Ընդէր խառնեցեր ը̄ ջրոյն մաքրութե զախտ արտասուացդ տարժանութե ։ Ընդէր զլուացեալ զձորձ վերարկուին դարշելի գործովք զաղբացուցեր ։ Զիմ զեղեալ հանդերձին մեղաց պատմու-

ճան

ճան անապականն վարուք քեզ արկեր ։ Ընդէ՛ր զտանողացդ ոտից սրբուն ճանապարհաւն ժանդից աղտեղէր ։ Ընդէ՛ր կրկնեցեր իրաւագատին զուխտազանցուն հին պատուիրանին ։ Ընդէ՛ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց՝ իբր զադամ 'ի ծառոյն կենաց ։ Ընդէ՛ր նենգեցեր քեզէն քո կամաւ զանստուե՛ր յուսոյն յարակայութե՛ն ։ Ընդէ՛ր պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպատեցեր ։ Ընդէ՛ր զինեցար ընդդէմ քոյ ներհակ, ո՛վ ընդունարան խելագարութե՛ ։ Ընդէ՛ր որսացար 'ի ծուղակ մահու, թողեալ զարահետն փառահուն ։ Ընդէ՛ր կարթիւ պատրանաց անծար հաղորդդ մարմնոյ կենդանարարին ։ Ո՛վ վերստին յուսացեալ 'ի նա՝ կարդա՛նիմ ․ ապաւէն և լոյս ․ քաւիչ ․ նորոգիչ ․ փրկիչ ․ կեցուցիչ, և կենդանարար ․ ողորմած ․ խնամող ․ մարդասէր ․ և անոխակալ ․ բազմագութ ․ օրհնեալ յաւիտեանս, ամէն ։

Սորին հաճոյ է։ Հայցուած Բողոքեան պար-
տէաց անձին, խնդրելով զներումն պարտեաց ըն-
կերին։ Միանգամայն և ստգտանք անձին, որ
որոտացաւ յորոգայթ չարին՝ ոչ ՚ի մահուան, և ոչ
՚ի կենցաղոյս հայեցեալ վաղանց։

## ԲԱՆ. ԾԱ.

*Աւա՛ն զի սլացեալ ոգւոյս թեւօք ՚ի թի՞ս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի ՚ի կշիռս իմանալեացս մտաց, ո՛չ գտի զոք համեմատ ինձ պարտաւոր. և առ այս զգաւթեան սաղմոսին զբանն ՚ի յերգ ինձ առի դառն կշտամբութ գաւազանաւոր գործավար։ Զի յարեցից ըն իս ՚ի չարիս հաւասարել յանօրէնութիս։ Եւ քանզի այս ՟Է սմին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ, առ այսր խրատուն գրեմ, ինձ միայնոյ զեղծանիլ խոստառ, քան իմոյս բանիս բաղմանց տարագրել. Թերևս սովիմք առ այսու արդեօք և ինձ շնորհեսցես շնորհողիս զպարտիս իմոյն։ Եւ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական ՚ի յայսմ և ՚ի սոյն, և ՚ի ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից գովեալ Թագաւոր երկնաւոր քո, եթէ ոչ զառ ՚ի յինէն ա-*

*նի.*

նիծեալսն օրհնել մաղթեմ. զկապեալսն
արձակել. աղատել զգատապարտեալսն.
բարեգործել զնզովեալսն. պսակել
զթշնամանեալսն. սփոփել զտրտմե-
ցեալսն. դարմանել զխորտակեալսն.
խնամել զսարտուցեալսն. պատսպա-
րել զնենգեալսն. զվիրաւորեալսն 'ի
մարմին՝ յոգի բժշկել։ Եթէ օրհնուէ
բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ
եթէ անիծիւք, մի՛ հայեսցիս ը̃ունել
գթած։ Այս տառապեալս ամենաթ-
շուառ 'ի վերջին սպառուորութե մաղ-
թանաց այսր մատենի 'ի բովանդակ
մտաց շնորհեսցի իմոցն՝ փակեալ առ 'ի
քէն զանիծիցն գժնդակ ըղձիցն չարա-
շուք ձայն. և գժնէից նենգողացն իմոց
ը̃ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտուէ ար-
գահատեսցի. վ̃ որոց և ծունր պաղա-
տանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա
յայցելեալ առաւել ողորմեսցիս ըստ
քոյդ մեծութե գովեալ խնամակալ,
կեանքդ մահացուցիս, հզօրդ տկարիս,
ամենակարդ վարանելոյս, իմաստունդ
աղխւր յիմարիս և թմբրեցելոյս. Բան-
զի յաւէտ սխալեալ անկայ իբրև զաղ-
ղակ մթայլին ոչ ընդելական 'ի հաղրս
մահու անդադարապէս. չիմացայ զկո-
րուստն. չգիտացի զորոգայթն. չտեսի
զըմբռնօղ որսոյն ծածուկ մեքենայս.

չկարծեցի զխաբուսն կերպարանաց կեղծաւոր վարմին: ընկատեցի զգայթաղութիւն շուրջանակի. չշօշափեցի զպատանդիչ զցանցարկ կարթին. ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել զա͞ սաղմոսողին: Քանզի և ոչ իմաստակի ուսմունս արտաքնոյ բարուց թուեցաւ չար ասել զմահ, առ չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ. քանզի իբր զանզգայ պաճարս անասնոց մեռանիմք, և ոչ զարհուրիմք, կորնչիմք, և ոչ հիանամք. թաղեցեալ լինիմք, և ոչ խոնարհիմք. տարագրիմք, և ոչ տագնապիմք. եղծանիմք, և ոչ զղջանամք. մաշիմք, և ոչ մռաւեմք. պակասիմք, և ոչ պատրաստիմք. դնամք, և ոչ զգուշանամք. գերիմք, և ոչ ևս զգամք: Իսկ հանգիստ ասել երջանկին Յոբայ զվախճան մարդոյ, և ես խոստովանիմ զայն ը͞ սրբոյն, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան մահացու գործոց ըստանձնեալ: Մանաւանդ զի որոգայթն գաղտնի, և հնարադիրն աներևակի. տարր ժամանակիս յանէից, անցեալն անյայտ, և ապառնին կարծողական. ես անհամբեր, և բնութիւն թերահաւատ. ոտք անհաստատք, և միտք ցնդեալք. կիրք հարկաւորք, և բարք անժուժկալք. մարմին մեղսամակարդ,

և

և յօժարութն երկրասէր · դիմամարտու-
թն անկակից, և խառնութն ներհակա-
կան · բնակութն կաւեղէն, և անձրևք
ուժգնակիք · կարիք անթուելիք, և պա-
տահարք ամենադրաւք · միտք չարա-
խնամք, և տենչմունք բարխատեայք ·
կեանք առօրեայք, և զմքաղք սակաւա-
ւորք · խաբմունք յիմարութե, և խաղա-
լիք տղայականք · աշխատութիւնք ընդու-
նայնք, և վայելմունք երազականք ·
համբարք ոչնչից, և պահեստք հողմոց ·
նմանութիւնք ստուերաց, և կերպարանք
ծիծաղելիք ։ Վ,անզի իբրև եկն եհաս
պատուիրանն ա͞ծ պօղոսեան բանին, ան-
պատրաստ գտեալ զիս յինքեան, մեղքն
կենդանացան յանդիմանեալ յարդա-
րութենէն, և ես մահացայ կենացն · և
կենդանացայ կորստեանն ։ Դողացան
ոտարք չարին գումարք զստացուած-
պոտիս իմաստից՝ ա͞ծ գրոյն կանխաբա-
նութե · որով եկն եհաս իսկոյն աստա-
նօր իմաստութե յնձ նուաճանել ա͞ծ ա-
ռաքողին · և առաւելուլ ոչ բարւոյ ցան-
կութի ։ Մէ յառեցի զակն ոգւոյս 'ի
գլուխն իմ կենացս, որով ա͞ծ ուղիղն
հետևեցայց ։ Վ,անզի կամելով ուժգին
ընթանալ՝ ընկլայ սաստկապէս · յան-
չափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի · 'ի մեծա-
գոյնն ամբառնալ՝ աստուստ գլորեցայ -
յերկ-

յերկնային ուղւոյն՝ անդնդոց մատնե-ցայ · 'ի զգուշանալն առաւել՝ յաւէտ վնասեցայ · յանարատն պահել՝ մանր խորտակեցայ · կարծելով ընդ ահեակն մտցել՝ յաջն գթեցի · 'ի զերկրորդն խու-զել՝ զնախնին կորուսի · 'ի խնդիր սա-կաւուն՝ 'ի կարեւորացն զրկեցայ · 'ի յուխտին պահել՝ դաշինն դժրեցի · առ-սովորութե՟ն կալել՝ կորուսիչս գտի · 'ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ ։ Ո՜ որ ես ինքն ինձէն ստեղ-ծեալ՝ չարաչար դատախազ անձին կար-գեցի ։ Յորոց փրկել զմատնեալ դերիս դու միայն զօրեսցես կենաց մատուցեալ ընծայեալս մահու զհոգիս · զի դու միայն տ՟ր յա՟ ճանաչիս բարերար · ան-սահման փառօք ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ յաւիտեանս յաւիտե-նից , ամէն ։

'Նորին հանգոյն · Դարձեալ ամբաստանութե՟ և ապաշաւանք անձին , յաղագս յանցուածոց , մաղ-թանօք քաւութե՟ ։

## ԲԱՆ · ԾԸ ։

Լոկ զառիթօն մահու դիպուածս դժոխարմատ ծառոյս դառնութե՟ պտուղք · ընտանիք թշնամիք · հարա-

զատք

ղատք հակառակք · և որդիք դաւաճա-
նողք, ստորագրեցելովք մասամբքդ նշա-
նակեցից · գրեալ յանուանէ · որ են
այսոքիկ ։ Սիրտս նանրախորհուրդ · բե-
րանս չարախօս · աչքս յայրատատես ·
ականջս վրիպալուր · ձեռնս մահաձիգ ·
երիկամունքս անփորձ · ոտնս մոլորաշա-
ւիղ · ընթացքս աներկիւղ · հետք խո-
տորնակ · շունչք ծխախառն · գնացք
խաւարային · գոյն լերդի վիմական ։
Խորհուրդ ծորեալ · կամք անկայուն ·
չար անփոփոխ · բարեմասնութ՟ի սասա-
նեալ · անձն տարագիր · աւանդ վաճա-
ռեալ ։ Պաղան վիրաւոր · թռչուն նե-
տահար · փախստական քարայլեժ ·
ըմբռնեցեալ վնասապարտ · աւազակ
ծովական · զինուոր նենգաւոր · մար-
տիկ անպատրաստ · սպառազէն ան-
ժուժկալ · մշակ հեղգացեալ ։ Աղօ-
թական անխրախոյս · բեմական ստոր-
նաքարշ · քահանայ անկնդրուկ · օրի-
նական աննուէր · դպիր կշտամբեալ ։
Իմաստակ խեղագար · ճարտասան ան-
ճոռնի · կերպ անպատկառ · դէմք ան-
ամօթ · երեսք լպրշեալ · գոյն անհամ-
բոյր · տիպ տմարդի · դէղ ծանակեալ ։
Խորտիկ խանդարեալ · ճաշակ գարշե-
ցեալ · այգի գաղձնաւոր · որթ որդնա-
հար · պարտէզ փշաբեր · հասկ ուտաճա-
հալ ·

հալ. մեղր 'ի միջանց ճարակեալ. ան-
պատսպար անկեալ: Անապարծ յուսա-
հատ. անհամոզելի նզով. անհաշտա-
կան բաժանեալ. ունայնաբան շաղակ-
րատ. պաճարամիտ գոռոզ. անատնօրէն
ապիրատ. դժոխային ագահ. աներա-
սան յանդուգն: Ո՛լերգնութի անմտ.
ձեռնածուի սպանող. տատասկայան
երկրագործ. երջանկութի եղկելի. մե-
ծութի վատթարեալ. վայելչուի անշը-
քեալ. կարողուի տկարացեալ. բարձ-
րութի խոնարհեալ. փառաւորութի
ընդոտնեալ. պատուիրանազանցութի
յարակայ. սխալանք ինքնակամ: Ա՛ն-
տակարար կամակոր. խորհրդակից նեն-
գաւոր. բարեկամ հատուածեալ. հա-
զարապետ գողամիտ. մերձաւոր կծծի.
բաշխող ժլատ. վերատեսուչ կարկամ:
Աղի անախտակիր. իղձք անսէր. բարք
ատեցող. աղիք անգթականք. գնացք
անխոհեմ. աներեւոյթք փոսեալք. ծա-
ծուկք անիծեալք. դիպուածք թշնա-
մանեալք: Վաճառական վատնիչ. շա-
հարար շռայտեալ. պաշտօնեայ ար-
բեցող. գանձուց ոստիկան երկմիտ.
պատգամաւոր բանսարկու. դռնապան
քնէած: Աղքատ հպարտ. մեծատուն
ժխտող: Դիւանապետ անօրէն. պա-
հապան մատնիչ. բնակակից չարախօս.

սուր

սուրհանդակ անժամման . Թղթաբեր
պարտաւոր . առաքեալ խռովարար .
միջնորդ անիմաստ : Արքայ արտալած .
Թագաւոր Թարմատար . կայսր ոգե-
կործան . իշխան տիրադաւ . զօրավար
զրկող . դատաւոր ակնառու . ռամիկ
ինքնագործ : Նախատողի ծաղր . սի-
րելոյ աշխար . բանագրի դարով . յան-
դիմանչի դատախազութի : Քանզի և
՚ի վեհագունից կոչմանց էր ուրեք ա-
գեօք՝ զի էի . իսկ ՚ի վատթարականայց-
մասանց եկն երբեմն եհաս՝ զի եղէ :
Արդ՝ այսքան վնասակարութիւնք խարդա-
խուէց յաճախագունից . յորոց յոմանց
խաբեցայ իբրև զխմար . և յոմանց տի-
րեցայ իբրև զտկար՝ կամաւ մատնեալ
զիս ինքն մահու : Արդ՝ զո՛րս ՚ի վերա-
դրելոցդ մասանց՝ քեզ ատելեաց , և իմ
՚կորուսչաց ՚ի սպաս պաշտաման քեզ ըն-
ծայեցից . զո՛րպիսիս ապականութ՟ պա
րագրեալս ամենամրդ քոյ մեծութե՟
հանդէպ կացուցից : Աւ կամ որքանեօք
երկայնմտութ՟ք համբերեսցես այսքա-
նեաց պարտուց . որքան ներես . ոչ
լռեսցես . զիա՛րդ իսկ անսայցես . ի՛բր
ոչ մատնեսցես հարուածոց գանից զար-
ժանիս սատակման մահու : Արդ՝ այսո-
ցիկ աննշոյլ մթութեց հոգւոյ խաւա-
րի ողորմութ՟ լուսոյ քոյ պատահես-

ցես

ցես բժշկել, քաւել, և կենդանագործել՝ զօրեղութե̃ն անվթարելի, և քեզ փառք յա̃մի, ամ̃ն ։

"Աղօթքն հաջողէ · Ա․ծապատանութբ և ապաւինանց անձին, յաղագս յողդողդ լինելոյ 'ի բարիս · և յետ զղջանալոյն 'ի մեղաց՝ անդրէն 'ի նոյնս գլո-րելոյ ։

## ԲԱ՛Ն · ԺԱ ·

Այլ ես անպիտանս յա̃մի, և որքան բան զօրէ՝ պարսաւեալս · որ մինչ-դեռ արթունս եմ, նիրհեմ · մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ · 'ի բարեպաշ-տելս իմում՝ գայթագղիմ · մինչդեռ աղօթեմն՝ և վրիպիմ · 'ի յընթանալս ի-մում՝ և կասիմ · յարգարանալս իմ և մեղանչեմ · 'ի խաղաղանալս իմում՝ ամբոխիմ ։ Մինչդեռ արշաւեմն՝ առ 'ի յետոյան հակամիտեմ · 'ի չուելն ի-մում ը̃ կրունկն դառնամ ։ Ընդ լու-սոյն մասին և խաւար յարեմ · ը̃ քաղց-րութե̃ն ճաշակ օշինդր խառնեմ · ընդ կուղս բարեացն չարիս հիւսեմ · ընդ կանգնելն և կրկին գլորիմ · ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ · ասեմ, և ոչ առնեմ · խոստանամ, և ոչ կատարեմ · ուխտեմ, և ոչ վճարեմ · կարկառեմ, և անդրէն

ամ

ամփոփեմ. ցուցանեմ, և ոչ ընծայեմ. մերձեցուցանեմ, և ոչ մատուցանեմ. 'ի ձարակել խոցուածոյս անդրէն վիրաւորիմ. 'ի հաշտեցուցանելն մերստին խռովեմ: Օ՜ւր հանդիսանամ, և ի-բաւամիք պարտաւորիմ. գրիմ, և իսկոյն եղծանիմ. նաւեմ, և 'ի գիծն թուլանամ. սկսանիմ, և 'ի հանգիստն ոչ ժամանեմ: Կարգիմ, և դարձեալ սասանիմ. լնանիմ, և կրկին հեղում. շարունակիմ աստ, և անդ 'ի ստորևս հոսիմ. թարգիմ և անդէն տոչորիմ: Հիմն արկանեմ, և ոչ գլխաւորեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վատնեմ. դոյզն գանձեմ, և անթիւս սպառեմ: Օ՜այլս խրատեմ, և ես ինքն անփորձ եմ. միշտ ուսանիմ, և երբէք 'ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանեմ: Օ՜չիքեալ չարիմն նոյնչափ արծարծեմ. սուղ ինչ քաջալերիմ, և առաւելապէս լքանիմ. լարիմ, և իսկ և իսկ առ նմին մեղկիմ. զայս կարկատեմ, և զայն պատառեմ. խլեմ զեղիճն, և տատասկ տնկեմ: Ընդ ամբառնալն և այսրէն թերիմ. մտանեմ 'ի բոյնն աղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. գամ սակաւ մի սպիտակ, և սևանամ դառնամ բնաւին սևացեալ: Նսեմ զիս քեզ դաւանել, և սպանողին նուիրիմ. Ը՜ յան-

դի-

ջրեալ, թեւոգրութեան օձին հետեւիմ. արխանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ. զծանրութի աւուրն բառնամ, և 'ի ժամ վարձուն անմասն եղանեմ. 'ի բացուստ ձայնումն խօսիմ, և 'ի պատասխանատուութեն պահու պապանձեալ կարկիմ. 'ի յետս արևուն հարուստ երևիմ, և ը̃ երեկս ունայն գեղերիմ. 'Ի յաթոռս ծերոց բազմեալ, և խելայեղից կցորդիմ. ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհուրեալ զարթնում. զանգատանս կամացս չարաչարս հերկեմ. ի փոյթ խնամով 'ի չարիս. մի՛շտ անաւակ որդիս. անդարձ տարագրեալս. անզղջական զաււածեալս. անմխիթար տրտմեալս. ինքնագրաւ գերեալս. մահու և ապականութեն ծառայեալս. անողորմելի տանջեալս. անփրկելի մատնեցեալս. անպատուհասելի հատուածեալս. անարծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խորտակեալս. անհանդերձելի կործանեալս. Այլ եթէ պարտ է զսատակին սատանօր սակս անօրինեալս անձին նախատինս. ահա գրեմ, գրեմ, և ո՛չ անխայեմ, 'ի խաւի՞ս նիւթեալ գեհենին. Աստուածածն նախանձու նորայս ադամիս երկնայնոյ, ոչ և կայեննն առաջին հնոյն և հողեղինին. որ ունիմ զընաւն աստուած 'ի յանձին զնշանակ ամբաս-

չքնաղ, թեւադրութե՛ն օձին հետեւիմ․
արիանամ զօրապէս, և վատթարագոյնս
ընկրկիմ․ զծանրութի՛ աւուրն բառնամ,
և 'ի ժամ վարձուն անմասն ելանեմ․
'ի բացուստ Ձեռումս խօսիմ, և 'ի պա-
տասխանատուութե՛ն պահու պապան-
ձեալ կարկիմ․ 'ի յելս արեւուն հարուստ
երեւիմ, և ը̅ երեկս ունայն գեղերիմ․
Ի յաթոռս ծերոց բազմեալ, և խելայե-
ղից կցորդիմ․ ննջեմ խեթի՛ն, և արհա-
լօք զարհուրեալ զարթնում․ զանդա-
տանս կամացս չարաչարս հերկեմ․ Փոյթ
խնամով 'ի չարիս․ միշտ անառակ որդիս․
անդարձ տարագրեալս․ անզղջական զա-
ւածեալս․ անմխիթար տրտմեալս․ ինք-
նագրաւ գերեալս․ մահու և ապակա-
նութե՛ն ծառայեալս․ անողոքելի տան-
ջեալս․ անփրկելի մատնեցեալս․ ան-
պատուաստելի հատուածեալս․ անար-
ծարծելի շիջուցեալս․ անկազդուրելի
խորտակեալս․ անհանդերձելի կործա-
նեալս ։ Այլ եթէ պարտ է զսաստիկն
աստանօր ասել անօրինեալս անձին նա-
խատինս․ ահա գրեմ, գրեմ, և ոչ ան-
խայեմ, 'ի խուփս նկունթեալ գեհենին,
Ստացուածս նախանձու նորայս Ադա-
մայ երկնայնոյ, որպ̅ և կայենն առաջին
հնոյն և հողեղինին․ որ ունիմ զբնաւն
աստուստ 'ի յանձին զնշանակ ամբաս-

տանութեան , ոչ զձնչոյս տուրևառուն , այլ զբանիցս կշտամբութիւն ։ Դու արդ՝ ուր իցեն փրկութիւնքն . ուր սկզբնահայրն հաւատոյ 'ի յուսահատութենէն վայրի զանգթութենէն իմ չարիս կրկնէ . մեծն Մարգարէից քարամբք բանից կոչկոճէ . արին թարեփառ աշտէին նիզակաւ 'ի մահ սատակէ . պատկեր ձշմարտին է̅ աքարու համայնիւ ընդէ . ա̅ծարեալն վեհից յարագողայն վրիժուց մատնէ . Մարգարէածին տեսանողն ընդ ամաղէկացւոյն առաջի տ̅ն սպանանէ . Նախանձաւորն ա̅յ երկնատեղաց բոցովն վատնէ . բատուներին լրումն, և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտրութ̅ հօսէ . պետն առաքելոցն է̅ սափիրայի 'ի կենաց զրաւէ . զարմանալին քննութ̅ հոգւոյն բուրումն ինձ մահու ընդ կենացն քարոզխառնէ ։ Արդ՝ անաչառք և ինձ՝ կաճառք երջանկացն , և ուժգնութ̅ հրամանի վերնոյն արի սպառաղէնք . ընդ հրեշտակացն և մարդիկ . է̅ տիեզերաց երկրի և տարերք . է̅ անզգայից և շարժողականք . որովք դատեալ միշտ լինիմ տուժիւք ըլկանաց՝ յօրինակ և յիշատակ սոսկալեացն ապագայից . իբր հողմով փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վտահութի միայ անկայուն 'ի հաստատութենց ։ Ո՛ որ եթէ ոք խմա-

տութ̅

տուժ 'ի քննին առեալ խուզեսցէ զկու-
ղակացն բազմատեսիլ զանազանութի,
զմանունս փոքունս ընդ մեծամեծացն
դասեալ, որ առանց թուոյ և քանակութե
համարոյ թինդս առեալ անբաւ երա-
մոց, եռան զեռան սլանան 'ի մարմինս
ծովու, վկայեսցէ, և հաստատեսցէ
ճշմարիտ լինել զասացելոցս բանագրու-
թի ։ Այլ դու ինքն օրհնաբանեալ ան-
մահ թագաւոր՝ բարի երկնաւոր մար-
դասէր քս, այ կենդանւոյ միածին որ-
դի, հզօր, բարձրեալ, անքննելին, ան-
ճառ, քաւիչ, ահաւոր ։ սաստեա՛ 'ի
ձմեռն ամբոխեալ ալեաց օդւոյս ծփա-
նաց ։ արձանացո՛ զծարաւս մոլեգին
շարժման սրտիս խռովութե ։ ընդունեա՛
'ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման
ցցեալ մտացս վայրագութի ։ Լողիցէ
խաղաղութի հրամանաւ մեծիդ ամենա-
վարան բքոյս սասանման ։ սատակեա՛
խափանեա՛ զբազմագլխեան անդամս
ուրուականս գազանեաց ամօթոյս երկ-
բակենցաղս հինից ։ Գրեսցես աղօթս
մտամտոյցս զայս նորընծայ տառ ողոր-
մագերս թախծալին ձայնի ողբերգա-
կութե այսր մատենի ։ Հա՛ն 'ի խորոց
մահուս անդնդոց չքնաղ արբեցեալ ըն
մարգարէին փրկելոյ ։ ընկա՛լ զխոստովա-
նութի անձնադատ բանիս 'ի հոտ անու-

շից · շնորհեա՛ մխիթար դառնութե՛ սրտայ ուժգին հեծութե՛ յուսահատելոյս · և քեզ է՛ հօր հոգւովդ սրբով փառք, պա_տիւ, և իշխանութիւն յաւիտեանս, ամէն ։

'Լուսէն հնգշբ · Յորդորակ առ աղօթաւորս, ըստ պարտ է մեղաւորի ձայն զա̄ծ ոչ պարգևաւոր զանձն համարել ։

## ԲԱՆ · ԺԲ ·

Այլ ահա ձեզ ասեմ ո՛վ եկեղեցիք միանձանց, և աշակերտութիւնք կրօ_նաւորանաց · որք մերկամարմին մա_տանցդ ձեռօք առ ակնկալութի յուսոյն սպարդեաց բարեացն անբաւից ա̄ն զի_նուորեալք · որոց զայս սեղան հանդեր_ձանաց խորտկաց բանից ընծայեցուցի ։ Ընկալարուք զայս աւանդութի խոստո_վանութե 'ի շինուած փրկութե հոգւոյ ։ Օ՝աներուք սովիմք զմարմնոյս պար_տութի · յիշեցէք զմարգարէականն է՛ առաքելականին առեալ մեզ 'ի խրատ · զի մի՛ պարծեսցի ա̄մ մարմին առաջի ա̄յ, և զօրոք է արդարն, և ոչ մի ։ Օ տէ_րունականն մի՛ մոռանայք · 'ի կատա_րածն իսկ պատուիրանին գոգջի՛ք զձեզ ծառայս անպիտանս · մի՛ եղիցի լինել ձեզ

ձեզ որսք խաբողին. զգուշացարուք և գրոյն, թէ կերակուրք նո՛ր ընտիրքն ։ Վասնզի և ես իսկ, որ զայս նոճաղուճ մատնաւոր պտղոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ստդր- տանք բևր բամբասանաց անբժշկական մեղանաց, 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի ապառումն ծննդոց նորա կա- մայականն յանձնառութ հաստեցի եդի զիս ամենայնիւք պարտական չարեաց ։ Լոճայյումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաձեցայ. 'ի յասելն նո՛ր անյարմարա- պէս առ այն, որոյ առաջի ոչ է արդա- րանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբէք ընացայ. ոչ պոռնկեցայ. և ոչ զաշխար- հիս ինչ համբուրեցի ձաշակս մահու ։ Եւ ոչ ընդհատ ինչ յանօրէնութէ ։ Թողցէ նմա որ ած զայսոսիկ, թէև Ճշմարտիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց, 'ի յասել զանյար- մարսն 'ի դիմաց ժողովրդեանն խորայե- լի բանիւ զաքարիայ, օրհնեալ որ, և մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան ։ Բայց ես քանզի գիտողին ոյ մատնեալ եմ դատաստանի. որ զկիր- աներևութիցն մոայ 'ի կշիռս եդեալ համարի դատել զիս նոքօք ամենիրաւ հատուցմամբք. Ոչ կերպարանեցայց տեսողին. ոչ կեղծաւորեցայց քննողին.

ո՛չ ատեցի զո՛չ գործեցեալսն նկատողին. ո՛չ խաբէութեան ընդ միտ լինչ մտոլից մեծին. ո՛չ 'ի տեսիլ բարեաց ցոփութեան զչարս քողարկեցի. ո՛չ 'ի պատկեր ընտանի ղապիկարս երբեք յարդեցի. ո՛չ խենեչեցայց 'ի զարդ օտարոտի. ո՛չ պճնեցայց այլով պայծառութեամբ. ո՛չ պաճուճանս յարմարեցի տգեղութեանս դեղոյ։ Ո՛չ ոք մեղաւոր իբրև զիս. ո՛չ ոք անօրէն. ո՛չ ոք ամբարիշտ. ո՛չ ոք անիրաւ. ո՛չ ոք չարագործ. ո՛չ ոք վրիպեալ. ո՛չ ոք սխալեալ. ո՛չ ոք մոլեգնեալ. ո՛չ ոք խարդախեալ. ո՛չ ոք շաղախեալ՝ ո՛չ ոք ամաչեցեալ. ո՛չ ոք դատապարտեալ. Ես միայն եմ, և այլ ո՛չ ոք. Ես ամենայնն, և յիս ամենեցուն։ Ո՛չ հեթանոսք, զի ո՛չ գիտէին. ո՛չ հրէայք, քանզի կուրացան. ո՛չ տգէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից։ Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգօլեստն տառծ եղծի. բարի ասացայ՝ առ եղկուենն ժառանգութի. Տէր վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի այ. արդար դաւանեցայ՝ իմ իրօք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին քն. յաւազանէ կոչեցայ որթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկութեան աւուր հսկող-

յոր-

յորջորջեցայ , բայց զգաստութն այժմ
կափուցի ։ Ահա դատաստան · ահա
յանդիմանութի · ահա նոր կշտամբանք ,
և հին դատապարտութի · ահա ամօթ դի֊
մաց , և տագնապ հոգւոյ · ահա խնդիր
փոքունց՝ և կշիռք մեծամեծաց ։ Այլ
դու միայն տէր իմ մարդասէր անոխա֊
կալ և երկայնամիտ՝ համարեսցիս մեղա
պարտս անձին իմ վերջին սրտաւորութ
աւուրն ահաւորի զայս կսկծեցուցա֊
նող ինքնաբանական նախատինս ։ Մի
լռեայց 'ի քէն զայսոսիկ գթած , փո֊
խանակ զի ես ինձէն անձինս գրեցի ։
Արդ՝ բարձցես և վերացուսցես զայս
պարտաւորութն կանոնիս իմ քեզ կատարե֊
լոյս տենչանօք հոգւոյս ։ Զան զնախա֊
տինս պատկառանաց խայտառակութս ·
ծածկեա՛ աջովդ կարողութե զտգեղ֊
տեսակ մարմնոյս մերկութեան · մատո՛
հանդստեան զթօպեալս ուժգին մե֊
ղայս բեռամբք · կարգեա՛ ինձ սահման
հետոյ բարուն առ ելս կենացդ · պա֊
հեա՛ յիշատակ ինձ ողորմութե , և զկնի
մահու կեանք ամենեին · օրհնեալ յեր֊
կինս , և գովեալ յերկրի · բարեբա֊
նեալ միշտ յամենայնի յաւիտեանս յա֊
ւիտենից , ամէն ։

ՙԻ խորէն հառաչէ · Ապաշխարողն զղջացելոյ՝ 'ի զօ-
րութեն ձեռն , հայցուածովք մեղաց թողութե · և
հաղթեաց չարին խորհրդանման ։

# ԲԱՆ. ԼԸ.

Եւ արդ՝ ես յետնեալս 'ի նախա-
դրութենէ արժանաւորաց՝ դրեալ
ինձէն ընդ պարտաւորսն պատժոց , հայ-
ցեմ զողորմութի ընդ ամենեցուն մաղթա-
նաց ։ Ընդ նկուն և անհամարձակս ·
ընդ տկարսն և փոքրկունս · ընդ ընկեցիկսն
և արհամարհեալս · ընդ տարագրեալսն
և առ քեզ դարձեալս · ընդ երկուացեալսն
և Ձչմարտեալս · ընդ կործանեալսն և յա-
րուցեալս · ընդ ընկճեալսն և հաստա-
տեալս · ընդ գլորեալսն և կանգնեցեալս ·
ընդ մերժեալսն և ընկալեալս · ընդ ատե-
ցեալսն և կոչեցեալս · ընդ աղշեալսն և
զգաստացեալս · ընդ անառակեալսն և
զապեալս · ընդ հեռացեալսն և մերձե-
ցեալս · ընդ հերքեալսն և սիրեցեալս · ընդ
պատկառեալսն և զուարթացեալսն · ընդ
ամաչեցեալսն և խնդամտեալս ։ Այլ
ես պատմեմ աստանօր դարձեալ ոչ
զմեղսն երուսաղէմի ըստ մարգարէին
հրամանատուութեն , որ առ ժողովուրդն
նախկի · և կի՛ տանն յակոբու զանօրէ-
նու-

նուէրս նր՟ . այլ իմոյս ժամանեցից յայտ-
նութե . քանզի աւաղ ը՟ աղէտս մահու
յարելով ը՟ մարգարէին , յանդիմանե-
ցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ բառ
սաղմոսողին . որպէս զի յանձնառական
յայսմ համայնապատում խոստովանու-
թե ոչ կարօտացեալ կրկնակին , միան-
գամայն խապառ սրբեսցայց օրհնեալ հրա-
մանաւ էիդ : Նու արդ՝ կրկնելով ծունր
բարերարիդ քաղցրութե , տարածեալ
զանձն իմ առաջի , զ՚ի մահ գլորմանն
ցուցից կերպարան . որ ՚ի հող խոնար-
հեալ մածայ ը՟ երկրի , և ը՟ անցաւորս
այս կենցաղ կորստեան անասնական
գետնաքարշութե սողնոյ սահեցմամբ
կամօք բևեռեցայ : Այլ ՚ի քեզ տ՟ր յե-
ցեալ՝ իբր ՚ի հաստատուն կենաց գաւա-
զան՝՝ ՚ի յարմատոյն դաւթի ընծիւղեալ
մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ
ած՟ութիդ , կանգնեցայց անդրէն կի-
սայար՝ պատկառեալ ՚ի քոյդ երախտեաց
՚ի վայր կորացեալ դիմօք , աչք ՚ի բար-
ձունս յառեալ ողորմագին տեսութե ՚ի
քեզ մերձ ՚ի հեծութե . բնաւին ողոր-
մուլի , բոլորովին քաղցրունի , զլիճ լու-
սոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս
յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից :
Լուր ամենառատ աննուաղ երկայնմտու-
թե քոյ դառնացուցչիս , միայն դու ՚ի

յաւմ

յանմի սահման փրկութեան ։ Ո՜վ բոլորից ․ անձառ մեծութի ․ անբովանդակելի բնութի ․ անքննելի իսկութի ․ հզօր զօրութի ․ կարող բարերարութի ․ անպակաս լրութի ․ անձառ ժառանգութի ․ վայելչական վիճակ ․ առատ պատրաստութի ․ անստուեր իմաստութի ․ տենչալի տուրք ․ անձկալի ձիր ․ բաղձալի բերկրութի ․ անտխուր հանգիստ , անտարակոյս գիւտ ․ անկապուտ կեանք ․ անծախելի ստացուած ․ անփոխանորդելի բարձրութի ․ ամենարուեստ բժիշկ ․ անսասանելի հաստատութի ։ Պարծուցիչ մոլորելոց ․ գտիչ կորուսելոց ․ յոյս ապաւինելոց ․ լոյս խաւարելոց ․ քաւիչ մեղուցելոց ։ Ծածկարանդ փախուցելոց ․ անդորրիչ խռովեցելոց ․ փրկութիդ մնահացելոց ․ արձակիչդ կապելոց ․ ազատիչդ մատնելոց ․ պատսպարանդ սահեցելոց ․ վշտակիցդ գայթագղելոց ․ երկայնմտութի տարակուսելոց ։ Լուսոյ տեսակ ․ ցնծութե ցոյց ․ օրհնութե անձրև ․ հոգի երեսաց ․ զօրութի դիմաց ․ հովանի գլխոյ ․ շարժարան շրթանց ․ ազդումն բանի ․ կառավար անձին ․ բարձումն բազկի ․ ձգումն ձեռին ․ երասանակալդ սրտի ։ Ընտանի անուն ․ մերձաւոր ձայն ․ կցորդութի հարազատ ․ խնամածութի հայրենի ։ խոստովանեալ

ա

անուն • պաշտեցեալ պատկեր • անպա-
րագիր՝ ափդ • երկրպագեալ տէրութիւն •
բարեբանեալ յիշատակ • խնդութեան
մուտք • անվրէպ շաւիղ • փառաց դուռն •
Ճշմարտութեան Ճանապարհ • երկնաձեմ
սանդուղք ։ Նա այլ բազմութիւն բանից
գովեստից անհամար կարգաց՝ և տանց
անբաւից • զոր ոչ բերէ բերան երկրա-
ծին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և
ոչ կշռեն իղձք հողեղէնք ։ Ո քեզ
հայի իմ ակն տեսողի իծդ իմի • Նայեաց
'ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց
ծառայից, և թէ յաղօթխնեաց ոք աղա-
ւեսցէ ։ Նա ընկալ զցօղ ողբերգութեան
լալոյ արտասուաց աչացս ցանկասիրի
յանարատ սրս մարդեղութեան քոյ քս,
և օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն
յանցաւորի զառ քեզ դարձն և զդաւա-
նունի, և համբուրիւն շրթանցս առ Ճա-
շակ փրկութե կենացդ հաղորդութե հա-
մաշնչապէս զանքակ միութի • և զնոյն
գթութի նորին ողորմութե ընկալեալ 'ի
քեն բարերար, դրաւականեսցես զմեծ գ-
պարգև է փոքու հաւատոյս • և 'ի ձեռն
գթութե սիրոյ քոյ առ քո անձկալի ա-
նունդ խոստովանեալ ծառայիս՝ դարձ-
ցին ձմերունք հոգւոյն խստութե 'ի յոյ-
հանդարտութե • և մրրկին սաստկութի
'ի սիկ ախորժութեն • և կարծիք երկիւ-
ղին

զինն 'ի մեծ վստահութի̃ . և պատուհաս պատժոցն յերանութե̃ պատահումն . և վտանգք թախծանացն 'ի հոգևոր խրախճանութի̃ . և ալէկոծութի̃ ծփանացն 'ի խոր խաղաղութի̃ . և ղեկացն թևարկմունք յանքոյթ նաւահանգիստն . և բերք բեւանցս մեղաց փոխարկեցի 'ի թօշակ շնորհաց ։ Նա յայսքանեացս ամենից բիւրուց բարութեցս 'ի քեն եղելոց մեծացի անուն հզօրիդ լնկեալ և խոստովանեալ. ամաչեցէ բանսարկուն չարեաց հերքեալ և հալածեցեալ ։ Ունայնացին մուրհակք մեղացս . խզեցին խաղաղքն . որոշեցին որոգայթքն . կապտեցին կապանքն . վանեցի վիհն ։ վերացին մնասքն . պարսեցին պատրանքն . ջրեցին մեղքն . պատառեցին պարտիքն . խորտակեցի լուծն . քակտեցին քեղիքն ։ Նա ընդ մուայլ մթութե̃ չարեացն յանցանաց , և դիմացն բանակաց պաշարողաց՝ արև փառաց քոց ծամանեցէ , կեցուցանել փրկել և լուսաւորել յաջմէ և յահեկէ , 'ի դիմաց և 'ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ գարնայնոյ ը̃ ակնկալութե̃ սպասողացն քումդ երևման ։ Զի դու ես բարերար առ ամենեսին , և հնարաւոր են քեզ ա̃մք . և ամենեցուն զկեանս կամիս , և զփրկութին բաղձաս ։ Ո՜վ ամենա-

նապարգեւ ձեռն յոխ քնի , եւ առ իս դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ որբոյ բնակեալ միացեալ , եւ ոչ հեռացեալ յանձկութեն սրտէ սիրոյ սենեկիս . եւ անեղծական քո նկարագիր՝ նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչմանս ընդ իս պահեսցի՝ միջնորդեալ ընդ քեզ 'ի մատեան յաւիտեան կտակաւդ կենաց հոգւոյդ աւետեաց՝ երկնից յօրինողիդ : Եւ քեզ միայնոյ պատճառիդ , եւ միոյդ 'ի միոյ պատճառէ . եւ ունողիդ զպատճառ միոյ՝ երրեակ անձնաւորութեն եւ միոյ ա̃ծութենդ վայելեն փառք յերկնաւորացն վեհից , 'ի սրբոցն դասուց յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Նորին հսկողի . Աղօթք աղաւթենելոյ յա̃ծ 'ի հեծանդութեանս եւ 'ի վիշտս , հաղթելով փորձանաց ըստ աշխարհական առաջաքէն :

## ԻՄ՛Ն . ԽՐ .

Տէր ա̃ծ գթութեն . փրկութեն եւ սղորմութեն . քաւութեն եւ նորոգութեն . բժշկութեն եւ առողջութեն . լուսաւորութեն եւ կենդանութեն . յարութեն եւ անմահութեն : Ընծայեմ զիս յորժամ գայցես արքայութեամբ քո . ահաւոր . հզօր . բարեբար . եւ ա-

մե-

մենաստանըղձ կենդանի․ գովեալ․ ամե-
նակատար․ մերձ 'ի հեծութիւն համայն
եղելոց ։ Ընդ խաչեցելոյն է քեզ պա-
ղատիմ․ որ ոչ ըմբռնեալ մնաց քոյ, և ոչ
կապեցեալ․ ոչ կախեալ, և ոչ բևե-
ռեալ․ ոչ կոփեալ յանուն մեծիդ, և
ոչ անարգեալ․ ոչ լքեալ, և ոչ նչկա-
հեալ․ ոչ խորտակեալ, և ոչ մահացեալ․
և արքայութեան արդարոց մասին անձ-
կալեաց լուսոյ արժանի ցուցեալ իրա-
ւամբք ուխտի երդմնակամաւ ամենիցն
ազդեալ զանփոփոխութի բարեացն տուե-
լոյն, փառաւորեցեր առ յոյս փրկութե-
իսպառ լքելոյս․ օրհնեալ օրհնեալ, և
դարձեալ օրհնեալ․ և զիս ընկալեալ
նոյին հաւատովք, կանգնեա 'ի կործան-
մանէս բարերար․ բժշկեա 'ի հիւան-
դութեացս ախտից՝ ողորմած․ յեղերաց
մահուս դարձո զիս 'ի կեանս՝ կենդա-
նութի․ քո եմ և ես․ կեցո է̃ նմին՝ ա-
պաւինութի․ անձամբ մեռելոյս կեն-
դանական շունչ ընծայեցո․ յարութի․
կեանք․ անմահութի․ անպակաս բարու-
թի․ անսպառ շնորհ․ անփոփոխ ներո-
ղութի․ աջ ամենազօր․ ձեռն ամենիշ-
խան․ մատն ամենամերձ․ կամեայց տ̃ր,
և փրկեցայց․ ակնարկեա միայն գթու-
թբ և արդարացայց․ ասա բանիւ, և
վաղվաղակի անարատ դատայց․ մաքա-

ցից

ցեր զթիւս չարեացն . և անդստին հա-
մարձակեցայց . առատաձեռնեա՛, և այ-
դէն ՚ի քեզ ևեթ պատուհասեցայց . փա-
ռաւորեալդ յամի յաւիտեանս . ամէն ։

Նորին հոգւոյն . Մաղթէ աղաւթութեէ յանձ ՚ի վիշտս, և ՚ի նեղութեան . խոստովանեալ զանցսն տկարութեէ ։

## ԲԱՆ . ԾԹ .

Եւ արդ՝ յոմի առ ամ աննկալութի քո է ողորմութի սկզբնաւորեալդ աչաց տեսանելեաց, և սրտի խմաստից յա . քո է բարերարութի . կեանք և անմահութի . դարձ առ ի գթութ . և հանդերձեացես դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութ . զի առանց քոց կամաց ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ . և եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս . և եթէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետս Ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ ։ Ահա ոչ պարծիմ ամ իրօք նախատեալս . ոչ պանծամ դսրովեալս . ոչ խորոխտանամ լքեալս . ոչ մեծաբանեմ պարսպանձեալս . ոչ ըմբռստանամ ձաղեալս . ոչ երջանկանամ եղկելիս . ոչ արդարանամ

նամ ամբարիշտս . զի ոչ երբեք հարթ
ընթանայ երիւար առանց սանձակալի ,
և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց
ուղղչի . և ոչ արօր կշխա ինչ գործէ ա-
ռանց մաճակալի . և ոչ երկուորեակ
լծոցն 'ի ձահ ձեմեսցին առանց եզողի .
ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ . ոչ
աստեղք ցնդլին , և կամ գումարին ա-
ռանց ժամանակի . ոչ արեգակն փոխա-
բերեալ ուր շրջանակի՝ առանց տարրա-
կան օդոյ . և ոչ ես նոքօք հանդերձ ա-
ռանց բարեգործիդ հրամանաց ակնար-
կութե . զի դու միայն ես տուիչ կենաց
բանականաց , և խնամիչ կարգաց հո-
լովման արարածոց , և 'ի քեն է ինձ
փրկութի ՟ը սաղմոսողին . և դու ձայ-
նես բարբառ խնդալից աւետեաց հնչման
յականջս լսելութե ՟իմ հասակի . եկայք
'ի հանդիստ իմ բնութին աշխատեալք .
և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց : Իսկ
զինչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնա-
կի զաղրացայց . և կամ ո՞ր օգուտ 'ի ձա-
շակմանէն , եթէ գեհեննին մատնե-
ցայց . և կամ զիարդ յաբրահամ պար-
ծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին :
Որդիս դարձուէ հօր ամովհացւոյ , և
մօր քետացւոյ , կամ քանանացւոյ ըստ
մարգարէին , որ առ իս յանկաւոր ձայ-
նի . Խառանդս մերժելի եթովպացի ,

և ոչ սենեկին սաւսյի, զի տեսանողին
ուխս առածի . եղբայրս չամրնի , և
կամ գամիրայ . համբակս անլուծոց , և
անադելի՛ խակակութ պորտոյն խակու-
թե ասղայ և ողողիբայ , ըստ եզեկիելի
կրկնանախատն կշտամբութե : Այլ քան-
զի 'ի ծուխս բազմամլտանգս ալէտանջ
հողմոյ սաստկապէս զզուեալ ուժգին
ըկանոք խապառ տառնապամամբ 'ի ծո-
վին՝ փախեալ ընկեցեալ 'ի վտակն վայ-
րենական ողողիչ . առ որս զմատունս
ձեռացս այսր անդր տարաբերեալ, եթէ
'ի հասանաց բռնութեց դարնանազայր
գետոց արտաձգեալ յակամայ ընթացս
ողորմագին գլորման ջրակուլ ոգեսպառ
պղտորալբութե գաժանահոտ սկախառն
մոնմռարմատ խառնախռնի մահաբեր
երկամբք վանեալ . ըստ որոց յուզխեցն
հեղեղիցին հեղձուցեալ : Այսու առա-
կաւ և ես եղկելիս , խոսին՝ և ոչ խմա-
նամ . գոչեն , և ոչինչ լսեմ . բարբա-
ռին , և ոչ զարթնանամ . հնչեն , և ոչ
փոխադրիմ . փողեն , և ոչ գումարիմ .
վիրաւորիմ , և ոչ ես զգամ . կռոցն
գարշութե նմանեալ՝ թափուր յազգմա-
նե բարեաց իմաստից : Որդարև չար
առաւել յաւէտ խսկապէս քան զոր-
նակդ Աշմարտուխս ատելի և մեղադրե-
լի , և ատենին քնի արժանապէս մատ-

նելի ։ Աւ քանզի անդառնալի ուղղոյն յիշատակ աստուածոյ պարտեաց զայս կտակ թողլի, որոց ընթեռնուն, խնդրեմ բանիւ առ քեզ կարդալ հանապազօր- դուք ․ այս կացցէ սահման յանձնառա- կան խոստովանութեան մշտնջենաւոր ձայ- նարկու առաջի քո ամենակալդ ․ զոր գիրդ ի՛ մարմնոյս, և բանդ ի՛ հոգւոյս զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ ․ իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս 'ի յիմոյս ձայնէ, բարեգութ, մարդասէր, օրհնեալ յաւիտեանս ․

ամէն ։

՝Աորին հանգոյն ։ Ընտանք տպաւորութիւն յանդիման հաղորդաւորութեան ծրարին, որոյ ամենահնար շնորհու- թեան ոչ զխորանոյ առ յանդիմանդոյ ժամուն ։

## ԲԱՆ․ ՃԳ․

Արքայ երկնաւոր, տէր բոլորեցուն առ քեզ բան յիմմէ միշտ երկայ- նամիտ ․ տէր կենդանւոյ անքննելին որդի ։ Ահա անդ է ողորմելին խնկաւէտ, յորում հաստատ ակնկալութի վստահելոյն ․ անդ է բարեգործելին, յորում տեսութին ի- մաստից խաղաղանեցա ․ յայնմ ժամու է մարդասիրելին, յորում տկարութեն վտանգ պաշարեալ ոճրեաց ներքոյ և ար-

տրտաքոյ ։ Անդանօր է բժշկութիւն ած-
ային քոյ ձեռինդ, յորժամ ընաւ ան-
դամոցն տեղի ետ կենդանութեան․ այն
վայր է այցելութեան, յորում ելք հնարից
ոչ գոյ ։ Այն է քո մեծութիւն, յորժամ
զյուսահատութիւն մերն ողջացուցանես․
այն է հարազատ քումդ ազգակցութեան,
եթէ յանակնկալն ժամու արուեստա-
ւորեսցես փրկութիւն ։ Այն է հանդիսա-
րան քում յաղթանակի, եթէ զփա-
կեալն մուտս կենաց 'ի սպառումն շնչոյս
բացցես․ այն են քո շնորհք վայելչա-
կանք, եթէ զչարեացս իմոյ մոռացեալ
զբարեացդ քոյ յիշեսցես ։ Յայտ՝ես ա-
նոխակալ, եթէ ապախտաւորիս իմ ե-
րախտաւորացն խնամարկեսցես․ 'ի սո-
սին ծանեալ դիտացից, եթէ նայեցար
'ի նուէր բանիս նախնի գթութեանդ, ե-
թէ զամլորութիւն չարեացս բարձցես ։
Յաղագս այսորիկ հիւսին բանք, և ե-
զանակին նուագերգութիւնք․ յորժամ
մերն բարի չարն ծառայի զբարեգործացն
պարգևեսցէ ։ Որ մինչ իբրու ամբք մնա-
ցէ բանսի, նա յարքայական ապարանս
զնա հանգուսցէ․ մինչ հրաւիրեալ է 'ի
դուռս տղմոյ, նա 'ի բազմականս ամե-
նապատիկս գահուց զրգեցուցանիցէ ։
Մինչ բրելոյ զաչսն դիմեսցէ, նա 'ի
բարձրութեան երկնութեան հայեցուցանիցէ ։

մինչ ծայրատութեան մատանցն սպասէ ,
նա մատանի համարձակութեան մատուցա֊
նիցէ . մինչ հայր հարուածոց գանից ,
նա գթոց գիրկս արկանիցէ . մինչ պատ֊
րաստեալ յուսայ կորստեան , նա երևե֊
լի տեսողաց բազմաց առնիցէ . մինչ
ակն ունի սատակման մահու , նա ընդ֊
կենացն և փառս ընծայեցուսցէ . մինչ
համեմատ գլխոյն նայեսցի , նա զնոյն
պսակաւ պայծառացուցանիցէ ։ Այս
պտուղք ողորմութեան գթած սքանչելար֊
մատ քում շառաւիղաց . այս արդասիք
կենաց արարչականդ քոյ հրամանաց .
այս իղձք խորհրդոց խոստովանեալդ քո
տենչանաց . այս նշոյլք լուսոյ ամենա֊
փիւռ ճառագայթից . այս ախորժունք
ճաշակաց բարեբանեալդ քոյ քաղցրու֊
թեան ։ Քոյ միայնոյ են այսոքիկ Տէր . 'ի
քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին . ահա
զքոյդ յատուկ աղերս աղաչեմ օրհ֊
նեալ , 'ի քոյոց այտի պարգևեալ շնոր֊
հեա՛ . բա՛ց Տէր զգանձս քո բարիս՝ ըստ
աղերսանաց առակին ։ Մի՛ խառնեսցես
'ի համբարս բարեացդ քոց 'ի չարեացն
իմոց . մի՛ շտեմարանեսցես զատելիսն
քո , որ են ոխութիւնք և ցասմունք . ընդ֊
սիրելիսն քո , որ են գթութիւնք , և ողոր֊
մութիւնք . մի՛ պահեսցես 'ի ստացուածս
քո պաշտելիս զանախորժելիսն քո , որ
են

են մթութիւնք, և դաժանութիւնք. և զիմ ծնանելիքն, որ են մեղք և թշուառութիւնք: Ի՛ դրեսցես աջոյդ օրհնութե՛ 'ի մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոց անխծից, այլ զանհնարաւորն ինձ համարեալն. մեծացուցես կրկին առաւել զանուն քո տէր 'ի նոսին. ցուցանել կդոյն ինձ դիւրինս, և հեշտականագոյնս: Շատ են իմ պարտիքս, և անդր քան զթիւ. այլ ոչ այնքան հրաշալիք իբրև զքո զողորմութիդ. բազում են մեղանքս. այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներողութե՛. յանձախ են չարութիւնքս. այլ յաղթական են համայնից հզօր ամենակալ քոյդ մարդասիրութի. ինձ են անհամար իմոյս անձին բիծք. այլ քեզ յոյժ դիւրեալ են ի սահմանաւ: Ո՛չ են այնքան զօրաւորք առ կենդանութի զէնք մեղանաց պատկառեցելոյս պտղաբերութե. որքան յիշատակ մահու կենդանուոյդ առ փանուծն կործանողին բռնութե: Օ՛ ինչ ազդեսցէ փոքր խաւար աւուրդ տոյ. զխաւարդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ մեծիդ ճառագայթից. զխաւարդ համբարձցի կշռեացի ի խաչի քո կրից խակուի հեշտութե մարմնոյս տկարութե. զինչ երևեսցի յաչս ամենակալիդ քոյ առատութե՛ կոյտք մեղանաց ամ տխեղճերաց: Նա կոշտ

մի հողոյ դիւրափխրելի 'ի կարծրութէ̃
բախման վանեցեալ՝ իբր ղողղոջակ անձ-
րեւոյ բազմագեղ հոսմամբ քս կամացդ
չքացեալ պայթեալ անդատին . զի՛նչ
պիտոյ են քում զօրուէ̃դ ամենահնարդ
կարողուէ̃ ժամանակաց առաւելութի̃
առ յանցուածոց իմոց քաւութի̃ . ո՛չ
քթթել մի ական . ո՛չ խուն մի տեսութի̃
ածանցական . ո՛չ սակաւ մի նայեցուած
փայլական . ո՛չ կիսամասնեայ յամրութի̃ .
ո՛չ փութացելոց ոտից յեղեղուածս . ո՛չ
յելից բարձրութէ̃ միոյ կանգնոյ կաթի
ակն ունելոյ . ո՛չ գիծ մի չափոյ մատանց
հեռանեցելոյ . ո՛չ նշուլից արագութի̃ .
ո՛չ շնչոյ տարբերութի̃ . ո՛չինչ յայսմ
յանդորդոյ եւ յանտպատրական նմանուէ̃
անձեւ օրինակաց յաւէտ անկայից՝ այն-
քան առաժամայնք , կամ հարեւանցիք ,
որքան եղծմունք, ցնդմունք եւ հալմունք
մեղացս սառնամանեաց պահեստի՝
քումդ զօրութե̃ ա̃ծ ա̃մի տ̃ր յ̃ն ք̃ն որդի
անքննին կենդանւոյդ ա̃յ : Որ տաս
պարգեւես արեւ քաղցրութե̃ չարաց ընդ
բարիս . եւ անձրեւես երկաքանչիւրոցն
անաչառապէս . կշռես սահմանես իրա-
ւամբք եւ զխտանդս կրիցն հաւասարա-
բար : Որոց մեծ է հանդիսան առ ակն-
կալութի̃ պարգեւին . փոքր խթանաւ-
փորձութե̃ զսակաւուն պարտուցն առ-

տէն

տուն վճարես ։ Իսկ որք զերկիր ընտրե-
ցին, ներես ողորմութ՟բ, տալով և սոցա
դարձման ը՟ նոցա, մինչ առ քեզ դար-
ձին սպասես ։ Այլ քեզ փառք ամենա-
զօրիդ առ ամ՟ հրաշագործութ՟ն բա-
րեխնամող երկայնմտութ՟ն. օրհնեալ
յաւիտեանս. ամէն ։

Նորին հեղինակի, Աղօթք ապաշխարութե՟ն յանց՟, մաղթելով զօրացուցանել զմեզ յամ՟ գործս բարեաց ։

## ԲԱՆ. ՁԱ.

Իսկ արդ՝ մ՟ն զի արժանականն մեր
զուարթութ՟ն քեզ ննջումն իմն է
համարեալ. իսկ 'ի խոր թմբրութ՟ն լռելոյ
մն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթար-
թափ բացումն աչաց. ուղղեա՛ հոգւոյդ
քո իմաստութ՟բ զյաջողուած ձեռինս
գործոյ ը՟ հեծութ՟ն ձայնիս մաղթանաց.
զօրացո՛ տր՟ 'ի հանդէս բարի զինուորա-
կան արի վաստակոյ. Եւ ցո՛րդ ըր կարեացս
տկարութ՟ն. թեթեւս կացո՛ զաշխատութենս
այս սկզբանս. արագեա՛ մինչ կարող-
զյառաջադրեալ ձեռնակերտս. դիւրա-
ւորս ընթացո՛ 'ի յաւարտումն լրմանն ։
'Ի վախճան իբրև բերկրութ՟ զիս հասո՛.
ժամանն կացուսցես 'ի հանդիպումն յու-
սոյն.

սոյն ․ կցո՛րդ լեր ուղղոյն Ճանապարհիս
ընթացից ․ 'ի թուլիչս ամբարձման փու_
թացուցես յօգտակարն ․ Տ՟ր աջմէ իմ
լիցիս 'ի վտանգի ծանրութեն ․ ըձայն քո
լուր 'ի յանձկութեն պահու ․ ձեռամբ քո
կեցո՛ 'ի կորստեանն ժամու ․ մնասամբ
քո ազդեա՛ 'ի սահմանին անձկութե ․
հարթեա՛ զխտորոց ամենաչար խափա_
նանն ։ Հոգեղինին առաքմամբ Տ՟ն ամ_
բակումայ ինձ հնարեա՛ ․ բան ինձ շնոր_
հեա՛ 'ի յատենի բաղմութեն ․ իմաստու_
թի յիս տնկեա՛ 'ի հանդիպման քննու_
թե ։ Ամպով կամաց քոց հովանացի՛ր
հրաշապէս ․ հանդարտեցո՛ փայտի՛ւդ
կենաց զծավոռս մրրիկ ․ սանձեա՛ զաս_
տեաց կենցաղոյս պատկեր քոյին հրա_
մանաւդ ․ քանզի թէ սաստ ողորմութի
քո Տ՟ր կամեսցի, այս լուծութի կոհա_
կաց կարծր է ք՟ն զվէմ․ և թէ 'ի ցամա_
քի անտես առնիցես, իբր զանկայուն
սնդուսթի յատակիս 'ի ներքոյ սատի հո_
սեալ սահանի ։ Արդ՝ ընկա՛լ յս զպաղա_
տանացս ձեռնարկութի քեզ 'ի հաճութի ․
և արա՛ ինձ զամենակարծն գայթակ_
ղութի մեծ վստահութի ։ Որպ՟ 'ի ջրա_
հեղձոյց ամենակործանն դարու ․ որք
'ի հարթ տարածման դետնի առանց եր_
կիւղի յանհոգս կէին, յողորմութե՟դ ա_
նայի մնացեալ կորուսան ․ իսկ Տ՟ր հովա_
նա_

նաւոր մածուածով լաստիւն յոգնատա-
տան հիմանն հայթայթանօք՝ յանուն
գթածիդ յեցեալ պահեցան ։ Ընդ որս
և զաղաչօղս մշտատատան 'ի նաւահանգ-
գիստն խաղաղութե՛ մարդասիրապէս
ուղղեալ ապրեցո ․ վարձս 'ի քոյոցդ ընդ-
իս բերելով հոգևոր շահից ․ զատուցա-
բերս այս ստուարուն պարտուցս լցեալ
բանիդ առակաւ, 'ի քեզ տր անկայց
միացեալ խոստ անբաժանելի ․ օրհ-
նեալ յամի ։ Եւ կցորդելով այսմ մաղ-
թանաց հոգեղէնքն ամենամաքուրք Տէ
հոգեղինացն մարտիրոսաց որք ջրով և
հրով փորձեցան, և յերկից զերծմանն Տէ
մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թո-
ղին օգնութե՛, աղաչեն Տէ մեզ համա-
բանաբար զուգամասնութե՛ երկնից ե-
ղիցի ։

ᵃՍուրբն հոգւոյ ․ Ասօրեաց աղաւթիւն է 'ի զօրու-
թեն ջրի, մաքրելով աղտոտ յամ մեղաց մոտան-
ջի, կա տասել 'ի տեառնայն պատերազմաց,
զօրութե՛ քէնարար խաչին ։

## ԲԱՆ․ Գ․

Բարեբանեալ տէծ երկնաւոր ․ միայն
արարիչ ․ տր ամենակալ ․ մեծութե
ահեղ ․ գթութե օրհնաբանելի ․ ողոր-
մու

մութին խոստովանելի · բարերարութեն երկրպագելի · խնամակալուն պաշտելի · մարդասիրութին տօնելի · պահպանութին խնկելի · բարձրեալ անքննին · մերձաւոր կամարար · ապաւէն անկածելի · մխիթար սրտից · փարատիչ վշտաց · ապաքինիչ ցաւոց · սպառումն վհատութեց · բարձումն պարտեաց · փոխարկիչ կարեաց · կարդաւորիչ կրից · յարմարիչ բանից · սանձարկու լեզուի · շրջադրութին շնչոյ · կացուցիչ հագագի · ամփոփիչ խորհրդոց · կրթարան կամաց · արձանացուցիչ յուշմանց · հանդարտութին մրրկաց · խաղաղութին ծփանաց · որ ունիս զթևոց ամենընթաց իշխանականիս · և իմաստութբ նուաճեալ առ քեզ դարձուցանես ։ Առահաքանեալ միշտ երախտաւոր · որ հեզութբ անհրպարտութե երկայնամտեալ հանդչիս տենչանօք անձառ հրաշիւք յանձինս որբոց ։ Թագաւոր եկից համայնից · ոռմին ծանուցեալ գթած · սկզբնահայր և նախաշաւիղ սերոյն ընթացից · ճանապարհ կենաց · որ առաջնորդես քաղցրութբ՝ զիմելոյս 'ի լոյսդ վերին ։ Զեռընկալու մեծ վստահութե · որ ոչ թողացուցանեմ գայթագղելոյս 'ի փայլ կործանել · յուսոյ կերպարան Ճշմարիտ ահաւատչէին աղաչողաց մատանց յայտ

նի երևեալ. ապաւինուն հանգստեան,
որ ոչ երբեք մատնես վտանգի դատա-
պարտութե՛ն: Ազատութի՛ն շնորհածիր,
որ տաս լիապէս առանց փոխատրութե՛ն
փրկանաց. առատութի՛ն աննախանձելի,
որ քոյին փառաւորութ՟բ զանարգ նիւթ
հողոյս ճոխացուցանես: Պայծառութի՛ն
աննուաճելի. որ ճառագայթիւք աստեղ-
բարձրութե՛ն պարածածկեալ զթշուառս
երկրիս բարգաւաճ առնես: Քաւիչ մե-
ղանաց բազմաց. որ զհերքեալս ՚ի փրկու-
թե՛ն առաջնոյն պայծառութ՟բ նորոգեալ
վերստին վայելչացուցանես: Հնարաւոր
զիւրահաս առ ա՟ծ անբաւ գերամբար-
ձութի՛ն յաւէտ յառաջեալ. ելք վստահու-
թե՛ն առ խոստացելոցն վայելս. երանու-
թի՛ն անձկալի՛ յոր զկենդանութի՛ն շնչոյս
ըղանելն է ախորժելի. զի զքեզ գտից
կենդանի: Կամք անփոփոխադրելի, առ
՚ի բաւուն գերոյս զօրացեալ ամենազօ-
րելի. անսխալելի դեղ կենաց, որ և մե-
ռելոց բնաւին եղծելոց առնես զոյան-
չելիս: Ամենաստեղծ աներկբայելի, որ
զհուրբ կիզեալն, և զհողմով հառեալն,
և զժանեօք գազանաց ծախեալն ՚ի
քթթել ական նոյնին հիւթականութ՟բ
անպակաս յարուցանես: Անհաւասար
համարձակութի՛ն. յորում ա՟ծօրէն սան-
ծանօք պարծելն է խրախացի: Հայեա՛ց
տ՟ր

տր յերկնից զուարթ քաղցրութեան յամե-
նակործան վտանգ նեղելոյս , և արա
անդորր հանգստական դիւրաւոր 'ի
բազմատագնապս հեծութեան . և զյարու-
ցեալ գուսմարս սատակչացն . եթէ սպա-
ռազէնք այսական դժնեայ հնարաւո-
րութ բուռն մարտակցաց պատկանեալ
զինուք . եթէ մեղաց տգեղ , և քո ա-
տելի կերպարանք . եթէ ցաւոց և ախ-
տից վատնիչ և կորստական նշմարանք ,
մերժեսցես , հանցես , հատցես , խա-
փանեսցես և հալածեսցես հեռի սահ-
մանաւ խստիւ տարագրեալ անդարձ
որոշմամբ վերստին կորստեանն : Եւ
կառուսցես կացուսցես նպատակ կենաց
և ամուր մահարձան զնշան խաչիդ ա-
պաւինելոյս 'ի քեզ փրկութ : Եւ յայսմ
անպարտ և անպատիր և անվանելի ար-
ուեստից ահաւորիս մեծութեան լուծցին
որոգայթքն գաղտնածածուկ սատա-
նայականք . կապտեսցին մեքենայքն .
վատնեսցին դայթագղութիքն . խայտա-
ռակեսցին հաղբիցն դրուժիք . յայտնեսց-
ցին երևոյթք որսոյն . դտցին նենգողին
ծուղակք . վերասցին վարմին վերար-
կուք . տոչորեսցին որոմանցն բոյսք .
նզովեսցին բռնաւորին չարաբանութիք .
կորեսցի լար խաբէութեան 'ի մահ որսո-
ղին . պարսեսցին պատրողին բանսար-
կու-

կութիւնք · պակասեցին զէնք զրպարտո-
ղին · անկցին սուսերք մահաբերին ·
թուղեցին սադրողին պատրաստութիւնք ·
արձակեցին տոռունք տագնապողին ։
Այլայլեցին սուտ կերպարանք կեղ-
ծաւորին · սաստակեցին խրոխտակա-
նացն խիստ յարձակմունք · ցրուեցին
կցորդութիւնք կերչացն · բաժանեցին ա-
գինք աւաղակացն · քայքայեցին բոյլք
բարբարոսացն · քանդեցին ամրոցք
ապստամբողացն · արգելցին ամպրոպք
յանդգնելոցն · փարատեցին փորձողին
անձրեւք · հալեցաւ եւ ցամաքեցաւ ե-
ղեամն աղանդաւորին ։ Խորտակեցաւ
եղջիւր գոռոզին · մանրեցին ամբաւ-
նալիք դրօշից կերպարանաց · փշրեցին
ամբարհաւաճութիւնք հպարտացելոցն ·
նահանջեցին դիմեցմունք ճակատե-
լոցն · քակտեցին միաբանութիւնք զօրացն
բելիարայ, թէ անմարմինք, եւ եթէ
մարմնաւորք, փախիցեն Ը նոյն ճանա-
պարհ 'ի մի շաւղաց հետոց յեօթն տա-
րաձոյս · 'ի գուբն ինձ փորեալ ինքեանք
ընկղմեցին ։ Յեղանակեցին ձմերունք
ձանձրացուցչին · հատցի կապն կցոր-
դութեն մշտաջան աւազակին · նողկացի
մտացս կայից համբոյր շողոքորթին ·
ընդ միջեալ մեկնեցին նետաձգութիւնք
նեղչին · կացցէ 'ի սասանման նաւ խար-
դա-

դալխողին . խլեալին յարմատոց անտի ա-
տամունք խածանողին : Ո՛վ փայտից-
օրհնութեան կենաց , յորում՝ պրկեցար
Ած անըմբռնելին . յիշատակաւ բևե-
ռացդ , որով՝ ի գործի մահուն մածու-
ցար՝ արարիչդ երկնի և երկրի . ար-
եամբդ Տրունականաւ , որով զվիշապն
մեծ կարթիւ՝ ածեալ որսացար , լեղւոյն
դառնութբ , զոր արբեալ՝ զդեղատուու-
թին կորուսչին արտաքս հեղեր : Պատ-
մաքանութբ ըղձական ձառիք կրից
սարսափելեաց , որով զլրբութին հակա-
ռակողին ըմբերանեալ ամաչեցուցեր :
Անուամբդ անհասականաւ Ածիդ ան-
թարգմանելւոյդ , յորմէ դողան և դա-
տապարտին սոսկացեալ սատանիկ սար-
սափմամբ բնութիք Տմ երևութից և ա-
ներևութից , եղիցին այս Տմ պարգևք
շնորհաց խոստովանելոյս ՚ի պաշտպա-
նութի , ՚ի բժշկութի , և ՚ի քաւութի : Եւ
մահաբեր դառնաթոյն օձին՝ և որ ՚ի
նմա ազդեաց տխեղերադաւ չարութին ,
՚ի սատակումն եղիցի նորին . նոյն ինքն
՚ի կորուստ և յանբժշկական հարուած
տանջանացն սուլաւ մատնեսցի , կապե-
ցի և ըմբռնեսցի : Եղիցի ողորմութին
ստեղծողիդ ընդ իս . և շունչ ոգւոյս իմ
Ը քեզ անբաժանօրէն կապաւ միացեալ
՚ի մի . Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս

ձայ-

ձայնի մաղթանաց գոչման աղօթից հայցման . ծերոյ , և տղայոյ . կուսի , և երիտասարդի . և եթէ յաղախնաց ոք պաղատեսցի ա̃ծսիրաբար՝ հաւատարապէս անաչառութ̃բ ընկալցին 'ի քէն մասն երանութե̃ , պարտուց ազատութե̃ , հաստատեալ վերստին յանարատութի̃ նորոգմաքրութե̃ , նկարեալ դարձեալ գծոյդ կերպարան անփոփոխելի ։ Ահա տիրապէս հնարաւոր զօրեղ անպատում անհաս անիմանալի . տեսցես աստանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծութե̃ , որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի , վ̃ն հօր քոյ երկնաւորի և բարերարի , և հոգւոյդ սրբոյ փառակցի , և կենդանատուի , ա̃ծածնիդ բարեխօսութ̃բ , և խնդրուածովք ա̃մ սրբոց . զի դու ստեղծեր զա̃մ . և 'ի քէն եղեն ամենայնք . և դու տիրես ա̃մի ։ Առ քեզ փառք յամենեցունց միդ յիսկութե̃ անժամանակ երրորդութե̃դ , զուգակցապէս փառաւորեալ յանբաւս . և յաւիտենից յաւիտեանս , ամէն ։

Նորին հիւսողի · Աղօթք յաղագս զղջման :

# ԲԱՆ · ԽԶ :

Եւ քանզի է ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց զգրութիւն թղթոյս յարմարեցի · կական, և հեծութիւն · հառաչանք կողկողագինք · դառնութեան լալումն, և արտասուաց երգք : Դարձեալ սկսայց զձայն պաղատանացս խոստովանօրէն զղջականաբար· զգաղտնածածուկն յայտնաբարբառ · զի անդրադարձութեամբ սկզբանն և վերջաւորօքն բառիւք զնոյն համաձևութիւն ՚ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան աստանօր եդից : Մեղայ մեծիդ բարերարութեան, անարգս մեղայ · մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ · մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարև մեղայ · մեղայ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղայ · մեղայ ստացողիդ յոչէութենէ, ստուգապէս մեղայ · մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց, անբաւս մեղայ · մեղայ աննուաղ լուսոյդ վայելման, նենգօղս մեղայ · մեղայ ճաշակման անճառդ կենաց, բազումս մեղայ · մեղայ անհաս պարգևացդ ձրից, հանա-

տաղ մեղայ · մեղայ գտեալ մարմնոյդ-
ոյ , մահուչափ մեղայ · մեղայ պաշտե-
լի արեան արարչիդ , խաչապէս մեղայ ։
Ո՛հ արդարև օրհնեալ է հատուա՛ծ
բանի յուսադրական սորա այսր մե-
ղայի ։ Այն սա պատուէլի աւանդ · ան-
մոռաց պատուէր · հայրենեացն տուր ·
նախահարցն օրէն · համայնից թոշակ ·
անհերքելի բան · զօրաւոր պատասխա-
նի · կենդանութե կամուրջ · անխորտելի
վերնոյն · սիրելի սրբոց · անխզելի կապ ·
հրաշալի բարբառ · անշրջելի պատճառ ·
բաղձալի աղերս · փափագելի սեղան ·
սրտաբեկ հնչումն · անհնարից ճարակ ·
կարծրութե վանիչ · մեծապաշտից սահ-
ման · հեթանոսաց դիրք · վաղնջուց
կանոն · քրիստոնէից հարաղատ · արար-
չութեն յաղթող · անջրպետ հզօր · խարազ
ահաւոր · արուեստ բարձրութե · խարուխ
անչափ · հիացման տեսիլ · խորհուրդ-
կնքեալ , է որ չիք ումեք անցանել. եթե
ոչ անըմբռնելի մտաց արարման զա-
ծանիցէ ։ Զայն բարեպատեհ հրաշա-
ւորական · որ ոչ յիշատակեցաւ 'ի վեր-
ջին դատաստանիք դատուն լքելոյ · դուցէ
սա նմին խղեալ համառօտ զվրիժակն
իրաւանց մահուն հատելոյ · յորմէ ըն-
րութին ապագործ եղեալ , զահմանն
յաւիտենական քակտեսցէ ։ Ս արդ-

փառաց մեծութե՛ . որովնոյն ինքն մեծու-
թ՛ին պսակեալ բարգաւաճի ։ Վասնզի
ո՞վ որ դիմեալ կալաւ զեղջերաց սեղա-
նոյ այսր սրբութե՛ . եւ ոչ առժամայն
ապրեալ 'ի պատժոց անարատ գտաւ ։
Իսկ եթէ Աքար զարմեան , եւ Սաւուղ
կիսեան , եւ յուդա սիմոնեան ասելով
զայն ոչ արդարացան , եւ ես վկայեմ
իրաւամբք խոստովանեալ զայս պայման
բանի . զի յակամայիցն բռնադատելոց
ոչ է կատարեալ սէր . ուստի եւ ոչ բռ-
վանդակապէս փրկութի ։ Իսկ ես կամա-
համբուրեմ դարձեալ կրկնելով զեր-
ջանիկ բանիդ զմկրտութե՛ հարազատս ։
Մ՛եղայ երախտեացդ մատուցունե՛, կերակու-
րին մեղայ . մեղայ մարմնոյ ձեռն յոգի
հարեալ , յիմարս մեղայ . մեղայ առ-
կեանսդ դժրողունե՛ , իսկ եւ իսկ մեղայ .
մեղայ բանից ապախտ առնելոյ , չարա-
չար մեղայ . մեղայ 'ի յօր սատակման
ինձէն ստիպեալ , վատթարս մեղայ . մե-
ղայ պարտականս անկենդան մահուն ,
ձաղելիս մեղայ . մեղայ անպատկառ
քոյ բարձրութե՛ , տաղտկալիս մեղայ ։
Վերջին ինձ կրկին աշխարհ հոգեւոր . զի
'ի կորուստ եւ 'ի կործանումն ինձ երեւե-
ցայ . զի անդարձ վտարանեցայ . զի որ-
դիս՝ թշնամի գրեցայ . զի 'ի բարձանցն
երկնից ընկեցայ . զի փոշս վարուց դե-

զի .

զի ։ Նաեւ եւ առ սմին ողոք աղաղակի ·
զի անձամբ զանձն անարգեցի · զի բա-
գին կորուսչին գտայ ։ Ո՛չ իմն կսկիծ
դժնդակ սրտի · զի զիս ունին առ որ
չեմ · զարտաքնայարդար բաժակս ան-
մաքուր · զլուեալ որմս դարչունակ ·
զսին պարծանօք պաճուճեալս · զլոյս
'ի մռայլ շրջեալ · զգերանակիր ակնս
թշուառացեալ · զջահս փառաց շիջեալ ։
զամս յամի իմ իրօք վնասակարս ·
առ անօրինականան տեղուանականս · առ
յայտնութեան մեծայինս · առ երեւմունան
արարչագիրս · առ խոնարհութեան սար-
սափելիս · առ այն զոր տեսի աչօք իսկ
իմովք ։ Ո՜ւ որ մեծ է պատասխանա-
տուութիս , քան առ համօրէն աւետա-
րանին՝ զարմանս · հիացմունս · հոգս
հալողականս · անդաձմունս անհնարա-
ւորս · թուականութիւ մնաց անբարդե-
լիս · եղմունս անկատարս · իջմունս ան-
հաստատս · յուսահատութիս յարմարա-
կանս · յանդիմանութիս պատշաճականս ·
ձաղանս պատեհագոյնս · նշանս իրաւա-
ցիս · անէծս արժանահատոյցս ։ Որդ՝
այսօրիկ են մեղաւորիս իմ կշտամբու-
թիք , և կնքնահարուած տանջանաւո-
րութի ։ Նաեւ քանզի կարօղ ես զայս ամե-
նայն զպարտս թողուլ · և զխայթուածս
մահու բժշկել · ո՛ր ողորմութեց · ամ

բոլորից · քո՛ թագաւոր · բարձրեալ Հօր որդի · ստեղծիչ · գթած · բարերար · օրհնեալ · առատ · հարուստ · ահաւոր · հզօր · ողորմած · տեսուչ · ձեռնկալ · հաստիչ · ապրեցուցիչ · դարմանիչ · կեցուցիչ · երկայնամիտ · անոխակալ · ապաւէն · բժիշկ · գովեալ · երկնաւոր · անձառ · լոյս · կեանք · յարութ՛ի · նորոգութ՛ի · քաւութ՛ի ։ Եթէ հայեսցես մարդասիրութ՟ե , զ՟ի որում քոյդ են ստորոտք · նայեցեալ 'ի քեզ , կողկողիմ և ես ։ Եթէ լուիցես , հառաչեմ · եթէ ունկն մատուցանիցես , սպաղատիմ · եթէ անսայցես, աղերսեմ · եթէ ներեսցես , աղաչեմ · եթէ առ խոդառնայցես , գոչեմ ։ Ապա եթէ անտես առնիցես , կործանիմ · իսկ եթէ առոտն հարկանիցես , լամ · եթէ զըգեղահն ոչ ընծայեսցես , մեռանիմ · ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես , սասանիմ · իսկ եթէ սաստեսցես , դողամ · եթէ խեթիւ տեսանես , սոսկամ · ապա եթէ սաստկանաս , սարսափեմ · եթէ հալածես , հեծեմ · իսկ եթէ զ՟ի վայր հարկանիցես , հերքիմ · եթէ զբոյ վհատութ՛ես ոչ առցես , տագնապիմ · եթէ խստանաս , փախնում · ապա եթէ սպառնաս , ընկճիմ · իսկ եթէ քննես , քարկածիմ · ապա եթէ

ուժ-

ուժգին ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիղթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկնչիմ. զլարեացն պարգև մատնեալ. զերանութին թողեալ. զշնորհսն լքեալ. զուխտն ցրեալ. զաւանդն կենաց մոռացեալ. զհամարձակութեն վստահութեն կորուսեալ. զստեղծիչդ եկիցս բարկացուցեալ. զանձառութիւն շնորհին ընդ ոտնեալ. զպատուոյն պատկեր այլայլեալ։ Իսկ եթէ առ այս խեղդմանցս հեծութե ցաւոյ, մորդասիրեալ առ իս՝ ժամանեցուսցես որ յո քո զաղդեալն դիր լնանիլ 'ի յիս, եթէ բժշկութե դադարեցուցանէ զմեղս մեծամեծս. որով ամենառատ քաղցրութե՜ պատուաստեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերստին գտեալ, անդեցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին 'ի փրկութե անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս, ամէն.

# ԲԱՆ ԻԲ.

Ընդդիմամարտ գլխոյ այս նուագ աղօթից . և դիմաստարուտ ջերմնատանապ ախտաւորութենց ան փարատիչ ։

Որ՝ այսքանեացս անբաւից հրաշից համագերծիչ հայր ամենատեսդ՝ անուանդ ահաւոր . ձայն անլսելի . կոչումն ընտանի .. բան համբուրելի . ազդումն աքանչելի . հրաման սոսկալի . էութիւն անքննելի . գոյութիւն անձառելի . իսկութիւն անբաւելի . զօրութիւն անզննելի . կամք ամենաբարի . տէրութիւն անսահմանելի . մեծութիւն անչափելի . բարձրութիւն անբովանդակելի . որքանութիւն անկշռելի . առաւելութիւն անհասանելի . պատճառ որդւոյ հայրութբ, այլ ոչ նախադրութբ . քեւ՝ և ՚ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ սաստեա տագնապօղ և դիմական տենդիս ջերմութեան . որ սպրդեալ մուծաւ է ՚ի մեղաց . զի փախիցէ ՚ի մարդոյս . զարհուրեալ ՚ի սիրոյդ և յանբաւելի արեան վտակի գառինդ երկնաւորի . որով սրսկեալ միանգամ, ՚ի մշտնջենաւորս համայն մաքրեցաք ։ Եւ արդ՝ յայս պատկառելի խոնարհութէ արարչակերտս խորհրդոյ ամաչեսցէ սատանայ ՚ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց ։

կաց ։ Զանջեցի և հալածեցի հեռա-
ցեալ և օտարս աւարեալ 'ի չինուա-
ծոյ խորանէ քում ընտանութեն՝ յարտա-
քին խաւարն ։ Ես ջնջեալ մաքրեա՛
զարտասուս ողբոյս 'ի դիմաց մերոց ․ և
զհառաչումն ձայնիս հեծութե 'ի սրտից
մերոց ։ Ես յիշատակաւ հարման հե-
ղուսիցն՝ բանիմափուչ տաժանատեսիլ
ոգեպահանջից՝ որով պնդեցաւ միա-
ծինդ քո յաշտարակ խաչին , ցաւեացի
չարին ։ Ես 'ի կողահերձ սայրասուր
սլաքէ ուժգին բախմանէ , որով զվէրն
մեծ ընկալաւ , խոցաւ սատակեցի
սկզբնարար մահուն ։ Ես զի խոնար-
հեցոյց զգոլեալն գլուխ՝ յաւանդել զո-
գին 'ի ծոց քո բարձրեալ , ապստամ-
բութեն անբարի բարուցն բեկլխարայ 'ի
կոր կործանեցի , ամբա՛ հերքեալ 'ի
կորուստ ։ Ես զի ղօղեալ ծածկեցաւ
անմահն խնկութեն յերկայնին երկրի ,
այսու ամբարձեալն հպարտութեն կոր-
ծեալ գռռողին 'ի յատակս մահու փժո-
խոյ մթին ստուերին յաւեալ դիտե-
ցէ ․ և յիշեցէ զաւաքին հարուածն
անբժշկական , որով մահացաւ գխիդ
մարտուն թունից վիշապին՝ կենարարն
կրեաց ամենազօրին ։ Ա՛ զի 'ի փառս
քո հայր ողորմութե , երբ 'ի գոլեսա
որդւոյ քոյ հոգւովդ սրբով զայս խոս-

տուլանիմ, քանզի ոչ պիտոյ ինչ սակ
զօրութեն ունի զմիւսմէն առ մի խորհր-
դականն խորութե․ այլ զանսկիզբն
բանդ անձնաւոր է անժամանակդ հօր
փառաւորեմք․ և քեզ միայնոյդ երրոր-
դութեդ․ հաւասարապատիւ տէրու-
թեդ․ համաբուն անբաժին ինքնու-
թեդ, օրհնաբանութի, գոհութի, զօ-
րեղութի, և անճառ վայելչութի մե-
ծութե, բարեմլիձակ հարթութեան,
զուգակցիւ հաւասարութե յաւիտեանս․
ամէն։

Նորին հանդէպ․ Աղօթք առ որդին միածին, յա-
ղագս պահելոյ 'ի գիշերային արհաւրաց․ և
փրկելոյ յամ ախտից, և 'ի հեշտանդութեց։

# ԲԱՆ․ ԽԱ․

Որդի այ կենդանւոյ օրհնեալ յամէ,
հօրդ ահաւորի անքննին ծնունդ․
որ տկարանայ առ 'ի քէն և ոչինչ․ Որ
'ի ծագել անստուեր նշուլից ողորմութե
քոյ փառաց, հալին մեղք․ հալածին
դեւք․ ընջին յանցանք․ խզին կապանք․
խորտակին շղթայք․ կենդանածնին մա-
հացեալք․ բժշկին հարուածք․ ողջա-
նան վէրք․ բառնին ապականութիւնք․
տեղի տան ոխութիք․ նահանջին հե-
ծու

ծուլթինք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մուայլն. սպառի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատութիւնքն. և թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամի. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութդ. զի դու միայն ես յերկնի անճառ, և յերկրի անզննին. 'ի տուրր գոյի և յեղըս ծագաց աշխարհի. սկիզբն ամենայնի, և յամի, ամ լրմամբ օրհնեալ 'ի բարձունս. և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ՝ փառք յաւիտեանս, ամէն.

Նորին հեղինակի. Աղօթք առ ած, վս թողութեան մեղաց, հաղորդելոյ բժշկութեան, ըստ պէսպէս բժշկութեանց 'ի պնօրէնութեան հատուցելոյ.

## ԲԱՆ. ՂԲ.

Որդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց. արդարև անսահման բիւրուց քանքարաց տուժից դոլ հատուցանող 'ի միում աւուր. այլ ոչ թէ առ փոքրկունս մարդկային մտաց հայցեմ ներումն, այլ առ աննուաճ լիու-

թին

թէ փրկչին յն քն պաղատիմ մարդա-
սիրութն · որ չէիր երբեմն , և ստեղծեր ·
չմաղթեցի , և դու արարեր · չև ևս ե-
կեալ 'ի լոյս , և տեսեր · ոչ յայտնեցեալ
իմ , և գթացար : ոչ կարդացեալ , և
խնամարկեցեր · ոչ համբարձեալ ձեռն,
և նայեցար · ոչ պաղատեալ , և ողորմե-
ցար · ոչ կերպացեալ ձայնիս , և լուար ·
ոչ հեծեծեալ , և ունկնդրեցեր · դիտե-
լով զարդեան դիպուածոյս , և չանտե-
սեցեր · նախահայեացդ աչօք նկատեալ
զպատժապարտիս չարադործութի , և
յօրինեցեր : Իսկ արդ զքո արարեալս ,
և զքև փրկեալս , և զայսքանեաց խնա-
մոց յանձանձեալս՝ մի իսպառ կորուսցէ
մեղացն հարուածով զխտքբանսարկուին :
Մի յաղթեսցէ յամառութեա իմոյ մա-
ախտաւոր ներողութե քոյ լուսոյ · մի սրտիս
կարծրութի երկայնամիտ բարութեդ · մի
մահացու մեղքս ամենակարողդ լրու-
թե · մի ակարութիս նիւթոյ՝ անպարտե-
լիդ բարձրութե : Հա կարկառեմ
զկարկամեալ բազուկս հոգւոյս յանսան
քո հզօր · արձակեա ողջ իբրև զառա-
ջինն · մինչ 'ի դրախտին փափկութեան
պտուղն կենաց կթէի : Կաշկանդեալ
գոսացեալ 'ի կոր կործանմամբ ըն կնոջն
տափնայելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս
Թշուառութի · ըն երկեր պշուցեալ մե-
ղացն

ղացն կըմամբ սատանայական բուռն կապանօք․ զի մի՛ զերկնայնոյդ ընկալցի զօղջոյն․ խնամարհեա՛ց առ իս միայն ողորմած․ զի բարձրացուցես զփայտ խոնարհ բանաւոր անկեալ․ և զչորացեալս ծաղկեցուցես 'ի բարի կլոնս վայելչուն ը՟ն ա՟ծաբանութե՟ն ն՟ր մարդարէին ։ Որ զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր չունիմ տեսարան․ որով զստեղծելդ նկատեալ զկերպ մաղթեցից՝ հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ 'ի չնչական խօսուն քրանօթս՝ յանէից գոյաւորուէի լուսոյ հաստատեցես ։ Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ․ հայեա՛ց 'ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ․ ուր ո՛չ է քղանցք ձեռաստեղծականսկերպարկուէի ձորձոյ, այլ պարածուն հրաշից ՟իմ ուրեք զօրացեալ ։ Մէ օծութե խղով սպասաւորաց՝ ը՟ մեղաւորին մատուցեալ առ կենդանարար ոտից դարշապարդ՝ զկաթիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմամբ բաղկացս՝ ստոյգ դաւանմամբ՝ հոգւոյ ողջունիւ՛ շրթանց կափուցմամբ զերկիր համբուրեալ խառնեալ հեծութի աղերսս արտասուաց․

բժշ֊

բժշկութի հոգւոյս աղերսեմ։ Աստ-
նեալ մեղանօք հոգւոյս գոյութի, լու-
ծեալ մեղկութբ. և յերկուց կայից միայ-
նակողմամբ անհաստատ հետովք, զըն-
թացից գործին նահանջմամբ չարին՝
զհետևականն բարձողութի շինուածոյ
մարմնոյս առ ելս ծառոյն կենսաւիթ
պտղոյն խափանեցելոյ պատսպարեցես
անդրէն վերստին՝ միայն հնարաւորդ
առ 'ի փրկութի։ Օ փառաբանական
հաստուածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝
ամրափակ խնամամբ համրացոյց արգել
հողմ բանսարկուին. հոգիդ քո աղ-
դեալ մեծդ ողորմութբ ըդ յաւետարա-
նին բժշկեցելոյ՝ հրաշափառապէս բա-
րեգործեցես բանդ կենդանի՝ ինձ խօ-
սողուն անսայթաքելի։ Ընկեալ կամ
չարեօք 'ի մահիճս ախտից ընկողնոց մե-
ղաց, դի կենդանի և խօսուն մեռեալ.
կարեկցեալ խնամս թշուառութ ողոր-
կանօք քքուանաց ձայնից. ով բարերար
որդի այ օրհնաբանեալ, աչացդ ցօղով
վերականգնեցես 'ի կենդանութի, իբր
զսիրելին 'ի յանշնչական մեռելութե։
Ասոյդ դառնացօղս 'ի գբի մեղաց կամ
տարակուսեալ. ձեռն մատուցեալ արև-
անստուէր, որդի բարձրելոյ, հանցես
զիս 'ի լոյս քումդ նշուլից։ Ընդ աղիո-
զօրմ թշուառութե կականմանն ձայնի

այր-

աղբերոյն 'ի նոյին մօր միամօրին , տա-
տանմամբ մատանցն , կոծմամբ կրծիցն ·
հոսմամբ արտասուացն · տանջանօք
տխրունս դիմացն՝ և ես պաղատիմ վեր-
ջին հեծութիւս · տէր յուսահատելոյս
զքաջալերութի մխիթարութե գթած քոյ
բանիդ · ասելով և ինձ գոլեալք բարի ·
ստեղծիչ աշխարհի · թէ մի՛ լար գերի՛
բազմոց ողբալի · որով է պատանւոյն
կենդանացելոյ 'ի վշտացելոյ ծնողին
սփոփանս՝ զամենապարտ ողխս ընկա-
լայց 'ի քէն է նմին կրկին նորոգեալ ։
Ընդ այսակիր անդգայելոցն դիւալլուկ
և քարակոչկոճ հեղձամղձուկ եղկելի
անձանցն քամահելի դիւախառիճ հերացն
վայրենիրես բանդագուշելոցն՝ 'ի քէն
ողորմեցար փրկիչ բոլորից իբրև զնոսին
առ քեզ դիմեցից ։ Հերքեալ մերժեա-
ցես զզսանդս չարացն ապականողաց 'ի
քո խորանէս · զի ժամանեալ հոգիդ քո
բարի այսրէն հանդիցէ ։ Լցեալ զմար-
մինս մաքրութե չնչոյս , զգեցմամբ ան-
դամոցս , զգաստ արասցես զխելագա-
րեալս ամենաթշուառ ։ Ընդ գերե-
ցեալ դժոխաբնակաց վտարանդելոցն
հոգւոց արգելեալ կամ 'ի վտանգի ,
զճառագայթ ողորմութե փառաց քոց
ծագեալ՝ լոյսդ իմանալեան , 'ի կապա-
նաց օձտողին զերծեալ զիս ապրեցու-
ցես ։

ցես ։ Պաղատնորդայթ անձրեւութե-
րակ վրիպակ արտահետ գարշուց մեղաց
ջրդօղեցեալ ոգւոյս կերպարան կայ 'ի
տագնապի ․ զծածկեցեալն 'ի տեսողու-
թեանց՝ զչարագործին նիւթիցն այտուց-
մունս, քո ինքնաւորդ զօրեղութե՟՝ որ-
դի այ՟ գթածարար առողջացուցես ։
Օ բազմազան տարազս ցեղիցն զանա-
զանից ախտաւորութեանց մահացուցանո-
ղաց խուրականօք կորստեան բերիւք,
գժնդակարմատն շառաւեղօք հաստա-
տեցելովք 'ի յանդատանի անօրէն
մարմնոյս՝ տարակորզեսցես 'ի ձեռն ձե-
ռինդ ամենակալի ․ որ արօրադրեալ
միշտ՝ և մշակես զառհմունս հոգւոց առ-
քանիդ կենաց արդիւնաւորութի ։ Իւ-
քանզի անցաւ այ՟ նմանութի օրինակութեց
յանցուածոյս վէր՝ այ՟ ձարակօղն քաղց-
կեղի, առ բնաւ անդամս մասնաւորեալ
զախտին տարածումն, չիք ապեղանի
իբր խորայեցի առ անչափութի խարա-
նացն մատուցանել ․ 'ի խարխափ բար-
ձիցս մինչև ցափն կառուցման լռութե
անդամոցս չէ առողջութի ․ այլ ամենևին
անբժշկութի ։ Իսկ դու ողորմած բա-
րերար օրհնեալ, և երկայնամիտ թա-
գաւոր անմահ ․ լո՛ւր պաղատանացս ար-
գահատութե սրտիս վտանգի, որ կար-
դամ առ քեզ տր 'ի նեղութեն ։

՚Նորին հոգւոյն, Աղօթք առ ած, Խնդրելով համբերութիւն ցաւս ՚ի կենցաղս, զոր ՚ի պատիժ մեղաց ընդունեմք.

## ԲԱՆ. ՃԽԹ.

Նայեա՛ց ամենահայեաց տեսուչն կենաց բարուն յուսոյ ՚ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց. անհաս մեծութի. անուն ահաւոր. բարբառ կենդանի. լուր ցանկալի. ճաշակ ախորժելի. կոչումն պաշտելի. բարութի խոստովանելի. ազդումն խնկելի. խաղութի դաւանելի. էութի փառաւորելի. գոյութի օրհնաբանելի. որ յո ըն հօր քում գովեալ և երկրպագեալ և ըն հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ: Որ միայն մարմնացար վն մեր լուտ մեզ. զի արարցես զմեզ վն քոյ ըն քեզ. լոյս ամի, յամի ողորմած. հզօր երկնային: Նա այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ ածօրէն հրաշակերտութբ աղաչեմ գթած նորոգ հաստատեա՛. զքոյին պատկերս մեղօք հնացեալս ՚ի քրոյս հալոցաց կայծակամբ բանիդ պաղատիմ առ քեզ վերստին ձուլեա՛: Ո՛ խախտեալ շինուածոյ քումդ հանգստեան խորանի մարմ-

մարմնոյս պաշտպանաւ հոգւոյս՝ մաղթեմ բարերար 'ի բնակութիւն քեզ մաքրագործեա։ Մ՛ի հատուցաներ չարեացն իմ գործոց զնոյն փոխատրութիւն։ Ա՛րբեալ եմ ես մարգարէին բանի, և ո՛չ 'ի գինւոյ. Թափեա զմրուրս անօրէնութե՛ թմբրութե՛ մահու բաժակիս ազատարար հրամանաւդ ամենակեցոյց. զի մի դժոյդ քամեցից 'ի վերջին աւուր յետնում հատուցմանն։ Ա՛րդար ես յիրաւունս քո, և յաղթօղ 'ի դատաստանի. եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք քո. եթէ պատապարտես առտուստ սկսեալ զտանջողական կշտամբուն՝ ստոյգ են հատուցմունք քո. եթէ յանդունդս խորոց սուղեսցես. թէ ըզկենդանութի շարժմանս բարձցես. թէ զբանիս զօրութի ունայնացուսցես. թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես. թէ զկենացն ճաշակ 'ի քեզ ինքն ամփոփեսցես. թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձցես. թէ զաւուրցս հարստութի համառօտեսցես. թէ ը իջման քաղցրութե՛ ցօղոյ և հուր տեղացես. թէ 'ի լռութե՛ բանի քոյ սովեցուցես. թէ զականջացս դրունս խցցես. թէ զշնորհիդ ձիր կորուսցես. թէ զդետին յատակի ոտիցս սասանեցուսցես. թէ յանձկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես.

ցես · թէ 'ի համօրէն աշխարհէ սաստի
հեղքեցես · թէ փայլատակմամբք հրոյ
պակուցես · թէ անբժշկական ցաւովք
գանեցես · թէ դի՛ւաց չարաց մատնե_
ցես · թէ գազանաց ժանեօք մանրե_
ցես · թէ հողմով ցասման հօսեսցես ։
Այլ թէ այլ ինչ նորոգ արարած տանջա_
նարանաց կազմեսցես · չար քան զտար_
տարոսն · և սաստիկ քան զգեհենն ·
Թունաւորագոյն քան զորդունսն · տա_
ռակուսելի քան զխաւարն · երկիւղալի
քան զխորխորատն · ողորմելի քան զմեր_
կութիւն · վկայեմ անձամբ անձին յոյժ
պարտապան գոլ սոցա ։ Այլ քանզի յա_
ւէտ տպաւորագոյն են նմանութիւք փո_
խաբերութեցն առ ազգակցութի մեղա_
նացս իբր պատկերականօք միատեսակք
զուգաշաւիղք՝ նշանակիչք այսր խորհր_
դոյ · Որդ՝ կարեոր է խոստովանել և
յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ
ծանօթութի խնդրողին · որդ զի ոչ ջերմե
սիրով առ ընկերին կարիս մատուցայ ,
յիրաւի 'ի նախանձ վտանգին տառա_
պեալ սառնում ։ Այլ զի ոչ զցանկականն
խորխտականութի սանձեցի , յարժանի
կրեմ եղկելիս զանգոսնանալի զկիզումն ·
Այլ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս ,
արդար հատուցմամբ 'ի մթութի ըմբռնո_
ղական միգին կորստեան վրիպեալ գան_

դաշեմ։ Եւ զի ոչ խտրեցի զմանունս փոքունցն յանցանաց, երբ անշնասակալք վարկանելով, պատկանապէս 'ի խածանողականացն զազիրն զեռնոց խլթեալ խոցոտիմ։ Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին այց առնել նմին, 'ի դէպ իսկ ըստ գծագրութեան այսր օրինակի ապականութեան դեղոյ նուիրեալ մատնիմ։ Եւ արդ՝ ոչ յանձնուստ ամենաքարի գանձուցդ չարիս. և ոչ 'ի լուսոյդ նշուլից խաւար. և ոչ յապաքինութենդ գայթագղութի. այլ ես ինձէն կորստեան որդիս գտի զայսոսիկ. մեղանք անօրէնութեան իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բարկութեան մթերս հոգւոյ. իշխանին մոլորութեան հնազանդեալ, թողի զտեղի՝ քոյին, ըստ դրոյն խրատու յանդիմանութեան։ Եւ քանզի յայտնեցաւ յետուստ դաղտնեաց առականաց մարմնոյս անդամոց. և արկաւ զերեսօք կերպիս անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, տգեղս ցուցեալ զիս ամենեցին. երբ մերկացեալ խայտառակեցելոյ պոռնկի։ Ողջագեամ յիս զլոյս քաւութեան արքայ երկնաւոր. զի թօթափեալ զմեղացս փոշիս ըստ աւետեաց ձայնին դարձելոյն 'ի քաքելոյշնէ, նստայց վերստին կանգնեալ 'ի հօղոյ. և 'ի հաստատուն յու-

սոյդ

սոյդ հիմնացեալ անսասանելի ըստ Ե-
սայեան բանին՝ զգեցեալ զզօրութի բազ-
կի կարութե նախնում մաքրութեն , մե-
ծութե փառաց քաղցրութե ամենա-
պարգեւ քո տեառնդ . օրհնեալ յաւի-
տեանս . ամէն :

Նորին հոգւոյն : Աղերս առ քեզ տր թագաւորաց
և տերանց , հաղթելով՝ վերոյն նորա ներելով
և վերոյս ընդունել բաղձանաւորիս պարգեւաց թո-
ղութե , և 'ի վշտաց ազատութե : Ի նոյն և
առ բարերարս բարեհաղթութե :

## ԲԱՆ . ՁԳ :

Բարձրեալ անքննին . զօրութի ա-
հեղ . տր արարածոց . թագաւոր
երկնի . սաստիչ հրեշտակաց . գոյա-
րան մտաց . հաստիչ հրեղինաց . պետ
բարի հոգւոց . աջ ապաւինութե . ան-
դորրութի հանգստեան . տեսարան լու-
սաւորութե . պայծառութի բերկրութե .
Ճանապարհ երանութե . պատճառ կեն-
դանութե . առիթ բանաւորութե . փրկու-
թի առանց չարութե . առաջնորդ խաղա-
ղութե . պարիսպ ամրութե . պատուար
պահպանութե . ցանկ բոցոյ մեծի օրհ-
նութե . սահման անոխակալութե : Միշտ
յայսմ ողբերգութե մատենի բանիս խօս-

տովանութէն և զօր 'ի մարդկային ազնէ
թշնամիս մեր 'ի բարի . և արամ կատա-
րեամ նոցին քաւութի և ողորմութի ։ Մ՛ի
բարկասցիս նոցա վ՚ն իմ՝ տ՛ր իբրև զմեղս
բամբասողաց , առ յաճախս սիրոյդ որ
յիս , այլ ո՛հ զչարս կշտամբողաց և իրա-
ւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց
նոցա ։ Նու արդ մատուցեալ երկաքան-
չիւրոցս առաջի քո արդարադատ . ո-
մանք առ մեզ վնասակարադոյնք սա-
կաւուք՝ թերևս ես յիրաւի բամբասե-
ցելոցս . և ես առ քեզ ամենապարգև
անթիւս և անկշռելիս բազմօրինակ
ուխտադրանցութ՛ս ։ Որդ՝ յիշեա՛ զքո մե-
ծութիդ տ՛ր , նայեցեալ 'ի յիմս անար-
գութի . և ը՟ խնդրելս իմ 'ի քե՛ն բարի
իմոցն ատելեաց , և դու առ քոյս ըստ
քում մեծութեդ անճառելիս հրաշագոր-
ծեսցես ։ Մ՛ի ստամբեսցես զիմս խա-
ծանողն , այլ փոփոխեսցես . խլեալ
զխոտան զչարս երկրաւորս , զբարիս
արմատացուսցես և յիս և 'ի նոսին ։
Մ՛անաւանդ զի դու լոյս ես և յոյս , և
ես խաւար և յիմար . դու խոկում բարի
դովելի . և ես համայնիմն չար ապիկար .
դու տ՛ր ստորիցս և երկնից , և ես անիշ-
խան չնչոյս և ոգւոյս . դու բարձրեալ
'ի կարեաց զատեալ , և ես տաժանաւոր
և վտանդաւոր . դու 'ի վեր քան զկիրս

երկ

երկրիս , և ես կաւ անարգութե̃ գարշու-թե̃ . դու ըստ մարգարէին միոս յաւի-տեան յանբաւ բարձրութե̃ , և ես միշտ կործանիմ ըստ նորին բանին . 'ի քեզ ոչ է մթութի , կամ նենգութի , և ես բովան-դակն իսկ եմ , որ զաւանդն իմ ոչ պա-հեցի : Հանն զիս 'ի բանտէս . արձակեա 'ի կապանացս . զերծո 'ի շղթայիցս . փրկեա 'ի խեղդմանէս . ազատեա 'ի տագնապէս . քակեա 'ի յերկաթիցս . լոյծ 'ի պաշարմանցս . արտաքսեա յերկ-մտութենցս . սփոփեա 'ի տխրութենցս . հանգո 'ի նեղութենցս . փարատեա 'ի վշտացս . հանգարտեա 'ի խռովութենցս . ապաքինեա 'ի ըոլոյս . մերժեա 'ի հե-ծութենցս . հեռացո 'ի յողբոյս . կազդու-րեա 'ի կականմանցս : Ո՛ ողորմութե̃ և պարգևատու քաղցրութե̃ , մի զդրա-ւեալս արևամբ հզօրին անտես արա-րեալ է̃ վայր կորուսաներ . կանգնեա զհասեալս յափն մահու 'ի բազմավտանգ հիւանդութէս : Ո՛ հա բարերեան կու-տեցան շրջանակք ամացս ընդունայնու-թե̃ . յորմէ հետէ յայտնեցեալ ցուցայ յոչ պէտս երևեալ . 'ի յանդստանէ մօրն իմոյ սննեկի փուշս դժնիկի մեղաց շառաւիղի . մի լինիր ինձ խայթոց խոցո-տիչ . ոմ անդ տոհմին յուդայի . և կամ զաւակին եփրեմի : Աւ քանզի բուսու-

ցեալ անկեցի յոգւս փոխանակ ցորենոյն բարեսերմութե̅ խոստ խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս , ը̅ գրոյն բանի՝ որ երկցն է քան զաւետիսն , զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ գարշելի անդաստան անխծաբեր փշովք մեղաց հեղձեալ ։ Ո՛չ սերմանեցի արդարութի ը̅ բանին յօժարեաց , և զիա՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն ։ Ընկաւ-սոինք կուսութե̅ անձինս մաքրութե̅ ը̅ մարգարէին բանի որ առ իսրայէլ . կարօղ ես ո̅ր 'ի նոյն հաստատել . լայնեցի ընդարձակեցի ը̅ մոլեկան բարուցն յուզայլ զանկողին կամացս դիճացն համանեաց . 'ի ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութի ։ Եթէ մարմնապէսն կցորդուի ը̈ տեսանողին անարատ գործեաց զպտունիկն . իսկ դու փրկութի հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես ։ Եթէ արեգակնս այս անկենդան ստեղծեալ առ 'ի քէն կրկրիս մատակարար՝ և զկարակումն մորից ցամաքէ , և զտհաս պտուղս հասուցանէ , իսկ ստացօղդ ամենից Հոգիդ ո̅յ , որքան զօրեսցես զախտս չարեաց աղտոյ , և զթարախ պղծութե̅ մեղաց մթերից խոկոյն սպառել ։ Ասան այժմ կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ 'ի քէն բարի ատելեացն իմոց 'ի կարգ այս

բա-

քանի․ զի զհերքեալ փառաւորս պար-
տուց մահու յամենախնամ աչաց հզօ-
րիդ մի մերժեսցես որհնեալ գթուն ։
Տէրդ՝ կենագործեա զիս զամենամեղս
անդամօք մարմնոյս եւ բնութեն հոգւոյս
խորհել միշտ զքոյդ ։ Իսկ բարեգոր-
ծացն խնդրել բարիս, բնութեն են օրէնք
անքննադատս կրկին յարակցապէս առ-
սոյն բերումն․ քանզի արդարև առ միդ-
այդ պատուէր ամ հասակ զօրանայ․
իսկ միւսոյդ երկրորդի առաջնովդ խնա-
մով հանդիպել, ամենակալնիդ է նմանու-
թեն․ յաղագս այսր իրի նախնի դասեցի
զթշնամեացն իմոց աղերսանս, քան զե-
րախտաւորացն բարիս ։ Եւ որդ յիշեա
զնոսա կրկին ընդ միոյ, որ 'ի քո անուն
բարձրացեալ զանարժանս զիս ընկա-
լան․ և տուր նոցա ըր ամենառատ բա-
րերար և աննախանձ վարձս արդարոյ և
մարգարէի․ թէ և ես յաւէտ թափուր
իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նոցա
և առ յոյս նոցին ակնկալութե, որ առ-
պարտաւոր գերիս ողջամիտ կամօք ակ-
նարկեն․ ոչ թէ 'ի մասանցդ քո կեցուց-
չաց 'ի պահպանարան հոգւոյս ծածկու-
թեն լռով ունիցիմ ։ Եւ զպատժաւորս
անամփոփելի 'ի քոց տեսուեց և անխա-
բելի 'ի յուղիղ կշռութեց քաղցր գթու-
թեդ անսահմանելեաւ մերձեցեալ առ-

իս մաքուր արասցես՝ անխայտառակելի
պահելով՝ ի տիեզերական յանդիմանու-
թենէ ։ Եւ որպէս շուք իմն վայելչական
դնել առորեն ինձ անարժանիս սիրե-
լիքն քո վ՛ն քոյ , նայեցեալ՝ ի կրօնս ըզ-
գեստուս բարեկերպութե , չգիտելով
զմիտս գաղտնեացն՝ երջանիկ կարգան
եղկելւոյս ․ և դու հնարաւոր ամենա-
պարգև որհնեալ մարգարէր, առ քնաւս
ողորմած , մ՛ն ամենաթշուառախ հեծու-
թե հաշտեաց Է նոսա Է հաւատոց նո-
յա ։ Ընծայեալ նոցին մատո պարգևեա
զանեղծ մեծութիդ , և զանթառամելի
զպսակդ յաւաւոր աւուրն յետնում հա-
տուցմանն ամենափորձ ընտրուեն ․ զի
դու ես դրաւ փրկութե մեծութե անվա-
նելի , և անծախ գանձուց սորկիս և
սովեցելոյս ․ ՚ի վաճառ վերնային շահու՝
օգտուե բանիւդ , որ ՚ի քեն յարգեալ
ձոխանամք ։ Կցաւ ինձ սահման ջրոյ
հանգստեան ․ արձանացո՛ անփոփոխ
պատրաստական վստահութի ․ կարգեա
որհնաբանեալ անկեղակարծ յուսոյ ամ-
բութի ։ Տուր ամենախնամ դու անսա-
ջառ պաշտպանութի ․ սաստանեցելոյս
բարեաց անդորրութի ․ տարակուսելոյս
լուսոյ ապաւինութի ․ աշխարհելոյս մեծ
երջանկութի ․ վհատելոյս կենաց օգնու-
թի ․ լքելոյս անգայթագղելի օժանդա-

կու-

կուռ . նահանջելոյս անսայթաք վերըն-թացութի՛ ։ Զի քո է բնաւդ՝ և 'ի քէն է ամդ՝ և 'ի ձեռն քոյ բաշխին հաստա-տութի՛ք պիտանացուաց համայնից կե-նաց . և քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

Ի սոյն հանգոյն՝ ԱՌ ԱԾ , յանդիմանութիւն գաղտ-նեաց անձին . և ծանուցումն պատահմանական չ-րութե հեռաւորաց խաչին , 'ի հեռանս և 'ի ձախու ։

## ԲԱՆ . ԿԵ .

Եւ արդ՝ ես նախանձս ամբարշտաց . գլուխս մեղաւորաց . պետս անի-րաւաց . առաջինս պարտաւորաց . պատ-կերս յանցաւորաց . ատախկեցիս ըս վատ-թարութէ , այլ ոչ ըս բարեբաստութէ ։ Ո՛հ զանձկաւեցն իմոց ձաւեցի զպատ-կառելիսն խոյտառակեցի . զգաղտնիսն հրապարակեցի զծածուկսն յայտնեցի . զթագուցեալսն յուցի . զամփոփեալսն տարածեցի . զգառնութեա մաղձ ժայթքե-ցի . զգործակցութի չարին մատնեցի . զամբարեալ թարախս վիրիս քամեցի . զխորս պարտեաց իմոց ծանուցի . զդ-պատրուակն կեղծեացս առի . զքօղ տգե-ղութէ վերացուցի . զամօթալեացն զգեստ մերկացուցի . զգարշելիսն յանդիմանե-ցի .

ցի · զմռուրն մահու փոխեցի · զպալատս
հոգւոյս խածուածոց քահանայապե_
տին. քո՛ւ բացի : Յանձինս վտանգ ո՛չ
անխայեցի · մարմնոյս սիրոյ ո՛չ աչառե_
ցի · զարմատն հնութեան տեսիլ արարի ·
բնութեան կարեաց ո՛չ ողորմեցայ · զմիա_
բանութեան կապ խզեցի · զդղեակ սրտիս
քանդեցի · է կամայս որսոյ իբր է գու_
բանակալի մահու կռուեցայ · զպահեստ
անյոյսից արտաքս հանի · զմթերիցն
գանձ մեծին գուշակեցի · զդատախազն
դատաւորին հանդէպ կացուցի · զա_
պաւնեացն զփորձ այժմէն իսկ գտի ·
զդաշն կործանողին կորեցի · զուխտն
խաբողին ցրուեցի · զկատարած մարտին
յաղթութեան 'ի քեզ տ՜ր յ՜ա ապաստանե_
ցի · զպատերազմին խումբ դրդուեցի ·
զգիմադրութի՛ դիմեցմանն բանից տ՜յ
յուսացայ · զխաւարասիրացն փաղանգ
լուսեղինացն զինուց սադրեցի: Իսկ արդ
ստեղծիչդ տ՜մ եղելոց քո՛ որդի բարձ_
րեալդ տ՜յ , զասուեն դսրովեալս յայսպի_
սեաց բանից , և զհարուածեալս յայս_
քանեաց գանից մի՛ կշտամբեսցես կրկնա_
կի գաւտել 'ի մեծի աւուրն : Ա՛ հա հզօր ·
անքննին · անճառ · բարերար · թագա_
ւոր անմահ , առ այս կերպ պատկառա_
նաց խնքնապարսաւս խոնարհութեան , որ
ընձէն զանձն մեծաւ ձաղանօք յոդի դա_

տե_

տեսցի՝ լի՛ցնու՛ադօք այսր մատենի անար-
գանօք ամօթոյ զգեստն սատանայի . և
զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ-
խաչիդ զօրացս : Աղտացի կնիքդ լուսոյ
՚ի դէմ տեսակիս . ամբուէնդ նշան հաս-
տատեսցի ՚ի սիրտ գիտակիս . երևակ
կենացդ փայտի ձևացի ՚ի պատկեր
այտիս . արուէստդ հրաշից ՚ի ճակա-
տիս շուք նշանակեցի : Ս՝ի այլայլեցի
յինէն զդրոշմդ լուսապայծառ . մի՛ բարձ-
ցի ՚ի տեսանելեացս բերաց ճաճանչդ
օրհնութեն . մի՛ մերժեցի ՚ի գլխոյս ա-
հաւատչեայդ վստահութեն . մի՛ սասա-
նեցի ՚ի բերանոյս ամբութեն սեմոց
փառք անագրութեդ : Պահպանակդ
երկրպագելի ՚ի զգայարան որտիս միա-
ցի . չորիցս նիւթոց իմոյս գոյութե քա-
ռաթեւիդ նշոյլ ազդեցէ . ձեռինս կար-
կառման փրկչիդ իշխանութի օժանդա-
կեցէ . մատուցման հաստուածոյ մա-
տինս խորհրդարանդ համարձակութե
բարեգործեսցէ : ՚Ի մեկնելս իմում մի՛
հեռացի սրբուէդ . մի՛ լքցի պատուէս ՚ի
պատիլն պարտաւորիս . մի՛ մերժեցի ՚ի
յոգւոյս անդաւաճանելիդ փրկուէ . մի՛
ջնջեսցին գիծք կենդանատուէդ ՚ի քո
դրեցելոյ շնչոյ . մի՛ եղծցի նկարուէն ա-
րեան զօրութե ՚ի տիրատիպ խորանէս :
Ընդ իս բնակեսցէ յիմում դերեզմա-
նին .

նին . 'ի ծորել մարմնոյս թշուառի ա-
ծուծն շնորհիդ առ իս պահեսցի . 'ի նո-
րոգութ՟ն աւուր սուլաւ հանդիպեցայց
փառաց փեսայիդ : 'Ի քոյոց այտի ծա-
նուցայց . քոյովքդ վաստակօք պճնե-
ցայց . երախտեօք մեծիդ յարդեցայց .
աւազանին զգեստիւ պերճացայց՝ քա-
ւեալ ողորմութ՟բ : Մատո բարեգութ
զվերարկուդ անապականութ՟ն տաժա-
նեցեալս մեղօք մարմնոյս . մի յարիցէ ը՟ն
քոյս՝ բանսարկուին . հնացուցիչ հոգ-
ւոյս վատնեսցի . խաւարաբնակին պա-
տիրք մի ը՟ն իս վերբերեսցին : Օրհնեա-
ցի անուամբ քո գթած վիհն իմ հանգս-
տեան . ողորմութ՟բ քո լցցի գուբն իմ
գերութ՟ն : Ընդարձակեսցի քև ինձ տե-
ղին թշուառութ՟ն . անդորր եղիցի խնա-
մող ինձ բանտն բարկութ՟ն . անուսցէ զիս
առ յանձուծն արգանդն մթութ՟ն . յու-
սով քո շտեմարանեսցէ զիս յարկն այն
անձկութ՟ն . ձեռամբ քո պահեցայց 'ի
խշտին տարտամութ՟ն . թեւօք քո ընկա-
լայց 'ի տունն տաղնապի . դու գովեալ
ը՟ն իս 'ի սենեակն վտանգի : Նամզս ինձ
սաստամնոր 'ի թիւս հազարաց . զի երբեմն
էի վերնային , և այժմ անդնդային .
երբեմն տօնելի , և այժմ աշխարելի :
Այլ և արդ կրկին դու օրհնեալ 'ի բո-
լորից գոյից յերկնայնոց և 'ի ստորնայնոց

և

և 'ի սանդարամետ տականաց մեռելոց՝ անպարտականդ այս տարագրուէ . ես վրիպեցայ . ես օտարացայ . ես յիմարեցայ՝ պարտեցայ և խոտան գտայ . ես լքայ՝ կամեցայ և կործանեցայ . ես մոլորեցայ . ես մատնեցայ . ես մերժեցայ . ես խորթացայ , դերեցայ և գայթագղեցայ . ես նզովեցայ . ես թշուառացայ՝ արբեցայ և վատթարացայ . ես ընկլուզայ . ես խաբեցայ . ես անօրինեցայ . ես ապականեցայ , մահացայ և խապառեղծայ . չի՛ք քո առ այս ինչ մասն չարի , որ ես միայն անփոփոխ բարի : Ո՛րդ կամք քո յիս , և խաւար ինձ ճառագայթ . Ճրագ յուսոյ քոյ անդ , և գիշերն վաղորդայն . մարմնոյ քոյ հաղորդեալ , և յամօթոյն կարծեաց ազբեալ : Իսկ ես ոչ գրեմ զանձն իմ կենդանի ի՛ն անփախչելի վախճանին . դարձեալ զիս ոչ վարկանիմ կորուսեալ , ի՛ն աներկեան նորոգմանն . որ և փակեալ համարիմ ինձ զելս կենացդ ի՛ն անքաւելեացն պարտեաց . դարձեալ բացեալ ինձ զդրախտն՝ ի՛ն փրկութեն աւետեաց : Ո՛չանզի ոչ այնքան ի՛հատութեն գոյժ տագնապէ , որչափ փրկութեդ քաջալերեալ ձեռն կարկառէ . արդ՝ տո՛ւր ո՛ր , տո՛ւր ողորմութի , առ ո՛մ ձայն գոհաբանեալ . օրհնեալ յաւիտեանս . ամէն :

Ի՛ւ

Նորին հանգոյն · Աշխերս առ ձա՛ 'ի հինգս հե-
ռանդոսթէ , և 'ի սաւրնալ ձևոս · ձաշթելոյն
յաձառու դարաբարանի՝ անկայել · և շառախին
որոգայթադրոսես չարչարանաց ևոր արգեամեօ՝
ընկրկել :

## ԹՆ՛Ղ · ԿՕ :

Որդ՝ որոք և առցէ զայս դեզ մաղ-
թանաց այսր մատենի պարկեշ-
տականի պաղատել սովաւ . եթէ 'ի մե-
ղաւորաց իցէ մատուցեալն , եղիցի և ես
խմելս բանից կցորդեալ նմա : Իսկ եթէ
յարդարոց գուցէ յառաջեալն , գտայց
և ես սովիմբ ը̃ նմին ողորմեալ նովաւ :
Ապա թէ երջանկացի այնպիսին ին-
քեամբ , ինձ միայնոյ գրեալ զեղկուին̃ ,
և ես ինձէն վկայեմ այսմիկ : Բայց յի-
շեսցէ նա զսողոմոն , և զբանս նր̃ զհո-
գեշունչս , թէ ո՛վ որ վստահասցի սիրտ
'նք ունել . և կամ ո̃վ պարծեսցի մաքուր
լինել 'ի մեղաց : Նա զի ո՛չ յարեաւ
մարդ երկրածին՝ ազատեալ 'ի պատա-
խանեաց . և ո՛չ ընտիր ինքնարշաւ վա-
զիւքն . և ո՛չ թէ և 'ի թափս ամբարձ-
ման թևոց բերիցի . առ որ զգուշ լինիցի
կրկին երկուցեալ 'ի վլիմին իսկ հաստա-
տութեն՝ ուսեալ 'ի պօղոսէ . գուցէ ան-
կեալ

կեալ 'ի յերկիր՝ սահմանողի այսմ կա-
նոնի իրաւադատի կշռեալ նմանեցի ։
Մ․ԺԼ տացէ զայս կշտամբութի մաքուրն
նիւթ պատկաց․ առ 'ի չիջանել անընտ-
րողաբար յանձեռնհասն բարձրութէ ։
Եւ պատժապարտն՝ առիթ ազատուէ,
որով ամբարձեալ 'ի կործանմանէ հո-
գեւորական մահուն ապրեցի յուսով ։
Իսկ ինձ եղիցի պատգամս այս բանի
արձան փորագրեալ՝ ամենեւին անեղծա-
նելի․ որ փոխանակ իմոյ եղկելւոյս ան-
ձին մահացուի անդադար հնչմամբ հե-
ծուէ լալոյ առանց լռելոյ միշտ աղաղա-
կէ ։ Լիցի և ոսկերացս քակտելոց 'ի
հողապատեան շիրիմ վերարկուին անմը-
ռունչ ձայնիւ զայս խոստովանել․ հաս-
ցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ բարբա-
ռով իմն անազդելեաւ ծածկատեսիդ-
զոյն պաղատել ։ Տր գթութեց, աղբիւր
ողորմութեց․ պարգեւք բարութեց․ որդի
բարձրելոյ տր յս քս․ ողորմեա՛, խնայ-
եա՛, մարդասիրեա՛․ նայեա՛ 'ի վտանգս․
ակնարկեա՛ 'ի բեկութիս․ խոնարհեա՛ց
'ի թշուառութիս․ տես 'ի տարակոյս
անձեռնհաս տագնապիս․ հասի՛ր հա-
ղորդել կորստականս կարեաց․ շօշա-
փեա՛ բժշկապէս զամենաթշուառ ախ-
տաւորութիս․ ունկն մատուցեա քաղց-
րութբ ողորմածին հեծութեա ։ Լուր 'ի

խո

խորոյն անդնդոց մահուն դերեզմանի
անմանչելի հառաչմանս. մոցէ յականջս
ամենալուր լսելեացդ ձայն պաղատա-
նաց վատնեալ անդամոցս: Դու վս զի
գլխաւական կենդանութեան անապական
է, անփոփոխ լոյսի և սիրոյդ քո գթու-
թի: Այցորդ լեր հեղուբ տաժանաւորս
տկարութե: Մեռեալ պատկերիս մի ոխս
պահեսցես. ը̃ անշունչ կերպարանիս
մի 'ի դատ քննութե մտցես. մահու տան-
ջեցելոյս մի հարուածս յաւելցես: Ընդ-
բեկեալ խեցեղէն անօթոյս մի ուժգնու-
թբ մարտիցես. վճռեալ կոչկոճելոյս մի
բարկութի կրկնեսցես. կործանեալ
շինուածոյս մի պատուհաս մատուսցես.
շանս սպանելոյ մի քարինս արձակես-
ցես. լուծոյս ջախջախելոյ մի սաստիկս
որոտասցես. հողոյս անպատուելոյ մի
իբր ամբարհաւաճի ուժգին մանչես-
ցես. զմոխիրս մերժելի մի 'ի դատ ընտ-
րուե կոչեսցես. զփոշիս ցնդելի մի իբր
զքո դիմամարտ դասցես. զտիղմն տաղտ-
կալի մի իբր զօսոխ վարկանիցես. զդար-
շութիս անդօսնելի մի իբր զբռնամար-
տիկ վանեսցես. զխեթս 'ի բաց ընկեն-
լի մի նիւթ գեհենին պահեսցես. զայս-
քանեաց բազմապատիկ բանից կշտամ-
բեալս մի վերստին յանդիմանեսցես:
Այս ամենաթշուառ և խաւարարդել


շէր-

չիրմին են ահա սրտաբեկ և յոքնաթա-
խիծ արգահատութիւնք · հաստատեսցէ
օրհնեալդ քո բան անփոփոխական լի-
նել, ըստ սրտի արգահատելոյս · քանզի
և այժմ մինչ կենդանեօքս խօսիմ, մե-
ռեալ եմ անհասիդ · ոչ 'ի կորուստ
մահուն սատակման՝ ամենազօրիդ հրա-
մանի անեղծ եմ հաւատովքս ։ Արդ ա-
ղաչեմ զքեզ տէր յոր քո հայեաց յիս ողոր-
մութ · և մի՛ թողացուսցես լինել տնա-
կից ինձ բելիարայ · և զմահաղեկոյց
տարափին ազդումն անկենդանաւորն
թնդման թշուառ թաղման աղաղակ
ձայնի հառաչման լռեալ քեզ հաշտե-
ցուցչաց յարդեսցես լսել միայն բարե-
գործ, հոգեւէր, հզօր, մարդասէր, և
հոգւոյդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս
առնելով ինձ 'ի խաւարին ։ Մնասցեն
ընդ իս կենարար քոյ կրից պաշտեցեալ
մասունք · զի իբր զաւանդ գանձու զիս
պահեալ 'ի քեզ՝ կենաց նորոգման ըն-
ծայեցուսցեն · օճառք անխառնելի զի-
նուց ինձ պատկանեսցին · ընդ իս՝ յա-
րակայեալ քարինք պարսից հոգեւոր
հնարից զչարին հալածել զգունդ ։
Մարմն որ առիս, քեւ տէր վանեսցի · զի
եթէ յարիցէ 'ի մէջ իմ պատերազմել,
տեսեալ զքաղաքն ունայն 'ի զօրաց, և
զազդողականացն գործի աղաձայն,

զքեզ տ̄ր ունիմ մշտնջենաւոր և աննւիր-
հելի պաշտպան ։ Ո՜ի եթէ այժմ խոկ
կանխաւ տրոփեալ յառաջ քան զօրն
կատարածի , և անշաւիղ արգելման ինձ
պատրաստեսցէ , առաջեմ զաղօթս
տ̄րունական նմին գան մահու ։ Եթէ
'ի վայր զիս հնարի կործանել , զծնրադ-
րութի՛ աղաչից ․ եթէ 'ի մոխիր երկրի
թաւալել ձեռն բերիցէ , երեսայն տ̄յ
'ի նոյն մածուցուածն զնա հերքեսցէ ․ ե-
թէ վաստակս ինձ ցաւոց նիւթեսցէ ,
քրտունքն յուռթի արտասուքն զանգեալ
փրկչին աշխարհի զնա լուեսցէ ․ եթէ
յընթացից բարեաց զշունչս իմ պատան-
դեսցէ , կապանք ամենաստեղծին զիս
արձակեսցէ ․ եթէ յուրացութ̄ի պար-
գևաց լուսոյն բռնադատեսցէ , հայհոյա-
թենն համբերութ̄ի յա̄ծ ամբարտիցն զնոսին
է̄ նոյն կարկեսցէ ։ Եթէ հարուածա-
նետից պաղոնաձիգ զինուց ինձ արձա-
կեսցէ , կարթ հնարից աղեղան փառաց
հօրն կապարձից նմին պատահեսցէ ։ Ե-
թէ քօղով լուսոյ խաւարականի մտա-
նել ընդ այս անասնթեսցի , կափուցմն
գլխոյն ձորձով պատեցեալ լրման ամե-
նից զնա տանջեսցէ ․ եթէ մոլեսցի
զվստահութ̄ի ձեռինս կապել , եղէգն
մատուցեալ 'ի յաջ գոյացուցչին զնա
քարշարեալ ըմբերանեսցէ ․ եթէ ձաղա-

նօք այլալանման զիս կատակեսցէ , տա-
նելն ծաղու ամենազօրին զնա հեգնեա-
ցէ ։ Եթէ բժժանօք ինչ յուռթից կա-
խարդել խորամանկեսցէ . տապակն դի-
մաց հզօրին ո՛չ զնա սատակապէս ամա-
չեցուսցէ . եթէ 'ի մուտս գիշերային
մթութե խաւարաւ խաբէութե լինեալ
մարտիցէ , 'ի ճառագայթից լուսոյ երե-
ման քոյ ո՛ր խայտառակեսցի . եթէ 'ի
միջօրէական տապոյ փորձութեանն արե-
գակնակէզ վտանիչ խորշակին զիս 'ի
յարմարոց խախտել կարծիցէ , 'ի զօ-
րութե նշանիդ լուսոյ խլեալ փօսասցի ։
Եթէ 'ի փչմանն չարհէ ունայն զիս
առնել հնարաւորեսցի , թուքն զօր ընդ-
կալաւ ո՛րն քրովբէից և մեղաւորիս ,
զնա պատկառեցուսցէ . եթէ ժանիք
խածօղք ինձ ցուցանիցէ , լուսե երկնա-
ւորին բերանոյ զնա պապանձեցուսցէ ։
Եթէ խածմունս աղուէսական հոգւոյս
ազդեսցէ , բևեռացն հարմունք հաստա-
ղին ընաւից զնա կոկծեցուսցէ . եթէ
զընթացս անխրատութեց խորհրդոց զիս
մոլորեցուսցէ , սևեռք ոտից անհաստա-
նելոյն զնա կապեսցէ . եթէ հրապոյր
ինձ դժնեայս արբուսցէ , քացախն ընդ-
լեղւոյն խառնեալ՝ 'ի յարբումն քարե-
բարին զնա դառնացուսցէ ։ Եթէ ա-
ռաջին ճաշակմամբ փայտին զիս գացէ ,

սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ , իսպառ պարտաւորեցի . եթէ ընդվզել ընդդէմ հնազանդութե̃ն ա̃ծ հրամանի զանձն իմ ուսուցէ , բերումն պարանոցի անսահմանելոյն զնա կործանեցէ . եթէ 'ի մահ սատակման զիս վանեալ վիրաւորեցէ , սուր տէգ զինու մահլոյն 'ի կող ստեղծչին ադամայ զնա հերձեցէ . եթէ երկամբք մշտաց գժոխականաց զիս պարփակեցէ , պատանացն կտաւ էից ունողին զնա ըմբռնեցէ . եթէ յատակս մահու հայել զիս խարդախեցէ , բնակել կենդանւոյն 'ի մէջ մահու զնա մեռուցէ . եթէ խնդացէ ընդ մարդկօրէնս իմ գայթագղութ̃ի , կրկին կոչեսցի կարկամեալ կամաւ , յորժամ անմահն ա̃ծ յարուցեալ փառօք ընդ իւր նորոգեաց զբնաւ մահացեալս : Եթէ է̃ լուծանել փոքր կապանաց հազարամեից բերկրեցի , դողացի կրկնեալ վերստին իսկոյն է̃ վերջին շղթայս անքերծ տագնապին ըմբռնման սաստկագունի յանվախճան տանջանարանին : Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեցի , դոյժ կորստեան յետնում սատակմանն անշէջ գեհենին , որ պատրաստեալն է նոցա , և նորին հրեշտակաց , նմա պատմեսցի , որ յաւուրն մեծի՝ մեծին աւենի : Իսկ ինձ ապա-

ւէ

ւինելոյս 'ի քեզ տ̃ր յ̃ս. միայն Թագաւոր ինքնակալ զօրեղ. արարիչ երկնի և երկրի. և ա̃մ զարդուն, որ 'ի նմա: Սր գալստեանդ քոյ ակն ունիմ. և ողորմութ̃ե փրկչիդ սպասեալ յուսամ. 'ի յոյս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ. զպարտութ̃իս խոստովանիմ, և զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կոծիմ, և հառաչանօք սրտիս տապանիմ. 'ի խէթ խղճիս խոցոտիմ, և բոցով շնչոյս ձենձերիմ. աղի ցօղով արտասուացս այրիմ, և երկիւղամանցս ազդմամբ կիզանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ, և դառնաշունչ հողմով շիջանիմ. Թախանձանաց բանիւս երերիմ, և կողկողագին հեծութ̃ք դողամ. տաժանելի կրիւք տոչայտիմ, և տագնապաւ հոգւոյս տատանիմ. 'ի կոծ մրրկաց ծփիմ, և 'ի բախմանէ ալեաց սասանիմ. 'ի լռութ̃ե համբաւոյն սարսեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ. կերպարանօք ատենին հալիմ, և սպառնալեօք մեծին մեռանիմ: Ո՛վ բազմագութ քաւիչ մարդասէր և Ներկայնամիտ. քաղցրութ̃ի անճառ. որ բարի և տի՛ տենչալի. քանզի կարող ես յա̃մի, և առ ելս շնչոյս իմոյ փրկութ̃ե մեծի. և քեզ ը̃ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

՚Նորին հոգւոյն. Աղերս առ քս, յաղագս մահուանն աւուր, և բարերար կատարածի կենաց:

## ԲԱ՛Ն. ՃԴ.

Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեալդ միայն տր յս քս. քո է փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութե՛ զատակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւնս. զպատուհասանս վհատութե առ զուարթացուցիչ գովութի. և ամօթոյն համարձակութի. և պատկառանացն պատիւ. և տարագրութեն լոյս բարութե. և բաժանմանն անկալունն միութե. և սպառնականացն բանից ողոքական սփոփանս. և միանգամ դատապարտութեն կրկին ազատութի: Ողորմեա՛ տր մահու մեղապարտիս յաւուր արձակման շնչոյս կենդանութե, մինչ աչացս ողորմագին հայեցուածս ՚ի բարձունս կողկողիցի՝ զբազմարկածեան ուղւոյն զանզերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մտացս տեսմամբ ամիճ վտանգեալ. և ՚ի յերդբնակութե յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութբ, դիմօք այլայլութե, տատանմամբ մատանցս՝ կարկամ հառաչմամբ, նուաղ

հե.

հեծութիւն , որբական ձայնիւ , յոգւ
թախծութեն յոքնամանեայ տարակու-
սանաց 'ի խորոցս աներևութից զգու-
ծեցելոցս ողբալով հառաչեմ ։ Կարող
ես բարեգութ և անդ հրաշագործել
յաւէտ զօրեղութիւն , ասելով թէ ողջ
եղիջիր յոգւոյդ խորտակմանէ . և կամ
թողեալ լիցին քեզ մեղանք քո . կամ
թէ երթ 'ի խաղաղութի սրբեալ 'ի մե-
ղաց ։ Իսկ զոր յայնժամ ժամու ոչ ժամա-
նեցից պաղատել , այսօր ընկալցիս մար-
գասիրապէս ով երկայնամիտ բազմա-
շնորհ ամենակեցոյց ։ Յորժամ որ
այժմս բանապանծոյց խրոխտաձայն սե-
գայոց բարձրապարանոց անկեալ գնիմ
գի անկենդան . կարկեալ 'ի խօսից .
կաշկանդեալ ձեռօք . լքեալ անդամօք .
խփեալ շրթամբք . կափուցեալ աչօք .
տախտակ անշարժուն . կոճղ կխայ-
բեաց . արձան անզգայ . պատկեր ան-
բարբառ . գոյսի անշունչ . ողորմելի
տեսիլ . աշխարհելի կերպարան . ողբալի
օրինակ . եղկելի դէմք . արտասուելի
նմանութի . լռեցեալ լեզու . ցամաքեալ
խօսս . թօթափեալ ծաղիկ . ծորեալ
գեղ . չիջեալ ղամբար . դատարկ կա-
կոյտ . խափանեալ սիրտ . աղխեալ
ողդարան . սպառեալ աղբիւր . թա-
կացեալ մարմին . ժողխեալ որովայն .

քակտեալ տաղաւար․ կոտորեալ ոսպք․ բաժանեալ յօդք․ հատեալ ծառ․ աղօցեալ արմատ․ թօղեալ տուն․ հնձեալ արտ․ ստորախուզեալ բոյս․ օտարացեալ բարեկամ․ մնացեալ պահեստ․ թաղեալ գարշունի․ մերժեալ ատելի․ բարձեալ խէթ․ անարգեալ կմախք․ և իբր զանպիտան առ ոտն կոխեալ։ Վարատեալ այլոց մողթանաց, որք զհաւատոյ թշուառախ ձայնիւ նուաղեալ․ աղերս հառաչման՝ ցօղով արտասուաց բարբարիդ գթուն ՚ի բարձունս տարածանեն ։ Ո առ քեզ դարձն յեղանակեն յարգահատելով զոր օրհնեմ․ զնրջան խաչիդ փրկուն՝ զոր երկրպագեմ․ զյարութեն Աշմարտութի՝ որում հաւատամ․ զփառացդ քոյ յայտնութի՝ զոր փառաւորեմ․ զգատաստանիդ ահաւորութի՝ զոր խոստովանիմ․ զբանիցդ յանգիմանութի՝ յորմէ զարհուրիմ․ զհոգւոյդ սրբոյ ինձ ուղեկցութի՝ զոր պաշտեմ․ զծմանդ ՚ի նպաստու ՚ի զոր և համբուրեմ․ զթագաւորելն Է քեզ ՚ի յա , որում պաղատիմ։ Ընդ լքաւ՝ մերժեցաւ՝ բարձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ օրացաւ՝ տեղի ետ կցորդունի զուգութե կենցաղոյս կենդանութե․ և յուսոյդ որ ՚ի քեն պարգև՝ մնացական և անքնքնական յիշատակարան պահեցաւ։ Ցես ողոր-

մու-

մութք 'ի տարակուսանս վտանգելոց միոյն բարեգութ, փառաւորեալ որդի այ, քաւել՝ բժշկել՝ կենդագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկարել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագործել յերջանիկն անտրտմութի . քո է կարողութի, քո է փրկութի, քո ողորմութի, չիք քո անկարութի . այլ ամենեքին զօրութի, բարձրութի իշխանութի . անվախճան թագաւորութի . խոկութի . ինքնութի . ամենատեղի բացարձակութի . բարերարութի . լուսաւորութի . փառաւորեալ տիրապէս . անպակաս և անյաւելուած . խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ յերրորդութեդ սրբում գոհաբանեալ յաւէտ, և ես առ ամին 'ի նոյն պաշտօն հաւասարութ միապատիւ զուգականութ, երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեանս, ամէն :

Նորին հաւնողի . Ընտիր յաղագս ահեղ դատաստանին հատուցման :

## ԻՄՆ · Ա ։

Զայն հառաչանաց հեծութեն սրտի ողբոց աղաղակիւքեղ վերընծայեմ տեսողդ գաղտնեաց . և մատուցեալ եդեալ 'ի հուր թախծութեն անձին տո-

չորման զպտուղ ըղձից ձեռնձերոյ՝ սասանեալ մտացս՝ բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Ա՛յլ հոտոտեսցիս հայեսցիս գթած՝ քան ՚ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բուրումն։ Ընկա՛լ զաշխատամանեայ բանիցս յօդուած քեզ ՚ի հաճոյս, և մի՛ ՚ի բարկութն. ելցէ ՚ի խորոց սաստի զգայութեց խորհրդականը սենեկիս վաղվաղակի ժամանել առ քեզ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ փորուք ձարպոյ, որ յետն է պարարտութե։ Եւ ՚ի դնելս իմ ըստ քեզ դատ խառնեալ աղերսիւ հզօր՝ մի՛ իբրև զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յակոբու ըստ բաղձելոյն եսայեայ, և զանիրաւութիւն բաբելոնի՝ տաղտկալի քեզ երևեսցի. զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ասէ. այլ իբր զբուրեալ խունկն հաճոյական ՚ի խորանին սեղանոյ, զոր դաւիթն կանգնեալ նորոգեաց, տապանակին հանգստեան ՚ի գերութէն դարձելոյ. որ ՚ի մերստին գիւտ կորուսելոյս հոգւոյ առակի, ընդունելի կամաց քոց լիցի։ Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանին հատուցման ուժգին հնչեսցեալ ՚ի ձորն վրէժխնդրութե՛ կրկինս ինձ երկնէ մարմից յարուցմունս. այժմէն փուշակեալ

շարժ-

չարժմունս յուզմանց ներհակականաց՝
որ յիմուռս անձին ցուցանի , խռովութիս
ամբոխից հարեալք ընդ միմեանս՝ զէն
առ սուսեր՝ խորհրդոյն հոյլք , չարեացն
ԺԵ բարիսն , և գերեալ զիս 'ի մահ բատ
հնին դիպուածոյն , որ նախ քան զհնոր-
հին ժամանել առ իս , զոր ընտրեալն
առաքելականացն դասուց պօղոս առա-
քինասիրեալ զմոլեգս , զքնի փրկութիւն
յաղթող ցուցանէ ։ Մ՛ն զի թէ մերձ է
օր տ՛ն , ամ՟ գիր ասէ՝ 'ի հովիտն անձուկ
ասպարիսին յոխափաթու և հեղեղա-
տին կեդրոնի , փոքր հանդիսարանացն
իրաւանց ժամադրութեց ։ որ կենցաղա-
կանաւ այսր յաւիտենից զհանդերձե-
լոյն ինձ կերպարանեն ։ ապա եւ յաւէտ
մերձեցաւ 'ի վ՟ր իմ արքայութին ոյ մար-
մին եղելոյ , մեծապէս գտեալ զիս ս-
ուխթ ջնասուց բազմաց տակաւեալ զա-
նաւան մասանց յանդիմանաց ճշմար-
տապատմից քան զձեռին նորին վերա-
կացուածն անդ ուրեմն երբեմն 'ի հար-
ուածս եդովմայեցւոց և փղշտացւոց ։
և այլոց բարբարոս ազգաց ։ Մ.անզի
այն ընտրութի ամօք չափեցաւ ։ իսկ պա-
տուհաս իմուռս սպառուց առանց ա-
ւարտման ունի զսահման ։ Ի.Հ՝ գուբ՝
և որոգայթ անձաղապրելի ։ ԺԵ մարգա-
րէին և առակողին տագնապաւ մեծաւ

առ դուրս ինձ հասեալ զամօթն մշտնջենաւոր աստէն գծագրել ։ Օ՜ որ միայն քո է հրաշագործել պտուղս գեղոց 'ի հնարս կենաց ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից ։ քաւիչ մի ։ գովեալ 'ի փառս անճառս անսահմանելի բարձրութե յաւիտեանս յաւիտենից ։

Նորին հանգոյն, Պատրիարքին բանք յաղագս ահաւոր դատաստանին, և սպառնալեաց գեհեննոյն ։

## ԲԱՆ Բ.

Ես արդ զի՞նչ գործեցից անձն իմ կորուսեալ ։ կամ ու՞ր թաքիցես ։ կամ զիա՞րդ ապրեցից ։ կամ որպէս ելցես 'ի մեղաց բանդէ ։ Ահա՛նզլի բազումեն պարտիքդ, և անթիւ հատուցմունքն ։ սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն ։ անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն ։ հզօր ատեանն, և անաչառ բեմն ։ քստմնելի սպառնալիքն, և անողորմ հատուցմունքն ։ ահարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն ։ հրեղէն են գետքն, և անանցանելի են վտակքն ։ թանձրամած խաւարն, և արտաքոյ այցելութե մառախուղն ։ ապականութե է գուբն, և մշտնջենաւոր է

տագնապն · ամենազրաւ տարտարոսն , և անզերծ սատանամանիքն ։ Դու արդ արդարև քեզ են գանձեալ գաւինքս այսոքիկ , դժնդակք և տարժանելի օթեվանք , անըմբերելեացդ պատուհասից՝ որ անարժան անձն իմ մեղաւոր · չարագործ · պոռնիկ · բազմաբիծ , և սահման անդաստանի բնաւին անմաքրուն ։ Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեցես թիւրեալց 'ի յուղղուեց , և զսռածեալց 'ի մաքրուեց · տարագրեալց յարդարուեց , և 'ի կարգաց պարկեշտուեց · ունայնդ 'ի լիութեց հոգեպարգև հարստութեց · նախանձարկու բարերարին՝ և ամենակալթագաւորին ։ Դու քանզի հաւուցեր քեզ անել արգելման և անփախչելի որոգայթ , խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէր , և զանօրինակդ հարուած վկայելով զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկուն · որ չարդ 'ի բարեաց · որ դառնութիդ 'ի քաղցրութեց · որ խաւարդ 'ի լուսաղարմից · որ կապտեալդ 'ի պճնելոց · որ դորովեալդ 'ի գովելոց · որ ամբարիշտդ 'ի բարեպաշտից · որ չնչականդ 'ի բանականաց · որ անմիտդ 'ի մտաւորաց · որ անհանճարդ յիմաստնոց · որ անմաքուրդ յընտրելոց · որ մահացուդ 'ի կենդանեաց ·

որ

ո՜վ խոնհերականդ 'ի մէջս · ո՜վ արքայիդ 'ի մարդկեղէնս · ո՜վ կեղծաւորդ յաղագս ա- լոց · ո՜վ անոխակալդ 'ի ոխակալեաց · ո՜վ անարգդ 'ի փառաւորաց · ո՜վ նուաղդ յառաւելուէնց · ո՜վ գերիդ 'ի գերագու- նից · ո՜վ նուաստագոյնդ 'ի մեծից · ո՜վ աղքատդ յընչեղաց · ո՜վ անարժանդ 'ի փրկութէնց · ո՜վ տնանկդ 'ի բարձրութէնց և 'ի հոգևոր հարստութէնց · և հատուա- ծեալդ յօրհնելոց ։

Նորին հոլովոյն · Յաղագս ահեղ դատաստանին, և պատժոց գեհենին, որ ծան ապերախտելոյ առ երախտիսն այ ։

## ԲԱՆ · ԿԸ ։

Բայց քանզի յոյժ արդար է բան ի- րաւանցն քոց այ առ իս քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ ։ Զի մ̄նք յայն սակս յայտնեցաւ՝ զի լուծցէ զգործս նորին · և մ̄ իմ զի ղհնացեալ զպատկերս նորոգեսցէ, առեալ զկերպա- րանս բոլոր էակի հերալին իսկութէ մե- ծին այ՝ միացոյց ընքեան անշփոթ խառ- նուք ։ Նա ոչ են շնորհեալ 'ի բազմայն · և ինձ ղբումնդակն եհեղ առատութ ։ Մ̄նք ոչ երբէք չարչարեալ, և մ̄ իմ համապատ պատարագի · նա անհաղորդ է կենացն, և ես միշտ մայեսլեմ 'ի փրկու- թէն ։

թէն . նա վաճառեալ է խաչիւն , և ես զօ-
րացեալ նշանաւն . նա հերքեալ ՚ի լու-
սոյն , և ես միացեալ Է փառացն . նորա
ոչ խոստացաւ հանդիստ և յերկիր , և
ինձ զերկինս սեպհականեաց ։ Ոնա-
րայն կորեաց զառհաւատչեայ , և զինձ
առանց խղճելոյ յարակայեաց . զնա յե-
րամակս խողլիցն արգել , և յիս ինքն զօ-
րացաւ . զնա կարծաց օրինակեաց , և
զիս ճառագայթնշանակեաց . զնա սող-
նոց նմանեցոյց , և զիս խորոյն անուամբ
կնքեաց ։ Իսկ ես զերախտաւորն իմ լքի
զոյգքանեաց բարեաց արարողի , և չա-
րին զկնի մտեցայ , հայել Է նմին յա-
տակս դժոխոց ։ Ահա անարժանս բա-
րեաց . անձնիշխան երախտեաց . անընդու-
նակս սիրոյ . տառամիք մեղաց ձգեալս .
յերկնամաւնս խորոց խոցեալս . քան-
ցեալ ծառս արմաւենւոյ . զինս յեղաշր-
ջեալ . ցորեանս հեղեղեալ . մուրհակս
ջնջեալ . վճիռս պատառեալ . կնիքս այ-
լակերպեալ . նմանութիւն փոխեալ . ար-
կանելիքս կիզեալ . ըմպանակս կորու-
սեալ . նաւս ընկղմեալ . մարգարիտս
մանրեալ . ակնս պատուականս սուզեալ .
տունկս գոսացեալ . նեցուկս խորտա-
կեալ . փայտս անհնարին փտեալ . ման-
րագործս աղաւաղեալ . յարկս տապա-
լեալ . խորանս խարխալեալ . բոյսս ար-
մա

մատաքի խլեալ. ձէթս հեղեալ 'ի գաւիթս տղբեայց. կանթեղս հանեալ 'ի կոյտս մոխրոց. այրս մահու 'ի յարեանց գնդից։ Ո՜վ անդղի միշտ խորտակեալ է երուսաղէմի տաւակաւ բաբելոնի 'ի մարգարէից ձայնից անձն իմ ողբալի՝ և ոչինչ խրատեցեալ. որ աստէն անդստնեալ եմ, և անդէն խայտառակեալ. աստ գերո-վեալ, և անդ կշտամբեալ. աստ ձաղեալ, և անդ նախատեալ. աստ Թշնամանեալ, և անդ յանդիմանեալ. աստուստ աղշեալ, և անդանօր լքեալ. աստ հեծումն, և անդ հառաչանք. աստ կարծիս, և անդ կատարած. աստ խէթ, և անդ հատուցումն. աստ արկածք, և անդ հանդէսք դատաստանի. ուր ոչ է բան իրաւանց՝ և ոչ ձայն պաղատանաց. ոչ Թիւք աւուրց՝ և ոչ ելք ժամանակաց. ոչ ուղք յուսոյ՝ և ոչ դրունք ողորմութեան. ոչ աջ պաշտպանութե, և ոչ ձեռն այցելութե։ Այլ դու ապաւինութի. դու ինքն փրկութի. դու այցելութի. դու և քաւութի. դու երանութի. քև բժշկութի. քո ողորմութի, միայն հզօր կենդանի անմահ. Տէր յո քո բարերար ած. օրհնեալ օրհնեալ և գովեալ օրհնեալ, է հզօրութդ քո ամ յաւէտ բարձրացեալ 'ի փառս հայրենի իսկութե մեծիդ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Նորին հանգոյն ․ Պարզեալ բանս 'ի խորհուրդ անեղ պատարագին , և 'ի տանջանս գեհենին ։

## ԲԱՆ ․ ՃԺ ։

Յիշեա՛ տէր , որ գթութեանց , սիրողդ խրատանց իմ ճշմարիտ ։ Նայեա՛ վերստին 'ի բնութեան կերպարան միշտ սխալական ։ Ոննեա՛ ինձ դարձեալ զամենընթաց տարածմունս ելից արեանս շարժողութ ։ Բժշկապէս մատիր տեսանել զի մարդ եմ հաստատեալ մոք խակութե թերի խորհրդոյ՝ յայն ինչ , զոր դու իսկ վկայեցեր տեսողդ ոչէից ․ միայն դու անման ստութե խաւարի ։ Նախրատունս է գրել ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ ․ պարտեալ կրկին՝ իբր զերկրածին մահացու մարմին ․ քան բանիդ քումսուտ երևել ։ Վասնզի արդարև գիտակ իսկ ես , թէ չար է արարն՝ և ընդարձայս չարութիւն մեր ․ և ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան ընդ հոգեհանձար իմաստնոյն կանխազեկոյց տեսակի ։ Թեթևացո՛ զսաստկութի տանջանացն որ պատրաստեալ է միայ ինձ , արկանել զորդիս գեհենին զարդ մահուն յաւիտենականի ։ Բարձ զամօթոյն պարտիս , որ պա-

հեալ է յայանել թշուառականիս յետին ատենին յանդիմանութե ։ Խրատ խաղաղութե յառաջադրութե, ողորմութե քո ընծայեցո . զի մի անտանելիքն աշխատութե 'ի ցոյց իմն եկեալ կերպարանեսցին անյոյս ապշութի՝ է կենաց զղջման առաջի կարդեալ ։ Պատապատանն աշխարհ . անկաշառ և անխաբելի դատաւորն . ամենայն ատեկալի . կշտամբանքն սարսափելի . յանդիմանութիւն անփախչելի . անդնդայն անձնողոպրելի . պակուցումն անխոյսխուսելի . դողումն անլծարելի . լալումն անափոփելի . կրծումն ատամանցն աներժչելի . ապականութին անողջանալի . անէծքն աղաղափելի ածայն քո բանից . փակումն գթոյն , և արգելումն ողորմութենն . որ է գալարելն երկնի՝ և է երկրի դղրդելն է կարծրութին յատակիս՝ բաց կուտակելոյ կոհակաց խառնելոն ծովու իբր փախստեան հերով ցուցանելով , մի զմոյ հետս խափանեն կառեալ յերկրացնոյ . և տապանեալ սաստանեալ լոյսնատարած գետնոյս թանձրութե 'ի հիմանց անտի , է ուժգնակի բախման թնդելոյ ներքնոյին խորոց հարթել զերին . և հալեալ հրդեհին ընութիք վիմաց և ամ տարերաց գոյից . այլայլին երկինք յանեղծ փոփոխումն . և յեղանակին արարածք տարե-

րոք իւրովք 'ի նորոգ նմանութի : Զած-
կութիւնք գործոց հրապարակին . և ա-
ներևոյթք կրից մեր յայտնին . վարք
կրօնից ներգործեցելոց 'ի մարմինս մեր
նկարին : Աստուածային երկնից յատենի
նստի, վճիռ հատուցմանն 'ի ձեռին իւ-
րում : Ահա վայ ինձ եօթնիցս անդամ
կրկին եղկութ , զի չափոյ կշռութե այսր
համարու , որ զամբաւանին թօնոյ պա-
րագրէ : Զինչ գործեցից ողբալիս հո-
գի յայնմ մեծի աւուր վտանգի . Քղի
սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ
քան զհանդիպումն : Զոր ոմն մար-
գարէ զօրինակին նմանութի 'ի դէմս բե-
րելով , զձեռ տագնապի անզերծ փախ-
տեանն նշանակէ ասելովն , զօրօրինակ
եթէ փախնուցու ոք 'ի ձեռաց առիւ-
ծու , և պատահեսցէ նմա արջ . և փախ-
նուցու յերեսաց արջոյն , և մտանիցէ 'ի
տուն , և յեցուսցէ զձեռն իւր 'ի յորմ ,
և խածանիցէ զնա օձ : Այս դարձեալ
կրկին սաստկացուցանէ առ նոյն կեր-
պարան իբր զտեսիլս քաղմնելի . ոչ ա-
պաքէն , այլ խաւար է որ ոն . որ խա-
ւարոյ և մթոյ . որ ամպոյ և մառախ-
ղոյ : Յորժամ հրեշտակն պահապանողա-
կան կենակից , հզօր ոստիկան , իրա-
ւամբք ամբաստանեսցէ , և հատուցա-
նողն ահաւոր արդարութ յանդիմանես-

ցէ ։ Սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուճապէն . զոմանս 'ի կեանս հրաւիրեն , և զոմանս յամօթն դատապարտեն . կիսոց դէմն լցեալս ծաղուցուցանեն , և ինձ ահարկուս և քստմնելիս երևեցուցանեն . ոմանց պսակս լուսապաճոյճս մատուցանեն , և այլոց կորուստ մահու բողոքեն . արդարոցն ձայն աւետեաց՝ և ինձ դոյժ անվախճան վշտաց ։ Յորժամ առ բարիսն մահու յաղթուի իսպառ մեռանի , և ինձ չարագործիս կրկին յարակայի . ուր գլանն բաղխել ոչինչ ազդիցէ՝ վճար եղեալ գթութեն առ իս ։ Յորժամ զպրութիք հրաշիցն զարմանալեաց՝ որ են ծածկեալքն յայժմուցս հասարակաց փառուցն տեսակք մարդկային բնութեն գործոց , յաղագս որոյ եղեն գոյութիք իմ էից՝ յիւրաքանչիւր մարմինս անպակաս գըրուի իսկոյն երևին . և խորութիք անձառիցն կնքեցելոց յիմաստից աստեացս , առաջի աչաց մերոց կերպարանին ։ Ուր այժմ չահավաճառութիք ողբոց և արտասուաց զերկինս գրաւեն , և անդ իբր զապաժամն ընդունայնութիք արհամարհեալք լքանին ։ Հառաչմունք հեծութե ոչ կանխաւ աստի առաքեալ՝ չէ երբեք գտանել անդէն ։ Ողորմութիք ճշգօղ սերմանեալ ոչ պայծառ փառամբ

գնան

գնան առաջի ։ Ուր տապանին Նախայան-
ցիցն , և կտակարանին տիրանարգիցն ,
և Նշանին աՀաւոր այժմուցս՝ յանդիման
եղեալ մեծաձայնս դատախազեն ։ Յո-
րում սոսկալի վայրի , ուր զուխտն կցոյ-
գուէ Հայրենի , և ուր զխորանն վկայուէ
անտեսից , և ուր զարիւն մեծին Այ ,
ամբաստան իմն իրաւացի առաջի իմ
տարածանեն ։ Ո տանջանարանին բազ-
մապատիկս անձամբ անձին աստեն
իսկ պատրաստեցի ․ զիարդ մխիթարե-
ցայց Համառօտեալս յուսոյ ․ զի եթէ
զօրքն լուսոյ դասուք արդարոցն , որ փա-
ռաւորեալքն են երանուՃ , սարսեն դո-
ղալով , ոչ բաւեն բերել զաՀաւոր տե-
սիլ երևաց մեծ դատաստանին , ես
եղկելիս աւանդակորոյս՝ սատակման
որդիս ուր երևեցայց ․ որ ոչ միայն չեմ
պտակելոց , այլ և պատուհասն իմ ան-
տանելի և կորուստն անապաւելի ։ Աւաղ
արարեալ ամենապարգև զօրութի ան-
ճառ ձեռն փրկութե ՚ի կորուստ գերե-
լոյս ․ զի օգնեալ ՚ի քէն՝ դարձայց միւ-
անգամ ՚ի դրանց դժոխոց , ամենապատ-
րաստ Հանդերձեալ ամենևին անվտան-
գելի պրծեալ ՚ի պատժոց ։ Աստանօր
տեսեալ մասունս իմաստից զապագայիցն
զխորՀածս , բաւականացեալ ՚ի լուր եր-
կիւղին ՚ի տագնապէ տանջանաց՝ աՀին
Համ

համբաւով, կամօք քո բարեաց զերծէք
ապրեցայց. և մի՛ մատնեցայց կորեանցն
աւխծուց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի
կերակուր՝ ծախել ատամամբքն գազա-
նուէ. զի զորովայն մահուն լցուցեալ
զասատուստ պորարեալս անդ ձգեալ
հալեն. ուր անապատ պահի մնացուած
մթերիցն 'ի ծախուածս յաւիտենից: Ո՛ ի
դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց
սատակման 'ի կեանս և յերանութի. բնա-
ւից արարիչն, թագաւոր լուսոյ, Տր Յս
Քս. օրհնեալ յաւիտեանս, ամէն:

Մաղթանք զօրաւորք ատեհաւորոյ գի-
շերայնոյ:

## ԲԱ՛Ն. ՀԲ:

Ընկա՛լ քաղցրութեամբ Տր ամն հզօր ըղ-
ձանուայողիս զաղաչանս. մատի՛ր
գթութեամբ առ պատկառելոյ դիմօք.
փարատեա՛ ամենապարգև զամօթականն
տխրութիս. բարձ յինէն ողորմած զան-
բերելի ծանրութիս. անջրպետեա՛ հնա-
րաւոր զմահացու կրթութիս. աւարեա՛
միշտ յաղթող զխաբողին հաճութիս. քա-
ցարեա՛ զկրկնայինն զմեղելոյն մահախուզ.
կնքեա՛ կենցուցիչ զկորուստին ընթաց-
մնիս. ցրուեա՛ ծածկատես զմթութիս

զինս չար դտմանս · խորտակեա՛ անքննին
զմարտողին զխռնեցմանս · ամփոփեա՛ քո
անմոռ ամբք զլուսանցոյց երդ յարկիս ·
պարփակեա՛ քո ձեռամբդ զսատատող
սաձարխ · դծագրեա՛ քո արեամբդ ըղ-
մուտ սեմոց սենեկիս · կերպարացո՛ զքո
նշանդ 'ի հետս ելից մաղթողիս · ամրա-
ցո՛ քո աջովդ զհանդստեանս խշիկ · մաք-
րեսցես 'ի հաղբից զծածկարան անկող-
նոյս · պահեսցես քո կամօքդ զտառա-
պեալ անձն ողւոյս · անխարդախ արտա-
ցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս · կա-
ցուսցես չըջափակ զպար զօրուդ երկ-
նայնոյ · կարգեսցես 'ի գլխի ընդդեմ
գխւայն գասու ։ Ցուր հանգիստ քերկ-
րուն մնհահանգոյնս նիրհման 'ի խա-
րան զիշերիս, բարեխօսութբ հայցուա-
ծոյ սրբոյ ածածնին և ամ ընտրելոց,
ամփոփեալ պարուրեա՛ զպատուհան մե-
ութեց դդ այսպանացս խմասից՝ ան-
զարհուրելի պետեղմանք 'ի ծիծաղան
խամուեց, կենցաղականն զբաղմանց,
անըջական երազոց, խօլականաց ցնո-
րից, յիշատակաւ քո յուսոյդ անմխթառե-
լի պաշտպանեալ, և օթարբեալ վերա-
ստին 'ի ննջմանէ ծանրութե ամենազգաստ
արթնութբ, հոգենորոգ զուարթութբ 'ի
քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթա-
նաց բուրմամբ հաւատոց քեզ ամենորհ-

նեալ թագաւոր փառաց անճառից փա֊
ռաբանողաց երկնագումար խմբից եր֊
գակցեալ յերկինս առաքել: Ո՛վ դու
փառաւորեալ ես յա՟մ արարածոց յաւի֊
տենանս յաւիտենից, ամէն:

Նորին հօրն, Մաղթանք գիշերային, յանձ֊
նարարութիւն անձին ՚ի խնամս ա՟յ, և ՚ի պահպա֊
նութիւն ո՟գւոյ:

## ՃԾԱ. ԳԼ.

Տէր տ՟ր գթութեանց և ա՟ծ ողորմութեանց. անուն մեծութե՟. ձայն ահաւորութե՟. կոչումն սաստկութե՟. լուր անհասութե՟. բարբառ դողութե՟. հնչումն հիացման. յուսադրութի՟ բարերարութե՟ ամենողորմ քաղցրութե՟. յորմէ երկուցեալ սոսանին ա՟մ բնութիք եղելոց: ՚Ի քո սպառնալեաց ահէդ պակուցմանն սաւառնին սերովբէք, ամփոփին քերովբէք. պարուրին պարք լուսակերպիցն. երկնչին հիացմամբ բոլոր պետութիք վերնոցն. նոյնք ցնծան դողութ՟ մեծաւ ՚ի մի նուագատխս բերկրութե՟. զարհուրին դևք. ընկրկին չարութեանցն գունդք. պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մատնին հրեշտակք օտարին. կայլին նշանաւ խաչին յարձակ֊

ձայնմունք դիմամարտին . փակին 'ի ստո-
րին բանոյ քննաւոր ամաղէկացիքն .
անխզելի հանդուցիւք պաշարին խումբք
հակառակորդին . արգելին անզերծ
զնդանաւ մահաղինացն կաճառաքարդին
'ի մէտաղս ահեղ 'հրամանիդ այսակա-
նացն գումարք . պապանձին կարկեալ
ընդդիմաբանիցն դասակցունք . պարա-
ւանդին հիւծմամբ կորստեան աներևու-
թիցն ժողովք . անլոյծ շղթայիւք նեղին
առաքելութիւք դերաքրիստոսին : Ահա
կարկառեմ մատամբ ձեռինս զնկագ-
րութի նշանիդ 'ի ժամ գիշերիս . որ ո՛չ
մթանաս խաւարաւ անդիտութե ամեն-
ևին տեսականութե , քանզի 'ի լոյս ան-
մատոյց հանգուցեալ բնակես : Ընկա՛լ
զաղաչողս վտանգաւոր գոհաբան ընդ
պահպանութ̃ թևոց հզօրիդ . փրկեա՛ 'ի
ցնորից եկամուտ պղտորութեց . Որ արա՛
զգգայարան հայելեայ սրտիս նկատ-
մանց . ամրացո՛ փայտին կենաց 'ի
տխրական անրջոց . արևամբ քո սրսկեա՛
զշրջարկուլիս կայիցս . զհետս ելումնիցն
կաթուածով կենարար կողիդ գծագ-
րեա՛ . երգոցն պահպանարան քառակեր-
պիդ ձևակերպութի եղիցի . հանդէպ
տեսութե աչացս ամբարձման փրկականդ
քո կրից խորհրդ աւագիցի . Ե̃ բարա-
ւոր յարկիս չարչարանաց քոց գործի

հաս-

հաստիցի · զծառոյդ օրհնուէ հաւատք յուսոյ իմոյ կախեացի ։ Ո՛րգէլ ո՛ր ա- ւաւ զստատկեցն հոգւոց ։ Ո՛րգէ անխա- փան պաշտպան լուսոյ · և ՟է՟ սատակ ծանրուէ ցաւոցս և զեռան սպառեացս թեթևացո՛, զոր ՚ի լուարանի մտացս ամ- փոփման մաղձոցս անկողնի ուշարե- րեալ զյուսահատութիւն դառն պտղոցն , խոստովանիմ ամենայնիւ զանհամար մտաւնս գործոց չարաչար անօրէնու- թեցս ։ Հանդո՛ զխոստովանեալս ՚ի բաղ- մածուփս աշխատուէ · բա՛րձ զառագնաղ տարակուսանաց ալւոյս կործանման · զդանդաղութիւն ՟ե՟ վշտացն · զհեծութիւն ՟ե՟ կարեացն · զանձկութիւն ՟ե՟ թշուառու- թեցն · զհառաչմունսն ընդ խորտակ- մանցն · զախկութիւն ՟ե՟ ապշութեցն · զթմբրութիւն ՟ե՟ շրտմանցն · զարբեցու- թիւն ՟ե՟ յիմարութեցն · զթերամտութիւն ՟ե՟ խեղդաարութեցն · զառաւլն ախոյն , և- զհրայրն ջերմութե աղօտակին ախտին ։ ( )ժանդակ լեր տկարութե բաղմար- խուբս տարատմամբ բարեգործ աջոյդ- շնորհի · ձեռամբդ նորոգողի · մա- տամբդ կենսաբաշխի · փառօքդ մշտա- փայլի · յարակայուէ անեղծի · երեսօքդ զուարթականի · խաղուէ եփդ պաշտե- լի · քաղցրութբդ երկրպագելի ։ Հաստ զչարաչար հեծուէ կործանականս խեղդ- ման ·

մեան . զնոր գիւտ չարին . զհին խորդախութի բանսարկուին . զօտար ազդեցմունս 'ի մեզ կրթողին . զանյարմարական երևոյթս հանապազորդեան եղեռնագործին . զառ այս հնարադրութին գժնդակ գլխին . զողոքական բոցաշնչութին ձգօղ կախարդին : Այսհետ 'ի տեղւոջ հանգստեան մեռափինակ այսր դադարման, յանէրևոյթ մտածութենց . 'ի մտանաւոր սխալութենց . 'ի մեծագոյն դայթագղութենց . 'ի փոքրագոյն ամնատութենց . 'ի խորբերոյ չար ձանձրութենց : Յետայս զանհանդէպ մտածութին 'ի դդայութենց ծառայիս յանցաւորի . զկիրս բարերիս . զխորս թշնամանելիս . ըղձխոյածս սպառկատելիս . զհետս վըրպելիս . զպատիրս ձաղելիս . զխորհուրդս անդամանելիս . զաւելաբանութիւն նշկահելիս : Ընտրեալ հոգւով և անշաղախ մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեալ, 'ի հնչմանէ հողմոյ . 'ի զարկմանէ բռնութեց . 'ի բախմանէ փոթորկաց . 'ի յառամանէ մրրկաց . 'ի յարձակմանէ դաղանաց : Ի կախման աչաց հայեցուած սրտիս մի սուսերացի , այլ զուարթացի, պայծառասցի, վայելչացի, ընդ քեզ փայլեսցի՝ որ յա քո լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ : Ընծայ քո սրբեալ զպատրաստարանս բազմականիս ,

'ի

'ի խորամանկութեց , 'ի զբաղմանց , 'ի քս
ատելի յիշատակաց , 'ի վերնամար
տածմանց , 'ի քրէական մորոսութեց , 'ի
տիրանենգ անշնորհութեց , յամ՟ընդ_
դէմ հերձուածութեց : Խնդրեք վերնայ_
նոյդ վերակացու ինձ լիցիս · պետութք ,
իշխանութք , զօրաւորօքն անյաղթակա_
նաց՝ մաքուր մատակարարաց որբ օծու_
թեդ : Նուաքեալքն աւետեաց աւետա_
րանաւն : Մարգարէքն կտակարանօքն :
Մաղթանք երջանկացն 'ի կատարածի
աւուրն ընծայեալ : Որովք նիրհեցից եր_
կիւղի ըստ քեզ սրտմտութ , և զարթեայց
շնորհօք քո կրկին ուրախութ : Եթէ
վհատութ ննջեցից , յարեայց դարձեալ
հոգևորական բերկրութ : Եթէ ըն_
կողմնեցայց մեղանօք , կանգնեցայց վե_
րստին զատեալ 'ի խղճէ անարատ ամ_
բծութ : Ուր խնդրուածոց ամենահա_
ւաչ ձայնիս հեծութեն միայն բաղձա_
նութ , բարեխօսութ սրբոյ ծնածնիդ ,
և իմ արդարոց և նահատակաց ըն_
րերոց : Ես քեզ փառք յամենեցունց ի_
մոյս գոչմամբ վերառաքեցեալ սրբովք
զուարթնոցն անմահականաց դասուց՝՝ 'ի
գովեստ հօր քո այ մերոյ , և հոգւոյդ
սրբոյ ընաւից հաստողի , և նորոգողի ,
յաւիտեանս յաւիտենից , ամէն :

Ս.

՚Նորին հաւնողէ. Մաղթանս ընծայեցին առ քեզ, յանճառաբարութե̄ անձին ՚ի պաղատանօղական ող- րութե̄ ա̄յ խաւսէն ։

# ԲԱՆ. ՂԳ.

Ա̄ծ յաւիտենական բարերար և ա- մենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօ- րինիչ գիշերոյ. կեանք ՚ի մահու, և լոյս ՚ի խաւարի. յոյս ակնունողաց, և եր- կայնմտութի̄ տարակուսելոց, որ ամե- նարուեստ իմաստութ̄բ քո դարձուցանես յայգ զստուերս մահու. աննուաղ ծա- գումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութե̄ քո խա- ւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկր- պագութե̄ ամ̄ եղելոց. երկնաւորաց և երկրաւորաց, և սանդարամետականաց. որ լսես զհեծութի̄ կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զ- խնդրուածս ն̄ց. ա̄ծ իմ և թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութի̄ իմ. յ̄ս ք̄ս ա̄ծ մ̄ր, որ հանգուցեալ ՚ի հոգիս սրբոց. մխիթա- րութի̄ վշտաց՝ և քաւարան մեղուցելոց. որ գիտես զամ̄ յառաջ քան զլինելն ն̄ց ։ Առաքեա՛ զպահպանողական զօրութի̄ աջոյ քո, և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշե- րի,

րի , և 'ի գիճէ չարէ . որպէս զի զյիշա-
տակ սոսկալի և 'որ քո անոճանդ միշտ
համբուրեալ շրթամբք հոգւոյ՝ ըղձու-
նչյ , կեցից պահպանեալ ը՟ այնոսիկ
որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ : Եւ 'ի
դրօշմէ խաչի քոյոյ նշանիդ , զոր ա՟ծ այսն
արեամբ քո ներկեալ նորոգեցեր , և 'ի
նոյն շնորհ որդեգրու՟ե զմեզ մկրտեցեր ,
և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրի-
նեցեր . այսու պարգևօք ա՟ծականօք ա-
մաչեսցէ սատանայ . քակտեսցին մեքե-
նայքն . բարձցին որոգայթք . պարտե-
ցին մարտուցեալքն . պակասեսցին զէնքն
սայրասուրք . մերժեսցի մէգն . փարա-
տեսցի խաւարն . մեկնեսցի մառախուղն .
բազուկ քո հովանասցի , և աջ քո կնքեա-
ցէ . մ՟զ զի գթած ես և ողորմած . և
անուն քո կոչեցեալ է 'ի մ՟ր ծառայից
քոց : Եւ քեզ ը՟ հօր հոգւովդ սրբով
փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւի-
տենից , ամէն :

Նորին հոգւոյն ուսուցեալ 'ի խորհուրդ ամենասուրբ Երրորդութեան, և 'ի խորհուրդ տնօրէնութեան Բանին:

## ԲԱՆ. ԼԴ.

*Իսկ զհաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համագոյ 'որ Երրորդութեան զայն վարդապետեցի զոր շաւիղ կարգիդ վերանկարէ:*

Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զզուգափառ միութիւն ամենասուրբ Երրորդութեան: Ի ծոցն անձառ միշտ բարի. նոյնագոյ հաւասարապատուին, անհաս իմաստից թեւոց սլացման. 'ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանութին. գերազանց գոլով սահմանի անպարագրելի բացարձակութեան. յառաջ քան զհինն յաւիտենացս անտարրափակ կուենց. ստեղծականացս կարգաց որհնաբանութեամբ անթարգմանելեաւ ամենահարուստ մեծութեամբ յաւէտ սպասեալ. հատուց ժամանակաց և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք. ինքն պատճառ համայնիցս և յարմարապէս յօրինիչ տեսականաց և աներևութից: Ոչ անուանք չափեալ, և ոչ յոր-

ջորջ-

ջրջմամբ նշանակեալ. ոչ որակութ
նմանեալ, և ոչ քանակութ կշռեցեալ.
ոչ օրինակաւ ձևացեալ, և ոչ որպիսու-
Թ ծանուցեալ. ոչ 'ի Թերութէ տարա-
ծեալ, և ոչ 'ի լրմանէ ամփոփեալ. ոչ
ուրեք երբէքի գրաւեալ, և ոչ 'ի տեղ-
ւոջ վայրի երևեալ: Հա՛յր գԹութեց ու-
նող ամի, և ած հանուրց՝ որ յերկնի և
որ յերկրի. բաց 'ի բանէն միայնոյ՝ որով
զամ ինչ ունի: Ստեղծիչ և տուիչ շնչոյ
ամենից բաց 'ի հոգւոյն իսկակցէ, ո-
րով զհամայնն կազմեաց: Մ՛ինն յեր-
ջանկափառ համազօր ահաւորութէ երիցն
անձնաւորութեց, խոնարհեալ 'ի վե-
րուստ աստուստ 'ի ստորինս. որ էրն
իսկ 'ի բնէ անբաժ 'ի ներքնոցս՝ անկա-
պուտ մնալով փառացն աԹոռոյ և ան-
կարօտ դիմացն ծնողին իւրոյ: Մ՛տեալ
'ի սենեակ կուսին արդանդի պարզա-
բար, և եղեալ անտի յօդաւորաբար
մարմին էապէս անորոշելի. անԹերի
մարդկութն, և անպակաս ածութն:
Մ՛ի որդի հօրն միայնոյ, և միածին ան-
դրանիկ ածամայր տիրածին կուսին.
արարիչն յեղականութմն մարդ եղով ճշմա-
րիտ. սկզբնածին՝ ահա ոչ զկնի եղելոց
երկրաստեղծից նմանութե, այլ նոր և
չքնաղ. Թագաւորաց մեհափառ՝ որ ոչ
ցուցաւ 'ի զարս, և ոչ գոյացաւ 'ի ժա-

մանակս • անդրանիկ ըստ սաղմոսողին
քան զա̃մ թագաւորս երկրի • անսպա-
կան խառնութբ̃ կերպացեալ զմերս 'ի
մարմնի ը̃ օրինի հոգւոյ ը̃ մարմնոյ • և
ոսկւոյ ը̃ հրոյ, և կամ յայտնապէս իսկ
ասել՝ լուսոյ ը̃ օդոյ • ոչ փոփոխեալ և
ոչ անջատեալ ։ Նոյն ինքն եկեալ կա-
մաւորութբ̃ 'ի խաչն մահու, իբր զգառն
անարատ 'ի սպանդ վարեցաւ • և համ-
գերձեաց զօրեղ ինքնիշխանութբ̃ զա-
րարածոց իւրոց փրկութի • չարչարեալ
իսկութբ̃ կենդանեօք եդաւ 'ի շիրմի անո-
րոշելի յա̃ծուէն ։ Եռօրեայ թաղմամբն
'ի դժոխս սանդարամետականացն վհա-
տելոցն բանտարգելելոցն քարոզեալ ցու-
ցաւ նորոգումն և լոյս ։ Եւ աւարտեալ
զանօրինականացն զփրկանաւորն զտն-
տեսուն, ա̃ծապէս վերակենդանացեաց •
և կառավարեալ 'ի թևս հողմոց՝ ելեալ
'ի քրովբէս՝ ամպով անքննուէ ծածկե-
ցաւ, համբարձեալ գեր 'ի վերոյ ա̃մ
երկնի • Նստաւ Ճոխութբ̃ յաթոռն իւրա-
կան սկզբնաժառանգ հօրն հաւասա-
րուէ • յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսա-
ցաւ • անկորուստ առեցելոյն և ան-
նուաղ սեպհականօքն ։ Որով և եկեսցէ
'ի դատաստան հատուցման, քննել զգ-
ծածկեալսն կշռութբ̃ չափոյ արդար իրա-
ւանց • որում սպասեմք, և յոր աղօ-

Թեմք հաւատացեալք յա՛մի նմի՛ ամե-
նակալ տ̃րուե ն̃ր ։ որ արդարև մինն է
միայն 'ի միոյնոյն' 'ի միոյն փառակցուե
յաւիտեան երկրպագեալ ։ Բարեբա-
նեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ
հօր , և զհոգի էութե՛ նոցին՝ ամենազօր ։
Ճշմարիտ ։ կատարեալ և ս̃բ ։ որ յանէից
գոյացոյց զբոլոր եղեալքս ա̃մ ։ ինքնա-
գործ համիշխան երկուցն ևս ընդ նմին ։
անեղծ և անսահման Թագաւորութե ։
որինչ պատճառն առաջին , և բանն ա-
հաւոր նորին ինքնուե , նոյնինքն և հո-
գին բարձրացեալ ։ Բարի ինքնակալ
ամենից բաշխիչ զհօրն պարգևս 'ի գո-
վեստ անուա՛ն փառաց միածնին ։ որ
ազդեաց յօրէնսն , շնչեաց 'ի մարգա-
րէսն ։ փչմամբ ազդակցին պատուորե-
ցաւ յառաքեալսն ։ կերպիւ աղաւնւոյ
ցուցաւ 'ի յորդանան 'ի մեծուե փառաց
եկեղցոյն ։ փայլեաց 'ի դէմս աւանդակա-
նաց ։ արար հանճարեղս ։ զօրացոյց ի-
մաստունս ։ լցոյց վարդապետս ։ օծ ար-
քայունս ։ օժանդակեաց Թագաւորս ։
ետ վերակացուս ։ հրամանատրեաց
փրկուեն ։ շնորհեաց ձիրս ։ հանդերձա-
ւորեաց քաւունս , զմկրտեալս 'ի մահն
քնի 'ի բնակուե իւր մաքրազարդեալ ։
Օ՛ր հայր և որդի , զնոյն և հոգին
ներգործեաց ։ և ինքն է ա̃ծ խնկեալ

ա՛ւ

տիրապէս ած յածմէ ։ Վասնզի ոչ նա-
խաթուելովն յերրորդութեն որք մեծ ինչ
քան զմիւսն ․ և կամ զկնի անուանիլն
նուաստագոյն առ նմանն ․ և կամ 'ի
միոյն առնլով խառնակութի գոլ դիմայն ․
և կամ յերկոյն տրոհութն ուրոյնութի եւ
կամացն ։ Վասնզի անմեծար հայր առմե-
նայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան
զօրութի ․ որպ ոչ գոլով է նմա հոգւոյն՝
անհարգարգ ոմն և անկենդան և առ ած
հրաման նուաղեալ ։ Իսկ բանն եթէ
ոչ անուանի հօրն ծանիցի, որք ոմն և
կամ լքեալ ․ և կէտ 'ի մահացուէ ու-
մեմնէ ոչէի ։ Որպէս և հոգին եթէ ոչ 'ի
պատճառէն նշանակեսցի, ապաշուք ոմն
թափառեալ իբր զշունչ ինչ անդասելի ։
Այլ եթէ որք հակաճառական բանիւ
յաւակնի կապտել զհայր 'ի յիւրմէ բա-
նէն, որ թէ էր երբեմն յորժամ և չէր ․
և անբանութեն բամբասանօք պատուել
վարկանի զմեծին մեծութի ․ և կամ
արկուի տացէ բղխողին՝ ոչ բնաւորա-
բար գոլով հոգևոր ․ որով այլ իմն գոյու-
թի տայր մուծանել, և կամ ամբոխութն
ինչ այլայլական յանսպառ պատիւ միու-
թեն 'նր երրորդութեն ․ զայնպիսիսն քա-
բամբէք պարսից հաւատոյ բանից, իբր
զդժնդակ գևս դիմամարտիկս դաշա-
նակամս հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հա-

լածեմք . եդեալ 'ի նշոյս զնոյնս ը՟ նո-
սին , փակեմք ընդդէմ նոցին զկենացն
մուտ եկեղեցականս դաւթի : Ուստի
զ՟որ երրորդութիւն փառաւորելով 'ի նոյն
տ՟րուհի միակցորդ հաւասարութե՟ , զու-
գաձայն սրբաբանութ՟ , հանդունատիպ
հարձութ՟ , օրհնեալ և փառաւորեալ
յերկնի և յերկրի . 'ի ժողովս անդրան-
կացն և յազգս երկրածնացս . բանակա-
նաց յաւիտեանս յաւիտենից , ամէն :
Արդ զայս գոչումն ծածուկ խորհրդոց
կերպաւորելոց յայսմ մատենի , ամենա-
լուր ականջաց մեծիդ տ՟յ ընծայեցուցի :
Ոլիմք սպառազինեալ , և ապա մտի
'ի հանդէսն : Այլ ոչ եթէ կարօտեալ
իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս : Որ
մինչև ստեղծեալ էր քո զ՟տմ նախքան
զլինելն երկնի , փառաբանչօքն անմա-
հից և երկրաստեղծս բանաւորօք , գու-
քեղէն 'ի քումդ լրութե՟ փառաւորեալ
իսկ էիր . այլ զի զմերժեալս զիս յար-
գեսցես անձառ քաղցրութի ճաշակել
զքեզ բանիւս հաղորդութ՟ : Իսկ զի՟նչ
պարտ իցէ ի՟ն արքունական հրամանիդ
կենաց կանոնիդ տալ ատոնայի տ՟ր , և
զհրամայեալ պատուէրդ ոչ առնել . որ
ինձէն իսկ զիս զօսկեղէն տախտակս
խօսուն նուէրեալ քումդ պատգամի ,
գրեալս մատամբդ տ՟յ եղծի . որ և
խոր-

խորտակելն է իրաւացի . և ես տխրա-
տեսակ մրով զերկրորդն նմանութի ա-
ռեալ հայթայթեմ ։ Այլ որդ՝ քանզի
բազմօք պաղատեցայ դրուշակօք խան-
դաղատականօք , որ ոչ է գրեալ 'ի յայս
կարգ ձայնի . լուր բարեգութ ած սմին
բանի այնմ ամի ։ Եղիցի և այս աղերս
բարբառոյ հայցման աղօթից յօդեալ ը
նոսին . թերևս 'ի մաքրոց և 'ի կամա-
րարից այս նուէր հացի պանից բաղար-
ջոց իւղով զանգելոց 'ի սեղան փառացդ-
քոց մատիցէ ։ Այլ դու բարերար և
յամի մարդասէր , քոդ մի ոյ միոյ . հզօր
և ամենակալ . որ յաղթես գթութբ
խնամոց քաղցրուէ քո . ոչ հասարակա-
կանաց միայն մարդկուէս իմոց գոյակ-
ցաց , առ որս յաւէտ է ամբոխութի և
բիւրամասնեայ հակառակութի , այլև
հրեշտակացն անախտականուէ . նա և՛
ևս քն զայս սրբասնելոցն անարատու-
թէ , յորոց մի էր և հեղիա . որոյ ցոյցք
խստութեն 'ի քորեբ լերինն նշանակե-
ցաւ յերիս օրինակս . 'ի շարժումն մեծ ,
'ի հողմն ուժգին , 'ի հուրն կիզանողա-
կան . իսկ քոյդ հեզուի երկայնմտուէ
'ի հանդարտուն մեղմուէ օդոյն քաղց-
րուէ . քանզի կամաց ողորմութեց դու
միայն ես ած գրեցելումն ։ Ո՜ զի թէ և
համօրէ գտան մերասերցս առաքինութն

յեղանակեալ յայլ նմանու̃ն վերնայնն, թակոյն երկրածինք են և ն̃ք, ընտրեալք 'ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ խնկութե̃ բարիդ. յա̃մի օրհնեալդ. ամենևին փրկութիդ. ա̃մեհանգիստդ. համայնից անդորրութի̃դ. համօրէն ախտացելոց դեղ առողջութե̃. աղբիւր ջրոյ կենդանւոյ ա̃յ երեմիայ; Դարձ առ իս և ողորմեա՛ ինձ. որ այնքան ծարաւես պաքիս անկարօտդ ա̃ծ իմում փրկութե̃, մինչզի զո՞ւարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար անեղծական յարակայութե̃ մշտնջենաւոր պաղատանս օրհնեալդ քո գթութե̃ 'ի մերոց գլխոց կենցաղականաց վ̃ս իմ քեղոյս հաշտութե̃ մաղթել. ողորմեա՛ էջմի. որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութե̃, առ հրեշտակականն Թափուր տեղի ստորանկելոց 'ի ձեռն մարդկան քո կցորդութե̃ աւետարանեալ առակաւ այսր օրինականս էջմի: Արդարև լո՛ւար բարեգութ. անսացեր Թագաւոր. ունկնդրեցեր կեանք և յոյս. 'ի միտ առեր երկնաւոր. յարդեցեր հզօր. նկատեցեր ծածկագէտ. տեսեր խնամակալ. կարեկցեցեր անպատում. խոնարհեցար միշտ

բարձ-

բարձրեալ․ Նուաստացար ահաւոր․ յայտնեցար աննշան․ ամփոփեցար անսահման․ քանակեցար անքննելին․ մածար ճառագայթ․ մարդացար անմարմին․ շօշափեցար անքանակ․ կերպաւորեցար անորակ․ լցեր իսկապէս զաղաչողացն բաղձանս ։ Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ ձայնիւ զուարթնոյն բարի բարեխօս․ միջնորդ կենդանի․ պատարագ անմահ․ սպանդ անլախձան․ Նուէր մաքրութե․ ողջակէզ անծախ․ բաժակ անսպառ ։ Ա՛հա ողորմած, մարդասէր, օրհնեալ․ միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարերարութի կամաց քոյ կենդանատուայ գովեալ երկայնամիտ․ և քեզ վայել է փառք յաւիտեանս, ամէն ։

## ՚Նորին սրբ̃յ հօրն մերոյ Գրիգորի Նարե-կացւոյ ասացեալ գանձք, և տաղք, և մեղեդիք ։

### (ա) ։ Գանձ ՚ի գալուստ ս̃բ հոգւոյն ։

Գանձ լուսոյ փառակից որդւոյ ։ անճառ զօրուն (բ) ահեղ մե-ծուն ։ անքաւ բնուն ։ Լոյս ՚ի լուսոյ ։ ոգի բարձրելոյ ։ պատ-կեր անփոփոխ ։ պարզ անզննելի ։ հաս-տիչ հոգւոց ։ հանդերձիչ մարմնոց ։ Ա-նուն պաշտելի ։ Ճշմարիտ (գ) բարի ։ ա-նեղծանելի ։ էակից ընդ հօր ։ և տ̃ր բո-լորից ։ Ահա ընկալցիս (դ) զերկրպագու-թ̃ն քում դաւանողացս քեզ ՚ի հաճու-թ̃ի ։ աղաչեմք ։

Բարուն հանձարոյ տեսուն մերոյ, ան-թարգմանելի խորոցդ ա̃յ ։ որ դու միայն մինդ (ե) յիսկութ̃ե տեսակ առանձին ։ Ոգի տիրական ուրոյն կերպարան կա-տարելութ̃ե ։ յորմէ գոյացան եղեալքս

ամ

ամ ուստի յօրինակ նորոյ փրկութե՛ն (զ) ընփլնի լուսաւորն աշխարհատարած անղարդութե՛ հինն նսեմութե՛ (է) գեղատխուր անպատրաստութե՛ն՝ վայելչական հրաշաղարդութի՝ շրջմամբ քո 'ի ջուրս՝ բանիւ՛ բղխողիդ 'ի լոյս փոխեցեր ։ Ո՛հ ընկ" ։

'Ի զօրս վերինս փառաւորողացն սրբաբանեալ՝ կազմիչդ ամենից 'ի կտակս օրէնացն և մարգարէիցն ազդումն և պատճառ ․ 'ի տառս իմաստնոցն և քարոզողացն առաքիչ և տէր ․ շնչումն ահաւոր (ը) և ձայն կենդանի , հանդերձիչ երկնի ․ և առ նոյին տիեզերահեղձոյց ծովուն ցամաքիչ ։ Նաժամող շրթանց առաջին ձայնիցն մնոտխածողով միաբանելոց ․ յայլ հրաւէր նորոգ պանծալի համաբարբառ (թ) տպաւորութե՛ ։

Նազմ սաստիկ (ժ) ․ եգիպտակործան , և ամպ վերարկու (ժա) տոհմին յակոբու ․ ուժգին և հնդարտ նոյն (ժբ) առ հեղիու ։ Պատմաբանիչ հրովարտակօք (ժգ) քոյինաշունչ պատգամադրութե՛ցն ․ և յապագայն (ժդ) տեսողութ՛ հրամայեցեր ամծայնապէս ․ որով զճանապարհ յաղթողին մահու և բեկլարոյ՝ յաւուրս վերջինս այսու ծանուցեր ։

Ո՛հ ընկալ" ։

Գովեստ քեզ անեղծ և ա՛ր անստեղծ ․ ամենիշխան լծագաւոր երկնի ․ ինքնա-

ձեւն

ձեռն այլ զօրեղութեան մարդացելոյն ո̅յ օծումն • կերպիւ աղաւնոյ ցուցեալ 'ի յորդանան ։ Հաւասարափառ զուգաթիւ է Հօր • Հրամանատուր գործոցն յ̅ոյ, և տնօրինականաց մեծին գուշակումն ։ Տեսութեան լուսոյ հովանի 'ի լերինն (ծե) Թափորական արարչատես ներգործեցելոցն ։ 'Ի ցոյցս դիմաց՝ 'ի ձեւս հրաշից՝ 'ի յամս դարուց՝ 'ի հարս նախնեացն առ ձեռն երեւոյթ (ծզ) տուեալ զօրինակն ճշմարտութեան նշանակ յայտնի ։ Կանխագրելոցն կնիք • սկզբնատիպ թագաւորութեանց օծմանն իւղոյն (ծէ) մաքրութեան սահման և սկիզբն ։ Ահա ընկալցիս զեր" ։

(ծը) Մի զարմանաւոր և սքանչելապայծառ՝ հեղեալ 'ի յէէն բնութի անթերի • անհատ անդուստ և այսր աննուազ • բարեբանեալդ յորհնեցելոյն ։ Յերեսս բոցոյ՝ բուրելոյ խնկոցն՝ ճնշմամբ խառնելոյ ։ Հիանշմամբ մրրիկ ահարկու (ծթ) ընտրողական հրեղինաց լեզուացն բաշխեալ 'ի պարծանս աշակերտելոցն ։ Յաւուրս լուսոյ (ե) պենտեկոստէին՝ զհրաճաշակն բաժակ կենաց մատուցանեցեր քոյոց սիրելեացն ։ Ո թերին իսկապէս լցուցեր ։ Ո տարակոյսն փարատեցեր ։ Ո տգիտութիւն իմաստնացուցեր ։ Ո բարեացն աւանդ կրկնեցեր ։ Ո փափագ

փառք ընծիցն արժանացուցեր ։ Սպա-
սողացն քում ծանուցար ։ Ամբարձելոց
ձեռացն աղերսիւ արագ յայտնեցար ։
Պաղատանաց ձայնից՝ հեծութե (ժա)
փոյթ ժամանեցեր ։ Ով զօղեալն եր-
կիւղիւ խառնեալ խնդութ Է տիեզերս
տարածեցեր ։ Սկայ հաւատոյ ըմանն
շնորհի խոստմանն աւետեաց ելից միած-
նին՝ յաւաղանին ջուր միացուցեր ։
Ով շնորհիդ քո լոյս եկեալ յերկնից օ-
դով քաղցրութ՝ (ժբ) ժառանգ անմահից
կենաց յերկինս դրեցեր ։ Նա՛ ընկալ՛՛ ։
Րոպէից մաքրութե և աղատարար ։ Խնա-
մական զօրեղ՝ (ժգ) բարեխօս և միստա-
կարար ։ Առ քեզ պաղատիմք ամ անս-
կիզբն՝ ստեղծիչ շնչոց ։ Հոգի կերպա-
ւոր ։ Անձն դիմաւոր՝ որդւոյ մերձա-
ւոր՝ բնաւից թագաւոր՝ Է հօր միաւոր ։
Որով ընուն 'ի տուր պարգևի անսպառ
բաշխմամբ բարձունք և ստորինք ։ Ըն-
կալցիս զքո ընտրեալսն և զօրացու-
ցես (ժդ) 'ի հանդէս քում պատուիրա-
նիդ ։ Ով քահանայապետն մեր դիտո-
ղութե՝ քոյինակրօն պատուոյդ սրբու-
թե ։ (ժե) Ով այցելուն դատման ընտրու-
թե՝ որ Է քեզն է կցորդութի ։ Ով պտա
փարժից կրթութե՝ որ Է քեզն է դաւա-
նութի ։ (ժզ) Ով բազմամասնեայ գումարս
դասուցյանուն քո ժողովելոցս ։ Ով բա-

րեպաշտ Թագաւորն մեր՝ (ԺԷ) Իւրովք
զաւակօք ։ (ԺԸ) Օրինաւորօք և զօրապե֊
տօք՝ ա՛մ ծառութեանդ քո պաշտօնէիւք ։ Ձիա֊
կանօք և հետեւակօք ։ Ոստիկանօք և
քաղաքայնօք ։ Ուխտաւորօք և Նուիրո֊
քօք ։ Ապաձեռնօք և ա՛մ մարդկան հա֊
սակօք ։ Որ հովուես և բարձրացուցա֊
նես՝ ամենատուատ ի՛ր լիապարգեւ՝ ի սրբոտ
կարեաց փրկութեան (ԺԹ) քումդ աղաչողաց ։
Ահա՛ ընկալցիս զեր" ։
'Ի քեզ նկատեալ հայի բարեգործ՝ ա՛մ
ակն տեսողի ։ Ապաւէն յուսոյ փրկու֊
թեան՝ կենաց առաջնորդ 'ի լոյսն վերին ։
Գործիչ կենդանեաց՝ հանգիստ մեռե֊
լոց ։ Խնամող ուղեկից ամենավստահ ։
Տեղի բերկրութեան և վայր ցնծութեան ։ Ան֊
պարագրելի ունող համայնից ։ Վերա֊
նորոգեալ (Ի) դաստակերտեսցես զ՚իրա֊
ժարեալսն 'ի քեզ հաւատով հանգիստ
բարեբանական գթութ (ԻԱ) օրհնեալդ
'ի բարձունս ։ Ահա՛ յիշեսցես և ողոր֊
մեսցիս ննջեցելոցն յուսով յարութեան ,
խնդրեմք ։
Նաւ եւ տառապեալ զյորդորումն սիրոյ և
ըզ" ։
Բոտել զմարմինս մեր , (ԻԲ) 'ի մի շաւիղ
ընտրութեան չնչոյ սիրոյն որ առ ա՛ր , խըն֊
դրեմք ։
Գերազանց կոչումն և ձայն կենդանի ։
Ա.

Ահաւոր մեծանուն հզօր ։ Հոգի հեղուն մարդասիրութեան գթութեան և ողորմութեան ։ Բարեխօսութբ կուսի խնկուհւոյդ մօրն կենդանեաց՝ համբերձելոյդ 'ի քեն (ԼԳ) տիրամօրն և ածածնի ։ Աղթօղական աղերսարկութբ մեծին 'ի ծնունդս կանանց մկրտութեն կարապետի, (ԼԴ) և համադասակցիդ քոյ ձեռնադրողի ։ Խնկանուէր հայցմամբ երջանկացն՝ առաքելոցն և մարգարէիցն ։ Մարտիրոսական հանդիսիւ 'նըյն ստեփաննոսի ․ (ԼԵ) որ և նովաւ զօրացան վկայք ։ Մեծավաստակ առաքինութբ դաւանողին զքեզ 'նըյն գրիգորի և ամցն մեր լուսաւորչի ։ Մաքրակրօնից աղանց միանձանց և զքեզ ած խոստովանողաց ։ Որ 'ի վերջնումն աւուր մեծի յայտնիս նորոգել միայն ողորմած (ԼԶ) զ'ի քեզ գոյացեալքս ։ Եւ այժմ ողորմեաց մեզ տէր ած մեր ըստ մեծի ողորմ՛՛ ։

Նորին (ԼԷ) գանձ 'ի մէջ Նոյնէշէջէ ։

(ԼԸ) Գանձ բաղձալի բարութեն մեծին՝ գտեալ և ծածկեալ ։ (ԼԹ) Լրութի անթերի՝ բերող համայնից ․ և դու ինքն 'ի բնաւս ։ (Խ) Օ որ ոչ իսկ տանէր երկինն վերին՝ անվայր քո իսրան՝ եթերն անմատոյց ։ (ԽԱ) Ընջրպետ

Ը

Ը̃ քեզ զարմից հրանիւթից ցուցար սահ-
մանեալ ։ Անքանակ պատկեր գթութեց
խնամոց ։ 'Ի յաթոռ փառաց՝ թագաւոր
բարձանց՝ 'ի վեր քան զլսան ։ Ա.հա ըն-
կալցիս զաղերս աղօթից՝ (խէ) յարմա-
րեալ խնկօք յայս յարկ նուիրեալ՛ոք ե-
կեղեցի , աղաչեմք ։

Բախձան պերճալի՝ (խգ) կոչումն ընտրու-
նի՝ ձայն ախորժելի՝ անպարագրելի ։
Որ 'ի թեւս թեթեւս հողմային օդով ա-
մենավստահ կառավարութ̃ բազմաւ
տիրապես՝ (խդ) արկեր քեզ գահոյս յա-
ռակս խորհրդոյ աւետեաց ելիցն լըման՝
ածօղդ 'ի յարմար զիրին կատարումն՝
նկատեալ զվայր քոյին բնակութեդ ։
Յաւէտ անջրպետ՝ և յօգնս մեր միշտ ։
Օռն աթոռ՝ և զայլն պատուհանդան ։
Տեղի լուսատարր՝ ազանց բոլորից ։ Ա.-
հա ընկալցիս զաղ՛՛ ։

(խե) Իմաստագործ անսխալատեղծ՝
պատշաճակերտ կազմիչ համայնից ։ Որ
յսկզբնաձեւն (խզ) յառաջակառոյց զայս
կերպարան հրաշազարդ իրի հաճեցար
լինել ։ Նախ զընակն՝ ապա զբաղմեալն ։
Զգեցեր զերկին՝ և անդ զերկնայինսն ։
Հաստատեցեր զադին՝ և զկնի զադամ ։
Օ յօդուած տապանին՝ և 'ի նմա զաւա-
րեալսն ։ Տապանար նախնեաց հիւրըն-
կալուհն աբրահամու ։ Օծեալ արձան

և

և տուն ա̃յ ։ Սանդուղք մեր ելից և հետք իջման ։ Ո՛. հարսնեան (խէ) վրան պաշտաման ։ Կտակ մատենի՝ (խզ) դատից խոստմանց՝ բարձր (խթ) գարիզին ընտրուե ։ Մեծին սաղմոսինի տաճար լուսակիր՝ լեառն տն և տուն ա̃յ ։ Ո՛. մբարձեալ նշան յաղթս հեռաւորս՝ փողով ձայնարկու կոչման Ձի՝ ըստ տեսանողացն զանձառ քո խնդ ։ Ո՛. հա՛ ընկալ''' ։

Գեղապաճոյճ աշտարակ կանգնեալ երկաթեղէն՝ սիւն անկործանելի և պատուճար ամուր եդեալ պղնձի ։ Սեկիաձոյլ աշտանակ լուսոյ ։ Կղզի պարփակեալ ալեօք ամբոխեն՝ ըստ երկրորդ տեսուենն եզեկիելի ։ Դոր հրաւիրմամբ եկեալ 'ի ծուրայ ։ 'Ի խնդիր իմաստից դիմեալ 'ի սաբայ ։ Յօտարասերմ ազանց քանանու ։ Յօժարընթաց 'ի բարեբոյծն ։ Խոյցեալ օդի սիրով փեսային ։ Գուռն հիւսեալ մայրատախտակօք ։ Բարինք բիւրեղք ընդ կարկեհանաց ։ Պաղպաջունք արփիանկարք՝ մահարձանօք ուծաթեղինօք ։ Ջաղաք կենդանի չինեալ ա̃յ ։ Հոգւոյ ազդեցմամբն խօսեալ յոյ ։ Լեառն պարարտ՝ մածեալ սրբութ̃ ։

Ո՛. հա՛ ընկալ'' ։

Սերամի լեր դշխոյ հարսն պանծալի՝ պսակաւոր մեծ զարմանուհի ։ Բազմազուարճ կուսութ̃ բերկրեալ ։ Որ 'ի սկզբ-

սկզբան անդ գծագրեցար . և աստ 'ի նո-
րումս հանդերձեցար՝ ոսկեափայլ չք-
նաղ գոյութե՟ : Յեղանակաւ կոչմանն
հագարու՝ փոխեալ աղախնոյն 'ի սինայէ
'ի սաղիմ : Նկեալ ինքնին անդրանիկն
հօր՝ առնուլ զքեզ կցորդ է լքեցելոյ ա-
զգինն յակոբայ : Արկեալ քեզ հիմունս
պաշտելիս՝ զառաքելոցն գումարութիս :
Աստեղանիշ լուսաւորութե՟ բոցաձա-
ձանիչ շքով պաճուճեալ : Յարդանդ մա-
քուր և 'ի ծնունդս անախտս՝ երկնեալ
անդստին ժառանգս տը : Որ է օրինակ
առձեռն՝ յուսով ակնկալութե՝ զխաղա-
ղուն գտեալ խնկաւէս : Ահա՛ ընկալ" :
(ծ) Բարունն լուսոյ հզօր թագաւոր
փեսային երկնաւոր՝ անճառ խորհրդով
'ի հանդէս խնճոյից պարու՝ կարգեաց
քեզ (ծա) կանոնս անփոփոխելիս : Բազ-
մամասնեայ օրինակ կերպից 'ի նոյն տե-
սուն բոլոր էութե , (ծբ) 'ի կերպարանս
քերոբատեսակս առ 'ի շինուած կաթո-
ղիկէի : Հասակ տոհմից զանազանութե՝
'ի մի ժողովեալ հնազանդութե : Տուն և
տեղի և յարկ ծածկութի : Դարակ տօ-
թոյ՝ վէմ օգնականի : Մարմնադիցս
հոգևանձիր : Օծ (ծգ) ընդ մարդկան
ընտանեցուցիչ : Համանունակ ազանց
կոստելոց : Յոյս քաւութե պարտաւորե-
լոց : Նախացուցակ համարձակելոյ :

 Նա-

կատարելոց անձանց խմբարան ։ Ահա՛ ընկալ՛՛ ։

Իմաստութեն հօր բնակութի՛ եօթնա-ստեղեան սեամբք կառուցեալ ։ Յորում օրհնեալն պատարագի ՚ի սպանդ կա-մաց Ճաշակման երկնաւոր հացին՝ ՚ի գահաւորակ՛ոբյ սեղանոյն ։ Կենաց մա-նանայն և գառն երկնաւոր՝ որ բաշխեայ զմեզս կենդանեաց և նորոգեցելոց ։ Այն ինքն ա՛մ և յա՛մի՝ զենումն մեծ ք՛ զհա-բելին ։ (ծդ) Սեր զցրուեալն տնօրինե՛ յանբաւնադատ եկաւորութին ։ ՚Ի գիրկս ստեանց սիրով քաղցրութբ կոչէ ձեռամբ յամրոցն անմատոյց՝ փախուցելոցն պա-տըսպարան ։ ՚Ի վերնայարկ սրահն հո-գեկիր՝ ուր զաշակերտսն զարմանա-գրեաց ։ Յորում եղեյլն կարդեալք զօ-րութբ գահերիցութիք (ծե) վերադիտա-ցաց ․ ՚ի պատիւ աւուրս քո ուրախա-ցեալք՝ ունողք անկեան անբծացն պա-րու ։ Օ հայրապետըն մեր՝ եպիսկոպո-սօք՝ քահանայիւք և սարկաւագօք ։ Օ վարդապետս՝ դպրօք և հոգեխապայ-ծառ վարժապետականն շնորհիւ ։ Օ թա-գաւորն մեր՝ իւրովք զաւակօք ։ Եւ որք ը՛ նովաւ են իշխանութիք պետութիք և զինուորութիք՝ (ծզ) հարազատ սիրով-օրհնեալ յամենից ։ Ահա յիշեցեա և

ողորմեսցիս հոգւոցն հանգուցելոցն յու-
սով յարութե՛ն . խնդրեմք :

Եւ ես առաւել զյորդորումն սիրոյ :

Բոտել վերաստին զմերձեալսն առ 'ի քէն՝ միջնորդութ (ծէ) բազմելոցն 'ի քեզ՝ ա-
ղաչեմք :

Պատուեալ անձն պատուական մարգարտի՝ անձառ ներգործութ յղին ծնօղ՝ մա-
րիամ 'ոք ածածին : Պսուսոր լուսոյ և մայր սիրոյն : Ընձեռագործ հիման հաւատոյ աշխարհի պատկեր : Որոյ այսօր օրինակի անուամբ օծեալ կնքեցար : Հարսնարան միոյ բանին մարմնացելոյդ 'ի քէն 'այ : Բարեխօս լե քեզ ընկալցիս առ 'ի հաշտութե պարտաւորելոցս՝ զշնո-
րհաւորիլն անմահից կենաց զկարապետն կոչման 'որց , և զպսակն մարտիրոսաց , առաքելոցն և մարգարէից : Են որ մերն է լուսաւորիչ հանդերձ միան-
ձամբք ճգնաւորօք . (ծը) որք են ժա-
ռանգ 'այ՝ ծննեալք յորդեգրութն առա-
զանաւն՝ անանջրպետ հոգետոհմութ :

Յորում (ծթ) նրկին հայցեսցես նորո-
գել զփոքրն 'ի մեծ լայնութի փառաց՝ անպարունակ բացարձակութ զմայրն մաքուր զաւակօք հանդերձ՝ ուխտիւք պատկերովք (ղ) յայնմ առագաստի յա-
ւուր ահաւոր երևման մեծին 'այ : Ի-

այժմ

այժմ ողորմեաց մեզ Տէր Ա͞ծ մեր՝ ը͞ս մե-
ծի ողորմ" :

ՙՆորէն (կա), գանձ ՚ի Տէր Յիսուս Ա͞ծընկալ :

(կէ) Գանձ անքննելին՝ ծածկեալ մե-
ծութե՛ն՝ զօրեղ ահաւոր՝ միշտ
բարի : Արեքարբեան անսահմանելի՝
օրհնաբանութեն կենդանի : Անճառ խոկումն՝
փակեալ ՚ի զգալեացս : Համագոյ ան-
թարգմանելի : (կդ) Անհասանելի հե-
ռաւոր՝ և անմիջելի մերձաւոր՝ անմահ
թագաւոր : Ահա խնկեսցին մաղթանք
մեր առաջի քո ամենակալ · աղաչեմք :
Բոլորից համայնից ելից ՚ի կուսից քառից
՚ի մի եղելութե՛ն զերկիր հաստատեցեր :
Խորհուրդ կրկին ձեռնարկ վերստին ·
ընդդիմակ միջոց միջնորդաց երկուց՝
եղծման և նորոգութե տեսութե կենացդ-
փայտի : Ահա խնկեա" :

Ի բազմութենս անբաւս՝ անհետազօտելի
գովեստից տօնեալ՝ ահեղ անմատոյց :
Յանհանգչելի նուագ ներբողից ազգաց
հրամանութից՝ պանծալի երգով պատկեն-
ա͞ծ բոլորից : Ի սահմանս երկրակեցու-
թեանց երկնից՝ ՚ի թևս չորից արփիակեր-
պից՝ բազմօք կարգեցեր քեզ պատիւս
անպատումս : Ի գրաւման ազինայ ՚ի

 անկոյն

տնկոյն պարտեալ՝ ազդեալ ձայնեցեր
'ի ծառն օրհնութե : Ր.հա՛մ խնկես" :
Գուշակ գարնայնոյ 'ի թռիչս ամբարձ֊
ման՝ յօրինակ երկնի կամաց գթածիդ ,
(կդ) 'ի լաստն ապրացու նոյեան տապա֊
նիդ : Պատկեր փրկութե՝ կերպարան հրա֊
շից՝ ապաստան յուսոյ՝ դեր 'ի վերնայինան
զնոր ժողովուրդս ուխտին միջնորդեալ
'ի թևս խաչիդ՝ (կե) առ քեզ մատու֊
ցես : Ր.հա՛մ խնկես" :
Ո՜վ գիր մատենի մատինդ այ՝ կենսու֊
նակ տախտակ անխորտակելի. և աւանդ֊
նորոյ օրինի սրբամասնութեց անեղծանե֊
լի : Լրումն ցուցմանց կանխապատմու֊
թեց աւետեաց ըղձից։ Ի բիւրուց հիւ֊
թից մեզ 'ի յօգնութե սոյն խոկ ծանու֊
ցար : Տիպ պաշտելի՝ (կզ) դրաւ ծի՝ շա֊
ւիղ անհետազօտելի՝ արեամբ արարչին
նկարեալ 'ի փառս լուսոյ : Ր.հա՛մ խնկես֊
ցին դարձեալ խնդրուածք մեր՝ առաջի
քո ամենակալ . աղաչեմք :
(կէ) Րաբունեացն պետ և ձիր իմաստից
տր յս քս . միայն ուսուցիչ զանիմանա֊
լիսն՝ որ ոչ գծագրի յայսմ յաւիտենի :
Պատկեր հօր անհաս 'ի վեր քն զբաւն :
Ուղղեալ յայս նշան՝ հաստատեալ սովին
պնդութե զախենս ծի : (կը) Պահեալ ամ֊
բուծ ըն քումդ խրատուանց՝ զհովուածապետան
խա֊

խաչանց քոց բանաւոր հօտի ։ Ո՛վ եպիս֊
կոպոսունս՝ երիցամբք և սարկաւագօք ։
Ո՛վ վարդապետս՝ դպրօք և բնաւին իսկ
պաշտօնէիւք եկեղեցականօք ։ Ո՛վ Թա֊
գաւորն մեր իւրովք ծնընդօք. հանդերձ
պետական նահանգօք հնազանդեցե֊
լովք ։ Արասցես (կթ) լինել երկիւղա֊
ծութ՟ սրտի՝ խաչիդ պարծանաց 'ի քեզ
զօրացեալ ։ Ահա՛ խնկեցելին մաղ" ։
'Ի քեզ համբառնամք զձեռս զմիտս և
զզգայութիւս հոգւոց իմաստից ։ Արձա֊
նացուսցես զմեզ անշարժ պնդութ՟ ը՟
հովանեաւ Թևոց քո խաչիդ ։ Ո՛վ ար֊
քայութեն յաղթող ։ (կ) Ո՛վ դատողութիւն
անպատիժս ։ Ո՛վ իշխանականսն հան֊
դարտս ։ Ո՛վ զինուորութիւն խորտակելս ։
Ձիավարժիցն տուր սանձս ։ Ամենակա֊
նացն ամբծութի ։ Հետևակացն խրա֊
խոյս . Քաղաքայնոցն պատուէր ։ Նուէ֊
րողացն լրութի ։ Ուխտաւորացն սփո֊
փանս ։ Ննջեցելոցն հանգիստ ։ Եւ հա֊
մօրէն ժողովրդեան քում սովիմբ ամ֊
բունի՝ պաշտպանունի՝ քաւունի՝ առողջունի
և ողորմունի օրհնեալ յաւիտեան ։ Ահա՛
յիշեսցես և ողորմեսցիս ննջեցելոցն
յուսով յարութե . հայցեմք ։
Եւ ես առաւել զյորդորութիւն սի" ։
(կա) Ոտել զմարմինս մեր 'ի մի շաւիղ

ընտրութե̃ն հոգւոյ սրբոյն որ առ նոր-
խնդ․"։

Գոհաբանութի̃ն խնամոց՝ խնդրողին ըղ-
խաղաղութի̃ (կէ) միշտ յերկրպագութեանս։
Պաշտպանութե̃ ծնողի փրկչին և մարմնա-
րանի անպարագրելի ն̃րյն մարիամու
ա̃ծածնի և միշտ կուսի։ Աղերսիւ և ա-
ղաչանօք մկրտչին ջուրբք զհոգին հրա-
ւիրողի՝ կարապետին մեծին յովհաննու։
Պաղատանօք թագաւորեցն օծութե̃
հոգւոյն առաքելոյն արքայազնեալց։
Նահատակութե̃ նախկին վկային ն̃րյն
ստեփաննոսի՝ որ է որդի անդրանիկ
փրկագործ կրից երկրորդն ադամայ։
Երգ-աչհատութ̃ և աղօթիւք ալի երջան-
կաց մարտիրոսացն կատարելոց։ Խոս-
տովանողական դաւանութե̃ ն̃րյն գրիգո-
րի հայաստանեայցս լուսաւորչի և յան-
մերձենալին նուիրողի։ (կգ) Ս՛շտա-
պաշտօն բազկատարածութե̃ մաքուր
միանձանց։ Եւ ա̃մ ընտրելոց պսակե-
լոցն ը̃ քեզ խաչակիր վարուք յաւուրն
մեծի։ Եւ այժմ ողորմեա մեզ տ̃ր ա̃ծ
մեր՝ ը̃ մեծի ողորմ"։

Ն̃ր

## Նորին նոյն Գրիգորի Նարեկացւոյ Մեղեդիք ։

### (Հգ) Մեղեդի Ծննդեան ։

Ելն այգոյ՝ այգոյ ձեւոյն, այգոյն իւր այգ՝ է այգմէ հօր, հօր ընդ այգմէ՝ լուսոյն փառաց ։

Ի ծոց ծննդին՝ ծագուման անուն, (հե) յարփւոյն ծագումն՝ եկեալ 'ի սէր, կուսին ծընեալ ծոցոյն ծաղիկ ։

Ծաղիկ ծոցոյ՝ ծոց հայրենի, ամպոյ նըման՝ իջեալ յերկնից, շաէր իւր 'ի մեզ՝ քաղցրիկ ցօղեալ ։

Սէր 'ի յամպոյ՝ ամպ սիրաշարժ, օդոյն ցօղեալ՝ 'ի նոյն գեղման, վայր իջուցեալ՝ կաթս անձրեւաց ։

Ի սիրոյ՝ սէր ծանուցեալ, սիրաբողբոջ՝ տարփմամբ լըցեալ, սիրով ընդ սէր՝ միաբանեալ ։

Լուսինն 'ի լոյս՝ 'ի լուսմն եկեալ, ձօն ձեմեռով՝ գիշերավայրին, ըղկնի ձեմեր՝ բարկ աստեղօք ։

Առաւօտուն՝ ցօղին իջեալ, 'ի նոր սիրոն՝ զծոյլըն տոճեալ, քաղցր արեւով առ բուսեկին ։

Գարունաբեր՝ գարնաշարժ, գեղգեղելով երփնազարդեալ, նոր հարսանեաց՝ միաբանեալ ։
Նկայք նոր մեք՝ զուարճացեալ, վառ 'ի վառեալ՝ տիպ ծաղ 'ի ծաղ, Թռչոյն տերև՝ յօրինեսցուք ։

Մեղեդի յարութեան ։

Ես ձայն զաւիծուն ասեմ, որ գոչէր 'ի քառաթևին ։
'Ի քառաթևին գոչէր, ձայն առնէր (հղ) 'ի սանդարամետն ։
Սանդարամետն այն 'ի դող (հէ) ելեալ, սասանիւր 'ի ձայնէն ահեղ ։
Ահեղ ձայնս որ ես լուայ, սա քակէ զամուրս որ ունիմ ։

Յորդորակ ։

Զամուրս իմ քակել (հը) կամէր, գերելեացն առնել գերեդարձ ։
Գերելեացն երանի ասեմ, որ եղեն 'ի յառն աւիծուն ։
'Ի յառն աւիծուն եղեն, այլ չունին ակըն (հթ) տանջելոյ ։
Ակըն տանջելոյ չունին, ապականին անանց ապականչ ։

Պըսակ բոլորեալ առնուն, (ծ) յառխ-
ծէն մեծ թագաւորէն :
Փառք փըրկողին (ծա) ասեմ, որ փըր-
կեաց զգերեալըն 'ի բանդէն :

Մ՝եղեդէ յարութ. և խաչին :

Հաւուն հաւուն արթընացեալ, դի-
տելով ըզհեթանոսս :
Զայներ ձայներ սատըրակին, սիրաս-
նունդ սիրելոյն :
Դարձիր դարձիր սոմնացի, Է վիմին
հովանեաւ :
(ծբ) Եկն հարսնուհի 'ի լերանց ընծուց,
'ի դաշտաց այծեմանց :
Եկեալ եկեալ տաղաւարի, յեփրային
(ծգ) բեթելեայ :
Ելեալ ելեալ յասպարէզս, 'ի յայգին
կեդրոնի :
Հընձան (հընձան) կոխելով, գոյն 'ի
գոյն բոսորի :
Արկեալ (արկեղ) փայտ 'ի հաց, ըզշեն-
լիս իւր զենեալ :
Խառնել (խառնել) 'ի գինի, զխառ-
նելիս անուշից :

## Նորին ս՟րյն Գրիգորի Նարեկացւոյ Տաղք ։

### Տաղ ա՟էյ յայտնութեան ծնի ա՟յ ։

Ուրախ մեծ խ՟հդյ, խ՟հդ ծածկեալ
մեզ յայտնեցաւ .
Ուրախ լ՟յս հօր ծագեալ, ՚ի ծոցածին
յէութենէ .
Ուրախ յայտնեալ ա՟ծ, ՚ի հողեղէն
գոյացութիւն .
Ուրախ առաքեցաւ, հրեշտակապե֊
տըն գաբրիէլ .
Ուրախ տայր (յդ) սրբուհւոյն, դստեր
դաւթի (յե) Թագաւորին .
Ուրախ քեզ (յզ) մարիամ, բերկրեալդ
ուրախ լեր տ՟ր ը՟ քեզ .
Ուրախ քեզ տիրամայր սրովբէանման
քրովբէաթոռ . հուպ երրակին լոյս գե֊
րագանց, լուսոյն արփի, (յէ) վեհինա֊
ճեմ . սեռից ընթաց բիւրուցն իջեալ;
շողշողենի փողփողենէջ . (յը) մանրահե֊
ղեղ գաղտնի շաւիղ, անծանօթի ճա֊
նապարհին ։
Ուրախ քեզ տիրամայր, կոյս մարիամ
տաճար բանին .

Ու

Ուրախ (ձթ) տաճարն աստուածոյ, այսօր լուծան (ղ) անէծք նոր.

Ուրախ նահապետացն, ահա տեսին ում ցանկային.

Ուրախ (ղա) մարգարէից, այսօր եղև լրումն օրինացն.

Ուրախ քեզ (ղբ) բեթղահեմ, երկիրդ յուդայ տունդ (ղգ) եփրաթայ.

Ուրախ (ղդ) ծառոց ծաղկանց, բողբոջակիտ խիտասաղարթ. գոյն գեղեցիկ պտղինաւէտ, ակնահաճոյ համ քաղցրունակ. հոտ (ղե) բուրազուարթ փունջ խուռներամ, ծայրից վարդից մրթթինաբարդ. թերթ տարածեալ ոսկեճաճանչ, տերևախիտ կանաչացեալ:

Ուրախ երկրպագեր, մեծ կարապետըն յովհաննէս.

Ուրախ բառնայր ՚ի գիրկս, եղիսաբեթ մայրն յովհաննու.

Ուրախ (ղզ) տայր յովհաննէս յորդ աղբերաց, (ղէ) հոյլ վտակաց. ջուր մանուածոյ, ծիծաղ ծաւալ. (ղը) կարկաջահոս ուխինահոս. ծայթինաւէր, մանուածաւալ, (ղթ) շրջանապտոյտ, մանրաւազին. հոլով խորոց, մէտ մէտ զուգին. վայր վեր անէջ, վեր վայր ՚ի վեր. փութան ՚ի ջուրս յորդանանու.

Ու

Աւետիս քեզ յորդանան, քո՛ 'ի քեզ
գայ մկրտիլ։
Աւետիս քեզ կարապետ, ձայն բարբառոյ յանապատէ.
Աւետիս ինձ յովաննու, ձեռն իմ ըզտէրըն ձեռնադրեաց.
Աւետիս հրաւիրողին, զհարսըն մաքուր 'նք փեսային.
Աւետեաց եմ կոչնատարս, մի՛ հրաժարիք 'ի հարսանեացս.

(ձ) Աւետիս յորդանանու ։ Լերինա-
թինդ խոր վէմ 'ի վէր. ծըփին 'ի նոյն
շտապ (ձա) յորձանից. հրակոծ լերանց
անկծկլին 'ի տապ. (ձբ) բոյն 'ի ծա-
ւալ, ծով խոր հերձաւ. Ճապաղ ճե-
պով դարձ նոյն 'ի դարձ. խաղայր փու-
թով 'ի տեսանել։

Աւետիս տիեզերաց, այսօր հնչեաց (ձգ) ձայն 'ի բարձանց.
Աւետիս որդւոց մարդկան, այսօր որդին գայ մկրտիլ.
Աւետիս հողեղինաց, (ձդ) տեսաք զհոգին աղաւնակերպ.
Աւետիս յայտնեալ այսօր, խ՞րդ 'սբյ երրորդութ՞ն.
Աւետիս միշտ երգեսցուք, քո՛ օրհնեալ եսյաւիտեան։

'Ն՞

Նորին 'ի նոյն խնդիր.

Աչքըն ծով 'ի ծով, ծիծաղախիտ
ծաւալանայր յառաւօտուն. եր-
կու փայլակնաձև արեգական նման.
շողն 'ի մին իջեալ յառաւօտէ լոյս ։

Վարսիցն երամից, զարդ երամից զարդ.
ոլորս են առեալ եռահիւսեակըն բոլո-
րեալ այտիւք ։

Յայտէն նռնենի, սարդխատունկ գե-
ղաշխատակ ծայրից ծաղկանց, որոյ սիւնն
'ի սրտին նուսխայօրէն (ձէ) կարկաջայր։

Չեռացն եղինջ կամարաձև կապէր.
ատիձաղ պատիձաղ, (ձղ) սողի խըռ-
ղի երգով ։

Հօսէր զէլևելըն ը մըմռանս, հանդար-
տիկ խաղայր, (ձէ) թիկնէթէկին ձե-
մէր ։

Բերանն երկթերթի, վարդ 'ի շըթանց
կաթէր. լեզուի՛ն շարժողի քաղցրեր-
գանայր տաւիղն ։

Ծոցըն լուսափայլ, կարմիր վարդով
լըցեալ. ծըլեքըն ծիրանի մանուշակին
հոյլք ։

Խընկեալ 'ի կընդրուկ, բուրվառ հրով
ածախով լըցեալ. ձայն քաղցրանուագ-
որ 'ի նմանէ հընչէր ։

Գոե

Գեղեցիկ պատմուճանաւըն զարդարէին
էր ․ 'ի կապուտոյ, 'ի ծիրանոյ, 'ի բե-
հեզոյ, 'ի յորդանէ ։

Գօտին արծաթափայլ ոսկետուն,
կամարկապ յականց յականց շափիւ-
ղայ մանրամասին (ձը) յօրինուածով
պճնեալ ։

Անձինն 'ի շարժել մարգարտափայլ
գեղով ․ տուիցն 'ի գնալ, շողն 'ի կա-
թել առնոյր ։

Այն Թագաւորին, այն նորածին փրկ-
չին ․ զքեզ սրտակողին փառք յաւի-
տեանս ամէն ։

Յորդորական նորէն ։

Սեաւ եմ գեղեցիկ դուստր Եւայի եմ ․
ահա նա, (ձի) հարսն իմ ցանկալի, սի-
րով կապեալ է փեսային ։

Նման է եղբօրորդին իմ այծեմանց
որթուց եղնեաց ․ ահա նա ձայն եղբօ-
րորդւոյն, խանդաղատեալ սիրով
լցեալ ։

Ե՛կ իմ ախորժելի, եկ մերձաւոր հարսն 'ի
մայրեաց Լիբանանէ ․ ահա նա խայ-
տայր, (ձժ) խնծորով․ զի՞ս պատեցէք
տարեալ մուծէք 'ի տուն գինւոյ ։

Աչք իւր աղաւնոյ թելայն կարմիր մա-
նեակ,

նեակ, (Ճշա) ոսկոյ. ահա նա լեառըն
կընդըրկելի, հաստնարգոսի և զըմրուխի:
Գեղ եր գովելի մանուկ անհաս անժա-
մանակ. ահա նա լեառըն գխտարան,
շուշան հովտաց ծաղիկ դաշտաց:
Գնաք մարգարտեայն երգեն 'ի յայն
բըլըրին վերայ. ահա նա լեառըն շու-
շանի, հոտն իւր վարդի կինամոնի:
Որդիք նոր սիոնի ելէք տեսէք 'ի բեդ-
ղահեմ. ահա ելէք դուք 'ի յայրին,
երկիրպագէք Թագաւորին:
Ընդ հովիւսըն երգեցէք, և գ̃ մոգուցն
երկրպագէք. ահա զոսկին Թագա-
ւորին, զխունկն ա̃յ հօր միայնոյ:
Որում փառք և գոհութի և հանապազ
փառաբանութի. յաւիտեանս յաւիտենից
ք̃ս օրհնեալ 'ի համայնից:

Տաղ Վարդավառին:

Գոհար վարդըն վառ առեալ 'ի վեհից
վարսիցն արփենից:
'Ի վեր 'ի վե̃ր վարսից, ծաւալէր ծաղիկ
ծովային:
'Ի համատարած ծովէն, (Ճշբ) պըղպը-
ջէր գոյնըն (Ճշգ) այն ծաղկին:
(Ճշդ) Նորփնին երփնուռնակ ծաղկին,
շողշողէր պըտուղն 'ի ձըղին:

Բըրքում վակասիր պըտուղն, օրհանէր
խուռըն տերևով ։
Տերևըն տաւիղ տըւողին, զոր երգեր
դաւիթ հրաշալին ։
Ի փունջ խուռներամ վարդից, գոյն
ըզգոյն ծաղկունք ծաղկեցան ։
Այգ սօս ու տօսախ ծառերգ, (ձծէ)
վարդաստուն ոստ արձակեցին ։
Այգ նոճ ու բողբոջ (ձծղ) արօսդ,
զարդարեալ վարդըն շուշանին ։
Շուշանըն շողէր յուռին, շողշողէր դէմ
արեգական ։
Այն հիւսիսային հաւէն, հով հարեն
գոհար շուշանին ։
Յայն հարաւային լեռնէն, քաղցր օդով
ցօղէր շուշանին ։
Շուշանն (ձծէ) շաղով լըցեալ, շող
շաղով և շար մարգարտով ։
Ծաղկունքդ ամէն (ձծը) շաղ արին,
շաղն յամպէն ամպն յարեգակնէն ։
Աստեղքդ ամէն շուրջ առին, դէմ լու-
սին գունդ գունդ բոլորին ։
Գունդ գունդ խաչաձև գընդակ, յօ-
րինած երկնից շըրջանակ ։
Փառք հօր և որդւոյն յաւէտ, ու հոգ-
ւոյն այժմ և յաւիտեանս ։

## Տաղ մէջ յաւասանեցն ։

Գունդք որ վերկայից 'ի սոսկալի պա-
տերազմին . Հանդիսաւորեալ հասին
'ի գլուխ ասպարիսին ։

Բովեից պաշտօն բարենշան , (ծծբ) ե-
րանութիւն . բանաւոր զենմունք ողջա-
կիզեալք ածուն ։

'Ի կատարածին , (ծէ) անտրխրական յօ-
ժարութե . (ծէա) ահագնակոշկոծ 'ի չար-
չարանսըն համբերեալ ։

(ծէբ) Գունն մահու գործեալ , սաստկա-
կըսկիծ քըրտնակայլակն . խառնեն
զարտասուս ընդ վարդագոյն արեան իւ-
րեանց ։

Ողորմաղետիւ կողկողագին պաղատա-
նօք . մաղթանօք խնդրեն զտանջանա-
ցըն յաւելուած ։

Ռաբունիք բարիք անհասատար երկրա-
ւորաց . բոսորերանգեան վայելչութե
արիացեալք ։

'Ի կիրըս մարմնոյ 'ի կենակից մեր բնու-
թենս . ելին 'ի յերկինըս խառնեալ 'ի
զօրս երկնաւորացն ։

Նըբեելապէս յայտնի քարոզք տիեզե-
րաց . տօնըք հրեշտակաց 'ի մատենի
կենաց գըրեալ ։

Նըրանուէտեալք անդ 'ի վերինն երու-

սաղ։մ․ տեսլեամբ զուարճանայք ա-
րարողին տիեզերաց ։

Բաղձանք պերճականք տրունական
մարմնոյն սկըսեալ․ աստեղք ծի 'ի
բարձրունս երկնից տեսեալք ։

Գոհաբանութի արարողին անմահութի․
նախընթացողին միշտ խըրախոյս նա-
հատակաց ։

# Համեմատութիւն երկուց տարբերութեանց գանձուց տաղից և մեղեդեաց այլոց օրինակաց՝ ընդ մերում :

| Ըստ մերում : | Ըստ այլոց : |
|---|---|
| (ա) Գանձ 'ի գալըստն սբ. հոգւոյն : | Գանձ հոգւոյն [illegible] պենտակոստէին : |
| (բ) Ահեղ մեծութ. , անբաւ բնութ. : Լոյս 'ի լուսոյ : . . . . . | Ահեղ մեծութ : Լոյս 'ի լուսոյ : . . . . . |
| (գ) Բարի անեղծանելի . | Բարի անեղանելի . . |
| (դ) Զերկրպագութ. քումդ աստուածաբնեղ 'ի հաճութ. աղաչեմք : | Զերկրպագութ. [illegible] 'ի հաճոյս աղաչեմք : . . . . . |
| (ե) Յիսուսէ տեսակ առանձին : Որդի տիրական ուրոյն կերպարան . | Յիսուսէ կերպ առանձին : Որդի տիրական , որ էն կերպարան : . . . . . |
| (զ) Զնախնի խաւարն : | Զնախնի խաւարն : . . |
| (է) Գեղաշխուր անպատրաստուեն՝ փայլէլչական հրաշագործութ՝ շրջեմաք : . . . . | Գաղտաբլուր անպատրաստութ . Հայեցողական պատրաստութ հրաշագործեցեր նորա իւրոյն , ընթրեմաք : |
| (ը) Եւ ձայն կենդանի : | ( Չիք յայլս ) : |
| (թ) Տապաւորութ : . . | Տապաւորեցն : . . . |
| (ժ) Եգիպտակործան : | Եգիպտական : . . . . |
| (ժա) Տոհմին յակոբու : | Տոհմին յակոբայ : . . . |
| (ժբ) Նա հեղիու : . . | Ահա հեղինա : . . . . |
| (ժգ) Քրիստոնէական պատգամագրութեց : . . | Քոյին անուշաւանդ պատմագրութեանց : . . . |
| (ժդ) Տեսուն : . . . | Տեառնութ : . . . . |
| (ժե) Թափօրական : . | Թափօրական : . . . |
| (ժզ) Տօնեալ : . . . | Ահեալ : . . . . . |
| (ժէ) Մաքրուն ասահման և սկիզբն : . . . . | Մաքրութեան օրէնսդրութեան և սկիզբն յօդուածս : . . |

| Ըստ Ձեռաց ։ | Ըստ տպւոց ։ |
|---|---|
| (ծը) Ո՛վ զարմանաւոր ։ | Որ զարմանաւոր ։ |
| (ծթ) Ընտրողական ։ | Ընտրող ։ |
| (կ) Պէնտակոստէին ։ | Պէնտակոստէից ։ |
| (կա) Փայլթ ժամանեցեր ։ | Փայտ ժամանեցեր ։ |
| (կբ) Ժառանգ անմահից կենաց յերկինս գրեցեր ։ | Ժառանգ անմահից կենաց յերկինս գրեցեր ։ |
| (կգ) Բարեխօս և մատակարար ։ | Բարեխօս և խաղաղար ։ |
| (կդ) 'Ի հանդէս քում պատուէրանելոյ ։ | 'Ի հանդէս քոյոյ պարգևաւոր ։ |
| (կե) Զայցելութեան գաման ընտրութեան ։ | ( Չիք յայս ) ։ |
| (կզ) Զբաղմամանեայ գումարս գասուց ։ | Զբաղմադամար Լաւանց ։ |
| (կէ) Խորանք ղուառկօք ։ | Խորանէ ղորանոք ։ |
| (կը) Զինաւորք և զօրանկեաք ածուեալ քո պաշտօնէից ։ | ( Չիք յայս ) ։ |
| (կթ) Քուրդ աղաչողաց ։ | Քուամ տառանողաց ։ |
| (հ) Դաստակերտեցեալս ։ | Դաստակերտեցեր ։ |
| (հա) Օրհնեալդ 'ի բարձունս ։ | Օրհնեալդ 'ի բնաւից ։ |
| (հբ) 'Ի մի շաւիղ ընտրութեան չնչոյ ։ | 'Ի շաւիղ ընտրութեան հոգոյն ։ |
| (հգ) Տիրամօրն և ածածնի ։ | Մօրդ ածածնիդ ։ |
| (հդ) Եւ համագոյակցիդ քոյ ։ | Եւ համագոյակից քոյ ։ |
| (հե) Որ և նովաւ ։ | Եւ որ նովաւ ։ |
| (հզ) Զ'իբրև զդրսացեղս ։ | Զ'ի քէն փողոցեաւքն ։ |
| (հէ) Գանձ 'ի ... ։ | Գանձ սբյ եկեղեցոյ ։ |
| (հը) Գանձ բազմալի բարութեան մեծին ։ | Գանձ պարգևական մեծին ։ |
| (հթ) Լոյսն անթերի ։ | Լոյսն անթերի ։ |
| (ձ) Ջոր ոչ խակ տանէր ։ | Ջուր ու խակ տանէր ։ |

(ձա)

| Ըստ Վերծանի : | Ըստ [illegible] : |
|---|---|
| (խա) Անջրպետ է քեզ զարմից : . . . . . | Աղանջրպետն ընդ քեզ և զարմից : . . . . . |
| (խբ) Յարմարեալ խնկօք : | Յարմարեալ խնամօքն : . . |
| (խգ) Կոչումն ընտանի : | Կոչումն ընտանի : . . . |
| (խդ) Արկեր քեզ գահոյս յառակս խնճոյ առե- տեաց ելից լրման . ա- ծողդ 'ի յարմար զիրին կատարումն՝ նկատեալ : | Յարկեր քեզ գահոյս յառա- խնճոյ ելից լրման առե- տեաց . բերողդ յարմարին կա- տարմամբ . նկարեալ : . . . . . . . . . . |
| (խե) Իմաստագործ : | Իմաստագործ : . . . |
| (խզ) Յառաջակառոյց զայս կերպարան : . . | Յառաջակառոյց զայս կեր- պարան : . . . . . |
| (խէ) Վրան պաշտաման : | Վրան պաշտաման : . . . |
| (խը) Դատիչ խօսողաց : | Դատիչ խօսողաց : . . . |
| (խթ) Գարիզին ընտրու- թեան : . . . . . | Գարիզին իմաստնոյն ընտ- րութեան : . . . . . |
| (ծ) Բարունն լուսոյ հզօր թագաւոր : . . . . | Բարուն երկնաւոր լուսոյ թագաւոր : . . . . |
| (ծա) Կանոնս անփոփոխե- լիս : . . . . . . . | Կանոնս անփոփոխելիս : . . . . . . . . . |
| (ծբ) 'Ի կերպարանս բխե- րատեսակս : . . . . | 'Ի կրօն բխարատեսակս : . . . . . . . . |
| (ծգ) Ընդ միջկան ընտա- նեցուցիչ : . . . . | Ընդ միջկան ընտանեցուցիչ : . . . . . . . . |
| (ծդ) Որ զօրացեալն : | Որ զօրացեալն : . . . . |
| (ծե) Վերադիտողաց . 'ի պատիժ աւուրս քո ու- րախացեալք՝ ունողք ան- կեան անբծայն պարու : | 'Ի պատիժ վերադիտողացն . որք քո արարեալ փոխադրեն բերքերն յանկեան անթուոց պարուն : . . . . . |
| (ծզ) Հրշէջ սիրով օրհ- նեալ յամենից : . . | Հրշէջ որ միրոպէ օրհնեալ 'ի բնաւից : . . . . |
| (ծէ) Բազմելոյն 'ի քեզ՝ աղաչեմք : . . . . | Բազմելոյն 'ի քեն , խնդ- րեմք : . . . . . . . |
| (ծը) Որք են ժառանգք : | Որք են ժառանգք : . . : |
| (ծթ) Կրկին հայցեցեա : | Կրկին հայցեցա : . . . |
| (կ) Յայնմ առագաստի յաւուր ահաւոր երև- | Յայնմ երկնային առագա- տին՝ յաւուրն մեծի երևեալ |

ման

| Ըստ Վերջամ. | Ըստ այլոց: |
|---|---|
| ման մեծիդ ով: . . | Վեհին: . . . . . |
| (կա) Գանձ 'ի մէջ խաչն ծածկեալ: | Գանձ որ խաչին քողի ով: |
| (կբ) Գանձ անգինին: . | Գանձ անապական: . . . |
| (կգ) Ընծայատմելի հեռաւոր: . . . . . | Ընծայամատչելի հեռաւոր: . . . . . . . |
| (կդ) 'Ի լաւատն ապրացու: | 'Ի լաւոտն ամբարձոյ: . . |
| (կե) Առ քեզ մատուսցես: . . . . . . | Առ քեզ մատուցեր: . . . . . . . . . . . |
| (կզ) Գրաւ Տէր՝ շաւիղ: | Գրաւ ազնուարհի՝ շաւիղ: . |
| (կէ) Բարունեացն սպետ: | Բարեացն պէտ: . . . |
| (կը) Պահեալ ամբողջ ըստ քում խրատանց՝ զջնջմանապետն խաչանց քոց բանաւոր հօտի: Ջեռնաւորս երկնային: | Պահեալ արբունաբ ըստ քում խրատանց զհանճարեղ ... խաչանց քոց բանաւորաց - ըստ հայրապետին մեր ... ( ) երկնաւորաց՝ երկնային: |
| (կթ) Լինել երկնաքաղաքացու- թբ: . . . . . . | Լինել երկնաքաղաքացի: . . . . . . . . . . |
| (հ) Զգաստութեան ան- պատիժս: . . . . | Զգաստութեան անպատիժ: . . . . . . . . . |
| (հա) Բանել զմարմինս մեր 'ի մի շաւիղ ընտրութեան հաւատոյ սիրոյն որ առ Տէր . խնդրեմք: | Բանալ զմարմինս մեր 'ի շաւիղ նորին պահանջ հաւատոյ սի- րոյ . աղաչեմ: . . . . . . . . . . . . |
| (հբ) Մինչ յերկրպագ- ութեան: . . . . . | Մինչ յերկրպագութեան: . . . . . . . . . . |
| (հգ) Միշտապաշտօն բարձ- կատարածոյ մեզուր միանձանց: . . . . | Միշտապաշտօն բարեկատար մաքրափրօն միանձանց: . . . . . . . . . . |

(հգ) Մնջէտի ծննդեան : Մեղեդի Լուս'ինարեկ":

| Ըստ ձեռաց : | Ըստ տպլաց : |
|---|---|
| (հե) Յարփւոյն : | Յարֆային : |
| (հզ) Ի սանդարամետն : | Ի սանդարամետն : |
| (հէ) Եղեալ : | Եղեալ : |
| (հը) Կամեր : | Կամ . ( կմ ) Կամմ : |
| (հթ) Տանջելոյ : | Տանջանաց : |
| (ձ) Յառնելոյն մեծ թագաւորէն : | Յառնելոյն անմահ արքայէն : |
| (ձա) Սաեմ : | Տապաւր : |
| (ձբ) Եկն համանուհի : | Ե՛կ համանաւհիտ : |
| (ձգ) Բեթեղեայ : | Բեթելէն . |
| (ձդ) Արբունեոյն : | Արբահայն : |
| (ձե) Թագաւորին : | Մարգարէին : |
| (ձզ) Մարխամ : | Տիրամայր : |
| (ձէ) Վեհինածեմ : | Վէհինածէմ : |
| (ձը) Մանրահեղեղ : | Մանրահեղի : |
| (ձթ) Տանն ագահայ : | Տա՛ր ադամայ : |
| (ղ) Ընկեծք նորա : | Ընկէծք մեղացն : |
| (ղա) Մարգարէին : | Տեսանողացն : |
| (ղբ) Բեգղաշեմ : | Բեթղեէմ : |
| (ղգ) Եփրաթայ : | Եփրաթայ : |
| (ղդ) Ծառոց ծաղկանց : | Ծառոց ծաղկանց և ամ բառոց էրէրի : |
| (ղե) Բարաղոմարթ : | Բարաղոմարդ : |
| (ղզ) Տայր յովաննէս յորդ : | Տայր յովանէս , որ խարա_ դէտըն էր . յորդ : |
| (ղէ) Հոյլ : | Հոյլ : |
| (ղը) Կարկաջահաս : | Կարկաջահոս : |
| (ղթ) Չրջանապտոյտ : | Չրջանապտոյտ : |
| (ճ) Աւետիս յորդանանու : Լերինաթինդ : | Աւետիս յորդանանու . ա_ հեղմանի և սանիրայ : Լե_ րինաթինդ : |
| (ճա) Յորձանից : | Յորձանաց : |

| Ըստ Վերնոյ։ | Ըստ ազնւոց։ |
|---|---|
| (ճբ) Բոյն 'ի ծառալ։ . | Բոյնծառալ։ . . . . |
| (ճգ) Ձայն 'ի բարձանց։ | Հայր 'ի Բարձանց։ . . . |
| (ճդ) Տեսաք։ . . . . . | Տեսին։ . . . . . . . |
| (ճե) Կարկաճայր ։ . . | Կարկաճայր։ . . . . . |
| (ճզ) Սրտղի խրղաղի եր-գով։ . . . . . . . . | Սրտղի Խրտղի հաւան։ . . |
| (ճէ) Թինկնէ Թէկին ։ . | Թինկնէ 'ի Բինկին ։ . . . |
| (ճը) Յօրինուածով ողջ-նեալ։ . . . . . . . | Յօրինուածով խաղփեալ ։ |
| (ճթ) Հարան իմ ցանկա-լի։ . . . . . . . . | Հարան իմ ցանկալի ։ . . |
| (ճժ) Խընծորով։ . . . | Խընծորով։ . . . . . . |
| (ճժա) Ոսկոյ։ . . . . | Ոսկոյ ։ . . . . . . . |
| (ճժբ) Գլդարըջեր ։ . . | Գաղդաջեր ։ . . . . . . |
| (ճժգ) Այն ծաղկին ։ . | Ծաղկին ։ . . . . . . |
| (ճժդ) Երփնին ։ . . . | Երփին ։ . . . . . . |
| (ճժե) Վարդասուն . . . | Վարդաբոյն ։ . . . . . |
| (ճժզ) Այոսդ ։ . . . . | Այրոսդ ։ . . . . . . |
| (ճժէ) Շաղով ։ . . . . | Շաղով։ . . . . . . . |
| (ճժը) Շաղ։ . . . . . | Շաղ։ . . . . . . . |
| (ճժթ) Երանութք ։ . . | Երանուէ ։ . . . . . . |
| (ճի) Անաբխրական ։ . | Անախրէլի ։ . . . . . |
| (ճիա) Աչագնակոչկոմ ։ | Մահագնախոշիկոմ ։ . . . |
| (ճիբ) Գուն ։ . . . . | Գունդք ։ . . . . . . |

| Գէ | ժամանակ | եր |
|---|---|---|
| ա | | 233 |
| բ | | 023 |
| գ | | 103 |
| ե | | 110 |
| է | | 126 |
| ը | | 236 |
| ժբ | | 246 |
| ժէ | | 008 |
| ժը | | 201 |
| ժթ | | 207 |
| իա | | 129 |
| իբ | | 183 |
| իէ | | 192 |
| իը | | 186 |
| լբ | | 168 |
| լգ | | 015 |
| լե | | 115 |
| լդ | | 77 |
| լէ | | 79 |
| խա | | 200 |
| խբ | | 170 |
| խդ | | 003 |
| Գէ | ժամանակ | եր |
| խե | | 140 |
| խզ | | 146 |
| խէ | | 006 |
| խթ | | 119 |
| ծբ | | 123 |
| ծդ | | 175 |
| ծե | | 154 |
| ծզ | | 150 |
| ծէ | | 012 |
| կգ | | 029 |
| կդ | | 031 |
| կե | | 217 |
| կզ | | 222 |
| կէ | | 238 |
| հ | | 034 |
| հա | | 091 |
| հբ | | 164 |
| հգ | | 230 |
| հդ | | 138 |
| հէ | | 083 |
| հը | | 086 |
| ձ | | 039 |

| | |
|---|---|
| Ձւ [illegible] | եր |
| Ձա | 19 |
| Ձբ | 92 |
| Ձգ | 211 |
| Ձդ | 99 |
| Ձե | 183 |
| Ձթ | 1•9 |
| Ղ | 185 |
| Ղա | 248 |
| Ղգ | 253 |
| Ղե | 1•1 |
| Ղէ | 42 |
| Ղը | 69 |